



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

205

7-35



205
R-35

Երանյան Խորհրդակցություն

ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՀՐԱՀԱՆԳ

ՀԱՆՐԱՊԵՐՏՈՒՑ

(Սուրբ Գրքից թարգմանությամբ)

«Նրկնից թագաւորութեան աշակեր-
տամ ամեն ղախը նման է այն տանու-
տէր վարդոյն, որ հանում է իւր գանձից
նոր եւ հինը» (Մատթ. ԺԳ. 52):

Աշխատասիրէց

ՄԱԿԱՐ ԵՊԻՍ. ԲԱՐԽՈՒՏԱՐԵԱՆՑ

Թ Ի Ֆ Լ Ի Չ

ԱՐԱԳԱՏԻՊ ՄԵ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ, ՊՈՒՂԿ. ՓՈՂ. № 12
1904.

23 SEP 2009

W 480
205
F-35 up

ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՀՐԱՀԱՆԳ

536

ՀԱՆՐԱՊԵՐՏՈՒՑ

(Սուրբ Գրքից թարգմանուած)



«Նրկնից թագաւորութեան աշակերտաց ամեն դպիր նման է այն տանուտէր մարդոյն, որ հանուս է իւր զանձից շորը եւ հինը» (Մատթ. ԺԳ. 52):

1608
3993
37133

Աւխասապիւրեաց
ՄԱԿԱՐ ԵՊԻՍ. ԲԱՐԽՈՒՅԱՐԵԱՅ

Թ Ի Փ Լ Ի Զ

Կ. Մարտիրոսեանցի տպարան || Тип. К. Мартиросианцъ
Орбелиановская ул., д. № 1|2.

1902



10 1 MAR 2013

2644

ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՀՐԱՀԱՆԳ
ՀԱՆՐԱՊԱՐՏՈՒՑ


Дозволено цензурою. Тифлисъ, 9-го Октября 1901 г

ՏՊԱԳՐԵՅԱԿ ԱՐԴԵԱՄԲԹ ԵՒ ԺԱԽԻԿ

Բարձրապատիւ

ԻՇԽԱՆԱԶՆ ԱՂԵՔՍԱՆԴԻ ԱՂԱԻ

ՄԷԼԻՔ-ԱԶԱՐԵԱՆՑ



Այս գրքում, որ կոչուած է «Աստուածային Հրահանդ Հան-
րապարտուց» չգտնելով ոչինչ հակառակ Հայաստանեայց Ս. Եկե-
ղեցու ոգուն, թողլատրուած եմ տպագրութեան:

Հոգևոր գրաքննիչ Գալուստ Տէր-Մկրտչեան,
Միաբան սրբոյ էջմիածնի:

23. սեպտ. 1901 թ.

Ս. էջմիածին.

Իբրև մշտախօս արձան եւ անմոռանալի յիշատակ
նուիրում եմ այս գիրքը ՚ի նշան երախտագիտութեան
ճնողաց իմոց հանգուցեալ Գրիգորի Բարխուտարեանց եւ
Եղիսաբեթի Աւետիսեան, եւ քեոց եւ եղբարց իմոց եւ
վաղաթառամ Գրիգորի եղբորորդւոյ իմոյ

Մակար եպիս. Բարխուտարեանց Խանածախցի,
որ ՚ի Խաչէն գաւառի յԱրցախ նահանգի:

Ն Ա Ռ Ա Ր Ա Ն

Գաւառացի հայ հասարակութիւնն այժմ բնաւ չէ լսում Ս. Գրքոց կենդանի ձայնը. բնաւ չէ լսում Աստուծոյ խօսքը հասկանալի ոճով. վերջապէս բնաւ չէ լսում վարդապետական մատչելի քարոզներ, հոգեշահ խրատներ և օգտակար յորդորներ: Վասն զի վարդապետներն չեն կարողանում գնալ և քարոզել, քահանաներն էլ ամենամեծ մասամբ չգիտեն քարոզել:

Ահա այս պատճառաւ հայ ժողովրդեան մեծամասնութիւնն միշտ մնում է գրկուած Աստուծոյ խօսքը լսելուց. միշտ մնում է կարօտ Աստուծոյ օրէնքները և պատուիրանները սովորելուց. վերջապէս և միշտ հեռի է մնում Աստուծոյ կամքը կատարելուց: Հետեւապէս հետըզհետէ խախտուում է գաւառաբնակ հայի հաւատն, խորթանում է ազգութիւնն, թուլանում է աստուածապաշտութիւնն, շատանում է անկարգութիւնն. դառնանում է ընտանեկան կեանքն, թուլանորուում է կենակցութիւնն, նուազում է պարտուց և իրաւանց պահպանութիւնն, քայքայուում է ընտանեկան կապակցութիւնն. բազմանում է ամուսնալուծութեան ախտն և լցնում գերդաստանների անդամոց ծոցը դառնաղէտ ցաւօք և հեծութեամբ:

Ս. Գիրքն ասում է. «Ամեն մարդ՝ որ կրհաւատայ Աստուծոյ, շամաչէր... ամեն մարդ՝ որ կը կարգայ Տիրոջ անունը, կապրի»: Պօղոս ս. առաքեալն իրաւամբ այսպէս է պատասխանում այդ խօսքին. «Քայց ինչպէս կարդան առ Աստուած, Որին չհաւատացին. կամ ինչպէս հաւատան, Որին չսեցին. ինչպէս լսեն առանց քարոզողի, և ինչպէս քարոզեն, թէ որ չուղարկուին. «Ուրեմն հաւատքն լսելուց է զօրանում և լսելն էլ Քրիստոսի խօսքից» (Հռ. Ժ. 13—17):

Արդ՝ որովհետև չենք կարողանում գնալ և քարոզել Քրիստոսի խօսքը, վասն որոյ հարկադրուեցայ Աստուծոյ իմ վերայ դրած անխուսափելի պարտաւորութիւնից՝ ի յոյս ընծայել այնպիսի մի գիրք, որ իւր բովանդակութեամբ կարողանայ կատարել քարոզի և խրատի պաշտօն. խրատի, որ ուղղակի բղխած է Աստուծոյ բերանից և ելած աստուածաշունչ Ս. Գրքից, որի պատճառաւ էլ այս գիրքը անուանեցի «ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՀՐԱՆԱԿ ՀԱՆՐԱՊԱՐՏՈՒՅ»։ Հաւաքեցի ընտիր հաստուածներ չին և Նոր-Կտակարաններից, թարգմանեցի աշխարհաբար,

տեղ տեղ աւելացրի բառեր խօսքի միտքը պարզելու համար, դասա-
 ւորեցի այբբենակաճ կարգաւ, որպէս զի հեշտութեամբ գտնէ ընթեր-
 ցողն իւր որոնածը: Ամեն մի հատուածի ճակատին գրեցի համառօտա-
 կի նորա բարոյական նշանակութիւնը, որպէս զի կարդալով զարթնի
 ընթերցողի և լսողի հետաքրքրութիւնն և լարուի ուշադրութիւնն
 և զիւրութեամբ ըմբռնէ կարգացողի և լսողի միտքն հատուածի ի-
 մաստը և բովանդակութիւնը: Հասկանալի ոճով գետեղեցի գրքիս մէջ
 ճնողների և զաւակների, սկեսրայրների և սկեսուրների, հարսների և
 թոռների, ծառաների և աղախիների, իշխանների և հպատակների,
 հոգևոր հովիւների և հոգևոր հօտի, որբոց և այրեաց, և այլն, և այլն
 պարտքեր և իրաւունքները և իւրաքանչիւր անձի առ Աստուած և
 առ մարդկութիւնն, առ իւր նկեղեցին և առ իւր գերդաստանն և առ
 իւր անձն ունեցած պարտաւորութիւնները: Աերջապէս ահա մի գիրք-
 օգուտը, որից կարող է մեծապէս շահուել՝ զգուշութեան խրատ առ-
 նելով ապստամբ հրէից ազգիցն, որ իւր անհնազանդութեամբ և ան-
 հաւատութեամբ բոլորովին ընկաւ Աստուծոյ երեսիցն: Կարող են մեծ
 օգուտ քաղել նաև քաղաքաբնակ հայերն և առհասարակ քարոզիչ-
 ներն՝ իւրեանց առաջ կուտակուած ամեն տեսակ օգտակար վկայու-
 թիւններիցը:

Այժմ մեր սիրելի քահանայ եղբայրներն (գիւղերի և աւաններէ
 կարդացողներն քիչ եղած դէպքում) կարող են կարգալ սոչն գիրքը:
 Հասկանալ և հասկացնել իւրեանց սիրելի ծխականներին, մանաւանդ
 ձմրան երկար գիշերներում: Այն, այժմ անկասկած կարող են շահուել
 այս գրքից և շահեցնել թէ քահանայք և թէ հմուտ ընթերցողք:
 Իսկ դու, իմ սիրեցեալ հայ ազգ, իմ աչքի լոյս հայ ժողովուրդ,
 իմ սրտի սիւն հայ գերդաստան, իմ հոգու հատոր հայ երիտասարդ
 և օրիորդ, թող քո գրասեղանի զարդն լինի այս գիրքն, փոխանակ
 անբարոյականացնող և վնասակար գրքեր կարդալու և ունկնդիր լի-
 նելու, նուրբ ուշադրութեամբ կարդա՛ն այս ասուածախօս մատեանը:
 Եթէ կարդալ գիտես. իսկ եթէ կարդալ չգիտես, խորին ուշադրու-
 թեամբ լսի՛ր կարդացողներից քո Սեղծողի և Նորա Ասուածաբանի
 օրէնքները և պատուէրները, խրատները և յորդորները, որ խօսում
 է քեզ հետ հայրաբար: Այն, սիրելիս, լսի՛ր հեզութեամբ և ուշադրու-
 թեամբ և որդիաբար, որպէս զի կարողանաս ամուր պահպանել քո
 Աստուծոյ օրէնքները և հրամանները, կարողանաս պահպանել քո
 լոյս հաւատը և քո պապենական դաւանութիւնը, քո ուղղափառ
 եկեղեցին և քո հայութիւնը և քո լեզուն: Ուշադրութեամբ կարդա՛,
 անձկալիս որպէս զի ծագէ աստուածային լոյսն քո սրտի մէջ, որ

հալածուին տգիտութեան խաւարային ամպերն, հեռանան ատելու-
 թեան և խռովութեան փոթորիկներն. ցրուին բարկութեան և ոխա
 կալութեան մրրիկներն. հալուին թուլահաւատութեան սառնամանիքն.
 բացուի հաստատուն հաւատոյ գարունն, տաքանայ կատարեալ ջեր-
 մեռանդութիւնն, իջնեն աստուածապաշտութեան ցօղն ու անձրևն.
 ծաղկեն և պտղաբերեն առաքինութիւններն, քաղհանուին մոլու-
 թեանց որոմներն. չարգուի պարտուց և իրաւանց անհրաժեշտութիւնն.
 վարքով և բարքով սրբանան գերդաստաններ, աղնուանան զգաստու-
 թեամբ երիտասարդներ և օրիորդներ. թագաւորէ աստուածային սուրբ
 սէրն, փայլի Ս. Գրքի ներգործութիւնն, համեստութեամբ զարդարուի
 ընտանեկան կենակցութիւնն. ընդհանրանայ խաղաղաւէտ կեանքն.
 քաղցրանայ առտնին կենցաղավարութիւնն, պարտաճանաչ սիրով ամ-
 րապնդուի ամուսնութեան սուրբ կապն, աճի և բազմանայ որդեճնու-
 թիւնն. և պաշտօնանայ Աստուծոյ Դրախտ հայաստանեաց Ս.
 եկեղեցին:

Ահա այն ժամանակ կը կատարուի իմ աստուածահաճոյ իղձն և
 կը պսակուի այլեզարդ ծերունուս քրտնաթոր աշխատանքն: Այն, այն
 ժամանակ միասին կուրախանան հաւաքազրոյն էլ, ընթերցողն էլ,
 հայ հասարակութիւնն էլ, որի չարատե յառաջագիմութեան համար
 կամ և մնամ միշտ աղօթարար սպասաւոր

Մակար եպիս. Բարխուսարեանց:

Ա Պ Ա Հ

Ազա՛հ մարդոյ աչքն կը կշտանայ միայն մի բուռն հողով. ազահների հետ հաց անգամ ուտելը արգելում է Ս. Գիրքն:

Նա՛ որ ամբարտաւան էր աչօք և ազահ սրտով, հաց չէի ուտում նորա հետ (Սաղ. Թ. 5):

Ազահ են (չեն կշտանում) դժոխքն և կորուստն, նոյնպէս և ազահ մարդոյ աչքն (Առ. ԻԷ. 20):

Հակառակութիւն է գրգռում ազահ մարդն. իսկ յոյսը Աստուծոյ վերայ դրած մարդն ապրում է խնամքի տակ (Առ. ԻԸ. 25):

Գրեցի ձեզ այժմ չխառնուիլ (հեռի մնալ) պռունիկ կամ ազահ կամ կռապաշտ կամ նախատող կամ արբեցող կամ յափշտակող եղբայր անուանուածներին. հաց անգամ չուտել այնպիսի մարդոց հետ (Ա. Կորն. Ե. 11):

Ձխաբուլիք, չեն ժառանգել Աստուծոյ թագաւորութիւնը... ո՛չ ազահներն, ո՛չ բամբասողներն և ո՛չ յափշտակողներն (Ա. Կորն. Զ. 9—10):

Ա Պ Ա Հ Ո Ի Թ Ի Ի Ն

Ձափազանց վնասակար է և ազահութիւնն թէ հոգու և թէ մարմնոց, թէ բարոյապէս և թէ նիւթապէս:

Ո՛վ Տէր, խոնարհեցնուր իմ սիրտը դէպի քո վկայութիւններն և ոչ թէ դէպի ազահութիւն (Սաղ. ԹԺԸ. 36):

Նղովքներն կուտեն այն խորհուրդը. որովհետև ազահութիւնից է այն խորհուրդն (Ես. ԻԸ. 8):

Իշխաններն... յափշտակող գայլերի պէս թափում են արիւն, կորուսանում են հոգիներ, որպէս զի ստանան աւելի ազահութիւն (Եզեկ. ԻԲ. 27):

Ինչ որ ելնում է մարդից, այն է պղծում մարդը. որովհետև ներսից մարդոց սրտից ելնում են չար խորհուրդներ— շնութիւններ, պոռակութիւններ, գողութիւններ, սպանութիւններ, ազահութիւններ... Այս ամենն ելնում են ներսից և պղծում մարդը (Մար. Է. 22):

Ջգո՛ւշ կացէք ամեն տեսակ ազահութիւնից, վասն զի ոչ ոքի կեանքն կախուած չէ ստացուածքի աւելանալուց (Ղուկ. ԺԲ. 15):

Այժմ բնաւ չանուանի ձեր մէջ պոռակութիւն և ամեն տեսակ պղծութիւն կամ ազահութիւն, ինչպէս վայելում է սրբոց (Եփես. Ե. 3):

Այսուհետև հեռացրէք ձեր միջից պոռակութիւնը, պղծութիւնը, չար ցանկութիւնը և ազահութիւնը, որ է կռապաշտութիւն (Կող. Գ. 5):

ԱԶԱՏ, ԱԶԱՏՈՒԹԻՒՆ

Ազատ լինելու է մեղքերից և մոլութիւններից: Սուրբ Հոգին ընդունելով մարդ կարող է աւելի ազատ լինել:

Գուք ճանաչեցէք ճշմարտութիւնը և ճշմարտութիւնն կազատէ զձեզ (Յով. Ը. 32):

Այժմ ազատուելով մեղքերից՝ ծառայեցէք Աստուծոյ. որովհետև ինչպէս որ ձեր անդամները պատրաստեցիք պղծութեանց և անօրէնութեանց համար անօրէնութեամբ ծառաներ, այնպէս էլ այժմ պատրաստեցէք ձեր անդամները արդարութեան համար սրբութեամբ ծառաներ... Իսկ այժմ ազատուելով մեղքերից՝ ծառայեցէք Աստուծոյ (Հռ. Զ. 18—22):

Այսպէս են Աստուծոյ կամքն — բարեգործներն պապանձեցնելու են անզգամ մարդոց տգիտութիւնը: Ազատի պէս լինելու է. բայց ազատութիւնը չարութեան պատրուակ անելու չէ, այլ գործ ածելու է ազատութիւնը ինչպէս Աստուծոյ ծառաներ (Ա. Պետ. Բ. 15—16):

Եղբայրներ, աղախնոյն որդիքն չենք, այլ ազատին, այն ազատութեամբ, որով Քրիստոս ազատեց զձեզ (Գաղ. Գ. 31):

Եղբայրներ, որովհետև դուք կանչուած էք յազատութիւն, միայն թէ ձեր ազատութիւնը գործ չդնէք մարմնաւոր ցանկութեանց համար, այլ սիրով ծառայեցէք միմեանց (Գաղ. Ե. 13):

Ա Թ Ո Ռ

Արդարութիւնն աթոռակից լինելու է թագաւորների և իշխանների և դատաւորների ատեաններում, պալատներում և ամեն մարդոց սրտերում:

Իմաստուն մարդն Հանճարի աթոռ է. անզգամների սիրտն կը պատահի նզովքի (Առ. ԺԲ. 23):

Թագաւորի համար զարշնչի է նա, որ գործում է չարիքներ. որովհետև արդարութեամբ է հաստատուում նորա իշխանութեան աթոռն (Առ. ԺԶ. 12):

Իմաստուն թագաւորն ցրուում է ամպարիշտները (Առ Ի. 26):

Ողորմութիւնն և ճշմարտութիւնն սլահապան են թագաւորի և արդարութեամբ կը շրջապատեն նորա աթոռը (Առ. Ի. 28):

Թագաւորն արդարութեամբ է հաստատում իւր երկիրը, բայց կործանում է այն կաշառակեր—անօրէն մարդն (Առ. ԻԹ 4):

Երբ թագաւորն ճշմարտութեամբ կը դատի տնանկները, վկայութեամբ կը հաստատուի նորա աթոռն (Առ. ԻԹ. 14):

Ա Լ Ի Ք

Ամեն ոք պարտաւոր է պատուել սպիտակամօրուս ձերունիները և վարսն ձերմակած պառաւները և հասակաւորները և իշխանաւորները:

Ես եմ ձեր Տէր Աստուածն, ոտքի կը կանգնէք ձերունիների առաջ և կը պատուէք ձերերը և կը վախենաք ձեր Տէր Աստուծոց (ՂԼտ. ԺԹ. 32):

Երիտասարդաց զարդն է իմաստութիւնն, և ձերունեաց փառքն՝ իւրեաց ալիւորութիւնն (Առ. Ի. 29):

Մարդոց ձերութիւնն է իւր իմաստութիւնն, և ձերութեան հասակն է նորա անարատ կեանքն (Իմաստ. Գ. 8—9):

Ա Կ Ա Ն Ջ

Ամեն ոք պարտաւոր է լսել Ս. Գրքի խօսքերը, խրատները և յոր-
գորները, որք խօսուած են Ս. Հոգւով: Պատժուած են չլսողներն և
չկատարողներն:

Օձի թոյնի պէս է նորա բարկութիւնն, իժ և քարք
օձի պէս խցած է իւր ականջները, որպէս զի չլսէ ճար-
տար թովչի ձայնը և չառնէ զեղ հմուտ զեղ տուողից
(Սաղ. ԾԷ. 5—6):

Քո սիրտը տո՛ւր խրատի և քո ականջները պատրաստի՛ր ի-
մաստուն խօսքեր լսելու (Առ. ԻԳ. 12):

Թանձրացաւ այդ ժողովրդեան սիրտն, և ծանր լսեցին
իւրեանց ականջներով և փակեցին իւրեանց աչքերը, որպէս
զի բնաւ չտեսնեն աչքերով, չլսեն ականջներով և իմանան
սրտերով, դարձի գան, որ բժշկեմ զդոսա (Ես. Զ. 10):

Տէրն զիս կարթնցնէ ամեն առաւօտ. Տիրոջ խրատն բաց
է անում իմ ականջները և ես անհնազանդ չեղայ (Ես. Ծ. 4—5):

Աստուծոյ պատուէրները լսեցէք, ո՛վ կիներ, թո՛ղ ընդու-
նեն ձեր ականջներն Նորա բերանի խօսքերը և ուսուցէք ձեր
աղջիկներին այս ձայնը և ամեն կին՝ իւր ընկերին սովորեցնէ
այս ողբը... (Երեմ. Թ. 20—21):

Ով որ լսելու ականջ ունի, թո՛ղ լսէ. (Մատ. ԺԳ. 43):

Ա Կ Ո Ի Ն Ք Ն Ե Ր

Քոյոր թանկագին ակունքներից գերազանց է գիտութիւնն և նիւթա-
կան հարստութիւնից աւելի լաւ է խօհեմութիւնն և իմաստութիւնն:

Երանելի է այն մարդն, որ գտաւ իմաստութիւն և մազ-
կանացուն, որ գտաւ հանճար: Որովհետեւ լաւ է գտնել այն
փաճառքը, քան թէ ոսկու և արծաթի գանձեր: Քոյոր թան-
կանգին քարերից աւելի պատուականագոյն է իմաստութիւն
գտնելն և հանճար ստանալն և քո բոլոր ունեցածդ չեն կա-
րող հաւասարի նոցա (Առ. Գ. 13—15):

Ընդունեցէք խրատ և ոչ թէ արծաթ. ընդունեցէք զի-
տութիւն, քան թէ ընտիր ոսկի: Պատուական ակունքներից
աւելի լաւ է իմաստութիւնն. և ամեն ինչ՝ որ պատուական
է, արժէք չունի իմաստութեան մօտ (Առ. Ը. 10—11):

Իշխանութիւնից, աթոռներից և մեծութիւններից աւելի
նախամեծար ընտրեցի իմաստութիւնը. նորա համեմատութեամբ
ոչինչ համարեցի ամեն ինչ (Իմաս. Է. 8):

Արեգակից և բոլոր աստեղներից գեղեցկագոյն է իմաստու-
թիւնն. լուսի հետ համեմատելով գերազանց է գտնուում, վասն
զի արեգակի լոյսն ծածկուում է գիշերով, բայց իմաստութեան
չէ յաղթում չարութիւնն (Իմաս. Է. 28—30):

Ա Ղ Ա Խ Ի Ն

Սիրելի և չարգելի են Աստուծոյ և մարդոց բարի, համեստ, ազնիւ, բարոյ-
ական ու հաւատարիմ աղախիներն. և ընդհակառակն ատելի են վատ,
անհամեստ, անազնիւ, անբարոյական և անհաւատարիմ աղախիներն:

Կիւրակէ օրերում թո՛ղ հանգստանայ աղախնոյն որդին
էլ, ծառայի որդին էլ (Եւք. ԻԳ. 12):

Մի ցանկանար քո ընկերի կնոջ, ո՛չ էլ նորա աղախնոյն
(Ռ. Օրին. Ե. 20):

Աղախնոյն աչքն նայում է իւր տիկնոջ ձեռին՝ պարգե-
ներ ստանալու համար (Սաղ. ԸԻԲ. 2):

Երեք ատելի բանի համար շարժուում է երկիրն և չոր-
րորդին չէ կարողանում հանդարտուիլ, այս է՝ երբ կը թագա-
ւորէ ծառան, երբ հացով կը կշտանայ լիմարն, երբ բարի մար-
դոյ կը պատահի ատելի կին, և երբ աղախինն կը գրաւէ իւր
տիկնոջ տեղը և դուրս կը հանէ իւր տիկինը (Առ. Լ. 21—23):

Ստարական համարեցին զիս իմ աղախիներն. այլազգի
էի թուում նոցա առաջ (Յովբ ԺԹ. 15):

Եւ իմ ծառաների և աղախիների վերայ այն օրերում
կը թափեմ իմ Հոգու շնորհքները և կը մարգարէանան, ասում
է Աստուած (Յովել. Բ. 29):

Ա Ղ Ք Ա Տ

Աղքատներին օգնելու է ամեն ոք իւր կարողութեան չափով և ոչ թէ նեղելու և վշտացնելու. աղքատների տէրն Աստուած է:

Տէր Աստուած, քեզ թողուած է աղքատն և դու ես որքին օգնականն (Սաղ. Թ. 14):

Տէրն փրկեց աղքատը հզօրի ձեռքից (Սաղ. ԼԳ. 10):

Լաւ է աղքատ և իմաստուն մանուկն, քան թէ ծեր և անմիտ թագաւորն (Փող. Գ. 13):

Ով որ զրպարտում է տնանկ աղքատը, բարկացնում է նորա Ստեղծողը. և ով որ ողորմում է աղքատին, պատուում է զԱստուած (Առ. ՓԳ. 31):

Ով որ ծաղրում է աղքատը, բարկացնում է նորա ստեղծող Տէրը (Առ. ՓԵ. 5):

Իմ անձն ատում է երեք բան—հպարտ աղքատը, ստախօս հարուստը և մտքի զօրութիւնից պակասած անպարկեշտ ծերը (Սիր. ԻԵ. 3—4):

Տար (հիւրընկալի) քո տունն օտարական աղքատները (Ես. ԾԸ. 7)

Գիտէք մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը, որ ինքն ձեզ համար աղքատացաւ, որ հարուստ էր, որ դուք հարստանաք նորա աղքատանալովն (Բ. Կորն. Ը. 9):

Ա Ղ Օ Թ Ք

Աղօթել՝ նշանակում է Աստուծոյ հետ խօսիլ: Աղօթելու ժամանակ նախ ամփոփելու ենք մեր ուշքը եւ միտքը և ասլա խօսելու ենք Աստուծոյ հետ: Երկու կերպ է աղօթքն—առանձին քիւ և բազմութեամբ ձայնաւոր կամ բարձրաձայն երգելով:

Ով Տէր, օրական եօթն անգամ կօրհնեմ զքեզ քո իրաւունքների և արդարութեան համար (Սաղ. ԾԺԸ. 164):

Աղօթքով խնդրեցի և տրուեցաւ ինձ հանձար. կանչեցի և եկն ինձ իմաստութեան ոգի (Իմաստ. Է. 7):

Լուացուեցէք, սրբուեցէք, իմ աչքի առաջ ձգեցէք չարութիւնները ձեր անձերից, դադարեցէք ձեր չարութիւններից. սովորեցէք բարեքներ գործել, խնդրեցէք իրաւունքներ. տեսէք որբին դատը և պաշտպանեցէք այլուուն իրաւունքները: Եկէք խօսենք միմեանց հետ, ասում է Տէրն, եթէ ձեր մեղքերն կը կը լինին ունջի պէս սև, կ'սպիտակացնեմ ինչպէս ձիւն, և եթէ կը լինին ինչպէս կարմիր որդան (ղրմըզ), կանեմ ինչպէս սպիտակ մաքուր բուրդ (Ես. Ա. 16—18):

Ասում է Տէրն. դեռ նոքա չաղօթած՝ ես կը լսեմ նոցա. և քանի որ կը խօսեմ (կաղօթեն) կասեմ. ինչ էք խնդրում (Ես. ԿԵ. 24):

Այն օրերում (Յիսուս) բարձրացաւ սարն աղօթելու. և ամբողջ գիշերը անցուց Աստուծոյ աղօթելով (Ղուկ. Զ. 12):

Փրկիչն Գեթսեմանի ձորում տագնապի մէջ էր և աղօթում էր աւելի մտադրութեամբ: Քրտինքը հոսում էր նորանից ինչպէս արեան կաթիլներ և թափուում երկրի վերայ... և ասաց աշակերտներին. ինչո՞ւ քնանում էք. վեր կացէք, աղօթք արէք, որ չընկնէք փորձութեան մէջ (Ղուկ. ԻԲ. 43—47):

Խնդրեցէք և կը տրուի ձեզ, փնտռեցէք և կը գտնէք. զարկէք (Աստուծոյ ողորմութեան դուռը) և կը բացուի ձեզ համար: Վասն զի ամեն ոք ով որ խնդրում է, առնում է. ով որ փնտռում է, գտնում է. ով որ զարկում է, բացուում է նորա համար (Մատ. Է. 7—8):

Աղօթք արէք միմեանց համար, որ բժշկուիք. քանզի խիստ զօրաւոր են արդար մարդոց աղօթքն: Եղիան մեզ պէս կրից ենթակայ մարդ էր. աղօթք արաւ որ անձրև չգայ. երեք տարի և վեց ամիս անձրև չէկաւ երկրի վերայ, և կրկին աղօթեց և երկինքն անձրև տուաւ և երկիրն բուսցրուց իւր պտուղները (Յակ. Ե. 16—18):

* *

Փրկիչն աղօթքը միացուց զղջման և պահոց հետ: Այս միացեալ ուժն աւելի զօրաւոր և աւելի օգտակար է հոգու նպատակներին. այս պատճառաւ աղօթքի հետ դասաւորեցինք զղջումն էլ, պահքն էլ, որք խառնուած են միմեանց հետ ծոմապահութեամբ:

Մովսէս Աստուծոյ առաջ կանգնած էր քառասուն օր և քառասուն գիշեր, ոչ հաց կերաւ և ոչ ջուր խմեց (Յւլք ԼԳ. 28):

Եղիա մարգարէն վեր կացաւ քնից, կերաւ, խմեց և այն կերակրին ուժովն զնաց քառասուն օր և քառասուն գիշեր, (առանց ուտելու), մինչև որ հասաւ Աստուծոյ սարն—Քորեբ լեռն (Գ. Թագ. ԺԹ. 8):

Յիսուս լցուած Ս. Հոգւով դարձաւ Յորդանան գետից և անապատ տարուեցաւ Ս. Հոգւով՝ քառասուն օր սատանայից փորձուելու համար. այն օրերում (40 օր և 40 գիշեր) ոչ կերաւ Յիսուս և ոչ խմեց (Ղուկ. Գ. 1—2. Մատ. Գ. 1—2 Մար. Ա. 12—13):

Ծունկերս տկարացան ծոմապահութիւնից և մարմինս մաշուեցաւ, պարարտութիւնից (Սաղ. ԾԼ. 24):

Հացի պէս կերայ մոխիրը և արտասուքներով խառնեցի խմելիքս (Սաղ. ԾԱ. 10):

Երբ լսեցի (Երուսաղէմի պարսպի աւերուելը) նստայ և լացի, քանի օր սգացի և ծոմապահութեամբ աղօթեցի Աստուծոյ առաջ (Նէեմ. Ա. 4):

(Իսրայէլի ժողովուրդն ասում է Տիրոջ). «Ի՞նչ է պատճառն որ մենք պահք պահեցինք և դու չտեսար. խոնարհեցուցինք մեր անձերը և չգիտացիր»: Պատասխանում է Տէրն. «Որովհետև ձեր պահեցողութեան օրերում դուք կատարում էք ձեր կամքը, և կսկծեցնում էք ձեր ձեռքի տակ եղած մարդիկը, պահում էք հակառակութիւններով և կռիւներով. և ձե՞ծում էք աղքատները: Բայց ինձ ի՞նչ պէտք է այսպիսի օրուան պահքն—ձեր դալն և ինձ թախանձելն և իմ ձեզ չլսելն: Ես ոչ այդպիսի պահք ընտրեցի և ոչ օր, որի մէջ խոնարհեցնում

է մարդ իւր անձը: Որովհետև թէ որ քո պարանոցը (վիզը) կը ծռես օղակի պէս և քո ոտների տակ կը տարածես քուրձ և մոխիր, այն էլ չհամարեցի ծոմապահութիւն և ընդունելի օր. ես չընտրեցի այնպիսի պահքը, ասում է Տէր:—Այլ այս է իմ ընտրած պահքը. քանզի քո անիրաւութեան կնճիւղը, քանզի քո բռնի վաճառների (առւտրի) խարդախութիւնը, թողութեամբ արձակիր նեղուածները և պատառիր անիրաւութեան բոլոր մուրհակները: Բրդիր քո հացը անօթիներին և տնոր քո տունն անտուն աղքատները. թէ որ տեսնես մերկը՝ կը հագցնես, և ծուռ աչքով չես նայիր քո դրացիների գաւակների վերայ: Այն ժամանակ կանուխ կը ծաւալի քո լոյսն. շուտով կը հասնի քեզ բժշկութիւնն. քո առջևից կը գնայ քո արգարութիւնն, և քո շուրջը կը պատէ Տիրոջ փառքն: Այն ժամանակ կաղօթես և կը լսէ քեզ Աստուած (Ես. ԾԼ. 3—9):

Եւ այժմ ասում է ձեր Տէր Աստուածն. Գարձէք գէպի ինձ՝ ձեր բոլոր սրտով պահելով և լալով և կոծելով: Պատառեցէք ձեր սրտերը և ոչ թէ ձեր հանդերձները (շորերը): Գարձէք գէպի ձեր Տէր Աստուածն, վասն զի ողորմած և գրթած է, համբերող և բազումողորմ և զղջանում է մարդոց չարութեանց վերայ¹⁾ (Յովել Բ. 12—13):

Ասում է Յովնան մարգարէն. Երեք օրից լետոյ կը կործանուի Նինուէ քաղաքն: Նինուէի բնակիչներն հաւատացին Աստուծոյ մարգարէի խօսքին. քարոզեցին պահել պահքն և մեծից մինչև փոքրն հազան քուրձ: Այս գոյժն հասաւ Նինուէացուոց թագաւորին, իջաւ իւր աթոռից, հանեց իւր թագաւորական հագուստը, հագաւ քուրձ և նստաւ մոխրի վերայ: Քարոզուեցաւ թագաւորից և մեծամեծներից որ մարդ և անասուն, ոչխար և տաւար ոչինչ չուտեն և չարածեն և ջուր չխմեն: Մարդ և անասուն հազան քուրձ և սրտի մտօք աղաղակեցին առ Աստուած և դարձան իւրաքանչիւր ոք իւրեանց չար ճա-

¹⁾ Նշանակում է. այն պատիժը՝ որը Աստուած տալու էր մեղաւորներին, խնայում է տալ երկար ժամանակ, սպասում է մեղաւորների դարձին և զղջալուն:

նապարհից և իւրեանց ձեռքում եղած անօրէնութիւններէրց...: Աստուած տեսնելով որ ամեն ոք դարձաւ իւր չար ճանապարհից, ինքն էլ զղջաց այն չարեաց վերայ, որը խոստացած էր թափել նոցա վերայ և պատժել քաղաքը իւր բնակիչներով միասին, բայց չպատժեց, այլ ներեց տեսնելով նոցա կատարեալ զղջումը, ծոմապահութիւնը, մեղայ կոչելը և ապաշխարութիւնը (Յովն. Գ.):

Մի մեղաւոր կին, երբ իմացաւ թէ Յիսուս նստած է փարիսեցի Սիմոնի տան, բերաւ մի շիշ նարդոսի ազնիւ և թանկագին օծանելիք, կար (կանգնած է) Յիսուսի ոտների ետև, լաց էր լինում և սկսաւ արտասուքներով թրջել նորա ոտները, սրբում էր իւր մազերով, համբուրում էր Փրկչի ոտները, և օժում օծանելիքով...: Յիսուս ասում է նոյն կնոջ. Քո հաւատքդ պարեցուցին քեզ, զնա խաղաղութեամբ (Ղուկ. Է. 36—50):

Կատարելապէս զղջալով և Յիսուսի Քրիստոսի մարգասիրութեան դիմելով արդարացան շատ մաքսաւորներ, անառակներ և անբարոյականներ: Այսպէս իւր վերջին շնչում արդարացաւ բոլորական զղջմամբ և աջակողմեան աւագակն:

Ա Մ Բ Ա Ր Ի Զ Տ

Ամբարիշտ մարդիկ ոչ հանգստութիւն կունենան և ոչ խաղաղութիւն աշխարհիս վերայ:

- Կորաւ ամբարիշտն (Սաղ. Թ. 6):
- Տեսայ ամպարիշտը հպարտացած և բարձրացած ինչպէս Լիբանանի մայրի (չամի) ծառերն: Անցայ և ահա այլ ևս չըկար ամպարիշտն, խնդրեցի, և չգտնուեցաւ (Սաղ. ԼԳ. 35—36):
- Որդեակ, զգուշ կաց որ քեզ չխաբեն ամպարիշտ մարդիկ (Առ. Ա. 10):
- Կը կործանուին ամպարիշտաց տուներն (Առ. ԺԳ. 11):
- Ամպարիշտն փախչում է առանց մէկից հալածուելու (Առ. ԻԸ. 1):

Ուրախութիւն չկայ ամպարիշտաց համար (Ես. ԻԸ. 21):
Խաղաղութիւն չկայ ամպարիշտաց համար (Ես. ԾԷ. 21):
Երբ կը թողնէ ամբարիշտ մարդն իւր ճանապարհները, և անօրէն մարդն իւր խորհուրդները և կը դառնայ առ Տէր և Կը գտնէ ողորմութիւն (Ես. ԾԵ. 7):

Ասում է Տէր. Իմ ժողովրդեան մէջ գտնուեցան ամպարիշտ մարդիկ, որք կանգնեցին որոգայթներ հաւորսների վարմի (ճուղակի) նման՝ մարդիկ որսալու համար (Եր. Ե. 26):

Չեմ կամենում ամպարիշտի մաշը, ասում է Աստուած, ինչպէս կամենում եմ ամպարիշտի իւր չար ճանապարհից դառնալը և ապրելը (Եզեկ. ԼԳ. 11):

Ա Մ Բ Ա Ր Տ Ա Ի Ա Ն

Տէրն ինչպէս հակառակ է ամբարտաւան սատանային, նոյնպէս հակառակ է և ամբարտաւան մարդոց և կանանց:

Ամբարտաւաններին հակառակ է Տէրն, շնորհքը տալիս է խոնարհներին (Առ. Գ. 34):

Ասում է Տէրն. Կը խոնարհեցնեմ ամեն ամբարտաւանները (Ես. Ա. 25):

Կը կորուսանեմ անօրէնների հպարտութիւնը և կը խոնարհեցնեմ ամբարտաւանների բարձրութիւնը — ասում է Տէրն (Ես. ԺԳ. 11):

Տէրն ցրուեց ամբարտաւանները իւրեանց սրտերի խորհուրդներով: Քանդեց աթոռներից հզօրները և բարձրացոյց խոնարհները (Ղուկ. Ա. 51—52):

Վերջին օրերում մարդիկ կը լինին անձնասէր, արծաթասէր, հպարտ, անբարտաւան, հայհոյիչ և անշնորհք (Ռ. Գ. 1—2):

Սրտից են դուրս գալիս չար խորհուրդներ և պղծում մարդը — շնութիւն, պոռնկութիւն, գողութիւն, սպանութիւն, ազահութիւն, չարութիւն, նենգութիւն, զիջութիւն, հայհոյութիւն, ամբարտաւանութիւն, անզգամութիւն: Այս բոլոր չարիքներն դուրս են գալիս ներսից և պղծում մարդը (Մարկ. Է. 21—23):

ԱՄԵՆԱԶՕՐ ԵՒ ԱՄԵՆԱԿԱԼ Է ՏԷՐՆ

Այ՛ն, կայ ամենազօր, կենդանի Տէր, (Բ. Մակար. ԺԵ. 4):
Ո՛վ Աստուած, երկնքից հասնում էր քո ամենազօր Բանն (Միածին Որդին) (Իմաստ. ԺԸ. 15):

Ասում է Եղիան. Նախանձեցայ ամենակալ Տիրոջ նախանձով (Գ. Թագ. ԺԹ. 10):

Քարի խնդրեցէք և ոչ թէ չար, որ ապրիք, և ձեզ հետ կը լինի ամենակալ Տէր Աստուածն (Ամովս Ե. 14):

Այ՛ն, Տէր Աստուած ամենակալ, արդար և ճմարիտ են քո դատաստաններն (Յայտ. ԺԶ. 7):

Ա Մ Օ Թ

Միշտ աշխատելու է հեռի մնալ ամօք և նախախնիք բերող գործերից:

Ամօթն ծածկեց իմ երեսը (Սաղ. ԿԸ. 8):

Անզգամ և լանդուզն կի՛նն, որ չգիտէ ամօթ, կարօտ կը լինի հացի (Առ. Թ. 13):

Անխելք որդին ամօթ և նախատինք է իւր հօր համար (Առ. ԺԹ. 13):

Ամօթ և նախատինք է կրում այն որդին, որ անարգում է իւր հայրը և մերժում է իւր մայրը (Առ. ԺԹ. 16):

Ամօթ կայ՝ որ մեղք է բերում, ամօթ էլ կայ որ փառք և շնորհք է բերում (Առ. ԻԶ. 11):

Գուք ինչո՞ւ էք զրկում իմ ժողովուրդը և ամօթով լցնում տնանկաց երեսը — ասում է Տէրն (Ես. Գ. 15):

Աստուծուց հեռացան և օտարացան իւրեանց ամօթալի գործերով (Ովս. Թ. 10):

Ասում էին խաղաղութիւն, խաղաղութիւն. բայց չկար խաղաղութիւն. գոնէ ամաչէին, որ գործեցին (արարին) պղծութիւն. սակայն և այնպէս ո՛չ ամաչեցին ամօթով և ո՛չ պատկառեցին (Եր. Ը. 11—12):

ԱՅԳԻ—Առաքաւոր խօսք

Աստուծոյ այգին է աստուածապաշտ ժողովուրդն, որից Աստուած սպասում է տեսնել առաքինութեան պտուղներ և բարի արդիւնք:

Իմ սիրականիս երգը կերգեմ իմ սիրած այգու համար: Իմ սիրելիս ունէր պողաբեր տեղում տնկուած մի այգի: Ասում է Աստուած. Չըջապատեցի ցանկով, զարգարեցի ձողերով, տընկեցի ընտիր խաղողի որթեր, շինեցի նորա մէջ աշտարակ, փորեցի նորա մէջ հնձան և սպասեցի որ բերէ խաղող: Ի՛նչ այժմ, Յուդայի մարդիկ և Երուսաղէմի բնակիչներ, դատաստան արէք իմ և իմ այգուս մէջ: Ի՛չ ի՛նչ ինամք պէտք էր անել այգուս՝ որ ես չարի: Սպասեցի որ խաղող կը բերէ, փուշ բերաւ: Այժմ կը պատմեմ թէ ինչ պիտի անեմ այգուս.— կը քանդեմ նորա ցանկապատը, որ լինի անասնոց կերակուր, կը կործանեմ նորա պարիսպը և կը լինի ոտնակոխ: Կը թողնեմ խոպանացած իմ այգին. ո՛չ կը յօտուի (մատները կտրել) և ո՛չ կը փորուի, կը բուսնի նորա մէջ փուշ ինչպէս անմշակ հողի մէջ. և պատուէր կըտամ իմ ամպերին, որ անձրև չթափեն իմ այգու վերայ⁽¹⁾: Որովհետև զօրութեանց Տիրոջ այգին Իսրայէլի տունն է (Ես. Ե. 1—7):

Ո՛վ Տէր, այցելութիւն արա՛ այս այգուն և ինամք տա՛ր սրան, որը տնկեց քո աջ ձեռքն (Սաղ. ՀԹ. 9—16):

Լայնատարած, գողալից այգի է Իսրայէլն. նորա պտուղների շատութեան չափով շատացուց սեղաններ և իւրեանց երկրի պարարտութեան չափով կանգնեցին արձաններ (Ովս. Ժ. 1), կուռքեր:

Մի մարդ տնկեց այգի և տուաւ այն մշակներին և ինքն ճանապարհ գնաց երկար ժամանակ: Ժամանակին մի ծառայուղարկեց մշակների մօտ, որ այգու պողիցը տան նրան. բայց մշակները ծեծեցին ծառան և արձակեցին դատարկ: Այգետէրն

¹⁾ Այս է նշանակութիւնն — ասում է Տէրն. իմ ինամքը բոլորովին կը հեռացնեմ իմ ժողովրդից. քարոզիչներ էլ չեմ ուղարկել քարոզելու, ոտնակոխ կը լինի թշնամեաց:

ուղարկեց մի ուրիշ ծառայ էլ. մշակներն ծեծեցին և զնա, անարգեցին և արձակեցին դատարկ: Ուղարկեց և երրորդ ծառայ. նոքա զնա էլ վիրաւորեցին և դուրս հանեցին: Ասում է այգու Տէրն. Խոնչ անեմ. ուղարկեմ իմ սիրելի որդին (Յիսուս Քրիստոս), թերևս կը պատկառեն սորանից: Մշակներն երբ տեսան Որդին, խորհեցին միմեանց հետ և ասում են. Սա է ժառանգն, կըսպանենք զսա, որ մեզ լինի ժառանգութիւնն: Եւ հանեցին զնա այգուց դուրս և սպանեցին: Այժմ ինչ կանէ այգու տէրն նոցա հետ (Ղուկ. Ի. 10—15):

Ա Յ Ր — Մ Ա Ր Գ

Որովհետև մարդն ստեղծուած է Աստուծոյ ձեռնով Աստուծոյ պատկերին համեմատ. այս պատճառաւ մարդ միշտ աշխատելու է որ կատարեալ լինի Աստուծոյ նման:

Տէր Աստուած մարդը ստեղծեց երկրի հողից և փչեց նորա երես և մարդն եղաւ հողի—հողով կենդանի (Ծնն. Բ. 7):

Եւան առնուեցաւ իւր մարդից (Ծնն. Բ. 23):

Արդար և կատարեալ մարդ էր Նոյ (Ծնն. Զ. 9):

Անդգամ մարդն չէ ճանաչում Աստուծոյ մեծագործութիւնը (Սաղ. ՂԱ. 7):

Չար է անօրէն մարդոյ կործանումն (Առ. Ա. 18):

Խորագէտ մարդն թագցնում է իւր անարդանքները (Առ. ԺԲ. 16): Բարկասիրտ մարդն գործում է առանց խորհրդի: Իմաստուն մարդն շատ համբերող է (Առ. ԺԳ. 17—18):

Երկայնամիտ մարդն շատ խոհեմ է, իսկ կարճամիտն շատ անմիտ է (Առ. ԺԳ. 29):

Հեղ մարդն բժիշկ է սրտի (Ա. ԺԳ. 30):

Իմաստուն ծառան հանդարտեցնում է մարդոյ սաստիկ բարկութիւնը. բայց ո՞վ կարող է համբերել նեղսիրտ մարդոյ բարկութեան (Առ. ԺԸ. 14):

Մարդոյ անդգամութիւնն ապականում է նորա ճանապարհը

և բարձրացնում է տրտունջ նորա սրտում Աստուծոյ դէմ (Առ. ԺԹ. 3):

Մեծ է ողորմած մարդն և պատուական, բայց դժուարին է գտնել հաւատարիմ մարդ (Առ. Ի. 6):

Կատարեալ եղէք, ինչպէս կատարեալ է ձեր երկնաւոր Հայրն, ասում է Փրկիչն (Մատ. Ե. 48):

Ա Յ Ր Ի Ե Ի Ո Ր Բ

Հարկաւոր է վարուել այրեաց և որբոց հետ իբրև հայր, մայր, եղբայր և քոյր:

Մի չարչարէք ամեն այրիները և որբերը. իսկ թէ որ չարչարէք զնոսա և նոքա կը բողոքեն ինձ—ասում է Աստուած—լսելով կը լսեմ նոցա... և կը կոտորեմ զձեզ սրով և այրի և որբ կը լինին ձեր կիներն և մանուկներն (Եւք ԻԲ. 22—24)

Չչարչարէք այրին և որբը (Եւք ԻԲ. 22):

Անիծեալ լինի այն մարդն, որ կը ծռէ պանդխտին, որբին և այրուն (որբեարի) իրաւունքը (Բ. Օր. ԻԷ. 19):

Պատաստան արէք որբին և այրուն, իրաւունք տուէք տնակին և խոնարհին (Սաղ. 2Ա. 3):

Փրկեցի աղքատը հօրի ձեռքից և օգնեցի որբին, որ չունէր օգնական: Իմ վերայ կը գար կորսուածի օրհնութիւնն և զիս օրհնեց այրի կնոջ բերանն: Ես աչք էի կուրաց համար, ոտք էի կաղաց համար և հայր էի տնանկաց համար (Յովք ԻԹ. 12—16):

Փրկեցէք զրկուածը, դատաստան արէք որբին, և իրաւունք տուէք այրուն (Ես. Ա. 17—18):

Այսպէս է ասում ամենակալ Տէրն. Պատեցէք արդար դատաստանաւ, ամենքդ արէք ձեր եղբոր ողորմութիւն և զթութիւն, և մի չաղթահարէք այրին, որբը և պանդուխտը (Զաք. Ի. 9—10):

Մի քաղաքում կար մի դատաւոր, որ ոչ վախում էր Աս-

տծուց և ոչ ամաչում էր մարդիկներէց: Նոյն քաղաքում կար և մի որբեւարի կին, որ գալիս էր նորա մօտ և ասում. Իրաւունք տուր ինձ ազատուիլ իմ թշնամուց: Քայց երկար ժամանակ չէր կամենում լսել դատաւորն. այնուհետեւ ասում է իւր մտքում. Թէև Աստուծոց չեմ վախենում և մարդիկներէց չեմ ամաչում, գոնէ իրաւունք տամ այս այրի կնոջ, որ միշտ դալով չթախանձէ զիս և չձանձրացնէ: Եւ ասում է Տէրն. Լըսեցէք ինչ էր ասում անիրաւ դատաւորն. իսկ Աստուած իւր ծառաների վրէժը չառնէր, որ զիշեր և ցերեկ աղաղակում են Տիրոջ (Ղուկ. փԸ. 2—7):

Ա Ն Ա Ր Ա Տ

Որքան հնարաւոր է՝ աշխատելու ենք Աստուծոյ և մեր խղճի առաջ լինել անարատ, անբիծ և մաքուր:

Երևեցաւ Տէր Աստուած Արրահամին և ասաց նորան. Ես եմ քո Աստուածն, հաճելի եղի՛ր իմ առաջ և անարատ (Ծնն. փԷ. 1):

Սիրում է Տէրն Սուրբ Սիրտը և ընդունելի են նորան ամեն անարատներն (Առ. ԻԲ. 11):

Մարդոյ ծերութիւնն իւր իմաստութիւնն է և ծերութեան հասակն անարատ կեանքն է (Իմ. Գ. 9):

Ճշմարիտ, անարատ, արդար և աստուածապաշտ մարդ էր Յովբ (Ա. 1):

Ջաքարիա և Նդիսարէթ երկուքն էր արդար էին Աստուծոյ առաջ և անարատ գնում էին Տիրոջ բոլոր պատուիրանների և իրաւունքների մէջ (Ղուկ. Ա. 6):

Աստուծոց և Հօրից շնորհուած սուրբ և անարատ կրօնաւորութիւնն այս է—այցելու լինել որբոց և այրեաց իւրեանց նեղութեանց ժամանակ, և անարատ պահելով իւրեանց անձը աշխարհից Յակ. Ա. 27):

Գուք կը լինիք Աստուծոյ անարատ և անբիծ որդիներ (Փիլ. Բ. 15):

Ա Ն Ա Ր Գ Ե Լ

Ոչ ոք անարգելու չէ իւր նման մարդը, այլ աշխատելու է յարգել և պատուել մարդիկը. անարգելու է միայն մեզքը:

Մեղանչում է նա, որ անարգում է աղքատը. երանելի է նա, որ ողորմում է աղքատին (Առ. փԳ. 21):

Ով որ արհամարհում է իւր հայրը և մայրը, կանցնի նորա լոյսն և խաւար կը տեսնեն նորա աչաց բիբերն (Առ. Ի. 20):

Չորերի պաշտաններն կը խլեն այն աչքը, որ ծաղրում է իւր հայրը և անարգում է իւր մօր ծերութիւնը (Առ. Լ. 17):

Որդին անարգում է իւր հայրը, աղջիկն յարձակուում է իւր մօր վերայ, հարսն իւր սկեսրի վերայ և տան թշնամին է իւր ընտանիքն (Միք. Է. 6):

Որ պարծենում ես օրէնքով, օրէնքը ոտնակոխ անելով անարգում ես դԱստուած, որովհետեւ Աստուծոյ անունն ձեր պատճառաւ հայհոյուում է հեթանոսաց մէջ (Հռ. Բ. 23—24):

ԱՆԵՂԾ. ԱՆՄԱՀ

Աստուծոյ հոգին անմահ է մարդոց մէջ:

Աստուած հաստատեց մարդը անեղծութեան մէջ (անմահութեան մէջ) (Իմ. Բ. 23):

Ով Տէր, Քո հոգիդ անեղծ է (անջնջելի է) ամեն մարդոց մէջ (Իմ. Բ. 23):

Անմահութիւնն մարդը մօտեցնում է Աստուծոյ և իմաստութեան ցանկանալն տանում է արքայութիւն (Իմ. Զ. 20—21):

Համբերութեամբ բարի գործ գործողներն խնդրում են փառք, պատիւ, անմահութիւն և յաւիտենական կեանք (Հռ. Բ. 7):

Համբերութեամբ պատերազմող մարմնաւոր զինուորներն առնում են եղծանելի պսակը. և մենք Հոգւոր զինուորներս առնելու ենք անեղծանելի պսակը (Ա. Կորն. Թ. 25):

37/133



Բայց այժմ մեր Փրկիչ Յիսուս Քրիստոսի երևելովն յայտնեցաւ շնորհքն, որ խափանեց մահր և աւետարանին ձեռնով ՚ի լոյս հանեց կեանքը և անմահութիւնը (Բ. Տիմ. Ա. 10):

Ա Ն Զ Գ Ա Մ

Անզգամութիւնն զգուելի է Աստուծոյ և մարդոց:

Անզգամ մարդն ասաց իւր սրտում, թէ Աստուած չկայ (Սաղ. ժԳ. 1):

Իմ անզգամութեան երեսից հոտեցան և փթեցին իմ վերքերն (Սաղ. ԼԷ. 6):

Անզգամ կինն կարօտ կը մնայ հացի (Առ. Թ. 13):

Իմաստուն կանայք շինեցին տուներ, իսկ անզգամներն կործանեցին իւրեանց ձեռքով (Առ. ժԳ. 1):

Սմեն ինչ հակառակ է անզգամի (Առ. ժԳ. 7):

Անզգամն արհամարհում է իւր հօր խրատը (Առ. ժԵ. 5):

Ինչպէս ձմրան կաթիլն հանում է մարդը իւր տանից, նոյնպէս և անզգամ կինն հանում է մարդը իւր տանից (Առ. ԻԷ. 15—16):

Բարկութիւնն սպանում է անզգամը, և չար նախանձն մեռցնում է անմիտը (Յովբ Ե. 2):

Ա Ն Ի Բ Ա Ի, Ա Ն Ի Բ Ա Ի Ո Ւ Թ Ի Ի Ն

Անիրաւութիւնն հակառակ է արդարութեան. անիրաւներն զրկուում են Աստուծոյ թագաւորութիւնից:

Ո՛վ Տէր, փրկիր զիս աւիրաւ մարդից (Սաղ. ԸԼԹ. 2):

Արդար մարդն ատում է անիրաւ խօսքը (Առ. ժԳ. 5):

Աստուծոյ առաջ պիղծ է անիրաւների խորհուրդն (Առ. ժԵ. 20):

Անիրաւների բոլոր վատութիւնն կրկին դառնում է իւրեանց ծոցն (Առ. ժԶ. 33):



Ով որ արդար է համարում անիրաւը և անիրաւ է համարում արդարը, երկուքն էլ պիղծ են Աստուծոյ առաջ (Առ. ժԷ. 15):

Անիրաւութեամբ ժողովողն կարօտ կը մեռնի (Առ. ժԱ. 24):

Անիրաւութեամբ դիզած հարստութիւնն կը պակասի. իսկ ով որ ժողովում է պարկեշտութեամբ՝ կը շատանայ (Առ. ժԳ. 11):

Տէրն ասելու է դատաստանի օրում. Չգիտեմ ձեզ թէ որ տեղից էք. հեռացէք ինձանից դուք ամեն անիրաւ մշակներդ (Ղուկ. ԻԳ. 27):

Մի՛ պատրաստէք ձեր անդամները (զգայարանները) անիրաւութեան մեղաց գործիք, այլ պատրաստեցէք ձեր անձերը Աստուծոյ համար՝ որպէս թէ մեռնելուց կենդանացած. և ձեր անդամները պատրաստեցէք արդարութեան գործիք Աստուծոյ համար (Հռ. Զ. 13):

Ա Ն Խ Բ Ա Տ

Առհասարակ անկիրթ են լինում անխրատներն. և բնաւ չեն հնազանդում ճշմարիտ և հայրաբար խրատ տուողներին:

Անխրատն մեռնում է անխրատների հետ իւր անխրատութեան—անկրթութեան պատճառաւ. և զրկուում է իւր կեանքի երկարութիւնից և կորչում իւր անկրթութեան պատճառաւ (Առ. Ե. 23):

Աղաչում եմ ձեզ, ո՛վ մարդիկ, իմաստութիւն սովորեցէք, ո՛վ տղէտներ, ականջ դնելով պահեցէք ձեր սրտերում, ո՛վ անխրատներ, որովհետեւ խօսում եմ ձեզ ազնիւ խօսքեր (Առ. Ը. 4—6):

Անխրատն ո՛չ սիրում է զինքը յանդիմանողը, և ո՛չ խօսում է իմաստնոց հետ (Առ. ժԵ. 12):

Ուրախ չէ լինում հայրն իւր անխրատ որդու վերայ (Առ. ժԷ. 21):

Պատրաստուում են տանջանք անխրատների համար, նոյնպէս և պատիժներ անզգամների համար (Առ. ժԹ. 29):

ԱՂՕԹԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԿՆԻԼ ԵՐԵՍԻ ՎԵՐԱՅ

Նեղութեան և փորձութեան ժամանակ աւելի մտադրութեամբ և ջերմեռանդութեամբ աղօթելու է:

Յիսուս Գեթսեմանի պարտիզում մի փոքր առաջ գնալով ընկաւ իւր երեսի վերայ, աղօթեց և ասաց. Ո՛վ Հայր, եթէ Հնար է, թող անցնի այս բաժակն—չարչարանքն, խաչելութիւնն և մահն—ինձանից, բայց ոչ թէ ինչպէս կամենում եմ ես, այլ ինչպէս կամենում ես դու (Մատ. ԻԶ. 39):

Յիսուս փոքր ինչ առաջ գնալով՝ ընկաւ գետնին իւր երեսի վերայ և աղօթում էր, որպէս զի եթէ Հնար է, անցնի նորանից այն ժամն. և ասում է. Հայր Աստուած, ամեն ինչ Հնարաւոր է քեզ, թող անցնի այս բաժակն—չարչարանքն—ինձանից, բայց ոչ թէ ինչպէս կամենում եմ ես, այլ ինչպէս կամենում ես դու (Մար. ԺԳ. 35—36):

Յիսուս ասում է իւր աշակերտներին. Աղօթքի կանգնեցէք, որ չմտնէք փորձութեան մէջ. և ինքն Հեռացաւ աշակերտներէրից մի քարընկեց Հեռաւորութեամբ, ծունր դրաւ և աղօթելով ասում էր. Հայր Աստուած, եթէ կամենում ես, անցուր այս բաժակը ինձանից, բայց ոչ թէ իմ կամքն, այլ քո կամքն լինի: Եւ երկնքից երևեցաւ Հրեշտակ Յիսուսին և զօրացնում էր զնա. Փրկիչն տազնապի մէջ էր և աղօթում էր ջերմեռանդութեամբ: Յիսուսից Հոսում էին քրտինքներն ինչպէս արեան կաթիլներ և թափուում գետնին (Ղուկ. ԻԲ. 40—44):

Քսան և չորս երէցներն, որ նստած էին իւրեանց աթոռների վերայ Աստուծոյ շուռջ, ընկան իւրեանց երեսի վերայ և երկրպագում էին Տէր Աստուծոյն (Յայտ. ԺԱ. 16):

ԱՆԿԱՐԳ—Անկարգութիւն

Անկարգութիւնից են առաջանում ամեն տեսակ խռովութիւն, կռիւ և պատերազմ:

Բայց ոչ ոք չէ կարող Հնազանդեցնել մարդկան լեզուն, չար և անկարգ և մահաբերի թոյներով լեցուն լեզուն: Նոյն լեզուաւ օրհնում ենք Յիսուս Քրիստոս և Նորա Հայրը. և նոյն լեզուաւ անիծում ենք մարդիկ, որ ստեղծուեցան Աստուծոյ նմանութեան Համեմատ: Միևնոյն բերանից դուրս են գալիս օրհնութիւն էլ, անէծք էլ: Իմ եղբայրներ, պէտք չէ որ այս այսպէս լինի (Յակ. Գ. 8—10):

Ուր որ կայ կռիւ և չար նախանձ, այնտեղ է անկարգութիւն և ամեն տեսակ չար իրեր (Յակ. Գ. 16):

Այսուհետև ձեզ Հաւատացելոցդ Համար պատուական վէժ է Յիսուս Քրիստոս, իսկ անհաւատներին Համար վէժ, զոր անարգեցին շինողքն, նա եղաւ անկեան գլուխն (Ա. Պետ. Բ. 7):

Տէրն փրկեց արգար Ղովտը, որ ձանձրացել էր Սողովմայեցոց անկարգ և անառակ վարմունքից (Բ. Պետ. Բ. 7):

Ա Ն Հ Ա Ի Ա Տ

Անհաւատ մի լինիր, այլ հաւատն ճշմարտութեան:

Հաւատացեալի Համար Հարստութեամբ լեցուն է ամեն աշխարհ. իսկ անհաւատին Համար չկայ և ոչ մի դանդ (Առ. ԺԷ. 4):

Տէր, ողորմիր մեզ, որովհետև քեզ յուսացած ենք. կորսուեցաւ (կորաւ) անհաւատների դաւակն (Ես. ԼԳ. 2):

Մի լինիր անհաւատ, Թովմաս,—ասաց Յիսուս—այլ Հաւատացեալ (Յով. Ի. 27):

Աստուած մի անգամ փրկեց իւր ժողովուրդը Եգիպտոսից. երկրորդ անգամ կորցրուց անհաւատները (Յուդ. 5):

Քրիստոսեայ եղբայրն դատուում է իւր եղբօր Հետ, և այն անհաւատների մէջ (ամօթ չէ) (Ա. Կորն. Զ. 6):

Մի լինիք լծակից անհաւատներին, քանզի ինչ մասնակցութիւն ունի արդարութիւնն անօրէնութեան հետ, և ինչ հաղորդակցութիւն ունի լոյսն խաւարի հետ. և ինչ միաբանութիւն ունի Քրիստոս Բելիարին հետ. կամ ինչ բաժին ունի հաւատացեալն անհաւատի հետ (Բ. Կորն. Զ. 14—16):

Ա Ն Հ Ն Ա Զ Ա Ն Պ

Անհնազանդութեան վարձքն պատիժն է:

Խորագէտ որդին հնազանդ է իւր հօր. իսկ անհնազանդ որդին կը կորչի (Առ. ԺԳ. 1):

Անհնազանդ և անհաւան եղաւ այս ժողովրդեան սիրտն, ծռուեցան և անցան գնացին և չասացին իւրեանց սրտերում. վախենանք մեր Տէր Աստուծոց (Եր. Ե. 23—24):

Արդարոց վերայ չկան օրէնքներ, այլ օրէնքներն դրուած են անօրէնների, անհնազանդների, ամբարիշտների և մեղաւորների, անարբոց և պղծոց և հայրը և մայրը անարգողների... համար (Ա. Տիմ. Ա. 9):

Ինչպէս մի մարդոյ — Ագամայ — անհնազանդութեամբ եղան շատ մեղաւորներ. նոյնպէս էլ մէկի — Քրիստոսի — հնազանդութեամբ կը լինին շատ արդարներ (Հռ. Ե. 19):

Ա Ն Զ Ն

Ամեն ոք պարտաւոր է զգուշանալ իւր անձի համար:

Իմ անձն կը պարծենայ Տէրով (Սաղ. ԼԳ. 5):

Ո՛վ Աստուած, փրկեցիր իմ անձը մաշից (Սաղ. ԾԵ. 13):
Քանձում են մեղաւորներն իւրեանց անձանց համար չարիքներ (Առ. Ա. 18):

Կաշառ առնողն սպանում է իւր անձը (Առ. ԺԵ. 27):

Ասում է Փրկիչն. զգուշ կացէք ձեր անձերին, զուցէ կը ծանրանան ձեր սրտերն չափազանց ուտելով և արբեցութեամբ

և աշխարհային հոգսերով. և յանկարծակի կը հասնի ձեր վերայ մահուան օրն (Ղուկ. ԻԱ. 34):

Ա Ն Մ Տ Ո Ւ Թ Ի Ի Ն — Ա ն խ ս ե լ ք ու թ իւ ն

Անխելքութեամբ կորչում են անօրէններն (Առ. ԺԱ. 6):
Խելօք մարդոց իմաստութիւնն կը ճանաչէ իւրեանց ճանապարհը. իսկ չիմարների անխելքութիւնն մոլորեցնում է ճանապարհը (Առ. ԺԳ. 8):

Մեծ տարբերութիւն կայ խելօքութեան և անխելքութեան մէջ, ինչպէս առաւելութիւն կայ լուսոյ և խաւարի մէջ: Խելօքի աչքն իւր գլխի վերայ է, իսկ անխելքն գնում է խաւարի մէջ (Փող. Բ. 13—14):

Խելօք մարդոյ սիրտն իւր աջ կողմումն է, իսկ անխելքի սիրտն իւր ձախ կողմումն է (Փող. Ժ. 2):

Ա Ն Ո Ւ Ն

Բարի անունն գերազանց է բոլոր հարստութիւններից:

Օրհնուած կը լինի արդարոց յեշատակն. իսկ ամբարիշտների անունն կանցնի (հանգած ճրագի պէս) (Առ. Ժ. 7):

Չատ հարստութիւններից աւելի լաւ է բարի անունն և արծաթներից ու ոսկիներից աւելի լաւ է բարի շնորհքն (Առ. ԻԲ. 1):

Հոտաւէտ իւղից (օծանելիք ջրերից) աւելի լաւ է բարի անունն և մարդոյ մեռած օրն աւելի լաւ է ծնուած օրից (Փող. Է. 2):

Բարձրացուցէք ձեր աչքերը և տեսէք, ո՞վ հաստատեց այս ամենը. ո՞վ ստեղծեց (երկնից) զարդերը և ամեն մէկը կոչում է իւր անունով և շատ փառքով (Ես. Խ. 26):

Ամեն մարդ, որ կանչում է Աստուծոյ անունը, կ'ապրի (Յովել Բ. 32):

Պու միշտ մեր միջումն ես, ո՞վ Տէր, քո անունն կանչուած է մեր վերայ. մի մոռանար զմեզ (Եր. ԺԳ. 9):

Ա Ն Պ Ա Ր Տ

Անմեղ արիւն թափելու չէ բնաւ. անպարտն էլ զրպարտելու կամ մատնելու չէ: Բնաւ թափելու չէ մարդոյ արիւն:

Չսպանեն անմեղները և արդարները (Ելք ԻԳ. 7):
Երկրի վերայ չթափուի անմեղ արիւն (Բ. Օր. ԺԹ. 10):
Մանասէ թագաւորն թափեց շատ անմեղ արիւն (Գ. Թագ. ԻԱ. 16):

Աճապարում են թափել անմեղ արիւն (Եր. ԾԹ. 7):
Անմեղ արիւն չթափէք այդ տեղում (Եր. Է. 6):
Ահաւասիկ ես ուղարկում եմ ձեզ մօտ մարգարէներ, իմաստուններ և դպիրներ, և նոցանից կըսպանէք և իսպ կը հանէք և նոցանից կը տանջէք ձեր ժողովրդեան մէջ և կը հալածէք քաղաքից քաղաք: Որպէս զի ձեր վերայ դայ երկրի վերայ թափուած ամեն արգար արիւն, արգար Աբէլի արիւնից մինչև Բարաքիայի որդի Զաքարիայի արիւնն, որը սպանեցիք Տաճարի և սեղանի մէջ: Աշմարիտ ասում եմ ձեզ. կը դայ այն ամենն այս ազգի (Հրէից) վերայ, ասաց Յիսուս (Մատ. ԻԳ. 34—36):

Ա Ն Յ Ա Ն Ե Լ

Մարդոց օրերն անցնում են շուքի պէս. Աստուծոյ խօսքից անցնելու չէ. երկինք և երկիր կանցնեն. Աստուծոյ խօսքերն անանց են:
Իմ Տէր Աստուծոյ խօսքից չեմ կարող անցնիլ (Թիւք ԻԲ. 18):
Իմ օրերն անցան ինչպէս հովանի. և ես չորացայ ինչպէս խոտ (Սաղ. ԱԱ. 12):
Կանցնեն մեր կեանքն ինչպէս ամպ, և կը ցրուին ինչպէս մռաժ՝ հալածուելով արեղակի ճառագայթներից (Իմ. Բ. 4):
Երկինք և երկիր կանցանն, բայց իմ խօսքերն չեն անցնիր—ասում է Փրկիչն (Մատ. ԻԳ. 35):
Դուք անցանում էք Աստուծոյ իրաւունքներից և սէրից (Ղուկ. ԺԱ. 24):

Դու որ պարծենում ես օրէնքներով, օրէնքից անցանելով (օրէնքի ասածը չկատարելով), անարգում ես Աստուծ (Հռ. Բ. 23):
Տեսայ նոր երկին և նոր երկիր. քանզի անցան առաջին երկինքն և երկիրն (Յայտ. ԻԱ. 1):

Ա Ն Օ Ր Է Ն Ո Ի Թ Ի Ի Ն

Անօրէնութիւնն հակառակ է Աստուծոյ դրած օրէնքներին. անզեղջ անօրէնն մեռնում է իւր մեղաց մէջ և կորչում հոգւով և մարմնով:

Ահաւասիկ բռնեց անօրէնութեան ցաւն. յղացաւ չարութիւն և ծնաւ անօրէնութիւն (Սաղ. Է. 15):
Իմ անօրէն մեղքերն զլիւիցս էլ աւելի վեր բարձրացան. և ծանր բեռան պէս իմ վերայ ծանրացան (Սաղ. ԼԷ. 15):
Որդի մարդոյ, պահապան դրի քեզ, ասում է Տէր, .. կը լսես ինձանից պատգամներ (Հրամաններ) և կըսպառնաս ժողովրդեան՝ իմ կողմից: Երբ կ'ատեմ անօրինին թէ մահով կը մեռնիս, և դու չզգուշացնես զնա և չխօսիս անօրինին զգուշանալ, դառնալ իւր չար ճանապարհից և ապրիլ. այն անօրէնն կը մեռնի իւր անօրէնութեան մէջ և նորա արիւնը կը պահանջեմ քո ձեռքից: Իսկ եթէ դու կըզգուշացնես անօրինին և նա չի դառնալ իւր անօրէնութիւնից և չար ճանապարհից, այն անօրէնն կը մեռնի իւր անօրէնութեան մէջ և դու կապրեցնես քո անձը (Եզեկ. Գ. 17—19):

Ա Զ Ա Կ Ե Ր Տ

Թէ հոգևոր և թէ մարմնաւոր աշակերտներն պարտաւոր են իւրացնել իւրեանց վարդապետների, վարժապետների և վարպետների ընտիր չատկութիւնները և լինել անխարդախ:
Յետու Նաւեան աշակերտ էր Մովսէս մարգարէին, որից և ձեռնադրեցաւ (Թիւ ԻԷ. 22):
Եղիսէն աշակերտ էր Եղիա մարգարէին, որից և մարգարէ օճաւ Աստուծոյ Հրամանաւ (Գ. Թագ. ԺԹ. 16—21):

Յիտուս իւր աշակերտաց մեկնում էր բոլոր առակաները (Մար. Գ. 34):

Աշակերտն իւր վարդապետից աւել չէ և ծառան իւր տիրոջից: Ըստ կը լինի աշակերտին Համար, եթէ կը լինի իւր վարդապետին պէս և ծառային՝ իւր տիրոջ պէս (Մատ. Ժ. 24-25):

Ասաց Քրիստոս. Աշակերտն լաւ չէ իւր վարդապետից. ամեն կատարեալ աշակերտ բաւական է որ լինի իւր վարդապետին պէս (Ղուկ. Զ. 40):

Ա 2 Գ

Մարդիկ շատ մեղքեր են գործում աչքերով. ամեն ոք պարտաւոր է ղէպի բարին կրթել իւր աչքերը:

Ես աչք էի կոյրերի Համար և ոտք էի կաղերի Համար (Յովբ ԻԹ. 15):

Ուխտ զրի աչքերիս Հետ, որ ծուռ նայուածքով չնայեմ կուսի վերայ (Յովբ ԱՍ. 1):

Ո՛վ Տէր, լոյս տուր իմ աչքերին, որ բնաւ չքնանամ մահուան քնով (Սաղ. ԺԲ. 4):

Պղծութեան պատճառաւ Տէրն խորտակում է անբարտաւան աչքերը, ստախօս լեզուներն, անմեղ արիւն թափող ձեռքերը, չար խորհուրդներ խորհող սիրտը և չարութիւն գործելու Համար փութացող ոտքերը (Առ. Զ. 16—18):

Երեք բան կշտանալ չղիտեն—գժողքն, կորուստն և ազաւ մարդոց աչքերն (Առ. ԻԷ. 20):

Եթէ քո աջ աչքն գայթակղեցնում է քեզ, Հանիր և նետիր. քեզ Համար աւելի լաւ է մի աչքով մտնել Աստուծոյ արքայութեան մէջ, քան թէ երկու աչք ունենալ և ձգուիլ դժոխքի մէջ (Մատ. ԺԸ. 9. Մատ. Թ. 46):

ԱՊՈՆՆԻԵԼ — զոջալ, փեշմանիլ

Աստուծոյ օրէնքների դէմ մեղանչելուց յետոյ միակ դեղ ու ճարն է բոլոր սրտով զոջալ և մեղայ կոչելով դառնալ և ընկնիլ Աստուծոյ զիրկն:

Զոջացէք, մոլորուածներ, դարձէք ձեր սրտերով. որովհետեւ ես եմ ձեր Աստուածն. չկայ ինձանից ուրիշ մէկն... Լսեցէք ինձ, սրտերով կորուսուածներ, արդարութիւնից Հեռացածներ, մօտեցրի ձեզ իմ արդարութիւնը (Ես. ԽԶ. 8—13):

Եւ այժմ ասում է ձեր Տէր Աստուածն. Ինձ դարձէք ձեր բոլոր սրտով, ծոմապահութեամբ, լալով և սգալով: Պատառեցէք ձեր սրտերը, և ոչ թէ ձեր զգեստները (Հագուստները). դարձէք ղէպի ձեր Տէր Աստուածն. որովհետեւ ողորմած է և զթած, երկայնամիտ և բազումողորմ և զոջանում է մարդոց չարութեանց վերայ... Փող Հնչեցուցէք Սիօնում. պաս պահեցէք ծոմապահութեամբ, քարոզեցէք աղօթել, Հաւաքեցէք ժողովուրդը, մաքրեցէք եկեղեցին, ընտրեցէք ծերունիները. ժողովեցէք ծծկեր մանուկները. թո՛ղ ելնէ (դուրս գայ) փեսան իւր սենեակից, և Հարսն իւր առազաստից. թո՛ղ լան (լաց լինեն) Տիրոջ քահանաներն և պաշտօնեաներն և ասեն. Ո՛վ Տէր, ինչպիւր քո ժողովրդեան (Յովել 12—20):

Ապաշխարեցէք, որովհետեւ մօտեցել է Աստուծոյ Արքայութիւնն (Մատ. Գ. 2):

Եթէ չապաշխարէք, ամենքդ էլ կը կորսուիք (Ղուկ. ԺԳ. 3 և 5):

Մի ապաշխարող մեղաւորի Համար երկնքում կատարուում է մեծ ուրախութիւն (Ղուկ. ԺԵ. 7. 13—24):

Ա Պ Ա Ի Է Ն

Աստուած է ամեն մարդոյ առաջին և վերջին ապաւէնն:

Տէրն եղաւ տնանկի ապաւէնն (Սաղ. Թ. 10):

Աստուած է մեր զօրութիւնն և ապաւէնն (Սաղ. ԽԵ. 1):

Նա (Աստուած) է իմ ողորմութիւնն ու ապաւէնն, իմ օգնականն ու փրկիչն և ապաւէնն (Սաղ. ՃԽԳ. 2):

Ո՛վ Աստուած, դու ապաւէն եղար, աղքատներին. ապաւէն չքաւորներին իւրեանց նեղութեան ժամանակ. ապաստանարան կարօտեալներին... ապաւէն ծարաւելոց և ազատարար ոգի՝ զրկուածներին (Ես. ԻԵ. 4—5):

ԱՊՍՏԱՄԲ, ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆ

Առաջին ապստամբն է սատանան, որ հեռացաւ Աստուծոյ ծառայութիւնից, ընկաւ Աստուծոյ երեսից և իւր համար շինեց դժօրւքք: Ապստամբներն առհասարակ դաշնակից են Սաղայէլին:

Մի ապստամբէք Տիրոջից (Թիւք ԺԳ. 9):

Ապստամբ եղան Տիրոջից: Վասն զի ով որ անարգում է իմաստութիւնը և իւրատը, թշուառական է և զուր է նոցա յոյան (Իմ. Գ. 10—11):

Ապստամբ են ձեր իշխաններն և գողակից գողերին. սիրում են կաշառներ, չարագործներ են. չեն պաշտպանում որբոց իրաւունքը և ականջ չեն դնում այրիների դատաստանին (Ես. Ա. 25):

Վ՛այ ձեզ, ապստամբ որդիներ (Ես. Լ. 1):

Կորոշեմ ձեր միջից ամպարիշտները և ապստամբները և կը հանեմ նոցա բնակութիւնից զնոսա և չեն մտնիլ Իսրայէլի երկիրն և կը ճանաչէք թէ ես եմ Տէրն (Եզեկ. Ի. 38):

Որովհետև ինչպէս դուք էլ երբեմն ապստամբ էիք Աստծուց և այժմ ողորմութիւն գտաք նոցա (ձեր հարց) անհաւատութեան մօտ (Հո. ԺԱ. 30):

Ա Ռ Ա Ջ Ն Ո Ր Գ Ե Լ

Եյս կեանքից յաւիտենական կեանքն առաջնորդող պէտք է ունենանք մենք Կենաց առաջնորդն Յիսուս Քրիստոսը:

Ասում է Տէրն. Հակառակ կը կենամ քեզ Հակառակողներին, վասն զի իմ Հրեշտակն կը զնայ քեզ առաջնորդելու (Եւք ԻԳ. 22—23):

Աստուած ինքն առաջնորդեց Իսրայէլին Եգիպտոսից հանելիս (Թիւք ԻԳ. 8):

Աստուած առաջնորդում էր Իսրայէլացւոց ցերեկներն ամպեղէն սիւնով և գիշերներն՝ հրեղէն սիւնով (Նեէմի Թ. 12):

Ո՛վ Տէր, առաջնորդիր ինձ քո արդարութեամբդ (Սաղ. Ե. 9): Քո սուրբ և բարի Հոգին թող առաջնորդէ ինձ ուղիղ երկիր (Սաղ. ՃԽԲ. 10):

Ուրախ եղայ այն ամենքի հետ, որոնց առաջնորդում էր իմաստութիւնն (Իմ. Է. 12):

Ոչ ոք չէ կարող զալ Հօրս մօտ, եթէ ոչ միայն ինձանով (Քրիստոսով) կարող է գալ (Յով. ԺԳ. 6):

ԱՌՆԵԼ—անել, ստեղծել:

Աստուած ստեղծեց երկինքը և երկիրը (Պնն. Ա. 1):

Աստուած ստեղծեց երկու մեծ լուսաւորները—արեգակը և լուսինը (Պնն. Ա. 16):

Աստուած իւր պատկերի համեմատ ստեղծեց մարդը և անունը դրաւ Ադամ (Պնն. Ե. 1—2):

Սրու և էգ ստեղծեց զնոսա (Ադամը և Եւան) և օրհնեց զնոսա (Պնն. Ե. 1—2):

Ինչպէս կամենում էք որ մարդիկ անեն ձեզ, դուք է այնպէս կանէք նոցա (Ղուկ. Զ. 31):

Գուք երբ կանէք ձեզ բոլոր հրամայածները, կասէք. Անպիտան ծառաներ ենք, ինչ որ պարտական էինք անել, արինք (Ղուկ. ԺԷ. 10):

Մինչդեռ մեռած էինք մեր մեղքերով, Հայր Աստուած կենդանի արաւ—կենդանացոյց—գմեզ Քրիստոսով, քանզի ապրեցինք շնորհքներով (Եփես. Բ. 5)

ԱՍՏՈՒԱԾՈՒԹԻՒՆ

Աստուածութեան մէջ կայ երեք անձինք և երեք անձանց մէջ կայ ինչ Աստուածութիւն:

Երեք են՝ որ վկայում են երկնքումն — Հայր, Բանն և Ս. Հոգին, այս երեքն էլ մի են այսինքն այս երեք անձանց մէջ կայ մի Աստուածութիւն (Ա. Յով. Ե. 7):

Այս են յաւիտեանական կեանքն, ուլ Հայր Աստուած, որ մարդիկ ճանաչեն զքեզ միայն ճշարիտ Աստուած. Աճմարիտ Աստուած ճանաչեն և քո ուղարկած միածին Որդի Յիսուս Քրիստոս (Յով. Ժ. 3):

Աստուծոյ Հոգին շրջում էր ջրերի վերայ (Ծնն. Ա. 2):

Եւ երբ մկրտուեցաւ Յիսուս. դուրս եկաւ շուտով այն ջրից (Յորդանան գետից) և ահա նորա Համար բացուեցան երկինք և տեսաւ Աստուծոյ Հոգին, որ իջնում էր ինչպէս աղանձի և գալիս էր նորա վերայ: Հայր Աստուած էլ ձայն տուաւ երկինքից՝ որ ասում էր Յիսուսի մասին. Գա է իմ սիրելի Որդին, Որը հաւանել եմ (Մատ. Գ. 16—17):

Հոգին Աստուած իջաւ Սիօնի վերնատուն Առաքելոց վերայ, որք ամենքն լցան Ս. Հոգով և սկսան խօսիլ ամեն լեզուներով, ինչպէս խօսել էր տալիս Ս. Հոգին (Գործք Բ. 3—4):

ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԻՒՆ

Ամեն բանից աւելի զօրաւոր է աստուածապաշտութիւնն:

Անիրաւութեամբ զիզուած Հարստութիւնն կը պակասի, իսկ աստուածապաշտութեամբ ժողովածն կը շատանայ (Առ. ԺԳ. 11):

Ամեն բանից աւելի զօրաւոր է աստուածապաշտութիւնն (Իմ. Ժ. 12):

Աստուածապաշտութիւնն իմաստութիւն է (Յովք ԻԸ. 28): Հասաւ Տիրոջ իմաստութիւնն և հանձարն և աստուածապաշտութիւնն, որք են արդարութեան գանձեր:

Չեր հաւատքով մատակարարեցէք առաքինութիւն, առաքինութեամբ էլ զիտութիւն, զիտութեամբ էլ ժուժկայութիւն, ժուժկայութեամբ էլ համբերութիւն, համբերութեամբ էլ աստուածապաշտութիւն, աստուածապաշտութեամբ էլ եղբայրսիրութիւն և եղբայրսիրութեամբ էլ սէր (Բ. Պետ. Գ. 5—7):

Որ խաղաղութեամբ և հանդարտութեամբ վարենք մեր կեանքը. ամենայն աստուածապաշտութեամբ և սրբութեամբ (Ա. Տիմ. Բ. 2):

Կրթիւր քո անձը աստուածապաշտութեան մէջ. որովհետեւ մարմնոյ կրթութիւնն փոքր ինչ օգտակար է, իսկ աստուածապաշտութիւնն ամեն բանի համար օգտակար է (Ա. Տիմ. Գ. 7—8):

Հեռու կաց այնպիսի մարդիկներից, որք կուենան աստուածապաշտ մարդոց կերպարանք, բայց ուրացած կը լինին աստուածապաշտութեան զօրութիւնից (Բ. Տիմ. Գ. 5):

ԱՐԳԱՐ

Անսպառ է արդարոց արմատն:

Նոյ արդար և կատարեալ մարդ էր իւր ազգի մէջ և Հաճոյ եղաւ Աստուծոյ (Ծնն. Զ. 9):

Ատում է Տէրն Աբրահամին. Թէ որ Սողոմ Գոմոր քաղաքներում գտնուի տասն արդար, տասն արդարի համար չեմ կորցնիլ քաղաքները (Ծնն. ԺԸ. 20—23):

Արդար է Տէր և սիրում է արդարութիւն (Սաղ. Ժ. 8):

Արդարների ճանապարհն ծագում է ինչպէս լոյս. առաջ նորդում են և լուսաւորում, մինչև որ ծագում է արեգակն: Ամպարշտաց ճանապարհներն խաւար են և չգիտեն թէ ինչպէս են սակում իւրեանց ոտքերն (Առ. Գ. 18):

Արդարն չդողար յաւիտեան. ամբարիշտներն չեն բնակիլ երկրի վերայ: Արդարի բերանն բղիւտ է իմաստութիւն, կը ստակի անխրաւ լեզուն. շնորհքներ կը բղխեն արդար մարդոց շրթունքներն. կործանուում է ամբարշտի բերանն (Առ. Ժ. 30—32):

Անսպառ է արդարոց արմատն (Առ. ժԲ. 3):
 Արդարն ողորմում է իւր անասուններին (Առ. ժԲ. 10):
 Աստուծոյ ձեռքումն են արդարոց հոգիներն (Իմ. Գ. 1):
 Ինչպէս ժողովուրդում է որոմն և այրուում կրակի մէջ,
 այնպէս կը լինի աշխարհիս վերջում: Մարդոյ Որդին (Յիսուս
 Քրիստոս) կուղարկէ իւր Հրեշտակները և կը հաւաքեն նորա
 թագաւորութիւնից բոլոր գայթակողութիւնները և զնոսա, որք
 գործում են անօրէնութիւն: Եւ կը ձգեն զնոսա Հնոցի կրակին
 մէջ, այն տեղ կը լինի լալն և ատամների կրճտելն: Այն Ժա-
 մանակ երկնքի թագաւորութեան մէջ արդարներն կը ծագեն
 արեգակի պէս: Ով որ ունի լսելու ականջ, թող լսէ (Մատ.
 ժԳ. 40—43):

Ա Ր Ի Ի Ն

Թափուած անմեղ արիւնն բողոքում է առ Աստուած:

Ասում է Աստուած Կայենին. Այդ ինչ գործեցիր. քո եղ-
 բօր արեան գոչումն բողոքում է գէպի ինձ: Եւ այժմ անի-
 ծեալ լինիս դու երկրի վերայ (Ծնն. Գ. 10):

Նա՛ որ կը թափէ մարդոյ արիւն, սպանուածի արեան
 տեղ կը թափուի իւր արիւնն (Ծնն. Թ. 6):

Ասում է Աստուած. Երբ կը բարձրացնէք ձեր ձեռքերը,
 կը դարձնեմ ձեզնից իմ երեսնը. և երբ շատ կաղօթէք, չեմ
 լսիր, ասում է Տէր, սրովհետև ձեր ձեռքերն լցուած են ա-
 քիւնով (Ես. Ա. 15):

Ասում է Տէր Տէր... Եւ կը դատեմ զնոսա (անիրաւները)
 արիւնով և մահով. և կը թափեմ նոցա վերայ անձրևի Հե-
 ղեղներ, մեծամեծ կարկուտներ և կրակ և ծծումբ (Եզեկ. ԼԸ.
 22—23):

Ա Ր Տ Ա Ս Ո Ւ Ք

Ջերմեռանդ հաւատքից բղխած արտասուքն շարժում է Աստուծոյ
 գուլթը:

Այսպէս է ասում քո Դաւիթ Հօր Աստուածն, ով Եզեկիա,
 լսեցի քո աղօթքը և տեսայ քո արտասուքները. ահա ես Տէրս
 կը բժշկեմ զքեզ (Գ. Թագ. Ի. 5):

Յոգնեցայ ես իմ Հեծեճանքների մէջ. ամեն դիշեր լուս-
 ցի իմ մահիճը և իմ արտասուքներով թըջեցի իմ անկողինը
 (Սաղ. Զ. 7):

Գիշեր և ցերեկ իմ կերակուրն եղան իմ արտասուքներն
 (Սաղ. ԽԱ. 4):

Ո՛վ կը տար ինձ՝ որ ջուր դառնար իմ գլուխն և արտա-
 սուաց աղբիւրներ իմ աչքերն, և գիշեր ու ցերեկ լացի իմ
 ժողովրդեան վիրաւոր աղջիկները (Եր. Թ. 1):

Մի մեղաւոր կին, երբ իմագաւ որ Քրիստոս բորոտ Սիմոնի
 տանն է, բերաւ մի շիշ անուշահոտ ջուր (օճանելիք) և ետևի
 կողմից թափեց Յիսուսի գլխին. և սկսաւ իւր արտասուքնե-
 րով թըջել Քրիստոսի ոտքերը և սրբել իւր երկար մազերով.
 Համբուրում էր ոտները և օճում անուշահոտ ջրովն, որով և
 արդարացաւ (Ղուկ. Է. 36—38):

Պօղոս առաքեալն ասում է Եփեսոսի քահանաներին.
 Արթուն կացէք, և մտաբերեցէք որ երկու տարի օր և գիշեր
 չդադարեցի արտասուք մի մի խրատել իւրաքանչիւրդ: Եւ այժմ
 անձնում եմ զձեզ Աստուծոյ (Գործք 31—32):

ԱՐՔԱՅՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ — Թագաւորութիւն Աստուծոյ:

Նախ խնդրեցէք Աստուծոյ թագաւորութիւնը և Նորա արդարութիւնը
 և մնացեալ ամեն պէտքերն կը տրուի ձեզ:

Աստուծոյ թագաւորութիւնն տիրում է ամենի վերայ
 (Սաղ. ձԲ. 19):

Աստուծոյ թագաւորութիւնն անվախճան թագաւորութիւն
 է (Դան. Է. 27):

Մեր Հայր, որ երկնքումն ես... թող գայ քո թագաւորութիւնն, որովհետեւ քոնն է յաւիտենական թագաւորութիւնն և զօրութիւնն և փառքն (Մատ. 9. 9):

Յովհաննէս Մկրտչի օրերից մինչև այժմ բռնարարուած է Աստուծոյ թագաւորութիւնն, որը յափշտակում են ուժեղներն (սրտանց Աստուծոյ փեշքը պինդ բռնողներն) (Մատ. ԹԱ. 12):

Դատաստանի օրում ասելու է Յիսուս իւր աջ կողմում կանդանձներին. Եկէք, իմ Հօր օրհնածներ, ժառանգեցէք աշխարհի սկզբից ձեզ Համար պատրաստուած թագաւորութիւնը (Մատ. ԻԵ. 31-46):

ԱԻԵՏԱՐԱՆԵԼ — Զարոգել Աստուծոյ խօսքը, աւքալոյս տալ:

Կը քարոզեմ քո արդարութիւնը, ո՞վ Տէր (Սաղ. ԼԹ. 10):
Տէրն կը տայ խօսելու Հոգի նոցա, որք քարոզում են մեծ զօրութեամբ (Սաղ. ԿԷ. 12):

Տիրոջ Հոգին իմ վերայ է, որի Համար էլ օժեց զիս. զիս ուղարկեց աչքալոյս տալ աղքատներին, բժշկել կոտորած սըրտերը, աւետել գերիների ազատութիւնը, կուրաց տեսնել. Հրատարակելու Տիրոջ ընդունելի տարին և մեր Աստուծոյ վրէժխնդրութեան օրը և մխիթարել ամեն սգաւորները. տալ Սիօնի սգաւորներին մոխրի տեղ՝ փառք, սուգի տեղ՝ ուրախութեան օծումը, կոտորած Հոգու տեղ՝ գովութեան պատմուճան (Ես. ԿԱ. 1-3):

Ահաւասիկ տալիս եմ ձեզ մեծ ուրախութեան աչքալոյս, որ կը լինի ամեն ժողովրդոց Համար, որովհետեւ ձեզ Համար Փրկիչ ծնաւ այսօր, որ է օժեալ Տէր Դաւթի քաղաքում (Ղուկ. Բ. 10-12):

Ասաց Յիսուս Յովհաննէս Մկրտչից ուղարկուածներին. Գնացէք, պատմեցէք Յովհաննէսին ինչ որ լսեցիք և ինչ որ տեսաք. կոյրերն տեսնում են, կաղերն գնում են, բոլորտներն սրբուում են, խուլերն լսում են, մեռելներն յարութիւն են առնում, աղքատներն էլ աւետարանուում են (Մատ. ԹԱ. 4-5):

Թէ որ քարոզեմ ձեզ Քրիստոսի աւետարանը, ոչ մի պարծանք չկայ ինձ Համար, որովհետեւ պարտք դրուած է իմ վերայ քարոզելու. բայց վնչ է ինձ, եթէ չքարոզեմ. թէ որ կամաւ քարոզեմ, վարձք կունենամ. իսկ եթէ ակամայ քարոզեմ, քարոզելու պարտաւորութիւնն ինձ յանձնուած է (Ա. Կորն. Թ. 16-17):

Բ Ա Մ Բ Ա Ս Ե Լ

Բամբաստեմ մի անիւ, քանզի մեղք է:

Ո՞վ որ կը բամբասէ իւր Հայրը կամ մայրը՝ կըսպանուի (Եւք ԻԱ. 17):

Իւր Հայրը և մայրը Հայհոյողն կը մեռցնուի (կըսպանուի), մահապարտ է (Ղեա. Ի. 9):

Բամբասում էք զիս և չէք ամաչում (Յովք. ԹԹ. 3):

Ասում է Աւտուած. Վնչ նոցա՝ որ փախան ինձանից. և ողորմելի են որ ամպարշտեցան ինձ դէմ: Ես փրկեցի զնոսա և նոքա սուտ բամբասեցին զիս (Ովս. Է. 13):

Մի բամբասէք մէկգմէկ, եղբայրներ (և քոյրեր), որ բամբասում է իւր եղբայրը կամ դատում իւր եղբայրը, բամբասում է օրէնքը և դատում է օրէնքը. իսկ եթէ դատում ես օրէնքը, դու չես լինում օրէնքը կատարող, այլ օրէնքը դատող: Միմիայն Աստուած է օրէնք դնողն և դատաւորն, որ կարողն է փրկել և կորուսանել. դու ո՞վ ես որ դատում ես քո ընկերը (Յակ. Գ. 11-13):

Բամբասում էին զմեզ, օրհնում էինք. Հալածում էին զմեզ, յանձն էինք առնում, Հայհոյում էին զմեզ, աղաչում էինք (Ա. Կորն. Գ. 12):

ԲԱՆԱԿ — Աստուծոյ հրեշտակներն:

Յակովբ նահապետն տեսաւ Աստուծոյ բանակը — Հրեշտակաց անթիւ բազմութիւնը (Ծնն. ԼԲ. 1):

Տէրն իւր Հրեշտակաց բանակներով շրջապատում է իրա-

նից վախեցողների (իւր երկիւղածների) չորս կողմը և պահում է դնոսա (Սաղ. 17. 8):

Եւ լսում էի նոցա (Հրեշտակաց բանակի) թեւերի ձայնը սաւառներու ժամանակ, ինչպէս շատ ջրերի ձայն, և ինչպէս Ամենակալ Աստուծոյ ձայն և ինչպէս.. բանակի ձայն (Եղեկ. Ա. 24):

Որովհետև խիստ շատ մեծ է Աստուծոյ բանակը (Յովել. Բ. 11):

Բայց դուք մօտեցած էք Սիօն սարին՝ կենդանի Աստուծոյ քաղաքին, երկնային Երուսաղէմին և Հրեշտակների բերաւոր բանակին (Երբ. ԺԲ. 22):

Եւ տեսայ և լսեցի շատ Հրեշտակաց ձայն, որ կային Աստուծոյ աթոռի չորս կողմում.. և նոցա թիւն էր ընդ ընդ քիւրուց և հազարք հազարաց (անթիւ և անհամար) (Յայտ. Ե. 11—12):

Բ Ա Ն Ս Ա Ր Կ Ո Ւ

Ուաջին բանսարկուն սատանան է, ինչպէս ասաց Յիսուս (Յով. Ը. 41, և Յովբ Ա. 41): Ուրեմն բանսարկուններն կտարում են սատանայի պաշտօն: Հետևապէս մեզք համարուած է բանսարկութիւնն:

Որդեակ իմ Յովսէփ, որդեակ իմ մատաղ. դարձիր դէպի ինձ. բանսարկուններն (քո եղբայրներն) բանբասում էին քեզ և նեղում անիրաւաբար, ասում է Յակովբ նահապետն (Ծնն. ԽԹ. 22):

Առանց փայտի կանցնի կրակն, եթէ քու մարդ չըլինի, կը դադարի կռիւն: Ինչպէս է ածուխն կայծերի համար և փայտն կրակի, այնպէս է և կռիւ յուզող բանսարկու մարդն (Առ. ԻԶ. 21):

Բանսարկու սատանայի նախանձելովն աշխարհս մտա մահն (Իմ. Բ. 24):

Վերջին օրերում մարդիկ կը լինին անձնատէր, բանսարկուններ, անհամբեր, ինքնահաւան (Բ. Յիմ. Գ. 1—2):

Բայց դու խօսիր.. ծերերին, որ լինին զգաստ, պարկեշտ, ցած և ողջամիտ հաւատքով, սիրով և համբերութեամբ: Նոյնպէս խօսիր պառաւներին, որ լինին զգաստութեան և սուրբ վայելչութեան մէջ. չլինին ո՛չ բանսարկու, ո՛չ գինեմոյ (արբեցութիւն սիրող), այլ լինին բարի խրատներ տուող (Տիտ. Բ. 1—3):

Եւ տեսայ ուրիշ Հրեշտակ, որ իջնում էր երկնքից, և ունէր զժոխքի բանալիները և իւր ձեռնում մեծ շղթաներ: Եւ բռնեց առաջին վիշապ օձը, որ է բանսարկու և սատանան և կապեց գնդ (Յայտ. Ի. 1—2):

Բ Ա Ր Ե Կ Ա Մ

Նեղ օրերումն են յայտնի լինում մարդոց լաւ և վատ բարեկամներն: Քրիստոնէից ամենահաւատարիմ և անձնագոհ բարեկամն է Յիսուս Քրիստոս:

Իմ բարեկամներն և մերձաւորներն.. Հեռացան ինձանից (Սաղ. ԼԷ. 12):

Չարութիւն մի աներ քո բարեկամին դէմ (Առ. Գ. 20): Աստուծոյ առաջ ընդունելի են արդար մարդոց ճանապարհն, որոց պատճառաւ բարեկամ կը լինին և թշնամիներն (Առ. ԺԵ. 28):

Անօրէն մարդն խաբում է իւր բարեկամները և տանում վատ ճանապարհ (Առ. ԺԶ. 29):

Աւելի լաւ են (Հաւատարիմ) բարեկամի տուած վերքերն, քան թշնամու տուած նենգութեամբ լի համբոյրն (Առ. ԻԷ. 6):

Մի թողուր քո բարեկամը և քո հայրենի բարեկամը.. աւելի լաւ է մօտ եղած բարեկամն՝ քան հեռի բնակած եղբայրն (Առ. ԻԷ. 10):

Ասում է Յիսուս իւր աշակերտաց. Սորանից աւելի մեծ սէր ոչ ոք ունի, թէ որ իւր անձը դնում է իւր բարեկամների վերայ: Դուք իմ բարեկամներն էք, թէ որ կանէք՝ ինչ որ ես պատուիրում եմ ձեզ: Այսուհետև ծառայ չեմ անուանիլ զձեզ.

վան զի ծառան չգիտեր թէ ինչ է զործում իւր տէրն. այլ ես անուանեցի զձեզ բարեկամներ, որովհետև յայտնեցի ձեզ այն ամեն բաները, որ լսեցի իմ Հօրից (Յով. ԺԵ. 13—15):

Բ Ա Ր Ի — Բարիք:

Աստուած ինչ որ ստեղծեց, բարի էին. մեզ էլ պատուիրեց բարի գործ գործել միշտ:

Աստուած ստեղծեց լոյսը, և տեսաւ որ լոյսն բարի է (Ծնն. Ա. 4).

Բարի է որ մարդ իւր լոյսը Աստուծոյ վերայ դնէ, քան թէ իշխանների վերայ (Սաղ. ԸԺԷ. 8):

Ով որ բարի է գործում, բարութեան շնորհք է խնդրում Աստուծոց (Առ. ՓԱ. 27):

Բարի ցանկութիւնն կենաց ծառ է (Առ. ՓԴ. 12):

Բարի անունն աւելի լաւ է հարստութիւնից (Առ. ԻԲ. 1):

Սովորեցէք բարի գործել (Իս. Ա. 17):

Պատմուեցաւ քեզ, ով մարդ, թէ ինչ է բարին և ինչ է պահանջում քեզանից Տէրն. — Տէրն պահանջում է միայն անել իրաւունք, սիրել ողորմութիւն և սիրով ու խոնարհութեամբ գնալ քո Տէր Աստուծոյ ետևից (Միքիա 2. 8):

Կացինն գնուում է ծառի արմատի վերայ, ամեն ծառ որ չէ բերում բարի պտուղ, կտրուում է և ձգուում կրակի մէջ (Մատ. Գ. 10):

Բարի մարդն իւր սրտի բարի գանձից հանում է բարի բաներ և չար մարդն հանում է իւր սրտի չար գանձից չար բաներ: Բայց ճշմարիտը ասում եմ ձեզ, թէ ամեն դատարկ բանի համար՝ որը կը խօսեն մարդիկ՝ համար տալու են դատաստանի օրում (Մատ. ՓԲ. 35—36):

Մի ձանձրանաք բարի գործեր գործել (Բ. Թես. Գ. 13):

Բ Ա Ր Կ Ա Ն Ա Լ

Բարկութիւնն երկու տեսակ է, բարի բարկութիւն և չար բարկութիւն: Առհասարակ բարի են այն բարկութիւններն, որովք ուզողուելու, կրթուելու, ազնուանալու համար ընդունում են փոքրներն ծնողներից, ուսուցիչներից, դաստիարակներից և խրատիչներից: Առհասարակ չար և վնասակար և մահացու մեղք են միւս բարկութիւններն «բարկութեամբ և մտամբք նորին»:

Բ Ա Ր Ի Բ Ա Ր Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Տէրն բարկացաւ Ահարօնի վերայ, որ շինել էր կուռք — Ոսկի որթ (Բ. Յր. Թ. 20):

Ասում է Տէրն Մովսէսին. Մինչև երբ կը բարկացնէ զիս այդ ժողովուրդն և մինչև երբ պիտի չհաւատան ինձ այն ամեն նշաններով, որը արի գոցա մէջ (Թմաք ՓԴ. 11):

Ասում է Դաւիթ մարգարէն. Բարկացէք, բայց չմեղանջէք — այս է ձեր բարկութեամբ մեղք չգործէք (Սաղ. Դ. 5 և Եփես. Դ. 26):

Չ Ա Ր Բ Ա Ր Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ով որ զուր տեղն բարկանում է իւր եղբոր վերայ, պարտաւոր կը լինի դատաստանին. ով որ յիմար կասէ իւր եղբոր, պարտաւոր կը լինի ատենի առաջ. ով որ անմիտ կասէ իւր եղբոր (և քրոջ) պարտաւոր կը լինի զժոխքի կրակին (Մատ. Ե. 22):

Իմաստունն կորսուում է բարկութիւնից (Առ. ՓԴ. 35): Համբերութեամբ իւր բարկութեան յաղթողն աւելի լաւ է, քան թէ ուժով քաղաք զրաւող զօրաւարն (Առ. ՓԶ. 32): Անզգամն սպանուում է բարկութիւնից (Յովբ. Ե. 2):

ԲԱՐՁՐԱՅՈՒՅԱՆԵԼ

Ով որ բարձրացնում է իւր անձը, Աստուծոյ առաջ կը խոնարհի, և ով որ խոնարհեցնում է իւր անձը, կը բարձրանայ:

Ով որ բարձրացուցանում է իւր (սրտի) տունը, ույում է նորա կործանումը (Առ. ԺԷ 19):

Քո սրտի հպարտութիւնն բարձրացոյց զքեզ բնակիլ քերձերի խոռոչների մէջ, բարձրացուցանել քո բնակութիւնը և ասել քո սրտում. Ո՞վ կիջեցնէ զիս գետնին:—Եթէ կը բարձրանաս արձույ նման և եթէ ասողերի մէջ կը գնես քո բոյնը, կիջեցնեմ զքեզ այն տեղից, ասում է Տէրն (Աբդիու 3 4):

Քո արհամարհութիւնն հասոյց քեզ այդ. քո սրտի լրբութիւնն ծակամուտ արաւ քեզ քերձերի մէջ... եթէ իբրև արձուի բարձրացուցանես քո բոյնը, քեզ կիջեցնեմ այն տեղից, ասում է Տէրն (Եր. ԽԹ. 16):

Ով որ բարձրացնում է իւր անձը, կը խոնարհուի, և ով որ խոնարհեցնում է իւր անձը կը բարձրանայ (Մատ. ԻԳ. 12):

Աստուած քանդեց հզօրները աթոռներից և բարձրացոյց խոնարհները (Ղուկ. Ա. 52):

Խոնարհուեցէք Տիրոջ առաջ և նա կը բարձրացնէ զձեզ (Յակ. Գ. 10):

Բ Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Աստուած բարութիւնը տալիս է բարի մարդոց:

Մեծամեծներն աղքատացան և անօթեցան. բայց Տէրը խնդրողներից չպակսիր ամեն բարութիւն (Սաղ. ԼԳ. 11):

Ասում է Տէր. Կը բաշխեմ իմ սիրելիներին մեծութիւն և կը լցուցանեմ բարութեամբ նոցա գանձարանները (Ըռ. Ը. 21):

Եթէ կախորժէք լսել ինձ, կուտէք երկրի բարութիւնը — ասում է Տէրն (Ես. Ա. 19):

Ով որ կամենում է սիրել իւր կեանքը և բարութեան մէջ տեսնել իւր օրերը, թող լռեցնէ իւր լեզուն չարութիւնից և շրթունքները նեղութիւն խօսելուց (Ա. Պետ. Գ. 10):

Բ Ե Ր Ա Ն

Ամեն ոք պարտաւոր է կրթել իւր բերանը, որ միշտ խօսի ճշմարտութիւն և աղօթէ առ Աստուած, և ոչ թէ բերանը գործիք շինէ ստախօսութեան, հայհոյութեան, մատնութեան, զրպարտութեան և ամեն տեսակ չարութեան:

Ասում է Տէրն Մովսէսին. Քո բերանից կը լսեն Աստուծոյ խօսքերը (Ելք. ԺԳ. 9):

Մանուկ տղաների բերանից հաստատեցիր օրհնութիւն (Սաղ. Ը. 3):

Օրհնում էին իւրեանց բերաններով և անիծում իւրեանց սրտերով (Սաղ. ԿԱ. 5):

Խոր գուբ է անօրինի բերանն (Առ. ԻԲ. 14):

Թող գովէ քեզ քո ընկերն և ոչ թէ քո բերանն (Առ. ԻԷ. 2):

Չնորհք են իմաստուն մարդոց բերանի խօսքերն (ժող. 12):

Եթէ կը հանես (կորոշես) պատուականը անարգից, կը լինիս ինչպէս իմ բերանն — ասում է Տէրն (Եր. ԺԵ. 19):

Միւսնոյն բերանից ելնում են օրհնութիւնք և անէծք. պէտք չէ, իմ եղբայրներ, որ այս այսպէս լինի (Յակ. Գ. 10)

Ամեն տեսակ տգեղ խօսք գուրս չգայ ձեր բերանից (Եփես. Գ. 29):

Բ Ժ Չ Կ Ո Ւ Ի Լ

Աստուածաչին բժշկութիւն:

Մենք բժշկուեցանք Նորա (Յիսուսի) վէրքերով (Ես. ԺԳ. 5. և Ա. Պետ. Բ. 24):

Տէր, ես արժանի չեմ, որ Գու մտնես իմ յարկի տակ, ալ խօսքով ասա և կը բժշկուի իմ մանուկն (Մատ. Ը. 8):

Նոյն ժամում բժշկուեցաւ մանուկն (Մատ. ԺԷ. 17):

Բժշկուում էին շատ անդամալոյճներ և կաղեր (Գործ. Ը. 8):

Հեռացիր, ով մարդ, ամեն տեսակ չարութիւններից. այնուհետև բժշկութիւն կը լինի քո մարմնոյն և դարման քո սակերաց (Առ Գ. 7—8):

Յարութիւն կառնեն մեռեալներն և կը կանգնեն, որք կը լինին զերեզմաններում և ուրախ կը լինին երկրի վերայ, վասն զի այդ ցօղն, որ ցողում է Քեզնից—ով Տէր—բժշկութիւն է նոցա (Ես. ԻԶ. 19):

ԲՆԱԿԵԼ — ԸՆՏԱԿԻԼ.

Աստուածութիւնն աւելի բնակում է մաքուր սրտերի—բրիտանեաների—տաճարներում և անարատ մարդոց մէջ:

Բանն Աստուած մարմին եղաւ—մարմնացաւ, մեզ նման մարդ եղաւ—և բնակեց մեր մէջ (Յով. Ա. 14):

Ով որ ուտում է իմ մարմինը, նա բնակում է իմ մէջ և ես բնակում եմ նորա մէջ—ասաց Փրկիչն (Յով. Զ. 37):

Ասաց Յիսուս իւր աշակերտներին. Եթէ սիրում էք զիս, պահեցէք իմ պատուիրանները և ես կաղաչեմ Հայր Աստուած և ձեզ կը տայ ուրիշ մխիթարիչ, որ յաւիտեան կը բնակի ձեզ հետ—ճշմարտութեան Հոգին, որ... կը բնակի ձեզ մօտ և կը լինի ձեզ հետ (Յով. ԺԳ. 15—17):

Ով որ ասում է թէ ինքն բնակած է Յիսուսի մէջ, պարտաւոր է վարել այնպէս կեանք, ինչպէս վարեց Փրկիչն (Ա. Յով. Բ. 6):

Ով որ խոստովանում է թէ Յիսուս Քրիստոս Աստուծոյ Արդին է, նա բնակում է Աստուծոյ մէջ, Աստուած էլ բնակում է նորա մէջ (Ա. Յով. Գ. 1):

Աստուծոյ Հոգին բնակած է ձեր մէջ (Ա. Կորն. Գ. 16):

Գ Ա 1.

Մի ուշացներ կարօտեալին բարիք անել, երբ ձեռնհաս ես օգնել նմա: Չասես թէ զնա և յետոյ կը զաս և վաղն կը տամ... որովհետև չգիտես թէ վաղն ինչ կը ծնանի քեզ համար (Առ. Գ. 27—28):

Ատում է Տէր. Ահա գալիս են օրեր և կուղարկեմ երկրիդ վերայ սով, ոչ թէ Հացի սով և ջրի ծարաւ, այլ Աստուծոյ խօսքն լսելու սով (Ամոխ Ը. 11):

Ով Սիօնի գաւազի, խնդաւ և ուրախ եղիր, ես կը գամ և կը բնակեմ քո մէջ, ասում է Տէր, և կաղաւինին ինձ այն օրում շատ աղէք և կը լինին իմ ժողովուրդ (Ջաք. Բ. 10—11):

Գ Ա Լ Ո Ւ Ս Տ

Արթնութեամբ սպասելու ենք Փրկիչի երկրորդ գալստեան:

Ինչպէս որ փայլակն՝ որ ելնում է արևելքից և երևում մինչև արևմուտք, այնպէս կը լինի և Մարդոյ Արդու գալուտան—Յիսուսի երկրորդ գալն (Մատ. ԻԳ. 27):

Խնամ տար այդ Հիւանդին, երբ երկրորդ անգամ կը գամ, կը վճարեմ քեզ (Ղուկ. Ժ. 35):

Համբերող եղէք, եղբայրներ, մինչև Տէր Քրիստոսի երկրորդ գալուտան... Համբերող եղէք և դուք և Հաստատեցէք ձեր սրտերը, որովհետև մօտ է Տիրոջ գալուտան (Յակ. Ե. 7—8):

Եւ այժմ, որդեակներ, Հաստատ մնացէք Քրիստոսի վերայ. երբ որ Նա յայտնուի, մենք ունենանք համարձակութիւն և չամաչենք նորա երկրորդ գալստեան ժամանակ (Ա. Յով. Բ. 28):

Եւ ինքն խաղաղութեան Աստուածն սուրբ անէ ձեզ ամենքդ էլ և ձեր Հոգին էլ, շունչն էլ, մարմինն էլ ամբողջապէս անարատ պահէ մեր Տէր Յիսուս Քրիստոսի գալստեան ժամանակ (Ա. Թես. Ե. 23):

Գ Ա Ղ Տ Ն Ի-- ծածուկ.

Մեր Ստեղծողից ծածուկ ոչինչ չկայ:

Ո՛վ Տէր, սուրբ արն զիս իմ ծածուկ մեղքերից (Սաղ. ԺԸ. 13):

Նա (Աստուած) քննում է մեր սրտերի գաղտնիքները (Սաղ. ԽԳ. 22):

Ո՛վ Տէր, Քո աչքերն տեսան իմ չգործած մեղքերը և ամենքն գրուեցան քո գրքում (Սաղ. ԶԼԸ. 16):

Քաղտնի տուած ողորմութիւններն դարձնում են Աստուծոյ բարկութիւնը (Առ. ԻԱ. 14):

Չկայ ծածուկ բան, որ չյայտնուի. չկայ գաղտնի բան, որ չիմացուի (Մատ. Ժ. 26—27):

Ամեն բան յանդիմանուելով լուսից՝ յայտնի է լինում (Եփ. Ե. 13):

Գ Ա Յ Թ Ա Կ Ղ Ե Յ Ո Ի Յ Ա Ն Ե Լ

Միշտ գգուշանալու ենք, որ մեր վատ գործերով գայթակղութիւն չտանք այլոց. հասլա մեր բարի գործերով բարի օրինակ տանք ուրիշներին:

Եթէ քո աչքն գայթակղեցնում է քեզ, հանիւր և ձգիւր քեզանից. վասն զի քեզ համար աւելի լաւ է որ կորսուի քո անդամներից մին՝ քան թէ դժօրիքի մէջ ընկնի քո ամբողջ մարմինն: Եթէ քո աջ ձեռն գայթակղեցնում է քեզ, կտրիւր և ձգիւր քեզանից. քան զի քեզ համար աւելի լաւ է, որ կորսուի քո անդամներից մինն՝ քան թէ կրակի մէջ ընկնի քո բոլոր մարմինն (Մատ. Ե. 30):

Ով որ կը ճռեցնէ ինձ հաւատացեալ այս փոքրիկներից մէկը, աւելի լաւ է նորա համար՝ որ կախուի նորա պարանոցից (վզից) երկանաքար (ջրաղացի քար) և խեղդուի ծովի խոր-

քում: Գայթակղութեանց պատճառաւ վնայ աշխարհին. հարկ է որ գան գայթակղութիւններ. բայց վնայ այն մարդոյն, որի ձեռնով կը գայ գայթակղութիւն (Մատ. ԺԸ. 6—7):

Եթէ կերակուրն գայթակղեցնում է իմ եղբայրը, միտ չեմ ուտիլ յաւիտեան, որ չգայթակղեցնեմ եղբայրս—ամեն քըրիստոնեայ (Յ. Կորն. Ը. 13):

Գ Ա Յ Լ

Աստուծոյ պատկեր մարդոյն անվայել է գազանային բնաւորութիւնն:

Անօթի առիւծ և սովալլուկ գայլ է աղքատ ժողովրդեան վերայ իշխող ամբարիշտն (Առ. ԻԸ. 15):

Վնայ ապստամբ և հարստահարող քաղաքին, որ ականջ չըրաւ խօսքի և չընդունեց խրատ, ո՛չ յոյսը. դրաւ Աստուծոյ վերայ և ո՛չ մօտեցաւ առ Աստուած: Նորա իշխաններն գոչում են առիւծի պէս և նորա դատաւորներն Արաբացոց գայլերի պէս են, որ իւրեանց յափշտակութիւնից մասն չեն թողնում վաղուան համար: Նորա մարգարէներն զիւահար են և արհամարհող. նորա քահանաներն պղծում են սրբութիւնները և բռնադատում են օրէնքները (Սոփ. Գ. 1—4):

Նորա (Իսրայէլի) իշխաններն նորա մէջ յափշտակող գայլերի պէս վարժ են յափշտակութիւններ յափշտակել, արիւն թափել, հոգիներ կորուսանել, որ ազահութեամբ ստանային շատ... (Եզեկ. ԻԲ. 27):

Անփորձ է ձեր արծաթն. դինու հետ խառնում են ջուր ձեր վաճառականներն. ապստամբ են ձեր իշխաններն և գողակից դողերին. սիրում են կաշառներ, չարագործ են. չեն անում որբոց դատաստանները և ուշադրութիւն չեն դարձնում այրիների գանդատներին (Ես. Ա. 22—23):

Ատում է Փրկիչն Առաքելոց... Գնացէք քարոզելու. ահա ես «ուղարկում եմ ձեզ ինչպէս գառներ գայլերի մէջ (Ղուկ. Ժ. 2—3):

Գ Ա Ն 2—Գանձել.

Մարդ գանձում է. բայց չգիտէ, թէ ում համար է գիզում.

Գանձեր մի գանձէք ձեզ համար երկրի վերայ, ուր ապահանում են ցեցն ու ժանգն. և ուր զողերն ական (լաղում) փորելով գողանում են: Այլ ձեզ համար գանձեր գանձեցէք երկնքում, ուր ոչ ցեցն և ոչ ժանգն կարող են ապականել և ական փորել և գողանալ: Որովհետև ուր որ կան ձեր գանձերըն, այնտեղ կը լինին և ձեր սրտերն. (Մատ. Զ. 19—21):

Ասում է Յիսուս. Զղուշ կազէք ամեն տեսակ ազահութիւնից. որովհետև մարդոյ կեանքն կախուած չէ շատ զիգուած հարստութիւնից: Աօաց և մի առակ. Մի հարուստ մարդոյ արտավայրերն տուին շատ բերքեր: Ինքն իրան մտածում էր և ասում. Ի՞նչ անեմ, որ տեղ չունիմ, ուր ժողովեմ իմ արդիւնքները: Եւ ասում է. Գիտեմ, ինչ կանեմ. կը քանդեմ իմ ամբարները և կը շինեմ աւելի մեծերը և այնտեղ կը հաւաքեմ ցորենները և ամեն բարութիւնները և կասեմ իմ անձին. Ո՛վ իմ անձն, շատ տարիների համար ամբարած ունիս շատ բարութիւններ. հանգստացիր, կեր, խմի, և ուրախ եղիր: Ասում է նորան Աստուած. Ո՛վ անմիտ, այս գիշեր հողիդ կը պահանջեն քեզանից. ուրեմն ո՞ւմ կը լինի քո այդ ամեն պատրաստածներդ (Ղուկ. ԺԲ. 15—20):

Գ Ա Ր Զ Ե Լ Ի

Աստուծոյ և առաքինի մարդոց համար գարշելի են կռապաշտութիւնն և ամեն տեսակ անիրաւութիւն:

Արդ գարշելի բան — կռաք — մի տանիր տունդ, որ դու էլ նդովեալ չլինիս նորա պէս... վասն զի նդովուած է և գարշելի Աստուծոյ (Յ. Օր. Է. 25—26):

Թագաւորի համար գարշելի է այն մարդն, որ զոր-

ծում է չարիքներ. որովհետև արդարութեամբ է հաստատուում - նորա իշխանութեան աթոռն (Առ. ԺԶ. 12):

Ո՛վ որ արդար է համարում անիրաւը և անիրաւ է համարում արդարը, երկուքն էլ պիղծ և գարշելի են Աստուծոյ առաջ (Առ. ԺԷ. 15):

Գարշելի գործերով լցաւ նոցա երկիրն (Ես. Բ. 8):

Նոքա ընտրեցին իւրեանց ճանապարհները. նոցա հողիներն ախորժում են իւրեանց գարշելիները (Ես. ԿԶ. 3):

Գ Թ Ե Լ — գութ ունենալ.

Պարտաւոր ենք ունենալ գութ, սէր և խնամք միմեանց վերայ, ինչպէս ունի հայր Աստուած մեր ամենքի վերայ:

Ինչպէս գութ ունի հայրն իւր որդւոց վերայ, այնպէս էլ գութ ունի Տէրն իւր երկիրգածներին վերայ (Սաղ. ԺԲ. 13):

Յիսուս՝ տեսնելով ժողովուրդը՝ զթաց նորա վերայ. որովհետև անհովիւ և ցրուած ոչխարի պէս էին (Մատ. Թ. 36):

Գթած եղէք, ինչպէս զթած է ձեր երկնաւոր հայրն (Ղուկ. Զ. 36):

Գթած եղէք միմեանց վերայ (Հռ. ԺԲ. 10):

Միմեանց հետ եղէք քաղցր, զթած, միմեանց ներող, ինչպէս Հայր Աստուած Քրիստոսով ներեց մեզ (Եփ. Գ. 32):

Գ Ի Ն Ի

Ամեն մարդ պարտական է զգուշանալ և խմիչքը խմել իւր կարողութեան չափով. այս է՝ այնքան խմել, որ չարբենայ, այլ կարողանայ պահել իւր խմածը և խելքը: Ամեն բանի մէջ վայելուչն է գովելի:

Նոյ խմեց զինուց և արբեցաւ (Ծնն. Թ. 26):

Իմաստութիւնն շինեց իւր տունը և կանգնեց նորա մէջ եօթն սիւն: Մորթեց իւր զոհերը, խառնեց իւր զինին և պատրաստեց իւր սեղանը: Եւ ուղարկեց իւր ծառաները բարձր քա-

ըողութեամբ կանչել իւր սեղանի համար և ասում է. Ո՛վ որ անզգամ կը լինի, թող գայ ինձ մօտ: Եւ ասում է պակասամիտներին. Եկէք կերէք իմ հացից և խմեցէք իմ գինին, որը պարաստեցի ձեզ համար: Թողէք անզգամութիւնը և կապրէք ինչպէս իմաստութիւն, որ ապրէք (Առ. Թ. 1—6):

Անառակ է գինին և թշնամանող արբեցութիւն—շատ խմողների համար (Առ. Ի. 1):

Կանայք և գինին կործանում են իմաստունները:

Մի հարբէք գինով, որի մէջ կայ զեղխութիւն (Եփ. Ե. 18):

Գ Ի Բ Ք

Մտառութեամբ և շատ կարգալու է Սուրբ Գիրքը և մտքի ու չիշողութեան մէջ տպաւորելու է նորա ամեն իմաստները.

Աստուած տուաւ Մովսէսին երկու քարեղէն տախտակ գրուած Աստուծոյ մատով (Եւք ԼՆ. 18):

Գրքերի գլուխներում գրուած է իմ (Քրիստոսի) համար (Սաղ. ԼԹ. 8):

Իսկապէս ես (Փեսան Եկեղեցու Քրիստոս) եմ Սաղմոսարանում գրուածն (Երգ երգոց Ը. 4):

Մոլորուածներ, ո՛չ գիրը զիտէք և ո՛չ նորա զօրութիւնը (Մատ. ԻԲ. 29):

Փրկիչն, յարութիւն առնելուց յետոյ՝ Էմմաուսի ճանապարհում, սկսելով Մովսէսի և ամեն մարգարէների գրքերից, մեկնում էր Վղէտպասին և նորա ընկերներին այն ամենը, ինչ որ իւր մասին կար բոլոր գրքերում (Ղուկ. ԻԳ. 27):

Ասում է Յիսուս. Քննեցէք Սուրբ Գիրքը, որովհետև զուք նոյն գրքերով էք համարուում ունենալ յաւիտենական կեանք և իսկապէս նոյն գրքերն են՝ որ վկայում են ինձ համար (Յով. Ե. 39):

Ո՛վ Տիմոթէոս, դու մանկութիւնից գիտես Սուրբ Գիրքը,

որ կարող են իմաստուն անել քեզ... բոլոր Աստուածաշունչ գրքերն օգտակար են քարոզելու, բանդիմանելու և խրատելու համար (Բ. Տիմ. Գ. 14—17):

Գ Ն Ա Լ

Ուղիղ գնալու է Աստուծոյ ճանապարհով, ո՛չ աջ ճուղելու է և ո՛չ ձախ:

Տէր, ո՞վ կը կենայ քո խորանում, կամ ո՞վ կը բնակի քո Սուրբ Սարի վերայ: —Նա՛ որ գնում է անմեղութեամբ, գործում է արդարութիւն և խօսում է իւր սրտում ճշմարտութիւն: Նա՛ որ չխօսեց իւր լեզուաւ նենգութիւն և չարաւ իւր ընկերին չարութիւն (Սաղ. ԺԴ. 1—3):

Խելացի մարդն ուղիղ գնում է իւր ճանապարհով (Առ. ժԵ. 21):

Անմիտ մարդն գնում է խաւարի միջով (Փող. Բ. 14):

Քո առաջից կը գնայ քո արդարութիւնն (Ես. ԾԸ. 8):

Թէ որ մէկն գնում է ցերեկով, չզայթակղիր—ճանապարհը չկորուսանէր (Յով. ժԱ. 9):

Իմ որդիքն գնում են ճշմարտութեամբ (Գ. Յով. Ա. 4):

Գ Ն Ե Լ — փողով առնել.

Քրիստոսի արեան գնով գնուած էք, ճառայ մի լինիք մոլութեանց և անառակ գործոց:

Քրիստոս գնեց զմեզ օրէնքի անէծքից՝ մեզ համար անէծք լինելով. վասն զի գրուած է, թէ Անիծեալ լինի այն ամենն, որ կախուած կը կենայ փայտից (Գաղ. Գ. 13):

Որովհետև գնոց գնուած էք (Քրիստոսի արիւնով առնուած էք), փառասոր արէք Աստուած ձեր մարմնով և հոգով (Ա. Կորն. Զ. 20):

Օրհնում էին զՅիսուս ասելով... որհետև զենար և զմեզ գնեցիր քո Աստուածային արեամբդ (Յայտ. Ե. 9):

Գ Ո Ն Ա Լ — շնորհակալ լինել.

Ամեն ժամանակ պարտական ենք շնորհակալ լինել Աստուծոց և փառք տալ նմա:

Ով Տէր, իմ բոլոր սրտով շնորհակալ եմ քեզանից (Սաղ. Թ. 2):

Գոհութիւն կը մատուցանեն քեզ ամեն ժողովուրդներ (Սաղ. ԿԶ. 6):

Յիսուս՝ առնելով Հացը, օրհնեց, մանրեց և տուաւ իւր աշակերտներին և ասաց. Առէք, այդ է իմ մարմինն: Եւ առնելով բաժակը՝ գոհացաւ և տուաւ աշակերտներին և ճաշակեցին ամենն: Եւ ասում է նոցա. Այս է իմ Կոր Աւխտի արիւնն, որ թափուում է շատերի փոխարէն (տե՛ղ) (Մար. ԺԳ. 22—24):

Տէր Յիսուս այն զիշերում, որի մէջ մատնուում էր, առաւ Հաց, գոհացաւ, մանրեց և ասաց աշակերտներին. Առէք և կերէք, այս է իմ մարմինն, որ բաշխուում է ձեզ Համար. այս արէք զիս յիշատակելու համար: Նոյնպէս առաւ բաժակը և ասաց. Այս բաժակն Նոր Աւխտ է իմ արեամբս. քանի անգամ խմելու լինիք, այս արէք՝ զիս յիշելու համար: Քանի անգամ որ կուտէք այս Հացը և կը խմէք այս բաժակը, պատմեցէք Տիրոջ մահը՝ մինչև որ Նա կը գայ: Այսուհետև ով որ կուտէ Տիրոջ այս Հացը կամ կըմպէ այս բաժակը անարժանութեամբ, պարտական կը լինի Տիրոջ մարմնոյ և արեան: Թո՛ղ նախ փորձէ մարդ (ամեն ոք) իւր անձը և յետոյ ճաշակէ (Ս. Կորն. ԺԱ. 23—24):

Գ Ո Ղ

Գողերն ինչքան էլ գողանան, չափշտակեն և գողօն գիգեն, վերջում սոված կը մեռնեն:

Մի՛ գողանար (Ելք. Ի. 15):

Ասում է Տէրն Զաքարիա մարգարէին. Ի՞նչ ես տեսնում,

Զաքարիա: — Պատասխանում է. Տեսնում եմ թռչող գերանդի (խոտհարելու) 20 կանգուն երկարութեամբ և 10 կանգուն լայնութեամբ: Եւ ասում է ինձ Տէրն. Այդ է անէ՛ծք, որ բարձրանում է ամեն երկրի երեսից. այդ պատճառաւ ամեն գողի և սուտ երգուողի վրէժը մահու չափ կը խնդրուի այդ գերանդով: Կը մտնի այդ ամեն գողի և սուտ երգուողի տները՝ մէջ և կօչնչացրնէ ամեն ինչ (Զաք. Ե. 1—4):

Թէ որ տան աէրն զիտէր թէ՛ որ պահուան կը գայ գողն, կը Հսկէր և թոյլ չէր տալ ական (լաղմ) փորել իւր տան մէջ: Գուք էլ պատրաստ եղէք, որովհետև ինչ ժամի մէջ որ չէք կարծում, կը գայ Մարդոյ Արդին — Յիսուս Քրիստոս (Ղուկ. ԺԲ. 39—40). Կը գայ Մարդոյ Արդին — Յիսուս Քրիստոս (Ղուկ. ԺԲ. 39—40). Նա՛ որ գողութիւն էր անում, այլ ևս չանէ գողութիւն, մանաւանդ թող աշխատէ իւր ձեռքով րործել բարիքներ (Եփ. Գ. 28):

Գ Ո Ձ Ե Լ — քարձր ձայնով կանչել.

Յուզայի Ասա թագաւորն գոչեց առ Տէր Աստուած և ասաց. Ով Տէր, Գու շատով էլ կարող ես ապրեցնել զմեզ, քիչով էլ. գորացուր զմեզ, Տէր, այս պատերազմում, զի քեզ յուսացանք... չաղթուեցաւ թշնամին Աստուծոյ օգնութեամբ (Բ. Մնաց. ԺԳ. 11—15):

Տէրն կտորեց ամբարիշտների գաւազանը և իշխանութեան լուծը... յուսով Հանգստացաւ երկիրն և Հանդարտեցաւ և գոչում է սերախութեամբ (Ես. ԺԳ. 3—10):

Չայն՝ որ ասում է. գոչի՛ր: Եւ ասում եմ. — Ի՞նչ գանչեմ: — Գանչի՛ր որ ամեն մարմին խոտ է և մարդոյ բոլոր փառքերն ինչպէս խոտի ծաղիկ... Չորացաւ խոտն և թօթափեցաւ նորա ծաղիկն. բայց յուրտեան մնում է Տիրոջ խօսքն (Ես. Խ. 6—8):

Գոչեց Յիսուս մե՛ծ ձայնով և ասաց. Աստուած իմ, Աստուած իմ, ինչի՛ թողիք զիս... շարժեցաւ երկիրն, պատառեցան քարերն, բացուեցան գերեզմաններ, վեր կացան — յարութիւն առան — շատ սուրբ մեռած մարմիններ և գերեզմաններից դուրս

գալով, Նորա յարութիւնից յետոյ մտան սուրբ քաղաքն և երևեցան շատերին (Մատ. ԻԷ. 46—53):

Գ Ո Վ Ե Լ

Վայ այն մարդոց, որք բարին չար են անուանում և չարք՝ բարի, որք արհամարհում են արժանաւորը և գովում անարժանը:

Թող քեզ գովէ ուրիշն և ոչ թէ քո բերանն. բովէ օտարն և ոչ թէ քո շրթունքներն (Առ. ԻԷ. 2):

Ինչպէս վնասակար է սաստիկ և անօգուտ անձրևն, նոյնպէս անօգուտ է, որ թողում են օրէնքները և գովում անիրաւութիւնը. սակայն սաստիկ դէմ են կենում նոցա օրէնքները սիրողներն (Առ. ԻԸ. 3—4):

Վայ նոցա, որ բարին չար կասեն և չարք՝ բարի. որ խաւարը լուսի տեղ կը դնեն և լոյսը՝ խաւարի տեղ. որ դառնը քաղցրի տեղ կը դնեն և քաղցրը՝ դառնի տեղ (Ես. Ե. 20):

Չեր հաւատոյ ապացոյցն, որ աւելի պատուական է, քան կորստական ոսկին՝ որ փորձուում է կրակով, գտնուեցաւ գովութեամբ և փառքով և պատուով Ա. Պետ. Ա. 7):

Գ Ո Ր Ծ

Քո գործերն զքեզ կօրհնեն կամ կը յանդիմանեն:

Տէրն կը բանայ քեզ համար իւր բարութեան գանձերը, երկինք իւր ժամանակին անձրև կը տայ քո երկրին, քո ձեռաց բոլոր գործերը օրհնելու (Բ. Օր. ԻԸ. 12):

Տէրն կը հատուցանէ իւրաքանչիւր մարդոյ գործերի համեմատ (Յովբ ԼԳ. 11):

Արդարոց գործերն տալիս են կեանք, ամբարշտաց պրտողներն տալիս են մեղք (Առ. Ժ. 16):

Վայ անօրէն մարդոյն, իւր ձեռաց գործերի համեմատ չարիքներ պիտի վայելէ (Ես. Գ. 11):

Թող այն պէս լուսաւորէ ձեր լոյսն մարդոց առաջ, որ տեսնեն ձեր բարի գործերը և փառաւորեն ձեր հայրը, որ երկրնքումն է (Մատ. Ե. 16):

Ի՞նչ կօգտուի մարդ, թէ որ շահի ամբողջ աշխարհը և տուժէ իւր անձը. կամ ինչ փրկանք կը տայ իւր անձին տեղ. որովհետև դալու է Մարդոյ Որդին իւր Հօր փառքով, իւր Հրեշտակներով միասին, և այն ժամանակ հատուցանելու է իւրաքանչիւր (քրիստոնէի) իւր գործերին համեմատ (Մատ. ԺԶ. 26—27):

Գ Ո Ր Ծ Ե Լ

Քանի որ ժամանակ ունինք, բարի գործեր գործենք. քանզի կը գայ ժամանակ, որ անկարող կը լինինք:

Անդգամն ծիծաղելով է գործում չարութիւնը (Առ. Ժ. 23): Բայց դու երբ տալիս ես ողորմութիւն, թող չիմանայ քո ձախ ձեռն, թէ ինչ է գործում քո աջ ձեռն: Որպէս զի ծածուկ լինի քո ողորմութիւնն. և քո հայրն՝ որ տեսնում է ծածուկը, քեզ կը հատուցանէ յայտնապէս (Մատ. Զ. 3—4):

Գնացէք, գործեցէք ոչ թէ կորստական կերակուրը, այլ այն կերակուրը, որ մնում է յաւիտենական կեանքի համար (Յով. Զ. 27): Ետուհետև քանի որ կենդանի ենք, բարի գործեր գործենք ամենքի համար, մանաւանդ հաւատոյ ընտանեաց համար (Գաղ. Զ. 10):

Գ Ա Ռ Ն

Միթէ այսպէս դառն կը լինի մահն (Ա. Թագ. ԺԵ. 32): Ո՛վ մահ, ինչպէս դառն է քո յիշատակն:

Քեզ կը խրատէ քո ապստամբութիւնդ. քեզ կը յանդիմանեն քո չարիքն (արած չարագործութիւններդ) և կը ձանաչես, կը տեսնես թէ չար և դառն է քեզ համար զիս թողուլդ, ասում է քո տէր Աստուածն (Եր. Բ. 19):

Միւլնոյն բերանից ելնում են օրհնութիւններ էլ, անէ՛ծք-
ներ էլ. պէտք չէ, եղբայրներ, որ այս այսպէս լինի: Միթէ մի-
ւնոյն աղբիւրն իւր ակնիցն կը բղխէ քաղցր և դառն (Յակ.
Գ. 10—11):

Դ Ա Ռ Ն Ս Լ

Յրբ մենք դառնանք զէպի առ Աստուած. Աստուած Լ, կը դառնայ
զէպի մեզ:

Կը դառնաս դու քո Տէր Աստուծն և կը լսես Նորա ձայ-
նին. որովհետեւ Աստուած ողորմած է, չթողուր քեզ և չսպա-
նիր քեզ և ոչ կը մուսնայ քո հարց ուխտը (Յ. Յր. Գ. 31)—31):

Մարմնից բաժանուած Հոգին այլ ևս չէ գառնում, այլ
զնում է առ Տէր (Իմ. ՓՁ. 14):

Գարձէք զէպի ինձ, ասում է զօրութեանց Տէրն, և ես
կը դառնամ զէպի ձեզ... դարձէք ձեր բոլոր չար ճանապարհ-
ներից և չար զնացքներից (Ջաք. Ա. 3—4):

Թանձրացաւ այս ժողովրդեան սիրտն և ծանր լսեցին իւ-
րեանց ականջներով և փակեցին իւրեանց աչքերը, որ բնաւ չը
տեսնեն աչքերով, չլսեն ականջներով, չիմանան օրտերով և չը
դառնան, որ բժշկեմ զիրենք—ասում էր Փրկիչն (Մատ. ՓԳ.
15):

Դ Ա Տ Ա Պ Ա Ր Տ Ե Լ

Մարդկային բնութիւնն սովոր է միշտ դատապարտել իւր նման մար-
դիկը. ամեն ոքի աչքում իւր մեղքն շիւղի չափ է երևում և ուրիշ-
ներինը գերանի չափ:

Բեղաւորն նայում է արդարի վերայ և կամենում է սպա-
նել զնա. բայց Տէրն ո՛չ թողում է արդարը նորա ձեռքում և
ո՛չ դատապարտում (Սաղ. ԼՁ. 32):

Արդար հանդուցեալներից դատապարտուում են անիրաւ
կենդանիներն (Իմ. Գ. 16):

Եթէ զիտէիք թէ ինչն է «Ողորմութիւն եմ կամենում և
ոչ զոհ», ապա՛ չէիք դատապարտիլ անպարտները, որովհետեւ
շաբաթի Տէրն է Մարդոյ Որդին (Մատ. ՓԲ. 1—8):

Ինչի՞ համար տեսնում ես քո եղբոր աչքում եղած շիւղը
և չես նշմարում քո աչքում եղած գերանը: Կամ ինչպէս կա-
րող ես ասել քո եղբոր. Եղբայր թող աչքիցդ հանեմ շիւղը, և
դու չես տեսնում քո աչքում եղած գերանը: Կեղծաւոր, առաջ
հանիր գերանը քո աչքից, յետոյ կը նայես հանել շիւղը քո
եղբոր աչքից (Ղուկ. Զ. 41—42):

Աստուած ուղարկեց իւր Որդին մեղանշական մարմնոյ նը-
մանութեամբ և մեղաց համար, և դատապարտեց մեղքը նոյն
մարմնոյ մէջ (Հռ. Ը. 3):

Դ Ա Տ Ա Ս Տ Ա Ն

Աստուծոյ դատաստանն անաչառ է և անկաշառ:

Գատաստանի մէջ աչառութիւն չանես աղքատին (Եւք
ԻԳ. 3):

Աղքատին իրաւունքը չձռես գատաստանի մէջ (Եւք ԻԳ. 6):

Գատիր, ո՞վ Տէր, այն մարդիկը, որք դատում են զիս. պա-
տերազմիր նոցա հետ, որք կուուում են ինձ հետ: Ա՛ռ քո զէն-
քը—անպարը և վսՀանը և եկ ինձ օգնելու. հանիր քո սուրը
զիս հալածողների գէմ, արդե՛լիր և ասա՛ դու իմ անձին, թէ
ես եմ քո Փրկիչն (Սաղ. ԼԳ. 1—6):

Բարկասիրտ մարդն հանում է վէճ (դատ), իսկ հեղահողի
մարդն դադարեցնում կռիւր (Առ. ՓԵ. 18):

Վա՛յ նոցա, որ սահմանում են անօրէն կանոններ. վա՛յ
այն զպղերներին, որ զրում են անիրաւութիւն, որ ձռեն աղ-
քատների դատաստանը և յախշտակեն իմ ժողովրդեան տնան-
կաց իրաւունքները, որ իւրեանց աւար լինին որբւարիներն
և կողոպտեն որբերը: Եւ ինչ պիտի անէք իմ այցելութեան
օրում, ասում է Տէրն (Ես. Փ. 1—3):

Մի դատէք, որ չդատուիք, վասն զի ինչ դատաստանաւ դատում էք, նոյն դատաստանաւ էլ դատուելու էք. ինչ չափով չափում էք, նոյն չափով էլ կը չափուի ձեզ համար (Մատ. Ի. 1—2):

Հայր Աստուած չէ դատում մէկը, այլ ամեն դատաստան տուաւ իւր Որդուն, որ ամենքն պատուեն Որդին՝ ինչպէս պատուում են Հայրը: Ով որ չէ պատուում Որդին, չէ պատուում և Նորա ուղարկող Հայրը... Ինչպէս լսում եմ, դատում եմ և արդար է իմ դատաստանն, վասն զի ես չեմ խնդրում իմ կամքը, այլ Նորա կամքը, որ ուղարկեց զիս (Յով. Ե. 22—30):

Գ Ա Տ Ա Ի Ո Ր

Դատաւորներն նախ պէտք է զգուշութեամբ քննեն ամեն գործ ամեն պարագաներով միասին և ապա տան արդար վճիռ:

Դատաւորներն թող քննեն ճշմարտութեամբ (Բ. Օր. ԺԹ. 18):

Լսեցէք թագաւորներ և միտք առէք, սովորեցէք, սով երկրի ծայրերի դատաւորներ: Ականջ զրէք դուք, որ ունիք մեծ բազմութիւն և պերճացած տիրում էք ազգերի ժողովուրդների վերայ: Արովհետեւ Աստուած տուած է ձեզ այդ իշխանութիւնը և այդ հարստութիւնը: Բարձրեալն կը պահանջէ ձեր գործերը և կը քննէ ձեր խորհուրդները, որովհետեւ սպասաւորներ էք Աստուծոյ թագաւորութեան. ոչ դատում էք ուղղութեամբ և ոչ պահում էք Աստուծոյ օրէնքները և ոչ գնում էք Աստուծոյ կամաց համեմատ. ձեր վերայ կը հասնի ահիւ և տագնապաւ վասն զի անաչառ դատաստան է լինում իշխողների համար (Իմ. Զ. 1—9):

Տէրն—Բանն Աստուած Յիսուս Քրիստոս—մեր Հայրն է. Տէրն մեր դատաւորն է. Տէրն մեր իշխանն է. Տէրն մեր թագաւորն է. Տէրն մեր փրկիչն է և Նա կը փրկէ մեզ (Ես. ԼԳ. 22):

Մի տրամեցնէք մէկգմէկ, եղբայրներ, որ չդատուիք (Յակ. Ե. 9):

Կամենում ես չվախենալ իշխանութիւնից, բարի գործիր և կրնորունիս նորանից գովութիւն. որովհետեւ նա Աստուծոյ պաշտօնեայ է քեզ համար բարութեամբ: Ուրեմն թէ որ չար գործեր կը գործես, վախցիր, վասն զի զուր տեղ կապած չես սուրը իւր մէջքն. Աստուծոյ սպասաւոր է՝ վրէժխնդրութեամբ պատժելու չարագործները (Հա. ԺԳ. 1—4):

Ե՛՛Կ Ե Ղ Ե Յ Ի

Երեք գլխաւոր եկեղեցի կայ—անդրանիկ եկեղեցի, յաղթական եկեղեցի և զինուորնալ եկեղեցի:

Ա Ն Դ Բ Ա Ն Ի Կ Ե Ե Ե Ղ Ե Յ Ի

Ասում է Պօղոս առաքեալն. Բայց մօտեցած էք Սիօն սարին, կենդանի Աստուծոյ քաղաքին, երկնաւոր Երուսաղէմին, Հրեշտակաց բիւրաւոր բանակին, երկնքում գրուած անդրանիկ Եկեղեցուն, և ամենի դատաւոր Աստուծուն և Հանգուցեալ արքայոց Հոգիներին (Եբբ. ԺԲ. 22—24):

Բայր Հրեշտակներն ստեղծուած են Աստուծոյ խօսքով. «Եւսաց և եղին. Հրամայեաց և հաստատեցան» (Սաղ. ՃԽԸ. 5):

Թէ քանի միլիօն Հրեշտակ կայ երկնքումն, միայն Աստուած գիտէ նոցա թիւը: Ս. Գիրքն ասում է. «Եւ տեսայ և լսեցի շատ Հրեշտակների ձայներ, որ կային Աստուծոյ Աթոռի ջորս կողմում և նոցա թիւն էր բիւրք բիւրոց և հազարք հազարաց—անթիւ և անհամար (Յայտ. Ե. 11): «Աստուծոյ բանակներն բիւրաւոր են». (Եբբ. ԺԲ. 22): Անթիւ և անհամար Հրեշտակներն բաժանուած են ինն դասակարգի, որք են Աթոռք, Սերովքէք եւ Զերովքէք, Տէրութիւնք, Զօրութիւնք եւ Պետութիւնք, Իշխանութիւնք, Հրեշտակեպետք եւ Հրեշտակք:

Ա. Դասակարգն Աթոռոց Հրեշտակներն են, որք ծառայում են Աստուածութեան ինչպէս աթոռներ, որք ունին կերպարանք մարդոյ, կերպարանք առիւծի, կերպարանք եղին և

կերպարանք արձուի: Եզ. Ա. ասում է. «Ես տեսայ Տէրը նստած չորս կենդանեաց թւերի վերայ ինչպէս թղթի վերայ՝ գալիս էր»:

Բ. Գասակարգի Հրեշտակներն կոչուում են *ըազվաշեայ* Քերովբէք, քանդի ունին շատ աչքեր, վեց վեց թւեր: Սոքա Համարուում են Աստուածութեան կառքեր. «Աստուծոյ կառքերն բերապատիկ (մեզ Համար անՀամար) են... և Տէրն նստած նոցա վերայ (Սաղ. ԿԷ. 18): «Եւ ի Քրովբէս և թռեաւ» (Սաղ. ԺԷ. 11): «Տեսնում էի որ Քերովբէներն թռած գալիս էին օդի միջով. Քերովբէների վրայ կային աթուռներ և աթուռների վերայ նստած էր ամենակարող Աստուածն, որ եկն և մտաւ իւր Տաճարն. Տաճարն լցաւ Աստուծոյ փառքով: Տէրն երկինք վերադառնալիս, տեսայ սր ամեն մի քերովբէ իւր ետեւից ունէր չորս անիւներ և այդ անիւների մէջ էլ ուրիշ շատ անիւներ Հրեղէն կրակով լցուած, պտտում էին և Տէրն այդպէս բարձրացաւ երկինք» (Եզ. Ժ. 1—22):

Գ. Գասակարգի Հրեշտակներն կոչուում են *Սրբասաց*—Սնրբ, Սնրբ, Սնրբ—բրգող-Սերովբէք, որք ունին վեց վեց թւեր: «Ողիա թագաւորին մեռած տարում տեսայ Տէրը նրստած իւր բարձր աթուռի վերայ: Սերովբէներն կային շրջապատած Նորա չորս կողմը. ամեն մի սերովբէ ունէր վեց թւեր, երկուսով ծածկում էր իւր երեսը, երկուսով՝ իւր ոտքերը և երկուսով թռչում էր: Սերովբէներից ամեն մինն ազադակում էր և ասում. Սնրբ, Սնրբ, Սնրբ, Տէր Զօրութեանց, քո փառքով լցուած է ամենն: Եւ ես ասում եմ. վնչ ինձ, ես մեղաւոր եմ և մեղաւոր ժողովրդեան մէջ եմ բնակում և Զօրութեանց Տէրը տեսայ իմ աչքով: Ուղարկուեցաւ իմ մօտ այն Սերովբէներից մին, որ ունելիով —մաշայով—մի *Նրեղէն* կրակ առաւ այն սեղանից և բերելով մօտեցուց իմ բերանին և ասաց. Ահաւասիկ այս կրակն մօտեցաւ քո բերանին. այս կրակն կը սրբէ քո անօրէնութիւնները և կը հեռացնէ քեզանից քո մեղքերը» (Ես Զ. 1—9):

Դ. Գասակարգի Հրեշտակներն կոչուում են *Տէրութիւնք*.

Ե. *Զօրութիւնք*.

Զ. *Պետութիւնք*. Այս գասակարգերի պաշտօնն է միշտ օրհնել և զովել և փառաբանել զԱստուածութիւնը և Հնազանդ լինել իւրեանց ստեղծողին. Հայր Աստուած «մեռելներից լաւոց իւր միածին Որդի Յիսուս Քրիստոս և նստեցուց երկնքում իւր աջ կողմում ամեն իշխանութեան և Պետութեան և Զօրութեան և Տէրութեան վերայ» (Եփ. Ա. 20—21):

Է. *Իշխանք*. Յիսուս Քրիստոս երկինք Համբարձած ժամանակ՝ Հրեշտակներն ասում են իշխանաց գասակարգին. «Ո՛վ իշխաններ, վեր բարձրացե՛ք ձեր գոները, որ *երկինք* մտնէ փառաց թագաւորն Յիսուս Քրիստոս»: իշխաններն Հարցնում են Հրեշտակներին. «Ո՛վ է սա փառաց թագաւորն»: Ասում են Հրեշտակներն. «Սա ինքն է փառաց թագաւորն—սա ինքն է միւլեւոյն Միածին Որդի Բան Աստուած, որ մարմնանալով փրկուեց Մարդկութիւնը» (Սաղ. ԻԳ. 7—10 և Ես. ԿԳ. 1—7): Եւ այսպէս մեծ փառքով մտաւ երկինք Յիսուս:

Ը. Գասակարգի Հրեշտակներն կոչուում են *Հրեշտակապետք*, որոց գլխաւորներն են Գաբրիէլ և Միքայէլ: Գաբրիէլն ուրախութեան աչքալոյս աւետեց Զաքարիային Յովհաննէս Սկրտչի ծնունդը և Ս. կոյս Մարիամին աւետեց Փրկչի գալուտը: Իսկ Միքայէլ Հրեշտակապետն իւր գօրքով պատերազմում է միշտ Սատայէլի սատանաների հետ. «Եւ եղաւ պատերազմ երկնքում. Միքայէլ իւր ամեն Հրեշտակներով կուում էր Վիշապին հետ: Վիշապն էլ կուում է իւր ամեն գօրքով. բայց առաջին և մեծ վիշապ օձն ընկաւ կրկնքից երկիր, որ կոչուում է Բէեղզբուզ և Սատանայ (Յայտ. ԺԲ. 7—9):

Թ. Գասակարգն կոչուում է Հրեշտակք, որոց պաշտօնն է միշտ օրհնել զԱստուած և պահպանել քրիստոնէից կենդանի մարդիկը, ինչպէս ասում է Պողոս առաքեալն. «2^է որ Հրեշտակներն ամենքն էլ սպասաւոր հոգիներ են, որք ուղարկուում են Աստծուց սպասաւորելու նոցա Համար որ ժառանգելու են նախորդեանական փրկութիւնը» (Եբր. Ա. 14): Որ ամեն մի քրիստոնեայ ունի պահպան Հրեշտակ, աւելի լաւ է Հասկացնում մեզ Փրկիչն ասելով. «Զգո՛ւ՛ զկացէք որ չանարգէք այս փոք-

բիկներէից մէկը, վասն զի ասում եմ ձեզ որ նոցա պահապան հրեշտակներն երկնքի մէջ միշտ տեսնում են իմ Հօր երեսը, որ երկնքումն է» (Մատ. փԸ. 10):

Յ Ա Ղ Թ Ա Կ Ա Ն Ե Կ Ե Ղ Ե Յ Ի

Յաղթական է կոչուում Քրիստոսի հաւատացեալ ննջեցելոց հոգիների բազմութիւնն, որ այս աշխարհում պատերազմելով մոլութեանց հետ, մոլորութեանց հետ, մեղաց հետ և սատանայի հետ, յաղթեցին այդ ամենին և յաղթական երկինք գնացին երկրիցս. որպէս վկայում է Պօղոս առաքեալն յաղթող սրբերի համար. «Արք հաւատով յաղթեցին թագաւորութեանց, զօրձեցին արդարութիւն, հասան աչքալուսին, խցեցին առիւծների բերանները, անցուցին կրակի զօրութիւնը, ազատուեցան սրի բերանից, ուժովցան տկարութիւնից, զօրաւոր եղան պատերազմների մէջ, ցրուեցին օտարների բանակները, կանայք ընդունեցին իւրեանց յարութիւն առած մեռեալները, ոմանք չարչարուեցան և չընդունեցին ազատութիւն՝ որ հասնեն լաւագոյն յարութեան. ուրիշներն էլ առին նախատինքների, ձեծերի, կապանքների և բանտերի փորձը. քարկոծուեցան, սղոցուեցան, ընկան փորձանքի մէջ. մեռան սրով սպանուելով, շրջեցան ոչխարի և այծերի մորթիներով, կարօտութիւն քաշելով, նեղութիւն կրելով և չարչարուելով, մոլորուելով անապատների, լեռների, քարայրերի և երկրի խռոտչների մէջ» (Եբբ. փԱ. 33—40):

«Եւ սորանից յետոյ տեսայ և ահա շատ և անթիւ ժողովուրդ, որք հաւաքուած էին ամեն հեթանոսներից և ամեն ազգերից և ամեն լեզուներից և ամեն ժողովրդից, որք կային Աթոռին և Գառին—Քրիստոսի—առաջ՝ սպիտակ հագուստներ իւրեանց վերայ ձգած և իւրեանց ձեռքերում արմաւենի (խուրմի) ճիւղեր բռնած: Ազաղակում էին մեծ ձայնով և ասում. Փրկութիւն մեր Աստուծոյ, որ նստում է Աթոռի վերայ և Գառնին—Քրիստոսին:— Եւ ամեն հրեշտակներն կային Աթոռի,

քահանաների և չորս կենդանեաց չորս կողմերում, իւրեանց երեսի վերայ ընկնում էին Աթոռի առաջ և երկրպագում էին Աստուծոյ ... Սոքա են, որ գալիս են մեծ վշտերից—նեղութիւններից—և իւրեանց հագուստները լուանալով սպիտակացուցին Գառնին արիւնովն» (Յայտ. Է. 9—17):

Ջ Ի Ն Ո Ւ Ո Ր Ե Ա Ղ Ե Կ Ե Ղ Ե Յ Ի

Ջինուորեալ Եկեղեցի է կոչուում Քրիստոսի հաւատացելոց կենդանի բազմութիւնն, որ զինուած աստուածային զէնքերով շարունակ պատերազմում է մոլութեանց և մեղաց հետ, մոլորութեանց և սատանայի հետ: «Վշտակից լեր իբրև զբարւոք զինուոր Քրիստոսի Յիսուսի» (Բ. Տիմ. Բ. 3): «Որովհետև թէ պէտ գնում ենք մարմնով, բայց ոչ թէ մարմնաւոր զէնքերով ենք զինուորուում: Քանզի մեր զինուորութեան զէնքն մարմնաւոր չէ, այլ զօրաւոր Աստուծոց՝ ամբողջութիւնները քանդելու համար» (Բ. Կորն. փ. 3—4):

Աշխարհիս վերջում կը միանան այս Անդրանիկ, Յաղթական և Ջինուորեալ եկեղեցիներն և կը լինեն մի հօտ և մի հովիւ (Յով. փ. 16):

Ե Ղ Բ Ա Յ Բ

Քեզ միշտ հարկաւոր կը լինեն քո եղբայրներն, որի համար իսկապէս ծնուած են:

Յովսէփ գեղեցիկ՝ չար նախանձի պատճառաւ իւր եղբայրներից ծախուեցաւ Իսմայէլացւոց վերայ քսան գահէկանի (Ծնն. ԼԷ. 28):

Ամեն ժամանակ կուեննաս բարեկամներ. բայց վշտաց ժամանակ քեզ հարկաւոր կը լինին քո եղբայրներն, որի համար իսկապէս ծնուած են (Առ. փԷ. 17):

Եղբայր եղբորից օգնուած լինելն ամուր քաղաքի պէս է (Առ. փԸ. 19):

Հարազատ եղբայրդ մի փոխիր ամենաազնիւ ոսկու Հետ (Սեր. Է. 20):

Հեռացան ինձանից իմ եղբայրներն. ինձանից աւելի ճանաչեցին օտարները. անողորմ եղան իմ բարեկամներն. արհամարհեցին զիս իմ մերձաւորներն, և իմ անունը մոռացան իմ ծանօթներն (Յովբ Փթ. 13—14):

Ամեն մարդ, ով որ ատում է իւր եղբայրը, մարդասպան է (Ա. Յով. Գ. 15):

Ով որ կատէ սիրում եմ զԱստուած և կատէ իւր եղբայրը, սուտ է (Ա. Յով. Գ. 20—21):

Ե Ր Ա Խ Տ Ի Ք

Ամեն ոք սխտական է երախտագէտ լինել իւր բարերարին. ասել ըստան անսպասելի չէ մնում:

Նաբաղ Գաւթին երախտագէտ լինելու տեղ՝ ապերախտ գտնուեցաւ և սաստիկ վախից մեռաւ (Ա. Թագ. ԻԵ. 26):

Իսրայէլի ցեղերն մոռացան Աստուծոյ երախտիքը և ցոյց տուած բոլոր հրաշագործութիւնները (Սաղ. ՀԷ. 11—72):

Յուդան՝ փոխանակ երախտագէտ լինելու անհուն երախտեացն Յիսուսի՝ երախտամոռ եղաւ և մատնեց իւր Տէրը. բայց ինքն էլ մատնուեցաւ սատանային և խեղդուեցաւ (Մատ. ԻԶ. 47. ԻԷ. 6):

Ասում է Պետրոս առաքեալն. ժողովրդեան իշխաններ և Իսրայէլի ճերեր, միթէ կարժէ այսօր զատել զմեզ մի տկալ մարդոյ երախտեաց համար, որ բժշկուեցաւ Նազովրեցի Յիսուս Քրիստոսի անունով (Գործ Գ. 9—10):

Ե Ր Ա Ն Ի

Յարմար դատեցինք երանի հատուածի մօտ գնել և վախի հատուածը:

Երանի այն մարդոյն, որի մեղաց թողութիւն եղաւ և ծածկուեցան նորա բոլոր յանցանքներն (Սաղ. ԼԱ. 1):

Երանի հոգևով աղքատներին, վասն զի նոցա է երկնից թագաւորութիւնն:

Երանի սգաւորներին, որովհետև նոքա կը մխլթարուին:

Երանի հեղեղեմ, որովհետև նոքա կը ժառանգեն երկիրը:

Երանի նոցա, որք քաղցած և ծարաւի կը լինին արդարութեան, որովհետև նոքա կը յազենան:

Երանի ողորմածներին, որովհետև նոքա ողորմութիւն կը զտնեն:

Երանի նոցա, որք սուրբ են սրտերով, որովհետև նոքա կը տեսնեն զԱստուած:

Երանի խաղաղարարներին, որովհետև նոքա կը կոչուին Աստուծոյ որդիներ:

Երանի նոցա, որք հալածուած կը լինին արդարութեան համար, որորովհետև նոցա է երկնից թագաւորութիւնն:

Երանի է ձեզ, երբ կը նախանձեն զձեզ և կը հալածեն. և իմ պատճառաւ ձեր մասին կասեն ամեն տեսակ վատ և սուտ խօսքեր: Յնճացէք և ուրախ եղէք, որովհետև երկնքումն շատ են ձեր վարձքն. վասն զի այսպէս հալածեցին մարդաբէները, որ ձեզանից առաջ էին (Մատ. Ե. 3—12 և Ղուկ. Զ. 20—23):

Վ Ա Յ

Վայ քեզ, քաղաք, որ քո թագաւորն մանուկ է և քո իշխաններն ուտում են կերակուրը առաւօտեան (Փող. Փ. 16):

Վայ նոցա, որ իւրեանց անձերը համարում են ՚ի շարս իմաստնոց և իւրեանց աչքում երեւում են խորհրդականներ (Ես. Ե. 21):

Վայ նմա, որ արիւն թափելով է շինում քաղաք և անիրաւութեամբ է հիմնում աւան (Ամբակ. Բ. 12):

Վնչ աշխարհին՝ գայթակղութեանց պատճառաւ. Հարկ է գալ գայթակղութեանց, բայց վնչ այն մարդուն, որի ձեռքով կը գայ գայթակղութիւն (Մատ. ԺԸ. 7):

Վնչ ձեզ, անգութ Հարուստներ, որ ընդունեցիք ձեր մխլ-թարութիւնը արդէն այս աշխարհում: Վնչ ձեզ, որ կուշտ էք, վասն զի կանօթենաք: Վնչ ձեզ, որ այժմ ծիծաղում էք, վաստն զի կը սղաք և կը լաք: Վնչ ձեզ, երբ մարդիկ բարի կը խօսին ձեր մասին, քանզի այդպէս էին անում նոցա Հայրերն սուտ մարգարէներին (Ղուկ. 9. 24—26):

Ե Ր Դ Ո Ւ Ե Լ

Սարսափելի մեղք է Աստուծոյ անունով սուտ երդում ուտելն Ս. Խաչի և Աւետարանի վերայ: Բնաւ անսպասիժ չմնար սուտ երդուողն:

Իմ անունով սուտ երդում չուտէք. և չսրճէք ձեր Տէր Աստուծոյ անունը. ես եմ ձեր Տէր Աստուածն (Ղև. ԺԹ. 12):

Գարձալ և բարձրացուցի իմ աչքերը և տեսայ թռչող զերանդի օդի մէջ. և ասում է ինձ Տէր. Ի՞նչ ես տեսում, Զաքարիա: Եւ ասում եմ. Տեսնում եմ թռչող զերանդի քսան կանգուն երկարութեամբ և տասն կանգուն լայնութեամբ: Եւ ասում է ինձ Տէր. Այդ է անէ՞ք, որ բարձրանում է ամեն երկրի երեսից. այդ պատճառով ամեն զողի և սուտ երդուողի վրէժը մահու չափ կը խնդրուի այդ զերանդով: Կը մտնի այդ ամեն զողերի և տուների մէջ և կոչնչացնէ ամեն ինչ (Զաք. Ե. 1—4):

Ասում է Փրկիչն. Այլ ես ասում եմ ձեզ. Ամենեւին երգում չուտէք, ոչ երկնքով՝ որ աթու է Աստուծոյ, ոչ երկրով՝ որ պատուանդան է Նորա ոտների, ոչ Երուսաղէմով, որ մեծ թագաւորի Աստուծոյ քաղաքն է. և ոչ քո գլխով երգում ուտես, վասն զի կարող չես մազ մի սպիտակացնել կամ սևացրնել: Ուրեմն թող լինի ձեր խօսքն այնն այտ, ոչն էլ ոչ. քանզի նորանից աւելին սատանայիցն է (Մատ. Ե. 23—28):

Իմ եղբայրներ, երգում չուտէք, ոչ երկնքով, ոչ երկրով,

և ոչ ուրիշ բանով. այլ թող լինի ձեր խօսքն այնն՝ այն, և ոչն՝ ոչ, որպէս զի չընկնիք կեղծաւորութեան մէջ (Յակ. Ե. 12):

Ե Ր Ի Տ Ա Ս Ս Ր Դ

Երիտասարդն ինչով կուզէ իր ճանապարհը, միայն Աստուծոյ խօսքերը պահելով:

Երիտասարդներ և կուսանքներ... օրհնեցէք Տիրոջ անունը (Սաղ. ԺԽԸ. 12):

Երիտասարդի զարդն է իմաստութիւնն (Առ. Ի. 29):

Երիտասարդը կրթիւր մանկութիւնից, որ ծերութեան ժամանակ չը խոտորի նոյն կրթութիւնից (Առ. ԻԲ. 6):

Ո՛վ երիտասարդ, ուրախ եղի՛ր քո մանկութեան մէջ. թող զուարճացնէ քեզ սիրտդ քո երիտասարդութեան օրերում, և անարատ գնահատ քո սրտի ճանապարհով և քո աչքերի անարատ նայուածքով. բայց զիտցի՛ր որ այս ամենի Համար քեզ դատելու է Աստուած (Ժող. ԺԱ. 9):

Եւ կը լինի սորանից վերջն. կը թափեմ իմ Հոգու շնորհքներից ամեն մարդու վերայ, և կը մարգարէանան ձեր տղաքն և աղջիկներն, երազներ կը տեսնեն ձեր ծերունիներն և տեսիլներ կը տեսնեն ձեր երիտասարդներն (Յովել. Բ. 28):

Դուք, երիտասարդներ, Հնազանդ եղէք ծերերին. ամենքդ էլ Հնազանդ լինելով միմեանց՝ խոնարհութիւն ունեցէք. որովհետեւ Աստուած Հակառակ է ամբարտաւաններին, շնորհքը տալիս է խոնարհներին (Ա. Պետ. Ե. 5):

Գրում եմ ձեզ, երիտասարդներ, որ դուք յաղթեցիք չարին. զրեցի ձեզ, մանկունք, որ դուք ճանաչեցիք Հայր Աստուածը... զրեցի ձեզ, երիտասարդներ, որ դուք զօրացած էք, և Բանն Աստուած բնակում է ձեր մէջ և դուք յաղթեցիք չարին (Ա. Յով. Բ. 13—14):

Ե Ր Կ Ի Ն Ք

Մարդ ապրում է երկրիս վերայ՝ երկնքունն Աստուծոյ հետ մշտնջենա-
ւոր երջանիկ լինելու նպատակաւ:

Երկինք պատմում են Աստուծոյ փառքը և հաստատու-
թիւնն պատմում է Նորա ձեռաց արարածները Սաղ. ժԸ. 1):

Աստուած երկնքից տուաւ հացը, մարդիկ կերան Հրեշտա-
կաց հացը (Սաղ. շԷ. 25):

Ասում է Մովսէս ժողովրդեան. — Եթէ ուշադրութեամբ կը
լսէք մեր Տէր Աստուծոյ ձայնին, և զգուշութեամբ կը կատա-
րէք Նորա պատուիրանները... Տէրն կը բանայ քեզ համար
իւր բարութեան գանձերը — երկինքը — որ իւր ժամանակին կը
տայ անձրև քո երկրին... իսկ եթէ չես լսիլ քո Տէր Աստու-
ծոյ ձայնին և չես պահիլ Նորա պատուիրանները... այն ժա-
մանակ երկինքն պղնձի կը լինի քո գլխի վերև և երկիրն եր-
կաթի կը լինի քո ոտքերի տակ, և Տէրն կը տայ քո երկրին
անձրևի տեղ հող և փոշի (Բ. Օր. ԻԸ. 1—25):

Երբ մկրտեցաւ Յիսուս, դուրս եկաւ այն ջրից. և ահա
Նորա համար բացուեցան երկինք և տեսաւ Աստուծոյ Հոգին,
որ աղաւնու պէս իջնում էր և զալիս էր Նորա վերայ: Եւ ա-
հա ձայն երկնքից՝ որ ասում էր. Դա է իմ սիրելի Որդին, Ո-
րը հաւանել եմ (Մատ. Գ. 16—17):

ԵՐԿԻՐՊՈՒՄՆԵԼ — մինչև զեփոնն խոնարհիլ.

Միայն Աստուածութիւնն լինելու է մեր ճշմարիտ երկրպագութեան
առարկան:

Սերահամ մինչև զեփոնն խոնարհութիւն անելով ասաց.
Տէր իմ, այժմ որ շնորհք գտայ քո առաջ, աղաչում եմ քեզ,
զանց մի անիլ քո ծառայից, այլ բերել տամ մի քիչ ջուր՝ ու
լուանան ձեր ոտները և զովացէք ծառիս հովանու տակ (Ծնն-
ծԸ. 2—4):

Երկրպագութիւն չանես օտար աստուածների — այն է՝
կուռքերի և արարածների, արեգական, լուսնի, և այլն — (Բ.
Օր. Ե. 6—10):

Երկրպագութիւն կանեն Աստուծոյ ամեն ազգերի ողջ սե-
րունդներն (Սաղ. ԻԱ. 28):

Յիսուս սաստելով ասաց փորձող սատանային. Հեռացի՛ր
իմ ետևից, սատանայ, որովհետև գրուած է. Երկրպագութիւն
կանես քո Տէր Աստուծոյն և նոյն Աստուածը միայն կը պաշտես:
Այն ժամանակ հեռացաւ սատանան և մօտեցան Հրեշտակներն
և սպասաւորում էին Փրկչին — Քրիստոսին (Մատ. Գ. 10—11):

Ճշմարիտ երկրպագուներն հոգւով և ճշմարտութեամբ
պէտք է երկրպագեն Հօր, որովհետև Հայր Աստուած էլ իւր
համար ուզում է այնպիսի երկրպագուներ: Աստուած Հօգի է
Նորա երկրպագողներն էլ պարտաւոր են երկրպագել հոգւով և
ճշմարտութեամբ (Յով. Գ. 23—24):

Ե Ր Կ Ի Ի Ղ

Պարտաւոր ենք երկիւղածութեամբ պաշտել զԱստուած և ոչ թէ մե-
քենայաբար և ակամայ:

Երկիւղածութեամբ (վախենալով) ծառայեցէք Տիրոջ (Սաղ.
Բ. 11):

Սուրբ է Աստուծոյ երկիւղն (Սաղ. ժԸ. 9):

Իմաստութեան սկիզբն Աստուծոց վախնալն է (Առ. Ա. 7):
Տիրոջ երկիւղն՝ կենաց աղբիւր է՝ մահուան որոգալից
ազատ մնալու համար (Առ. ժԳ. 27):

Ո՛վ Տէր, նեղութեան ժամանակ լիշեցինք զքեզ, վասն զի
փոքր ինչ նեղութիւն է մեզ համար քո պատիժն. և ինչպէս
ծնթիկան (ծննդական) կինն՝ ծնանելու մօտ՝ իւր ցաւերի պատ-
ճառաւ կ'աղաղակէ, այնպէս եղանք մենք էլ... քո երկիւղի

Համար. ով Տէր, չղացանք, ցաւեր քաշեցինք և ծնանք քր
փրկութեան հոգին (Նս. ԻԶ. 16—18):

Միմեանց հնազանդ եղէք Քրիստոսի երկիւղով (Նփես.
Ե. 21):

Այլ հեղութեամբ և երկիւղով ունեցէք քաղցր վարք ու
բարք (Ա. Պետ. Գ. 16):

Ջ Ա Տ Ի Կ

Յիսուս Քրիստոսի չարչարանաց, մահուան, շարութեան և ս. պատա-
րագի խորհուրդը հաստատելու յիշատակի օրն է: Հին Ջատիկն Նգիւյ-
տոսից ազատուելու ուրախութեան օրն էր, իսկ Նոր-Ջատիկն դժոխ-
քի աւերման ուրախութեան օրն է:

Ասաց Յիսուս վերնատան մէջ իւր աշակերտներին. Յան-
կանալով ցանկացայ ձեզ հետ ուտել այս պասէքը—գատիկը—
իմ չարչարուելուց առաջ (Ղուկ. ԻԲ. 15):

Եւ երբ Առաքեալներն ուտում էին, Յիսուս առաւ հաց,
օրհնեց և կտորեց, տուաւ իւր աշակերտներին և ասաց. Ա-
ռէք կերէք, այս է իմ մարմինն: Եւ առնելով բաժակը—գի-
նով լեցուն բաժակը—օրհնեց, տուաւ նոցա և ասաց. Խմեցէք
դորանից ամենքդ, որովհետեւ այդ է իմ Նոր ուխտի արիւնն¹⁾
որ թափուում է շատերի մեղաց թողութեան համար: Այս կա-
նէք զիս յիշատակելու համար (Մատ. ԻԶ. 26—28. Մար.
ՓԳ. 22—24. Ղուկ. ԻԲ. 17—20):

1) Նոր ուխտ ասելով, Յիսուս Քրիստոս գաղտնեցնում է Հին-
Ուխտի զոհագործութիւնը (անասնոց արեամբ փրկութիւնը—վասն՞ զի
տուաւ մեզ իւր Նոր ուխտի ՄԱՐՄԻՆԸ և ԱՐԻՒՆԸ. քանզի ինքն էր
ԱՆԱՐԱՏ ԳԱՌՆ Աստուծոյ և փրկութեան ԶՈՅՆ. վասն զի իւր սուրբ
մարմինը Խաչի վերայ զոհելով մատոց չօր Աստուծոյ անմահ պատա-
րագ, որ գերազանց էր ոչ միայն անասնոց զոհերիցն, այլ և մարդոց.
«Ո՞րչափ ևս առաւել արիւնն Քրիստոսի, որ ՚ի ձեռն չոգւոյն յաւի-
տենականի մատոց զանձն անարատ պատարագ» (Եբր. Թ. 14):

Ջատիկն մեր զենաւ Քրիստոս—այս է Յիսուս Քրիստոս
խաչեցաւ թաղեցաւ և յարեաւ (Ա. Կորն. Ե. 7):

Իրում է Պօղոս առաքեալն. Ինչպէս որ ես ընդունեցի
Տիրոջից, որը և աւանդեցի ձեզ, թէ Տէր Յիսուս այն զիշե-
լում, որի մէջ մատնուում էր, առաւ հաց, զոհացաւ, կտոր-
եց և ասաց. Առէք կերէք, այս է իմ մարմինն, որ բաշ-
խուում է ձեր համար. այս արէք զիս յիշատակելու համար:
Նոյնպէս ընթրիքից յետոյ առաւ բաժակը և ասաց. Իմ արիւ-
նով նոր ուխտիս բաժակն է այս. այս արէք (կատարեցէք պա-
տարագի խորհուրդը) զիս յիշատակելու համար: Քանի անգամ
որ կուտէք այս հացը և կը խմէք այս բաժակը, պատմեցէք
որ Քրիստոսի մահը՝ մինչև որ կը գայ Նա: Այսուհետև ով որ ան-
արժանութեամբ կուտէ այս հացը կամ կը խմէ այս բաժակը,
պարտական կը լինի Տիրոջ մ'արմ'նոյ և արեան: Թող նախ
փորձէ մարդ իւր անձը և յետոյ ուտէ այն հացից և խմէ այն
բաժակից. որովհետև ով որ անարժանութեամբ ուտում է և
խմում, իւր անձի համար դատաստան է ուտում և խմում.
Վասն զի հասարակ հացից չէ զանազանում Քրիստոսի մար-
մինը: Իսկապէս այդ պատճառաւ են լինում ձեր մէջ շատ հի-
ւանդներ և ցաւազարներ. աւելի շատերն էլ նոքա են, որք
մեռած իսկ են: Եթէ մենք քննեցինք մեր անձերը, ուրեմն
չէինք դատապարտուիլ (Ա. Կորն. ՓԱ. 23—32):

Ջ Ա Ի Ա Կ

Երանի՛ այն ծնողաց, որոց զաւակի միջոցաւ օրհնուում է մարդկու-
թիւնն, և երանի՛ այն զաւակաց, որոց ձեռնով փրկուում են ազգեր:

Աղամի և Եւայի զաւակն կը ջախջախէ քո (սատանայի)
կուլիը (Ծնն. Գ. 15):

Ամեն ազգեր կ'օրհնուին քո (Աբրահամի) զաւակով (Ծնն.
ԻԲ. 18)

Ո՞վ բարձրացաւ երկինք և իջաւ. ով հաւաքեց քամինե-

ըր իւր ձեռների մէջ, ո՞վ Հաստատեց երկրիս ամեն ծայրերը, ի՞նչ է Նորա անունն և ի՞նչ է Նորա Արդու անունն: — Հայր Աստուած է Նորա անուն և Յիսուս Քրիստոս է Նորա Արդու անունն (Առ. ԻԹ. 4):

Եթէ Տէր Աստուած մեզ Համար գաւակ թողած չլինէր, Վոզմի պէս կը լինէինք և Գոմորին կը նմանէինք (Ես. Ա. 9):

Ասում է Տէր Աբրահամի յետազաներին. Իմ Հոգին կը գնեմ քո գաւակի—Յիսուսի—վերայ և իմ օրհնութիւնը՝ քո սերնդոց վերայ (Ես. ԽԳ. 3):

Հոտ մարմնոյ Յիսուս Քրիստոս Համարուում է Գաւթի գաւակ (Հռ. Ա. 3):

ԶԻՅՈՒՅԱՆԵԼ — Դազցնել.

Եթէ Աստուած այնպէս Հազցնում է վայրի խոտը, որ այսօր կայ և վաղն կրակի մէջ ձգուելու է, որչափ ևս աւելի կը Հազցնէ զձեզ, թե՛ րահաւատներ:

Ո՞վ Տէր, գորութիւն Հազցուցիր ինձ (Սաղ. ԺԷ. 33):

Տէրն Հազցուց ինձ ուրախութիւն (Սաղ. ԻԹ. 12):

Ասում է Աստուած. կը Հազցնեմ քեզ փրկութիւն (ՃԼԱ. 16):

Երկինքը ո՞վ Հազցուց ամպերով (Սաղ. ՃԽԶ. 8):

Իմ անձն կը ցնծայ Տէրով, որ Հազցուց ինձ փրկութեան Հազուտ և ուրախութեան պատմութեան. ինչպէս փեսայ պտակեց պրակով և ինչպէս Հարոն զարդարեց զիս զարդարանքներով (Ես. ԿՍ. 10):

Ասում է Փրկիչն. Ինչո՞ւ էք Հոգս անում Հազստի Համար. նայեցէք վայրի շուշանին, ինչպէս աճում է, ո՞չ լինում է և ո՞չ գործում: Ճշմարիտ ասում եմ ձեզ, որ Վոզմոն իւր ամբողջ փառքերի մէջ չհազաւ նոցանից մէկի պէս: Բայց եթէ Աստուած այնպէս Հազցնում է վայրի խոտը, որ այսօր կայ և

վաղն կրակի մէջ ձգուելու է, որչափ ևս աւելի կը Հազցնէ զձեզ, թե՛ րահաւատներ (Մատ. Զ. 28—30):

ԶԻՈՒՂ ԼԻՆԵԼ — սայաղ կենալ.

Ամեն պարագայում Հարկաւոր է զգուշանալ:

Զգուշ եղիր դու ամեն բանի մէջ (Եւք ժԳ. 11):

Յիմարների բերանում կայ Հպարտութեան գաւազան.

զգուշ են լինում խոհմ շրթունքներն (Առ. ժԳ. 3):

Ամեն մէկի զգուշացէք ձեր ընկերից (Եր. Թ. 4):

Զգուշ կացէք այն սուտ մարգարէներից—քարոզիչներից—

որք գալիս են ձեզ մօտ ոչխարի Հագուտներով, բայց ներսից լափշտակող գայլեր են: Իւրեանց պտուղներից կը ճանաչէք զնոսա. միթէ խաղող կը քաղեն փշերից, կամ թուզ կը քաղեն տատակից: Այսպէս ամեն բարի ծառ բերում է բարի պտուղ. և չար ծառ՝ բերում է չար պտուղ: Ուրեմն նոցա պըտուղներից կը ճանաչէք զնոսա (Մատ. Ի. 15—23):

Զգուշ կացէք փարիսեցոց խմորիցն, որ է կեղծաւորութիւն (Մար. Ը. 15):

Զգուշ կացէք. Հսկեցէք և աղօթք արէք... արթուն կացէք. որովհետև չգիտէք երբ կը գայ տան տէրն—երեկոյեան, թէ կէս գիշերին, թէ հաւախօսին, թէ առաւօտեան զէմ: Իուցէ յանկարծակի գալով քնացած գտնէ ձեզ: Բայց ինչ որ ասում եմ, ամենքիդ եմ ասում. արթուն կացէք (Մար. ժԳ. 33—37):

Զգուշ կացէք ձեր անձերին. չլինի թէ ձեր սրտերն ծանրանան կերուխումով, արբեցութեամբ և աշխարհային զբաղմունքներով, և յանկարծ ձեր վերայ Հասնի այն օրն. վասն զի որողայլթի պէս կը Հասնի ամեն մարդոյ վերայ մահուան օրն, որք բնակում են ամբողջ երկրի երեսին: Արթուն կացէք այսուհետև, ամեն ժամանակ աղօթք արէք, որ արժանանաք ազատուիլ այն ամեն փորձանքներից, որ լինելու է, և գալ Մարդոյ Արդու առաջ (Ղուկ. ԻԱ. 34—36):

Զգուշ կացէք, չլինի թէ մէկն կողոպտէ զձեզ ճարտարամտութեամբ և խաբերայ ճոռոմաբանութեամբ, որք մարդկան աւանդութեան համեմատ և աշխարհիս սկզբունքների համեմատ կը լինին (Սող. Բ. 8—9):

Զգուշացէք, ով հոգևորականներ, ձեր անձրիս և ձեր ամեն հօտիգ (ժողովրդեան), որի վերայ Սուրբ Հոգին ձեզ տեսուչ (սպահապան) դրաւ Աստուծոյ ժողովուրդը հովուելու համար, որը Յիսուս Քրիստոս ապրեցոյց իւր արիւնով (Գործ. Ի. 28):

ԶՂՋԱԼ — փեշմանիւ.

Մեղաւորները արդարացնելու միակ ճարն է կատարել զղջումն.

Կը զղջայ նա, ով որ ատում է արդարը (Սող. ԼԳ. 22): Բարկացէք, բայց մեղք մի գործէք (մի մեղանչէք). ինչ որ ատում էք ձեր սրտերում, զղջացէք ձեր անկողինների մէջ (Սող. Գ. 5):

Այն ժամանակ (Նահատակն) մեծ Համարձակութեամբ կը կանգնի զինքը չարչարողների զիմացն: Չարչարողներն տեսնելով զնա՝ կը խռովին սաստիկ վախով և կը դարհուրին արդարի սքանչելի փրկութեան վերայ: Եւ կը զղջան իւրեանց մտքերում և անի քաշելով (հոգոց հանել) իւրեանց անձերի նեղութեան համար՝ կատեն. Այս աչն մարդն է, որը մենք երբեմն ծաղրում էինք և խաչտառակում: Մենք անմիտներս մոլորութիւն էինք համարում դորա վարքը և անարգութիւն դորա վախճանը: Ի՞նչպէս Համարուեցաւ դա ՚ի շարս Աստուծոյ որդւոյ...: Արեմն մենք մոլորուեցանք մշմարտութեան ճանապահից (Իմ. Ե. 1—8):

Ասում է Յիսուս Քրիստոս զպիւրներին և փարիսեցիներին. Գատաստանի օրում վեր կը կենան Նինուէացի մարդիկ այս (Հրէից) ազգի հետ և կը դատապարտեն դա. սրովհետեւ զղջացան Յովնանու քարոզելովն. և այժմ ահա Յովնանից մեծն այտտեղ է (ինքն Փրկիչն է մեծն) (Մատ. ԺԲ. 41):

ԶՐԿԵԼ — զրկողութիւն անել

Զրկողն՝ ինքն էլ կը զրկուի:

Զրկես քո ընկերը (հարևանը և ամեն մարդ) և յափշտակութիւն չանես (Ղևտ. ԺԹ. 13):

Որովհետեւ զրկում էին աղաները, իրանք էլ կը կոտորուին (Առ. Ա. 32):

Գուք ինչի՞ էք զրկում իմ ժողովուրդը և ամօթով լցնում էք անանկին երեսը — ասում է Զօրութեանց Տէրն (Ես. Գ. 15):

Լսեցէք Տէրոյ խօսքը, ով Սամարիայի լեռներում բնակողներ, որ զրկում էք աղքատները և ոտնահար անում անանկները... երգուում է Տէրն իւր սրբութեան վերայ, թէ ահա ձեր վերայ կը դան օրեր և զէնքերով կառնեն զձեզ (Ամովս Գ. 1—2):

Զրկեցիք, սպանեցիք արդարը, որ ձեզ հակառակ չէր (Յակ. Ե. 6):

ԶՐԿՈՒԻԼ

Աստուած է զրկուածի պաշտպանն:

Ես մի զրկուած մարդ էի (Դատ. ԺԲ. 2): Տէրն անում է ողորմութիւն և պաշտպանում է զըրկուածների իրաւունքները (Սող. ճԲ. 6):

Ասում է Տէրն. փրկեցէք զրկուածները (Ես. Ա. 17): Դեռ ձեզ մօտ մնում են ձեր անդերը դործող մշակների վարձերը (օրականները) աղաղակում է ձեզնից զըրկուածն. Զօրութեանց Տիրոյ ականջներին հասաւ հնձողների բողբոջն (Յակ. Ե. 4):

Handwritten notes in Armenian script, including phrases like 'աստուած է զրկուածի պաշտպանն', 'Ես մի զրկուած մարդ էի', 'Տէրն անում է ողորմութիւն', 'Սող. ճԲ. 6', 'Սող. Ա. 17', 'Տիրոյ ականջներին հասաւ հնձողների բողբոջն', 'Յակ. Ե. 4', and 'մաշաց. ճան լաւիմբոս'.

ԶՐՊԱՐՏԵՒ

Ո՛չ մէկը նեղեցէք և ո՛չ մէկը զրպարտեցէք:

Մի զրպարտէք իւրաքանչիւրդ իւր ընկերը (Ղևա. ԺԹ. 11):

Ո՛վ որ զրպարտում է ազբատը, բարկացնում է նորա Ստեղծողը, և ով որ պատուում է Աստուածը, ողորմում է ազբատին (Առ. ԺԴ. 31—32):

Չարիք է գործում իւր համար նա, որ զրպարտում է ազբատը (Առ. ԻԲ. 16):

Եւ ես դարձայ և տեսայ բոլոր զրկանքները, որք լինում են արեգակի տակ, և ահա զրպարտուածների արտասուքներն, չկար մէկն՝ որ մխիթարէր զնոսա, բայց ուժ—բռնութիւն կար զրպարտողների ձեռքում (Ժող. Դ. 1):

ԶՕՐԱՆԱԼ

Ամենազոռարին նեղութեանց մէջ անգամ պէտք է որ զօրանանք Աստուծով առանց վնասելու:

Չօրացաւ Դաւիթ Աստուծով և զԴողիազ սպանեց պարսաքարով (Ա. Թագ. ԺԷ. 50):

Տէրն զօրացոյց Յուդայի Ողիա թագաւորը այլազգիների վերայ (Բ. Մնաց. ԻԶ. 7):

Համբերիր Աստուծոյ և քաջալերուիր, թող զօրանայ քո սիրտն և համբերիր Տիրոջ (Սաղ. ԻԶ. 14):

Չօրացէք թուլացած ձեռներ. զօրացէք գողգոջուն ծունկեր. մխիթարուեցէք ո՛վ թուլասիրտներ. մի վախէք, ահաւասիկ մեր Աստուածն ինքնին կը գայ կը փրկէ զմեզ (Ես. ԼԵ. 3—4):

Չօրացիր դու, ով Չօրաբարեր, զօրացիր Յեսու Յովսեփեկեայ մեծ քահանայ, թող զօրանայ երկրիդ ամեն

ժողովուրդն, ասում է Տէրն. գործեցէք, որովհետեւ ես ձեզ հետ եմ, ասում է ամենակալ Տէրն և Բանն՝ որը ուխտեցի ձեզ... և իմ Հոգին, որ կայ ձեր մէջ. քաջալերուեցէք (Անդ. Բ. 4—5):

Այսուհետև զօրացէք Աստուծով և նորա զօրութեան կարողութեամբ. և հագէք Աստուծոյ սպառազինութիւնը— արգարութեամբ, հաւատով, Աստուծոյ խօսքով և աղօթքով—որ կարող լինիք դէմ կենալ Սատանայի հնարքներին (Եփ. 2. 10 -- 11):

Ամեն սուրբերն և նահատակներն, մարգարէներն և առաքեալներն, մարտիրոսներն և վիպաներն զօրացան հաւատով, յաղթեցին թագաւորութեանց և իշխանութեանց, գործեցին արգարութիւն, հասան աւետեաց, փակեցին առիւծների բերանը, անցուցին կրակի զօրութիւնը, ապրեցան սրի բերանից, զօրացան տկարութիւնից (Եբր. ԺԱ. 32—40):

ԶՕՐԱՒՈՐ

Ի՞նչն զօրաւոր է ամեն բանից աւելի:

Արդարև ամեն բանից աւելի մեծ և զօրաւոր է ճշմարտութիւնն, ամեն երկիր ապաւինում է ճշմարտութեան. երկինք էլ օրհնում են ճշմարտութիւնը... Մեծ է ճշմարտութիւնն և յաղթող և զօրաւոր (Ա. Եզր. Դ. 35—41):

Աստուած պաշտպանեց Յակովբ նահապետը. մեծացոյց և պահեց թշնամիներից... և պատերազմի մէջ յաղթող և զօրաւոր արաւ, որպէս զի գիտենայ թէ ամեն բանից աւելի զօրաւոր է աստուածապաշտութիւնն (Իմ. Ժ. 11—12):

Աղօթք արէք միմեանց վերայ, որպէս զի բժշկուիք, որովհետև օգնելու համար շատ զօրաւոր են արգարոց աղօթքն (Յակ. Ե. 16):

Թէպէտ մենք մարմնաւոր ենք, բայց ոչ թէ զինուո-

բուռւմ ենք մարմնաւոր զինուորի պէս: Վասն զի մեր զինուորութեան զէնքերն մարմնաւոր չեն, այլ հոգևոր է, զօրաւոր և Աստուծոյ (Բ. Կորն. Ժ. 3—4):

ԸՆԴՈՒՆԵԼ

Ընդունեցէք Աստուծոյ խրատները, որ չբարկանայ Տէրն և չկորչէք արգարութեան ճանապարհիցն:

Մտքումդ անգամ չատես քո եղբայրը (ամեն քրիստոնեայ), յանդիմանելով յանդիմանիր քո եղբայրը և դժբաղին, որպէս զի չընդունես մեղքի պատիժ նոցա համար (Ղևա. ԺԹ. 17):

Որդեանկ, լսիր քո հօր խրատին և մի մերժեր քո մօր պատուէրները, որ քո գլուխն ընդունի շնորհաց պսակ (Առ. Ա. 8—9):

Ասում է Աստուած. ես կընդունեմ և կապրեցնեմ գրեզ (Ես. ԽԶ. 4):

Ասում է Տէրն. Ընդունեցէք իմ խօսքերը և իմ պատուէրները, զորս ես պատուիրում եմ իմ Հոգւով (Չաք. Ա. 6):

Մարդոց ցոյց տալու համար չանէք ձեր ողորմութիւնը, գուցէ վարձք չէք ընդունիլ ձեր Հօրիցն, որ երկնքումն է (Մատ. Զ. 1):

Ասաց Փրկիչն իւր առաքեալներին. Ով որ ընդունում է զձեզ, ընդունում է զիս և ով որ ընդունում է զիս, ընդունում է զիս ուղարկողը (Մատ. Ժ. 40):

Ստեղծող Աստուածն եկն իւր ստեղծածների մօտ, ստեղծուածներն չընդունեցին զիրենք ստեղծող Աստուածը: Իսկ նոցա, որ ընդունեցին զինքը, իշխանութիւն տուաւ, որ լինին Աստուծոյ որդիներ (Յով. Ա, 11—12):

ԸՆԹԵՌՆՈՒԼ—Կարդալ

Յրանի թէ ամեն ոք կարգալ իմանար և մասաութեամբ կարգալով շահուէր:

Մովսէս առնելով ուխտի գիրքը՝ կարգաց ժողովըրդեան ականջին՝ ի լուր ժողովրդեան: Ասում է ժողովուրդն. Կը լսենք ամեն բան՝ ինչ որ ասում է Տէրն և կը կատարենք (Ելք. ԻԳ. 7):

Յետոյ Յեսու Նաւեան կարգաց Օրէնքի բոլոր խօսքերը—օրհնութիւնները և անէժքները... ի լուր ժողովրդեան (Յես. Ը. 34):

Յիսուս Քրիստոս եկն Նաղարէթ քաղաքն... և սովորութեան համեմատ շաբաթ օրում մտաւ ժողովարան, և առին նրան Եսայի մարգարէի գիրքը, կանգնեց որ կարդայ. բացաւ գիրքը և դտաւ այն տեղը, որի մէջ գրուած էր. Տիրոջ հոգին իմ վրայ է. Նա օծեց զիս և ուղարկեց որ աւետարանեմ աղքատներին, բժշկեմ սրտով բեկեալները, քարոզեմ գերի եղածների ազատութիւն, աւետեմ կոյրերին լոյս, արձակեմ վիրաւորուածները թողութեամբ և քարոզեմ Տիրոջ տարեկանը ընդունելի (Ղուկ. Գ. 16—19):

Ը Ն Կ Ե Ր

Անհաւատարմութիւն չանես քո ընկերի դէմ:

Սուտ վկայութիւն չտաս քո ընկերի մասին (Ելք. Ի. 13):

Չցանկանաս ոչ քո ընկերի-հարևանի-տան, ոչ նորասնդին, չցանկանաս ոչ քո ընկերի կնոջ, ոչ նորա ծառային, ոչ նորա այլախոյն, ոչ նորա եղին, ոչ նորա էջին, ոչ նորա բոլոր անասնոց և ոչ այն ամենին, ինչ որ սեփականութիւն է քո ընկերին (Ելք. Ի. 14—17):

Եթէ քո ընկերի անասունը բեռան տակ լնկած կը

տեսնես, առանց նրան օգնելու և անասունը վեր կացնելու չանցնես գնաս (Եւր. ԻԳ. 5):

Ո՞վ կը բարձրանայ Աստուծոյ սարի վերայ, կամ ո՞վ կը կենայ Աստուծոյ սուրբ տեղում.—Նա՛ որ սուրբ է իւր ձեռներով, մաքուր է սրտով. որ յանձնառու չեղաւ սուս խօսիլ և նենգութեամբ երդում չարաւ իւր ընկերի հետ— գէ՛մ (Սաղ. ԻԳ. 4):

Անօրէն մարդն իւր բերանով կը կորցնէ իւր ընկերութեայց կազատուին արդարներն իւրեանց խելացիութեամբ (Առ. ԺԱ. 9):

Ասում է Տէրն. ճշմարտութիւն խօսեցէք ձեզնից ամեն մէկն իւր ընկերի հետ. արդարութեամբ և խաղաղութեամբ դատաստան տեսէք ձեր դռներում. ձեզնից մէկն չարութիւն չմատէ իւր սրտի մէջ իւր ընկերի համար, և սուս երդում մի սիրէք (Չաք. Ը. 16—17):

Սիրիր քո ընկերը քո անձի պէս (Մատ. Ե. 43):

ԸՆՏՐԵԼ

Մեծ զգուշութիւն է հարկաւոր ընտրութիւն անելու համար: Մարդ նայում է մարդոյ երեսին, իսկ Աստուած նայում է սրտին, որ գործերի հայելին է և նախազաղափարն:

Ես աւելի ընտրեցի Աստուծոյ տան մէջ փոշիների հետ ապրել քան թէ բնակիլ ամբարիշտ մարդոյ յարկերի (աների) մէջ (Սաղ. ԶԳ. 11):

Կարհամարհուն այն մարդիկ, որք ընտրուած են արծաթով (Սաղ. ԿԷ. 31):

Բայց անօրէն մարդն, որ ինձ համար զո՞հ է մատուցանում եղբ՛ այնպէս է, որպէս թէ մէկն զարկէ մարդոց բերանին. և որ զո՞հ է մատուցանում ոչխար՝ այնպէս է, որպէս թէ մէկն մորթէ շուն. և որ նուէր է մատուցանում շարձաղ ալիւր՝ այնպէս է, որպէս թէ մէկն թափէ խօղբ

արիւն. և որ ինկանոցում ինձ համար ծխէ կնդրուկ՝ այնպէս է, ինչպէս հայհոյիչն: Եւ իւրեանք ընտրեցին իւրեանց ճանապարհը և իւրեանց գարշելիները, որը ախորժեցին իւրեանց անձերն... կանչեցի, չլսեցին ինձ, խօսեցի, ականջ չդրին, և չար գործեցին իմ առաջ և ընտրեցին իւրեանց համար, ինչ որ ես չէի կամենում. ասում է Տէրն (Ես. ԿԶ. 3—4):

Ահա իմ մանուկն (Յիսուս Քրիստոս) որը ընտրեցի և իմ սիրելին, որը հաւանեց իմ անձն. իմ հոգին կը դնեմ նորա վերայ և կը պատմէ Հեթանոսաց իրաւունքներ (Մատ. ԺԲ. 18):

Առաքեալներն ընտրեցին Մատաթիան (Գործ. Ա. 26):

Աստուած իւր համար Առաքեալներ ընտրեց աշխարհիս յիմարները, որ ամօթալի անէ իմաստունները. Աստուած ընտրեց աշխարհիս աղարները, որ ամօթալի անէ հօգորները, ընտրեց անաղնուականները և արհամարհուածները և աննշանները, որ խափանէ ևս եւ միայն ասողները (Ա. Կորն. Ա. 27—28):

Թ Ա Գ Ա Ի Ո Ր

Արդար թագաւորն կանգնում է աշխարհ:

Ասում է Տէրն. Ինձանով են թագաւորում թագաւորներն, ինձանով են դնում արդարութեան կանոններ նախարարներն: Ինձանով են իշխում իշխաններն, աղնուականներն և երկրի ամեն գատաւորներն (Առ. Ը. 15—16):

Գարշելի է թագաւորի համար նա, որ գործում է չարութիւն. որովհետեւ արդարութեամբ է հաստատուում նորա իշխանութեան աթոռն: Ընդունելի են թագաւորի համար արդար շրթունքներ (Առ. ԺԶ. 12—13):

Ոգործութիւնն և ճշմարտութիւնն պահապան են թա-

տեսնես, առանց նրան օգնելու և անասունը վեր կացնելու չանցնես գնաս (Ելք. ԻԳ. 5):

Ո՞վ կը բարձրանայ Աստուծոյ սարի վերայ, կամ ո՞վ կը կենայ Աստուծոյ սուրբ տեղում.—Նա՛ որ սուրբ է իւր ձեռներով, մաքուր է սրտով. որ յանձնառու չեղաւ սուտ խօսիլ և նենգութեամբ երդում չարաւ իւր ընկերի հետ — գէ՛մ (Մաղ. ԻԳ. 4):

Անօրէն մարդն իւր բերանով կը կորցնէ իւր ընկերը — բայց կազատուին արդարներն իւրեանց խելացիութեամբ (Առ. ԺԱ. 9):

Ասում է Տէրն. ձշմարտութիւն խօսեցէք ձեզնից ամեն մէկն իւր ընկերի հետ. արդարութեամբ և խաղաղութեամբ դատաստան տեսէք ձեր դռներում. ձեզնից մէկն չարութիւն չմտածէ իւր սրտի մէջ իւր ընկերի համար, և սուտ երդում մի սիրէք (Չաք. Ը. 16—17):

Սիրիք քո ընկերը քո անձի պէս (Մատ. Ե. 43):

ԸՆՏՐԵԼ

Մեծ զգուշութիւն է հարկաւոր ընտրութիւն անելու համար: Մարդ նայում է մարդոյ երեսին, իսկ Աստուած նայում է սրտին, որ գործերի հայելին է և նախազաղափարն:

Ես աւելի ընտրեցի Աստուծոյ տան մէջ փոշիների հետ ապրել քան թէ բնակիլ ամբարիշտ մարդոյ յարկերի (աների) մէջ (Մաղ. ԶԳ. 11):

Կարհամարհուն այն մարդիկ, որք ընտրուած են արծաթով (Մաղ. ԿԷ. 31):

Բայց անօրէն մարդն, որ ինձ համար զո՛հ է մատուցանում եզը՝ այնպէս է, որպէս թէ մէկն զարկէ մարդոջ բերանին. և որ զո՛հ է մատուցանում ոչխար՝ այնպէս է, որպէս թէ մէկն մորթէ շուն. և որ նուէր է մատուցանում շարձող ալիւր՝ այնպէս է, որպէս թէ մէկն թափէ խօզի

արիւն. և որ խնկանոցում ինձ համար ծխէ կնդրով՝ այնպէս է, ինչպէս հայհոյիչն: Եւ իւրեանք ընտրեցին իւրեանց ճանապարհը և իւրեանց գարշելիները, որք ախորժեցին իւրեանց անձերն... կանչեցի, չլսեցին ինձ, խօսեցի, ականջ չդրին, և չար գործեցին իմ առաջ և ընտրեցին իւրեանց համար, ինչ որ ես չէի կամենում. ասում է Տէրն (Ես. ԿԶ. 3—4):

Ահա իմ մանուկն (Յիսուս Քրիստոս) որք ընտրեցի և իմ սիրելին, որք հաւանեց իմ անձն. իմ Հօգին կը դնեմ նորա վերայ և կը պատմէ Հեթանոսաց իրաւունքներ (Մատ. ԺԲ. 18):

Առաքեալներն ընտրեցին Մատթիան (Գործ. Ա. 26):

Աստուած իւր համար Առաքեալներ ընտրեց աշխարհիս յիմարները, որ ամօթալի անէ իմաստունները. Աստուած ընտրեց աշխարհիս տկարները, որ ամօթալի անէ հօգրները, ընտրեց անաղնուականները և արհամարհուածները և աննշանները, որ խափանէ ևս եւ միայն աստղները (Ա. Կորն. Ա. 27—28):

Թ՛ Ա՛ Գ՛ Ա՛ Ի՛ Ո՛ Ր՛

Արդար թագաւորն կանգնում է աշխարհ:

Ասում է Տէրն. Ինձանով են թագաւորում թագաւորներն, ինձանով են դնում արդարութեան կանոններ նախարարներն: Ինձանով են իշխում իշխաններն, ազնուականներն և երկրի ամեն դատաւորներն (Առ. Ը. 15—16):

Գարշելի է թագաւորի համար նա, որ գործում է չարութիւն. որովհետեւ արդարութեամբ է հաստատուում նորա իշխանութեան աթոռն: Ընդունելի են թագաւորի համար արդար շրթունքներ (Առ. ԺԶ. 12—13):

Ոգործութիւնն և ճշմարտութիւնն պահապան են թա-

գաւորի և արդարութեամբ պարսպում են նորա աթոռը (Ու. Ի. 26—27),

Վայ քեզ երկիր, որ մանուկ է քո թագաւորն և անժամանակ (առաւօտեան) են ուտում քո իշխաններն: Երանի՛ է քեզ երկիր, որ ազատի որդի է քո թագաւորն և իւր ժամանակին են ուտում զօրութեամբ քո իշխաններն առանց ամաչելու (Ժող. Ժ. 16—17):

Տէր Հայր մեր, Տէր դատաւոր մեր, Տէր իշխան մեր. Տէր թագաւոր մեր, Տէր Փրկիչ մեր և նա կը փրկէ զմեզ (Ես. 19. 22):

Թ Ե Ի

Ո՛վ Տէր, զիս ծածկէ քո թեւերի հովանու ներքև:

Ինչպէս արծիւն գութ ունի իւր ձագերի վերայ, որ տարածում է իւր թեւերը և առնում է իւր վերայ իւր ձագերը, նոյնպէս Տէրն տարածեց իւր թեւերը, առաւ իւր թեւերի վրայ Իսրայէլի ժողովուրդը և բերում է զնա միայնակ (Բ. Օր. 1Բ. 11—12):

Ո՛վ Տէր, պահպանէ զիս ինչպէս աչքի բիւր, և ծածկէ զիս քո թեւերի հովանու տակ ամբարիշտների երեսից, որք տառապեցուցին զիս (Սաղ. ԺԶ. 8):

Ասում է Տէր. Տարածեցի իմ թեւերը քո վերայ և ծածկեցի քո խայտառակութիւնը և քեզ համար երգում անելով ուխտ արի քեզ հետ, ասում է Տէր, և իմս եղար դու: Եւ ես լուացի զքեզ ջրով, և մաքրեցի արիւնը քո վերայից, և օծեցի զքեզ իւղով: Եւ հագցրի քեզ նկարագործ հագուստ-զանազան գեղեցկութեամբ և գոյներով շորեր... զարդարեցի քեզ զարդարանքներով... բայց դու դարձեալ կռապաշտ եղար... (Եզ. ԺԶ. 8—25):

Երուսաղէմ, Երուսաղէմ, որ կոտորում էիր մարդարէները և քարկոծում էիր քեզ մօտ ուղարկուածները, քանի՛ անգամ կամեցայ ժողովել քո որդիները, ինչպէս ժողո-

վում է թուխական հաւն իւր թեւերի տակ իւր ձագերը, և չկամեցաք—չուզեցիք. (Ղուկ. ԺԳ. 34):

Թ Շ Ն Ա Մ Ի

Երեք տեսակ թշնամիներ կան—Սատանան, մարդիկ և մարմին:

Ա. ՍԱՏԱՆԱՅ

Սատանան բունն զօրութեամբ պատերազմեց և Գրիստոսի հետ, բայց չարաշար յաղթուեցաւ Յիսուսից (Մատ. Գ. 1—11. և Ղուկ. Գ. 1—13): Սորա համար է գրում Պետրոս առաքեալն՝ մեզ զգուշացնելու համար: Արթուն եղէք, հսկեցէք, քանզի ձեր անհաշտ թշնամի սատանան գոչում է աօիւծի պէս և խնդրում է թէ զով կը կլանէ (Ա. Պետ. Ե. 8): Եւ Փրկիչն խրախուսում է մեզ ասելով. «Քաջալերուեցէք, որովհետեւ ես յաղթեցի աշխարհի»: Եւ ասում է Յիսուս առաքելոց. «Տեսնում էի սատանան երասում է Յիսուս առաքելոց. «Տեսնում էի սատանան երկրքից ընկած ինչպէս փայլակ: Ահա տուի ձեզ իշխանութիւն կօխել օձերը, կարիճները և թշնամու սատանայի զօրութիւնը (Ղուկ. Ժ. 18—19. Ի. 42—43):

Բ. Մ Ա Ր Գ Ի Կ

Շատ էլ մի հաւատաք ձեր սիրելիներին և յոյս չդրնէք ձեր իշխանների վերայ. զգուշ կաց, ամեն բան չպատմես կնոջդ: Որովհետեւ որդին անարգում է իւր հայրը. մեծ կնոջդ: Եւ ինչու՞ իւր մօր վերայ, հարսն՝ իւր սկեսրի աղջիկին վեր է կենում իւր մօր վերայ, հարսն՝ իւր սկեսրի վերայ և թշնամին իւր ընտանիքն է (Միք. Է. 5—6):

Սիրեցէք ձեր թշնամիները, որհնեցէք ձեզ հալածողները, բարի արէք ձեզ ատողներին և աղօթք արէք նոցաները, որք չարաշարում են ձեզ և հալածում, որ լինիք ձեր վերայ, որք չարաշարում են ձեզ և հալածում, որ լինիք ձեր հօր որդիներ, վասն զի իւր արեգակը ծագում է չարերի

և բարիների վերայ և թափում է իւր անձրևը արդարոց
և մեղաւորաց վերայ (Մատ. Ե. 44—46 և Ղուկ. 9.
27 և 35):

Եթէ քո թշնամին անօթի է, կերակրիր, եթէ ծարու-
է, ջուր խմացնուր: Երբ կանես այս՝ կը գիգես նորա գլխի
վերայ կրակի կայծակունքներ և Տէրն կը հատուցանէ քեզ
բարութիւն (Առ. ԻԵ. 21—22. Հռ. ԺԲ. 20).

Գ. ՄԱՐՄԻՆ և իւր չար կիւրքերն.

Չորաւոր մարդից աւելի լաւ է համբերող մարդն...
պատերազմաւ քաղաք առնող մարդից աւելի լաւ է իւր
բարկութեան յաղթող մարդն (Առ. ԻԶ. 32):

Լեզուի ձեռքումն է կեանքն էլ մահն էլ, և ով որ
յաղթում է լեզուին, կուտէ նորա պտուղը (Առ. ԺԸ. 21):

Ասում է Պողոս առաքեալն. Մի խղճալի մարդ եմ ես.
ո՞վ կազատէ զիս այս մահացու մարմնից:—Այլ կազատէ
Աստուծոյ շնորհքն Յիսուս Քրիստոսի ձեռնով (Հռ. Է.
24—25):

ԹՈՂՈՒԼ.—Ներել

Եթէ մենք չներենք մեզ գէմ յանցանք գործողներին, Աստուած էլ
մեզ չներեր իւր գէմ մեր գործած յանցանքները:

Մովսէս մարդարէն ասաց Աստուծոյ. Ազաչում եմ քեզ
Տէր, այն ժողովուրդն (Իսրայէլացիք) սարսափելի մեղք
գործեց ոսկէ որթ շինելով, ոսկեղէն կուռք անելով, և
այժմ եթէ ներում ես նոցա մեղքերը իւրեանց, ներիր.
ուրեմն եթէ չես ներում, զիս էլ ջնջիր այն տետրակից,
որի մէջ գրեցիր իմ անունը (Ելք. ԼԲ. 31—32):

Ասում է Փրկիչն. Եթէ կը ներէք մարդոց յանցանք-
ները նոցա, կը ներէ և ձեզ՝ ձեր երկնաւոր Հայրն ձեր

յանցանքները: Ուրեմն եթէ դուք չէք ներիլ մարդոց նոցա
յանցանքները, ոչ էլ Հայր Աստուած ձեր յանցանքները
կը ներէ ձեզ (Մատ. Զ. 14—15):

Մարդասէր Յիսուսն խաչափայտի վերայից անգամ
աղօթում էր զինքը խաչողներէ համար՝ ասելով. Հայր Աս-
տուած, ներիր դոցա մեղքերը, որովհետև չգիտեն, թէ
ինչ են գործում (Ղուկ. ԻԳ. 34):

Այսպէս էր աղօթում և Ս. Ստեփաննոս. Ո՞վ Տէր, մի
համարիր դոցա այս մեղքը (Գործք. Է. 59):

ԱՄԵՆ ԺԱՄԱՆԱԿ

Պարտաւոր ենք աղօթել և բարի գործել:

Խնդրեցէք Տէրը, և զօրեղ կը լինիք. ամեն ժամանակ
խնդրեցէք նորա երեսը (Ս. Մնաց. ԺԶ. 11):

Ամեն ժամանակ կօրհնեմ Տէրը, ամեն ժամանակ իմ
բերանուսն է նորա օրհնութիւնն (Սաղ. ԼԳ. 2):

Պէտք է ամեն ժամանակ աղօթքի կանգնել և չձանձ-
րանալ (Ղուկ. ԺԸ. 1):

Ամեն ժամանակ աղօթք արէք, որ ազատուիք ամեն
տեսակ փորձանքներից (Ղուկ. ԻԱ. 36):

Յիսուս Քրիստոս ամբողջ գիշերը անցուցանում էր
Աստուծոյ աղօթելով (Ղուկ. Զ. 12):

Զգուշ կացէք. չլինի թէ մէկն չարի տեղ չարութիւն
անէ, այլ ամեն ժամանակ գնացէք բարիք անելու ետևից
միմեանց և ամենեցունց (Ս. Թեո. Ե. 15):

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ

Ամեն ինչ ունի իւր ժամանակը:

Երկնքի տակ ամեն բանի ժամն կայ: Ժամանակ ծը-
նուելու, ժամանակ մեռնելու, ժամանակ անկելու, ժամա-

նակ տնկածը հանելու, ժամանակ հիւանդանարու, ժամանակ բժշկելու, ժամանակ քանդելու, ժամանակ շինելու, ժամանակ լալու, ժամանակ ծիծաղելու, ժամանակ սգալու, ժամանակ պարելու... ժամանակ լուելու, ժամանակ խօսելու... Գիտացի որ կենդանութեան ժամանակ... բարիք գործելուց լաւ բան չկայ (Ժող. Գ. 1—12):

Քանի որ ժամանակն մեր ձեռքում է, գործենք բարիքներ ամենի համար, մանաւանդ հաւատոյ (հաւատակիցներին) ընտանեաց (Գաղ. Զ. 10):

Ժ Ա Ռ Ա Ն Գ Ե Լ

Ի բոլոր սրտէ հետամուտ եղողներն են ժառանգում Աստուծոյ Արքայութիւնը:

Ասելու է Փրկիչն վերջին օրում. եկէք իմ Հօր օրհնածներ, ժառանգեցէք աշխարհի սկզբից ձեզ համար պատրաստուած թագաւորութիւնը (Մատ. ԻԵ. 31—4):

Այսուհետեւ ծառայ չես, այլ օրդի ես. եթէ օրդի ես, ուրեմն Աստուծոյ ժառանգն ես (Գաղ. Գ. 4):

Չլինի թէ չարութեան փոխարէն չարութիւն հատուցանէք, կամ բամբասանաց փոխարէն բամբասանք, այլ սորա հակառակը՝ օրհնել. օրովհետեւ իսկապէս կանչուած էք սորա համար՝ որ ժառանգէք օրհնութիւն (Ա. Պետ. Գ. 9):

Ո՛վ որ յաղթում է միջութեանց և մեղաց, նա կը ժառանգէ Աստուծոյ Արքայութեան ամեն բարութիւնը (Յայտ. ԻԱ. 7):

ԺՈՂՈՎԵԼ—հաւաքել

Ո՛ւմ համար ես գիտում:

Կարճ կեանք ունեցող մարդն դանձում է, սակայն չգիտէ թէ ում համար է ժողովում (Սաղ. ԼԲ. 7):

Նորա՛ որ ժողովում են անիրաւութեամբ, կարօտ են մնում: Իսկ նորա՛ որ ժողովում են աստուածպաշտութեամբ՝ հարստանում են (Առ. ԺԱ. 24. և ԺԳ. 11):

Նա, որ ինձ հետ չէ, հակառակ է ինձ. և նա, որ չէ ժողովում ինձ հետ, ցրուում է (Մատ. ԺԲ. 30):

Ինչպէս ժողովում է որոմն և այրուում կրակի մէջ. այնպէս կը լինի և աշխարհս վերջացած ժամանակ: Մարդոյ Որդին-Յիսուս Քրիստոս-կուղարկէ իւր հրեշտակները և կը ժողովեն նորա արքայութիւնից ամեն գայթակղութիւններ և զնոսա, որք գործում են անօրէնութիւններ (Մատ. ԺԳ. 40—41):

Ի Մ Ա Ս Տ Ո Ի Թ Ի Ի Ն

Հօր Աստուծոյ իմաստութիւնն է Յիսուս Քրիստոս, որ արժանաւորներին տալիս է իմաստութիւն:

Ասում է Տէրն. Աստուածեղէն հոգւով, իմաստութեան, հանճարի և ամեն գործի գիտութեամբ լցուցի Յուդայի ցեղից Ովրա օրդի Բէսէլիէլը (Եւք. ԼԱ. 1—4):

Նաւեայ օրդի Յեսուեն լցաւ իմաստութեան հոգւով, որովհետեւ Մովսէս իւր ձեռնը դրաւ նորա գլխի վերայ (Բ. Օր. ԼԳ. 9):

Իմաստութեան սկիզբն Ասածուց վախենալն է (Առ. Ա. 7):

Ով որ սիրում է խրատը, սիրում է իմաստութիւնը (Առ. ԺԲ. 1):

Իմաստութեան Ս. Հօգին փախչում է նենդութիւնից (Իմ. Ա. 5):

Վերին (աստուածային) իմաստութիւնն նախ սուրբ է, ապա խաղաղարար, հեզ, հյու, ողորմութեամբ և բարի պտուղներով լցուած (Յակ. Գ. 17):

Ի Մ Ա Ս Տ Ո Ի Ն

Իմաստունների բերանների խօսքերն բղխում են շնորհք:

Ասում է Մովսէս ժողովրդեան. Ձեզ վերայ իշխաններ կարգեցի իմաստուն և հանճարեղ մարդիկ (Բ. Օր. Ա. 15):

Հաւատարիմ է Աստուծոյ վկայութիւնն, որ իմաստուն է անում տղաները ¹⁾ (անմեղները) (Մաղ. ԺԸ. 8):

Շնորհակալ եմ քեզնից, ով Հայր Աստուած, որ ծածկեցիր այս շնորհքները իմաստուններից և գիտուններից և յայանեցիր տղաներին (Ղուկ. Ժ. 21 և Մատ. ԺԱ. 25):

Երկնից թագաւորութիւնն նման է տանն կուսանաց, որք առնելով իւրեանց լապտերները (փանարները) դուրս եկին փեսայի և հարսի առաջ: Նոցանից հինգն յիմար էին և հինգն իմաստուն: Յիմարներն առին իւրեանց լապտերները, բայց ձէթ վեր չառին իւրեանց հետ: Իսկ իմաստուններն ամաններով ձէթ վեր առին իւրեանց հետ: Փեսայի ուշանալուն պատճառաւ ամէնքն էլ քնացան: Կէս գիշերին ձայն եղաւ. Ահա գալիս է Փեսան, եկէք նորա առաջ: Այն ժամանակ վեր կացան ամեն կուսանքն, պատրաստեցին իւրեանց լապտերները: Ասում են յիմարներն իմաստուններին. Ձեր ձէթից մեզ էլ տուէք. քանզի ահա անցնում են մեր լապտերներն: Պատասխանեցին իմաստուններն և ասում են. Գուցէ բաւական չլինի մեզ և ձեզ. գնացէք ծախողների մօտ և կը գնէք ձեզ համար: Երբ նորա գնացին գնելու՝ եկն փեսան և պատրաստներն մտնն նորա հետ հարսանիքն և փակեցաւ դուռնն: Յետոյ գալիս են և յիմար կուսանքն և ասում են. Տէր Տէր, մեզ համար էլ բաց դուռնը: Տէրն պատասխան տուաւ և ասաց. Ճշմարիտը ասում եմ ձեզ, չեմ ճանաչում ձեզ (Մատ. ԻԵ. 1—12):

¹⁾ Յիսուս մանկունք էր անուանում իւր առաքեալները, փասն զի դեռ ընդունած չէին Ս. Հոգին (Յով. ԻԱ. 5 և Ղուկ. Ժ. 21):

Աստուծոյ յիմարն մարդիկներից աւելի իմաստնագոյն է. Աստուծոյ տկարն մարդիկներից աւելի հզօրագոյն է: Եղբայրներ, դուք արդէն տեսաք ձեր կոչումը, որ չէ թէ մարմնոյ կողմից հրաւիրուեցան շատ իմաստուններ, չէ թէ շատ զօրաւորներ, չէ թէ շատ աղնուականներ, բայց Աստուած ընտրեց աշխարհիս յիմարները, որ ամօթով անէ իմաստունները. Աստուած ընտրեց աշխարհիս տկարները, որ ամօթով անէ զօրաւորները, Աստուած ընտրեց աշխարհիս աննշանները, անարգութեանները և ոչինչները, որ խափանէ ասականութիւնը ինքնու եղածներ: Որպէս զի չպարժենայ Աստուծոյ առաջ ամեն մահկանացու մէկն (Ա. Կորն. Ա. 25—29):

Ի Շ Խ Ա Ն

Իշխանութիւնն կարգուած է Աստուծոյ. բարի և ազնիւ իշխաններն սիրելի են Աստուծոյ և մարդոց:

Եգիպտոսի իշխանն էր Յովսէփ զեղեցիկ (Ծնն. ԽԲ. 6):

Ասում է Յովք իւր երեք բարեկամներին. Առաւօտներն երբ դուրս էի գալիս քաղաքն, ձգուում էր իմ աթոռն հրապարակներում: Երբ տեսնում էին զիս երիտասարդներն, թաքչում էին, ծերերն էլ կանգնում էին օտքի. գատաւորներն դադարում էին խօսելուց... փրկեցի աղքատը հզօրի ձեռքից. օգնեցի անօգնական սրբին. իմ վերայ կը դար կորսուելու վտանգին մէջ եղողի օրհնութիւնն. օրհնում էր զիս և այրի կնոջ բերանն: Ես հազուատի պէս հագած էի արգարութիւնը և վերարկուի պէս իմ վերայ առած իրաւունքները: Ես աչք էի կոյրերի համար, օտք էի կաղերի համար և հայր էի տկարների համար: Քննելով էի անում դատաստան... և յափշտակուած իրերը դուրս էի բերում անիրաւների ատամներից... Ընտրում էի նոցա

ճանապարհները, նստում էի իշխան և բնակում էի նոցա մէջ՝ ինչպէս թագաւոր իւր զօրաց մէջ (Յովբ. 1-25):

Վայ ձեր հզօրներին և իշխաններին, որք կաշառքի համար արդարացնում են ամբարիշտները և իրաւունքից զրկում արդարները (Յս. Ե. 22—23):

Ի Շ Խ Ա Ն Ո Ի Թ Ի Ի Ն

Արդարութեամբ է հաստատուում իշխանութեան ակթուն:

Ասում է Մովսէս ժողովրդեան. Քեզ վերայ իշխան կը կարգես այն մարդը, որը կընտրէ քո Տէր Աստուածն... Երբ կը նստի իւր իշխանութեան ակթուն վերայ, կարգես նորա մօտ մի Ղևտացի քահանայ, որ ամէն օր կարգայ Աստուծոյ այս օրէնքը և միշտ հասկացնէ ձեր իշխանին, որ սովորի վախենալ իւր Աստուծոց և պահել այս պատուիրանները և անել արդարութիւն: Որպէս զի չհպարտանայ նորա սիրան իւր եղբարց վերայ, որպէս զի չանցանէ այս պատուիրաններից աջ կամ ձախ, որ երկարակեաց լինի իւր իշխանութեան մէջ ինքն և իւր որդիքն (Բ. Օր. Ժ. 15—20):

Մշտնջենաւոր չէ մարդոյ ուժն, զօրութիւնն և իշխանութիւնն (Առ. Ի. 24):

Արդարների գովութեամբ ուրախ կը լինին ժողովուրդներ, ամպարշտների իշխանութեան տակ կը հեծեն արդարներ (Առ. Ի. 2):

Մեծ է նորա—Յիսուս Քրիստոսի—Իշխանութիւնն և սահման չունի նորա խաղաղութիւնն: կը նստի Դաւթի ակթուն վերայ և կը յաջողուի նորա թագաւորութիւնն (Յս. Թ. 7):

Յիսուս իշխանութեամբ և զօրութեամբ սաստում էր չար սատանաներին և գուրս էին գալիս մարդիկներից (Ղուկ. Գ. 36):

Ի Ր Ա Ի Ո Ի Ն Ք

Բաւական չէ միայն ճանաչել իրաւունքը. այլ և պէտք է պաշտպանել զայն:

Ասում է Տէրն. Աբրահամ տկանջ դրաւ իմ ձայնին, պահեց իմ հրամանները, պատուիրանները, իմ իրաւունքները և օրէնքները (Ծնն. Ի. 9. 5):

Աղքատի իրաւունքները չծռես իւր դատաստանին մէջ (Եւբ. Ի. 6):

Նա է միայն քո Տէր Աստուածն... և չկայ ուրիշ աստուած բացի նորանից: Եւ կը պահես նորա իրաւունքները... բարի կը լինի քեզ համար և քեզանից յետոյ բարի կը լինի քո որդւոց համար (Բ. Օր. Գ. 39—40):

Ո՛վ Աստուած, քո իրաւունքները տուր թագաւորի և քո արդարութիւնը տուր թագաւորի օրդու՝ քո ժողովուրդը արդարութեամբ դատելու և քո աղքատները՝ իրաւունքով (Սաղ. ՀԱ. 2):

Ամպարիշտներն կընդունին պատիժներ իւրեանց խորհրդների համեմատ, որ արհամարհեցին իրաւունքները և ապօտմբեցին Տէրից (ԻՄ. Գ. 10):

Դուք փարիսեցիներդ ինչի՞ անցնում էք Աստուծոյ իրաւունքներից և սէրից (Ղուկ. ԺԱ. 42):

ԼԱԼ—լաց լինել

Զղջմամբ խառնուած ճշմարիտ լացն ազատում է զմեզ մեղքից և աստուածային պատժից և հանգստացնում է մեր խիղճը և սիրտը:

Յողնեցայ ես իմ հառաչելով, ամեն գիշեր լուացի իմ մահիճը եւ իմ արատաւքներով թացի իմ անկողինը... Լսեց Տէրն իմ լալու ձայնը, լսեց Տէրն իմ աղօթքին եւ ընդունեց Տէրն իմ խնդրուածքները (Սաղ. Զ. 7—10):

Խաչուեցաւ իմ փորն լալուց և իմ թերթերունքների վերայ տիրում է մահուան ստուերն (Յովբ. ԺԶ. 17):

Ո՛վ հարբածներ, սթափուեցէք գինուց, ամենքդ էլ լացէք և սգացէք՝ որ խմում էք գինին հարբելու չափ, քանզի վեր աւնուեցաւ ձեր բերանից ուրախութիւն և խնդութիւն (Յովբ. Ա. 5):

Տիրոջ քահանաներն և պաշտօնեաներն թող լան սեղանին և աստիճանին մէջ տեղ և ասեն. Ո՛վ Տէր, ինայիր քո ժողովրդեան և մի տար քո ժառանգութիւնը նախատելաւ (Յովբ. Բ. 17):

Յիսուս Քրիստոս Ձիթենեաց սարիցն տեսնելով Երուսաղէմ քաղաքը, լացաւ ¹⁾ և ասում է. Գոնէ այս օրերունս գիտնայիր դու քո խաղաղութիւնը, բայց այժմ ծածկուեցաւ քո երեսից (Ղուկ. ԺԹ. 41—42):

Լ Ա Ի

Բարի անունն աւելի լաւ է բոլոր հարստութիւնից:

Ո՛վ Տէր, ինձ համար աւելի լաւ է մի օր լինել քո գաւթում, քանթէ հազար օր սալրել մեղատորաց բնակարանում (Սաղ. ԶԳ. 11):

Լաւ է զիս (Աստուած) ստանալ քան թէ պատուական սակի և արծաթ (Առ. Ը. 19):

Ասում է Յիսուս Քրիստոս. բայց ձեր գլխի մազերն անդամ համրուած է: Եւ այժմ մի վախէք. սրովհետեւ դուք աւելի լաւ էք շատ ճնճղուկներից (Մատ. Ժ. 30—31):

Իւր վարդապետից աւելի լաւ չէ աշակերան (Ղուկ. Զ. 40):

1) Փրկիչն երբ անդամ լացաւ՝ Ղազարոսի, Երուսաղէմի և մասնիչ Յուզայի վերայ. «Բանդի արգարն երայ բարեգութ Տէրն յառակ մարդկութեանս զթաղեալ ազգակիցն, երայ առ նմին և գերուսաղէմ մոլեայ և զՅուզաս մոլեգնեալ» (Նարեկ. ԻԵ. Բ.):

Ասում է Փրկիչն իւր Առաքեալներին. Ձեզ համար աւելի լաւ է որ ես զնամ Հօրս մօտ. քանզի եթէ ես չըսէմ, չգար մխիթարիչ Ս. Հոգին (Յով. ԺԶ. 7):

Լ Ե Զ Ո Ի

Բարի լեզու:

Ո՛վ Տէր, իմ լեզուն կը խօսի քո արդարութիւնը (Սաղ. ԼԳ. 28):

Կը պահեմ զգուշութեամբ իմ ճանապարհները, որ մեզը չգործեմ իմ լեզուով: Իմ բերանի վերայ պահապան դրի՝ ամբարիշտն իմ առաջ եղած ժամանակ (Սաղ. ԼԸ. 2): Ընտիր արծաթ է արդարի լեզուն (Առ. Ժ. 20):

Իմաստուն-խոհեմ-մարդուց լեզուներն բժշկում են խոցուած սրտերը (Առ. ԺԲ. 18):

Ճշմարտախօս շրթունքներն հաստատում են վկայութիւնը (Առ. ԺԲ. 19):

Ով որ պահում է իւր բերանը և լեզուն, պահում է նեղութիւնից իւր անձը (Առ. ԻԱ. 23):

Բամբասանքից խնայեցէք ձեր լեզուները (Իմ. Ա. 11):

Ոչ միայն խօսքով և լեզուներով սիրենք Աստուած եւ մեր եղբայրները, այլ արդեամբք և ճշմարտութեամբ (Ա. Յով. Գ. 18):

ՉԱՐ ԵՒ ՆԵՆԳԱՒՈՐ ԼԵԶՈՒ

Տէրն փրկեց իմ անձը նենգաւոր շրթունքներից և չար լեզուից: Ի՞նչ կը արուի քեզ կամ ինչ կուսելանայ քեզ, ով նենգաւոր լեզու (Սաղ. ՃԺԹ. 2—3):

Նոցա լեզուներն նման են սրուած սուրերի (Սաղ. ԾԶ. 5):

Օձի լեզուի պէս սրեցին իւրեանց լեզուները և նոցա շրթունքների տակ կան իժերի թոյներ (Մաղ. ՃԼԹ. 4):

Տէրն Եսայի մարդարէի բերանով ասում է Հրէաներին. Ձեր ձեռներն պղծուած են արիւնով, ձեր մատներն պղծուած են մեղքերով, ձեր շրթունքներն սուտ խօսեցին և ձեր լեզուներն խօսում են անօրէնութիւն. (Ես. ԾԹ. 3):

Նոցա (ոմանց հրէից) լեզուներն մահատու նետեր են, նոցա բերաններն իւրեանց ընկերների հետ խօսում են խաղաղութիւն և իւրեանց սրտերում ունին թշնամութիւն. (Եր. Թ. 8):

ԿԵՂԾԱԽՈՐ ԼԵԶՈՒ

Աստուծոյ և մարդոց ասելի են կեղծաւոր լեզուներն:

Օրհնում էին իւրեանց բերաններով և անիծում իւրեանց սրտերով (Մաղ. ԿԱ. 5):

Իւրեանց ընկերների հետ խօսում են խաղաղութիւն. իսկ սրտով պատրաստում են թակարդ. (Եր. Թ. 8):

Պատուիրում է Յիսուս ասելով. Երբ աղօթքի կը կանգնես, կեղծաւորների պէս չլինիս, որ սիրում են աղօթքի կանգնել ժողովրդեան մէջ և հրապարակների անկիւններում, որպէս զի երևին մարդոց. ճշմարիտ ասում եմ ձեզ (նոքա վարձք չեն առնուլ Աստծուց, նոցա վարձքն միայն մարդոց երևիլն է) Իսկապէս այն են նոցա վարձքն: Բայց դու երբ կը կանգնես աղօթելու, մախր քո սենեակն և փակիր քո դուռը և աղօթիր ծածուկ առ Հայր Աստուած. և քո Հայրն որ տեսնում է ծածուկը, կը հատուցանէ քեզ յայտնապէս (Մատ. 2. 5—6):

Անպիտան և արբեցող ծառաների բաժինը կեղծաւորաց շարքում դնելու է (Մատ. ԻԳ. 51):

Յանդիմանում է Յիսուս փարիսեցիները ասելով. Դուք արտաբուստ (գրսից) երևում էք մարդոց արդարներ. բայց

ներքուստ լի էք կեղծաւորութեամբ և անօրէնութեամբ (Մատ. ԻԳ. 28):

Չգնշ կացէք ձեր անձանց փարիսեցիների խմորից, որ է կեղծաւորութիւն—պատուիրեց Տէրն (Ղուկ. ԺԲ. 2):

Կեղծաւորութեամբ ստախօսներ՝ խանձուած իւրեանց խղճմտանքով (Ա. Տիմ. Գ. 2):

Խ Ա Բ Ե Լ

Յիմարաբար խաբուիլն աժան չէ նստում ինչպէս մի անձի, նոյնպէս մի ազգի և մի եկեղեցու վերայ:

Ասում է Եւան Աստուծոյ. Օձն խաբեց զիս և կերայ (ԾՆՆ. Գ. 13):

Աստուած ասում է Ագամին. Որովհետև լսեցիր քո կնոջ ձայնին և կերար այն ծառի պողից, որից պատուիրեցի քեզ միայն չուտել և կերար նրանից, անիծեալ կը լինի քո երկիրն (ԾՆՆ. Գ. 17):

Որդեակ զգնշ կաց, չխաբեն զքեզ ամբարիշտ մարդիկ և խեղքից չհանեն քեզ. դու մի հետևիր նոցա (Առ. Ա. 10):

Յիսուս ասում է աշակերտաց. Չգնշ կացէք, չլինի թէ մէկն խաբէ զձեզ (Մատ. ԻԳ. 4):

Մէկն չխաբէ զձեզ սուտ խօսքերով (Եփ. Ե. 6):

Թէ որ ասենք մեղք չունինք մենք, խաբում ենք մեր անձերը և մեր մէջ չկայ ճշմարտութիւն (Ա. Յով. Ա. 8):

ԽԱԶ—Նեղութիւն, չարչարանք.

Աշխարհիս վերայ ամեն ոք ունի իւր նեղութիւնը, չարչարանքը և խաչը, թէ արական լինի և թէ իրական. բայց հազար երանի այն մարդոց կամ կնոջ, որ վերջին ծայր համբերող է, աւելի վարձք ստանալու է Աստուծոց:

Ով որ չառնէր իւր խաչը և դար իմ ետեից, արժանի

չէ ինձ—այս է ով ինձ նման չհամբերիր ամեն նեղութեանց փորձութեանց և ձախորդութեանց, նա արժանի չէ ինձ (Մատ. Ժ. 38):

Յիսուսը տարան խաչելու (Մատ. ԻԿ. 31):

Գողգոթայում խաչեցին զՅիսուս, որ խաչի վրայից ներողութիւն էր խնդրում զինքը խաչողների համար՝ ասելով. Հայր, թող դոցա, զի ոչ գիտեն զինչ գործեն (Դուկ. ԻԳ. 33—34):

Խաչի պատմութիւնն կամ քարոզն յիմարութիւն է անհաւատ կորուսեալների համար. իսկ մեզ փրկուածներէս համար զօրութիւն Աստուծոյ (Ա. Կորն. Ա. 18):

Ես պարծենում եմ միայն Յիսուսի Քրիստոսի խաչով, որով աշխարհ ինձ համար խաչուած է և ես աշխարհէ համար (Գաղ. Զ. 14):

Կ Ե Ր Ա Կ Ո Ի Ր

Չափաւորութեամբ ընդունելու ենք մարմնաւոր սննդաբար կերակուրները, որք կորստական են. աւելի աշխատելու ենք հոգեւոր կերակուրը՝ որ անկորուստ է և յաւիտենական:

Հոգին աւելի է կերակրից (Մատ. Զ. 25):

Արժանի է մշակն իւր կերակրին (Մատ. Ժ. 10):

Ասում է Փրկիչն. Ներսփորն մտած կերակուրն չէ կարող պղծել մարդը, այլ ինչ որ ելնում է մարդից, այն է պղծում մարդը. որովհետեւ ներսից՝ մարդոց սրտերից ելնում են չար խորհուրդներ—չնութիւններ, պոռնկութիւններ, գողութիւններ, սպանութիւններ, ագահութիւններ, չարութիւններ, նենգութիւններ, գիշութիւններ... հայհոյութիւն, ամբարտաւանութիւն, անողամութիւն: Այս բոլոր չարիքներն դուրս են գալիս ներսից և պղծում մարդը (Մար. Է. 18—23):

Գնացէք, աշխատեցէք ոչ թէ կորստական կերակուրը:

այլ այն կերակուրը՝ որ մտում է յաւիտենական կեանքի համար, որը ձեզ կը տայ Մարդոյ Որդին Յիսուս Քրիստոս (Յով. Զ. 27):

Ասում է Պողոս առաքեալն. կերակուրն փորի համար է, փորն էլ կերակրի համար. բայց Աստուած (սահմանած օրում) կը խափանէ այս էլ, այն էլ: Բայց մարմինն պոռնկութեան համար չէ, այլ Տիրոջ համար և Տէրն մարմնոյ համար (Ա. Կորն. Զ. 13):

ԿՆՆԴԱՆԻ ԶՈՃ

Մեր մարմինները՝ կենդանի Աստուծոյ համար կենդանի պատարագ մատուցած կը լինինք, երբ կը զսպենք մեր բոլոր չար կիրքերը:

Ով Աստուած, ամեն օր մեռնում ենք քեզ համար. համարուեցանք ինչպէս մարթուելու տարած ոչխար (Մաղ. ԽԳ. 22):

Եղբայրներ, Աստուծոյ գթութեամբն աղաչում եմ ձեզ, որ ձեր այդ խօսուն պաշտօնը—ձեր մարմինները—պատրաստէք կենդանի Աստուծոյ համար՝ կենդանի, սուրբ, հաճելի պատարագ (Հռ. ԺԲ. 1):

Մեռելներից յարութիւն առած է Քրիստոս, այսուհետեւ էլ չմեռնիր, մահն այլ ևս չէ կարող տիրել նմա: Որովհետեւ նա՝ որ մեռաւ, մի անգամ մեռաւ մեզաց համար, և որ կենդանին է, Աստուծոյ համար կենդանի է: Նոյնպէս դուք էլ ձեր մարմինները մեռած համարեցէք մեզաց համար և մեր Տէր Յիսուս Քրիստոսով կենդանի Աստուծոյ համար (Հռ. Զ. 9—11):

ԿԻՆ—ԿԱՆԱՅՔ ԵՒ ՄԱՐԳՐԻԿ

Ամուսնական կեանքը քաղցրացնելու և սրբութեամբ պահպանելու համար կանայք պարտաւոր են լինել հեզ, հնազանդ, հաւատարիմ, պարկեշտ, ազնիւ և տնտեսագէտ, նոյնպէս հաւատարիմ լինելու են և մարդիկ:

Աստուած Ադամից առած կողը (կոխկաճաղը) ստեղծեց կին... որը Ադամ հաւանելով՝ ասաց. Հիմի սա իմ ոսկրիցս ոսկր է և մարմնիցս մարմին, սա կը կոչուի կին, վասն զի առնուեցաւ իւր մարդից (Ծնն. Բ. 21—23):

Կինն օգնական և ընկեր է մարդոյն (Ծնն. Բ. 18):

Քո կինն վայելուչ այգու պէս է քո տան անկիւնում, քո զաւակներն էլ նորատունկ ձիթենու պէս շարուած քո սեղանի չորս կողմում (Մաղ. ճԻԷ. 3):

Ուրախ եղիր երիտասարդ, քո երիտասարդ կնոջ հետ (Առ. Ե. 18):

Անդգամ և անպարկեշտ կինն կարօտ կը լինի հացի, նոյնպէս և ամօթխածութիւն չգիտցող կինն (Առ. Թ. 13):

Ծնորհալի կինն բարձրացնում է իւր մարդոյ փառքը (Առ. ԺԱ. 16):

Անպարկեշտ կնոջ գեղեցկութիւնն նման է խողի քրթում գրուած ոսկի գինդի—օղակի—(Առ. ԺԱ. 22):

Առաքինի և տնտեսագէտ կինն իւր մարդոյ պսակն է. իսկ չարագործ կինն փայտի որդի պէս վնասակար է և կորցնում է իւր մարդը (Առ. ԺԲ. 4):

Իմաստուն կանայք շինեցին իւրեանց տուները, իսկ անդգամ կիներն իւրեանց ձեռքով կործանեցին իւրեանց տուները (Առ. ԺԳ. 1):

Ով որ գտաւ բարի կին, գտաւ շնորհք և ընդունեց Աստուծուց ուրախութիւն: Ով որ հանում է իւր տանից բարի և ազնիւ կինը, հանում է իւր տանից բարեքները (Առ. ԺԸ. 22):

Լաւ է բնակիլ անապատում, քան թէ բնակիլ անդգամ, լեզուանի և բարկացող կնոջ հետ (Առ. ԻԱ. 19):

Լաւ է մինակ բնակիլ տանիքի վերայ մի անկիւնում, քան թէ բնակիլ բամբասող կնոջ հետ մի տան մէջ (Առ. ԻԳ. 24):

Ով որ կարողանայ գտնել առաքինի կին, այնպիսին աւելի պատուականագոյն է թանկագին ակունքներից. վստահ է նորա վերայ իւր մարդոյ սիրան. այնպիսի մարդը բնաւ չկարօտիր աւարների: Գործակից է իւր մարդոյն ամեն բարի գործերում: Գտնելով բուրբ և քաթան՝ իւր ձեռքով գործեց պիտանի և շահաւէտ իրեր... Նորա մարդն տան մասին ոչինչ չէ հոգում՝ երբ ուշանայ մի տեղ: Գործում է իւր ձեռքով և հագնում կրկին հագուստ ամենքին, որ իւր տան մէջ են: Արջուկից գործեց իւր մարդոյն համար ծիրանի հագուստ և իւր համար արկանեկը—սաւան—(Առ. ԼԱ. 10—23):

Քո փոքրութիւնից սիրած կինը մի թողուր, ասում է Իսրայէլի Տէր Աստուածն (Մաղ. Բ. 15)

Գեղեցիկ և աստուածավախ կին էր Շուշան Յովակիմայ ամուսինն (Դան. ԺԳ. 1—2):

Ով որ արձակում է իւր կինը առանց պոռնկութեան պատճառի, նա պատճառ է լինում իւր կնոջ շնութեան, և ով որ առնում է արձակուած կինը՝ շնանում է (Մատ. Ե. 32):

Փարիսեցիք ասում են Յիսուսին. Մովսէս հրաման տուաւ մեզ՝ ազաճարդանի թուղթ տալ կնոջ և արձակել: Պատասխանում է նոցա Յիսուս և ասում. Մովսէս ձեր խստասրտութեան համար գրած է այն պատուիրանը: Բայց ստեղծագործութեան սկզբից՝ արու և էգ ստեղծեց զնոսա Աստուած և ասում է. Այս պատճառաւ մարդ կը թողնէ իւր հայրը և մայրը և կը գնայ իւր կնոջ ետեւից: Եւ կը լինին երկուքն մի մարմին, և այնուհետեւ երկու եւ կը լինին երկուքն մի մարմին, և այլ մի մարմին են: Արդ՝ որը (այն պսակուածները) չեն, այլ մի մարմին են: Արդ՝ որը (այն պսակուածները)

սիրէ իւր կիները այնպէս՝ ինչպէս իւր անձը, կիներն էլ թող վախենայ իւր մարդից (Եփ. Ե. 22—23):

Ո՛վ կանայք, հնազանդ եղէք ձեր մարդոց, ինչպէս վայելում է. ո՛վ մարդիկ, սիրեցէք ձեր կիները և չբառնացնէք զնոսա (Պող. Գ. 18—19):

ԿՇԻՌ (չափել եւ կշռել)

Չափի և կշռի մէջ արդար լինելու է. քանզի Աստուծո՛ւ և խղճի առեւի են անարդար չափն ու կշիռն:

Անիրաւութիւն մի անէք կազի չափի և կշռի մէջ՝ Ամբողջապէս ուղիղ լինելու են ձեր կշիռներն, կշռի քարերն, ցորենի և ուրիշ չափերն (Ղևտ. ԺԹ. 35—36):

Ամենեւին չունենաս երկու տեսակ կշիռ և երկու տեսակ քարեր—մեծ և փոքր, ծանր և թեթեւ.—թէ քո խանութում և թէ քո տան մէջ: Բոլորովին ստոյգ և ուղիղ լինելու են քո չափն և կշիռն—այս է կաշն, կշեռքն, քարերն, դինու, օղու, ցորենի, ևն չափերն—որովհետեւ դու երկար կապրես երկրի վերայ... Որովհետեւ քո Տէր Աստուծոյ առաջ պիղծ է այն մարդն, որ չափերի և կշիռների մէջ կանէ ամեն տեսակ անիրաւութիւն (Բ. Օր. ԻԵ. 13—16):

Ստախօս են մարդոց որդիքն, մեղանչում են իւրեանց չափուց և կշռոց մէջ (Սաղ. ԿԱ. 10):

Պիղծ է Աստուծոյ առաջ խարդախած կշիռն¹⁾ բայց բնդունելի է Աստուծոյ արդար կշիռն (Առ. ԺԱ. 1):

Աստուծոյ առաջ պիղծ են երկու տեսակ չափ և երկու տեսակ կշիռ պահելն (Առ. Ի. 10):

¹⁾ Այս պատուէրների շարքում են և հետեւադներն, այս է մեղք ևն դինու և օղու հետ ջուր խառնելն, արծաթի հետ կապար և ոսկու հետ դեղին պղինձ խառնելն, և ուրիշ նման խարտեթիւններ, որք առաջանում են ազահութիւնից:

ԿՈՅՍ—կուսանք

Երիտասարդներ և կոյսեր, ծերեր և տղաներ, օրհնեցէք Տիրոջ անունը (Սաղ. ՃԽԼ. 12):

Կան ներքինիներ, որ իւրեանց մօր որովայնից ծնան ներքինի. կան ներքինիներ էլ, որ մարդիկներից եղան ներքինիք. և կան ներքինիներ էլ, որք իւրեանց անձերը ներքինի արին (կոյս մնացին մինչև իւրեանց մահն) երկնից թողաւորութիւնը ժառանգելու համար. ով որ կարող է տանել թո՛ղ տանի (Մատ. ԺԹ. 12):

Ելլ կուսանաց—կուսակրօնների թէ արական լինի և թէ իգական—համար... խրատ տամ... կամենում եմ ապահովացնել զձեզ. որովհետեւ ով որ կին—կնիկ չունի, հոգս անի Տիրոջ մասին՝ թէ ինչպէս հաճոյ կը լինի Աստուծոյ. և ամուսնացածն հոգայ աշխարհիս մասին՝ թէ ինչպէս հաճոյ կը լինի իւր կնոջ: Եւ ահա որոշուեցան իրարից ամուսնացեալն և կոյսն, այս է պսակուածի և կուսի վիճակներն. որ կոյսն հոգայ Տիրոջ մասին՝ որ սուրբ լինի հոգւով էլ մարմնով էլ, և պսակուածն հոգայ աշխարհիս մասին թէ ինչպէս հաճոյ կը լինի իւր մարդոյն: Եթէ չունին ժուժկալութիւն կուսակրօններն՝ թող ամուսնանան. որովհետեւ աւելի լաւ է ամուսնանալ քան թէ սուքանալ—չար ցանկութեամբ մեղանչել (Ա. Կորն. Է. 1—39):

ԿՈՅՐ ԱԶՔԵՐՈՎ ԵՒ ՄՏՔՈՎ

Պարտաւոր ենք ուղիղ ճանապարհ ցոյց տալ կոյրերին և ոչ թէ ճանապարհից ծռեցնել և ընկնիլ անէճքի տակ. նմանապէս և մտք կոյրերին և տղաներին:

Անիծեալ լինի նա, որ կը ծռեցնէ կոյրը իւր ճանապարհից (Բ. Օր. ԻԷ. 18):

Աստուած ասաց Մովսէսին. Լսեցի Իսրայէլի որդւոց աւրտունջը. Կասես նոցա. Երեկոյեան դէմ կուտէք միս, եւ առաւօտ կը կշտանաք հացով. եւ կը ճանաչէք թէ ես եմ ձեր Տէր Աստուածն (Եբբ. ԺԶ. 12):

Ո՛վ Տէր, ես ճանաչեցի թէ Գու ես, որ քննում ես սրտերը եւ սիրում ես արդարութիւնը—ասում է Գուրիթ—(Ա. Մնաց. ԻԹ. 16—17):

Լսիր երկինք, ականջ դիր երկիր, որովհետեւ խօսում է Տէրն. Զաւակներ մեծացուցի եւ բարձրացուցի եւ նորա զիս անարդեցին: Եղն ճանաչեց իւր տէրը եւ էջն ճանաչեց իւր տիրոջ գոմը, բայց զիս չճանաչեց Իսրայէլն եւ զիս չմտաբերեց իմ ժողովուրդն (Ես. Ա. 1—2):

Յիսուս բարձրացուց իւր աչքերը դէպի երկինք եւ ասաց. Ո՛վ Հայր Աստուած, հասել է ժամն, փառաւորիլ Բո Որդին. որ Բո Որդին էլ փառաւոր է Բեղ: Ինչպէս որ իշխանութիւն տուիր Նմա (Որդւոյդ) ամեն մարմնոյ վերայ, որ յաւիտենական կեանք տայ ամենին, զորս տուիր Նմա: Յաւիտենական կեանքն այս է, որ ճանաչեն զքեզ միայն ճշմարիտ Աստուած եւ Բո ուղարկած Յիսուս Քրիստոսը (Յով. Ժ. 1—3):

Հաւատքով ճանաչելու է Յիսուս Քրիստոսը, նորա յարութեան զօրութիւնը, նորա շարչարանաց հաղորդութիւնը եւ նորա մահուան կերպարանակից լինելն (Փիլ. Գ. 10):

Աղաչում եմ ձեզ, եղբայրներ, ճանաչեցէք ձեր աշխատաւորները եւ վերակացուները եւ ձեր խրատողները որ Աստուծոյ սպասաւորներն են: Եւ աւելի սիրոյ արժանի համարեցէք զնոսա նոցա գործի համար եւ խաղաղութիւն արէք միմեանց հետ (Ա. Թես. Ե. 12—13):

Ճ Ա Ն Ա Պ Ա Ր Հ

Աստուծոյ ճանապարհով գնալով միայն կարող ենք մտնել Աստուծոյ անվանճան թաղաւորութեան մէջ:

Ասում է Տէրն Աբրահամին. Գիտէի որ (Աբրահամ) կը պատուիրէ իւր որդւոց եւ իւր տան, որ իրանից յետոյ

պահեն Տիրոջ ճանապարհը, եւ անեն արդարութիւն եւ իրաւունք. եւ Տէր Աստուած կը թափէ Աբրահամի վերայ այն ամեն օրհնութիւնը եւ բարեբը, զորս խոստացաւ (Ծնն. ԺԸ. 19):

Ասում է Մովսէս Հրէից ժողովրդեան. Ո՛վ Իսրայէլ, ինչ է խնդրում քեզանից քո Տէր Աստուածն.—միայն վախենալ քո Տէր Աստուծոց եւ գնալ նորա ամեն ճանապարհներով եւ սիրել եւ պաշտել քո Տէր Աստուածը քո ամեն սրտով, քո ամեն անձով. եւ պահել քո Տէր Աստուծոյ հրամանները եւ նորա իրաւունքները (Բ. Օր. Ժ. 12—13):

Երիտասարդն ինչով կուզէ իւր ճանապարհ, այլ միայն պահելով Բո խօսքերը՝ով Տէր—(Սաղ. ճԺԸ. 9):

Յիսուս Քրիստոս ասաց իւր աշակերտներին. Ես եմ ճանապարհ, ճշմարտութիւն եւ կեանք. ոչ ոք չէ կարող հաւատալ ինձանով (Յով. ԺԳ. 6):

Գալ Հօրս մօտ, եթէ ոչ միայն ինձանով (Յով. ԺԳ. 6):

Ո՛վ եղբայրներ, այսուհետեւ մէջ Յիսուսի արիւնով, այն մտնել Սրբութեանց մուտքի մէջ Յիսուսի արիւնով, այն նոր եւ կենդանի ճանապարհով, որը մեզ համար բացաւ Փրկիչն վարագուրի ձեռնով այսինքն իւր մարմնոյ միջոցաւ (Եբր. Ժ. 19—20):

Ճ Շ Մ Ա Ր Ի Տ

Ամեն բանի մէջ ճշմարիտ եւ անարատ քրիստոնեան իւր վերայ է բերում Աստուծոյ նմանութիւնը:

Յովը ճշմարիտ եւ աստուածապաշտ մարդ էր (Ա. 1): Թոնգ լինի ձեր խօսքն այոն այո եւ ոչն ոչ, վասն զի նորանից աւելին չարեցնստատանայից է (Մատ. Ե. 37):

Ասում է Յիսուս. ճշմարիտ է իմ վկայութիւնն (Յով. Ը. 14): ճշմարիտ է իմ գատաստանն ճշմարիտ սրտով, Մօտենանք սուրբ հաղորդութեան ճշմարիտ սրտով, կատարեալ հաւատով, մեր սրտերը չար խղճից լուացած եւ մեր մարմինները սուրբ ջրով մկրտուած (Եբր. Ժ. 22):

Ճ Շ Մ Ա Ր Տ ՈՒ Թ Ի Ի Ն

Ճշմարտութիւնը պինդ գրկէ, սլ բրիտաննայ, և ճշմարտութիւնն կը պահպանէ քեզ:

Բայց դուք վախեցէք Աստուծոյ, ծառայեցէք նմա ճշմարտութեամբ և ձեր բոլոր սրտերով... իսկ եթէ կը շատ բունակէք ձեր չարութիւնները, դուք էլ կը կորսուիք, ձեր (Սաւուղ) թագաւորն էլ (Ա. Թագ. ԺԲ. 24—25):

Արդարև ամեն բանից աւելի մեծ և զօրաւոր է ճշմարտութիւնն, ամեն երկիր ապաւինում է ճշմարտութեան. երկիրնքն էլ օրհնում են ճշմարտութիւնը, ամեն գործեր էլ շարժուում են և դողում նորա առաջ. ճշմարտութեան մէջ ամենեւին չկայ անիրաւութիւն... քանզի ճշմարտութիւնն է թագաւորաց և էշխանաց զօրութիւնն և մեծութիւնն, և օրհնուած է ճշմարտութեան Տէր Աստուածն (Ա. Եզր. Գ. 35—40):

Ո՛վ Տէր, ուղարկիր Քո լոյսը և Քո ճշմարտութիւնը որ առաջնորդեն ինձ և հանեն Քո սուրբ սարն և Քո սուրբ բնակարանն (Սաղ. ԽԲ. 3):

Օրէնքներն տրուեցան Մովսէսի ձեռնով. շնորհքն և ճշմարտութիւնն եղան Յիսուսի Քրիստոսի ձեռնով (Յով. Ա. 17):

Եղբայրներ, թէ որ ձեր միջից մէկն կը մտորուի ճշմարտութեան ճանապարհից, և ուրիշ մէկն կը դարձուցանէ զնա, իմացած լինի՝ մեղաւորը չար ճանապարհից դարձուցանողն, որ մահից կը փրկէ իւր հոգին և կը ծածկէ իւր մեղաց շատութիւնը (Յով. Ե. 19—20):

Եղբայրներ, այսուհետև խորհեցէք այն բանը, ինչ որ ճշմարտութեամբ է, ինչ որ պարկեշտութեամբ է, ինչ որ արդարութեամբ է, ինչ որ սրբութեամբ է, ինչ որ սիրով է, ինչ որ բարի անուան վայելուչ է, ինչ որ քաջութեամբ է, ինչ որ գովութեամբ է, այն խորհեցէք (Փիլ Գ. 8):

Ճ Ր Ա Գ

Ճշմարիտ հաւատացելոց հոգիների և մտքերի մշտաւառ ճրագն և անանցանկի լոյսն են Աստուծոյ խօսքերն և անխախտ հաւատն:

Ո՛վ Տէր, Գու ևս իմ ճրագն, սլ Տէր, Գու կը լուսաւորես ինձ համար խաւարը (Ա. Թագ. ԻԲ. 29):

Ո՛վ Աստուած, Քո խօսքերն ճրագ են իմ ոտների համար և լոյս են տալիս իմ ճանապարհներին (Սաղ. ՃԺԸ. 105):

Աստուծոյ օրէնքների պատուիրանն ճրագ, կեանքի ճանապարհ, լոյս և յանդիմանութիւն է ու խրատ (Առ. Զ. 23):

Մարդոց մարմնոց ճրագն աչքն է, երբ աչքն լուսաւոր է, լուսաւոր կը լինի բոլոր մարմինն, երբ աչքն չար է, խաւար կը լինի բոլոր մարմինն (Դուկ. ԺԱ. 34):

Նա (Ս. Յովհաննէս Մկրտիչ) էր ճրագն, որ վառուած էր և ծագում էր, և դուք կամեցաք մի առ յամանակ ցնծալ նորա լուսով (Յով. Ե. 35):

Մ Ա Հ

Մահն երկու է, մարմնաւոր մահ և հոգեւոր մահ: Մարմնաւոր մահն հասարակաց է արդէն, ամենազառն է հոգեւոր մահն, ահա օրինակներ:

Ինչ օրում որ ուտէք արգելուած ծառի պտղիցն, կը մեռնիք—հոգեւոր մահուամբ—(Մին. Բ. 17):

Մովսէս ասում է, Ո՛վ Ժողովուրդ, ես այսօր քեզ յայանեցի կեանքը եւ բարին, մահը եւ չարը: Քո ձեռքումդ է երկուսն էլ, ուզում ես բարի գործիք եւ հոգով ապրիր, ուզում ես՝ չար գործիք եւ հոգւով մեռիր (Բ. Օր. Լ. 15—20):

Դաւիթ մարգարէն աղօթում է որ ազատ լինի հոգե-

ւոր մահից՝ ասելով. Ո՛վ Տէր, լոյս տուր իմ աչքերին, որ
ամենեւին չմեռնիմ հողեւոր մահով (Մաղ. ԺԲ. 4):

Նոքա, որ ասում են զիս, սիրում են մահը—ասում
է Տէրն Սողոմոնի բերանով (Առ. Ը. 36):

Մեծատան հողին դժօխքում բարձրացուց իւր աչքերը
և տեսաւ աղքատ Ղաղարոսի հողին նստած Աբրահամի
Սրբայութեան մէջ-գողում (Ղուկ. ԺԶ. 19—31):

Եւ կը գնան նոքա (մեղաւորներն) յաւիտենական
տանջանքի մէջ և արդարներն յաւիտենական կեանքի մէջ
(Մատ. ԻԵ. 46):

Այսուհետև մեղքերն չթաղաւորեն ձեր մահկանացու
մարմինների վերայ՝ նորա ցանկութեանց հնազանդելու. և
մի պատրաստէք ձեր անգամները անիրաւութեան գործիք
մեղաց համար. այլ պատրաստեցէք ձեր անձերը արդարու-
թեան գործիք Աստուծոյ համար՝ ինչպէս մեռելներից կեն-
դանացած, վասն զի այլ ևս մեղքերն տիրելու չեն ձեր
վերայ (Հռ. Զ. 12—14):

ՄԱՏՆԵԼ—Մատնութիւն

Մատնորն մատնուում է իւր խզի խայթերին և չարաշար տանջուե-
լով մեռնում հողով էլ մարմնով էլ:

Չուր տեղ կուուեցան ինձ հետ, իմ սիրոյս փոխարէն
մատնում էին զիս, բայց ես աղօթք էի անում (Մաղ. ՃԸ. 4):

Առաջուց վերջացուր քո անհաշա թշնամու հետ, քո-
նի որ ճանապարհում կը լինես նորա հետ. գուցէ քո թըշ-
նամին քեզ մատնէ դատաւորին, դատաւորն էլ դահճի և
կը ձգուի բանախ մէջ (Մատ. Ե. 25):

Փրկիչն իւր աշակերտները զգուշացնելու համար ասում
է. Ահաւասիկ գնում ենք Երուսաղէմ, և Մարդոյ Որդին
(ինքն Յիսուս Քրիստոս) կը մատնուի քահանայապետների
և դպիրներին և կը դատապարտեն զնա մահուան:

մատնեն զնա հեթանոսաց անարգելու, ծեծելու և խաչ
հանելու և երեք օրում յարութիւն կառնէ (Մատ. Ի. 17—19):

Մատնիչ Յուդան գնում է քահանայապետների մօտ
և ասում, ինչ էք կամենում առ ինձ, և ես Յիսուսը կը
մատնեմ ձեզ, և նոքա կըռեցին (աւին Յուդային) երեսուն
արծաթ (Մատ. ԻԶ. 14—15):

Փրկիչն՝ դառնացեալ հողով զգուշացնում է Յուդա
աշակերտը՝ ասելով. Մարդոյ Որդին գնում է, ինչպէս և
դուրեւ ի նորա համար, բայց վայ այն մարդոյն, որի ձեռ-
նով կը մատնուի Մարդոյ Որդին. նորա համար լաւ էր,
որ ծնուած չլինէր այն մարդն (Մատ. ԻԶ. 24):

Մատնիչ Յուդան՝ շրջապատուած զինուորներով Գեթ-
սեմանի պարտիզում՝ մօտեցաւ Յիսուսին և համբուրեց
զնա, քանզի այն նշանը տուած էր Յուդան նոցա, թէ որի
հետ ես կը համբուրուեմ, նա է Յիսուսն, զնա բռնեցէք:
Հետ ես կը համբուրուեմ, նա է Յիսուս. Ո՛վ Յուդա, համ-
հայրական զգացմամբ ասում է Յիսուս. (Ղուկ. ԻԲ. 47—48):

Մատնիչ Յուդան՝ տեսնելով որ պարտաւորեցաւ, զղջաց
և քահանայապետներին և ծերերին դարձուց արծաթը, և
ասում է. Մեզոյ, որովհետև մատնեցի արդար արիւն: Եւ
նոքա ասում են. Մեզ փոյթ չէ, դու գիտես: Յուդան ար-
ծաթը ձգեց տաճարին մէջ և գնաց խեղդուեցաւ (Մատ.
ԻԷ. 3—5):

Մ Ա Ր Գ

Բոլոր կենդանեաց թողն ու պսակն է մարդն, որ ճոխացած է
աստուածապարգի բանական հողով և բազմահանձար հնարագի-
տութեամբ:

Խորհուրդ է անում Ս. Երրորդութիւնն ասելով. Ստեղ-
ծենք մարդ մեր պատկերին համեմատ (Ծնն. Ա. 26):

Տէր Աստուած հողից ստեղծեց մարդը և փչեց նորան
կենդանի շունչ և մարդն եղաւ կենդանի հողի (Ծնն. Բ. 7):

Եւ սասց Տէր Աստուած. Էաւ չէ որ միայնակ մնայ մարդն, ստեղծենք դորա համար իւր նման օգնական, որ էր Նան (Ծնն. Բ. 18):

Ազամ և Եւան խաբուում են և արտաքուում Գրախտից (Ծնն Գ.):

Մահն տարածուեցաւ ամեն մարդոց վերայ (Ծնն. Ե. 12):
Որովհետեւ ինչպէս մի մարդից Ադամից աշխարհս մտան մեղքերն, և այն մեղքերից էլ մահն մտաւ, և այնպէս տարածեցաւ մահն ամեն մարդոց վերայ, որով ամենքն էլ մեղանչեցին... նոյնպէս և շնորհօք մի մարդի-Յիսուսի Քրիստոսի-շատերի վերայ աւելացան Աստուծոյ շնորհքն... Ապա ուրեմն ինչպէս մէկի-Ադամի-յանցանքներով դատաւարտուեցան ամեն մարդիկ, նոյնպէս և մէկի-Քրիստոսի-արդարութեամբն՝ տարածուեցաւ ամեն մարդոց վերայ կենաց արդարութիւն: Քանզի ինչպէս մի մարդոյ-Ադամայ-անհնազանդութեամբ եղան շատ մեղաւորներ, նոյնպէս և մի մարդոյ-Յիսուսի Քրիստոսի-հնազանդութեամբ կը լինին շատ արդարներ... ինչպէս այն մահով թագաւորեցին մեղքերն, նոյնպէս կը թագաւորեն և շնորհքներն արդարութեամբ մեր Տէր Յիսուս Քրիստոսի ձեռնով յաւիտենական կեանքում (Հռ. Ե. 12—21):

Մարդով եղաւ մահ և մարդով եղաւ մեռածները յարութիւն: Ինչպէս Ադամով ամենքն մեռնում էին, նմանապէս Քրիստոսով ամենքն կը կենդանանան, իւրաքանչիւրն իւր կարգում, նախ Քրիստոս և ապա Քրիստոսեաններն (Ա. Կորն. ԺԵ. 21—23):

Առաջին մարդն (Ադամ) երկրից, հողեղէն, իսկ երկրորդ մարդն Յիսուս Բրիստոս Տէր՝ երկնքից (Ա. Կորն. ԺԵ. 45—47):

Մ Ա Ր Մ Ի Ն

Մեր մարմիններն կենդանի Աստուծոյ կենդանի տաճարներն են. աւելորդ է յայտնել թէ որ աստիճան մարբութիւն է պահանջուում մեզանից այս տաճարները սուրբ պահելու համար:

Բանն Աստուած մարմին եղաւ (մարմնացաւ) և բնակեց մեր մէջ (Յով. Ա. 14):

Նորա՝ որ զինքը ընդունեցին ինչպէս Աստուծոյ Որդի, Բրիստոս իշխանութիւն տուաւ նոցա լինել Աստուծոյ որդիներ, որ հաւատում են Նորա անուան, հաւատացեալներն ոչ արիւնից ծնան, ոչ մարմնոյ կամքից և ոչ մարդոյ կամքից, այլ ծնան Աստուծոց (Յով. Ա. 12—13):

Ով եղբայրներ, աղաչում եմ զձեզ Աստուծոյ գթութեամբն՝ պատրաստել ձեր մարմինները-ձեր այդ խօսուն պաշտօնը—Աստուծոյ համար հաճելի, սուրբ և կենդանի պատարագ... ինչպէս մի մարմնի մէջ ունինք շատ անդամներ, և բոլոր անդամներն շունին միեւնոյն գործը, նոյնպէս էլ շատերս մի մարմինն ենք Քրիստոսով, բայց իւրաքանչիւրս անդամներ ենք միմեանց (Հռ. ԺԲ. 1—5):

Ինչպէս մարմինն մէկ է և ունի շատ անդամներ, մարմնոյ շատ անդամներն էլ մի մարմին են. նոյնպէս էլ Քրիստոս, քանզի մենք ամենքս մկրտուեցանք մի Հոգւով մի մարմին լինելու համար, թէ Հրէաներն, ամենքն ընդունեներն, թէ ծառաներն, թէ աղաաներն, ամենքն ընդունենցինք միեւնոյն Հոգին (Ա. Կորն. ԺԲ. 12—13):

Այլ Գուք Քրիստոսի մարմինն էք և անդամներ էք Նորա անդամներից (Ա. Կորն. ԺԲ. 27):

Չգիտէք որ ձեր մարմիններն Քրիստոսի անդամներն են. այժմ առնելով Քրիստոսի մարմինները՝ անե՛ք պոռնկի անդամներ. —քաւ լիցի... Միթէ չգիտէք որ ձեր մարմիններն տաճար են Ս. Հոգւոյն՝ Որ ձեր մէջ է, Որը ունիք մարմնի անդամների տէրն չէք: Քանզի գնով դը-Աստուծոց. դուք ձեր անձերի

Թերորդ նահապետն էր, և ջրհեղեղաւ կոտորեց աշխարհիս մնացած ամբողջ ամբարիշտները: Աստուած՝ ժօխիր գարձուցանելով և Սողոմայեցւոց և Գոմնրացւոց քաղաքները՝ դասեց ՚ի խրատ և յօրինակ ապագայ մեղաւորաց: Եւ փրկեց արդար Ղովաը, որ ձանձրացած էր նոցա անկարդ գիշութեան ընթացքից՝ մեղսալից վարք ու բարբից—(Բ. Պետ. Բ. 4—8) և Ծնն. ԺԷ):

Չարագործն կը բռնուի իւր մեղքերի չուաններով (Առ. Ե. 22):

Վայ այն մարդոց, որք գէպի իրանց են քաշում մեղքերը ինչպէս երկար շուաններով, և անօրէնութիւնները իրանց են քաշում ճապաններով (Յս. Ե. 18):

Պատմիր իմ ժողովրդեան իւր մեղքերը և Յակովբայ տան՝ իւր անօրէնութիւնները (Յս. ԾԷ. 1):

Միթէ անկարող է Տիրոջ ձեռքն փրկել ձեզ. կամ ծանրացոյց Աստուած իւր ականջները, որ չլսէ ձեզ. — այդպէս չէ, այլ ձեր մեղքերն են, որ հեռացնում են զձեզ ձեր Ասածուց. ձեր մեղքերն և անօրէնութիւններն են պատճառն, որ Աստուած դարձուց իւր երեսը ձեզանից, որ չոյրմի ձեզ (Յս. ԾԹ. 1—2):

Յուդայի ժողովրդեան մեղքերն գրուած են երկաթեայ դրչով, աղամանդի ծայրով նոցա սրտերի տախտակների վերայ և փորագրուած են նոցա սեղանների եղջիւրների վերայ (Եր. ԺԷ. 1):

Ասում է Յիսուս. Իմացած լինիք որ Մարդոյ Որդին իշխանութիւն ունի երկրի վերայ թողուլ մեղքերը. ապա ասում է անդամալուծին. Քեզ եմ ասում, վեր կաց, անքո մահիճը և դնս քո տունն (Մար. Բ. 10—12):

Ասում է Փրկիչն. Ես եկի աշխարհ որ կեանք ունենան մարդիկ և աւելի ևս ունենան (ազատուին մարդիկ մեղքից և լինին Աստուծոյ որդիք) (Յով. Ժ. 10):

Եթէ Աստուած չինայեց բուն ոստին (Ագամին) դուցէքեզ էլ չինայե (Հռ. ԺԱ. 21):

Դուք առաջ մեղաց ծառայ էիք, այժմ գոհութիւն Աստուծոյ դուք ազատուելով մեղքերից՝ ծառայեցէք Աստուծոյ (Հռ. Զ. 17—18):

Այսուհետև մեղքերն չթագաւորեն ձեր մահկանացու մարմինների վերայ՝ նորա ցանկութեանց հնազանդելու համար. և մի պատրաստէք ձեր անդամները անիրաւութեան դօրծիք՝ մեղաց համար, այլ պատրաստեցէք ձեր անձերը արդարութեան դօրծիք Աստուծոյ համար՝ ինչպէս մեռելներից կենդանացած, վասն զի մեղքերն այլ ևս տիրելու չեն ձեր վերայ (Հռ. Զ. 12—14):

ՄԵՌԱՆԻԼ—մեռնիլ

Մարդոյ պատուիրանագանցութիւնն և սատանայի չար նախանձն մահ բերին աշխարհ, ինչպէս գրուած է. Մահի խայթոցն մեղքերն են և մեղքի դօրութիւնն՝ օրէնքն: Ճնախանձու բանասարկուին եմուս են և մեղքի դօրութիւնն՝ մահ յաշխարհ»:

Տէր Աստուած առաւ մարդը և դրաւ Եդեմական Դրախտի մէջ, որ դօրծէ այն և պահէ: Եւ Տէր Աստուած պատուիրեց Ադամայ և ասաց. Այդ Դրախտի բոլոր ծառեպատուիրեց Ադամայ և ասաց. Այդ Դրախտի բոլոր ծառերից ուտելով կուտես, բայց ընտրի և շարի գիտութեան ծառից չուտէք. որովհետև անշուշտ կը մեռնիք նոյն ծառի պտղից կերած օրում (Ծնն. Բ. 15—17):

Մեռաւ Ագամ (մարմնով) 930 տարի ապրելուց վերջն (Ծնն. Ե. 5):

Մեռաւ Նոյ 950 տարեկան (Ծնն. Թ. 29):
Վախճանեցաւ Մովսէս 120 տարեկան Մովաբացւոց երկրում (Բ. Օր. ԼԳ):

Յիսուս խաչի վերայ աղաղակեց բարձր ձայնով և ասաց. Հայր Աստուած, Քո ձեռքն եմ աւանդում իմ հօգին (Ղուկ. ԻԳ. 46):

ՄԵՌՆԻԼ ԱՍՏՈՒԾՈՅ ՀԱՄԱՐ

Չար ցանկութիւնները և անվայել կիրքերը զսպելով՝ բարոյապէս նշանակում է մարմնով մեռնիլ աշխարհի համար և ասլիլ հոգով Աստուծու համար:

Ո՛վ Աստուած, ամեն օր մեռնում ենք Քեզ համար, և համարուեցանք ինչպէս մորթուելու ոչխար (Սաղ. ԽԳ. 22): Բայց Աստուծոյ ձեռնումն են արգարոց հոգիներն և մահն չմտենար նոցա: Այնպէս թուեցան անդամների աչքում թէ մեռան... բայց նոքա խաղաղութեան մէջ են (Իւ. Գ. 1—3):

Եւ դուք, ո՛վ իմ եղբայրներ, այսուհետեւ Քրիստոսի մարմնով մեռած էք օրինաց համար, որ լինիք ուրիշին՝ Քրիստոսին՝ որ յարութիւն առած է մեռելներից, որպէս զի պտղաբեր լինիք Աստուծոյ համար: Որովհետեւ քանի որ մարմնով էինք (կատարում էինք մարմնոյ շար ցանկութիւնները և անվայել կիրքերը) մեղաց կարիքները, որ օրէնքով էին, զօրանում էին մեր անգամներէ մէջ, որ մենք բերէինք մահուան պտուղներ: Բայց այժմ արձակուեցանք այն օրէնքից. քանզի մեռանք նորա մեղաց համար, որով բռնուած էինք, որ մենք ծառայէնք Ս. Հոգու նորով թուեցանք և ոչ թէ դրի հնութեամբն (Հռ. Է. 4—6):

Այժմ ո՛վ կը բաժանէ զմեզ Քրիստոսի սէրից, թէ թիւն, թէ անձկութիւն, թէ հալածանք, թէ սո՛վ, թէ մերկութիւն, թէ վշտեր, թէ սո՛ւր, ինչպէս և դրուած է. Ո՛վ Աստուած, ամեն օր մեռնում ենք Քեզ համար և համարեցանք ինչպէս մորթուելու ոչխար: Սակայն այս սիրեց մէջ աւելի յաղթում ենք Նորանով-Յիսուսով՝ որ ոչ էլ զմեզ հաստատ գիտեմ թէ ոչ մահ ոչ էլ հրեշտակ, ոչ էլ ապա- իշխանութիւններ, ոչ էլ ներկայ եղածներն, ոչ էլ խաղաղութիւններ, ոչ էլ զօրութիւններ, ոչ էլ բարձրութիւն, ոչ էլ խորութիւն և ոչ ուրիշ օրեւէ արարած չեն կարող

բաժանել զմեզ Աստուծոյ այն սէրից՝ որ մեր Տէր Յիսուս Քրիստոսով է (Հռ. Ը. 35—39):

ՄՕՏԵՆԱԼ ԱՍՏՈՒԾՈՅ

Աստուծոյ մօտենալ նշանակում է հոգւով միանալ նորա հետ և իսպառ հեռանալ մեղքերից և աշխարհային ամեն շար ցանկութիւններից:

Պատուիրում է Տէր Մովսէսին, Քահանաներն էլ թո՛ղ սրբուին (այն է՝ նախապատրաստուած մօտենան աստուածային պաշտամունքներին) որ չլինի թէ Տէրից պատժուելով սպանուին (Ելք. ԺԹ. 22):

Ինձ համար բարի է մօտենալ առ Աստուած և զնեւ Տիրոջ վերայ իմ յոյսը (Սաղ. ՀԲ. 28):

Ասում է Տէր քահանաներին. Չուր տեղ մի մօտենաք իմ սեղանին, որովհետեւ ձեր մէջ չկայ իմ կամքն... էլ ընծաներ չեմ ընդունիր ձեր ձեռքից (Սաղ. Ա. 10):

Մօտեցել է Աստուծոյ թագաւորութիւնն (Մատ. Ժ. 7):

Մօտեցէք առ Աստուած, Աստուած էլ ձեզ կը մօտենայ, սրբեցէք ձեր ձեռները, ո՛վ մեղաւորներ, և ուղղեցէք ձեր սրտերը, ո՛վ երկմիտներ (Յակ. Գ. 8):

Ո՛վ որ մօտենում է առ Տէր, մի հոգի է (Ս. Կորն. 2. 17):

Մ Ի Ա Բ Ա Ն

Սովորեք գովուած է միաբանութիւնն, վասն զի հաւաքական ուժով մեծամեծ բարիքներ է մատակարարում այն Մարդկութեան թէ բարոյապէս և թէ նիւթապէս, որի կենդանի օրինակն տեսնուում է մեղուների և մրջյունների վերայ:

Ինքն Եղիազար քահանան, Իօրայէլի որդիքն և ամեն ժողովուրդն միաբան պէտք է լսեն Նաւեան Յեսուին (Ելք. ԻԷ. 21—22):

եւ ամենքն միաբան կատարեցին Տիրոջ զսօք (Ս. եղբ. Ա. 17):

Ամեն բազմութիւնն էլ միաբան հաւաքուեցին տաճարի դրան առաջ՝ արեւելեան կողմի ընդարձակ տեղում (Ս. եղբ. Բ. 38):

Առաքեալներն ամենքն միասին միշտ միաբան աղօթք էին անում վերնատան մէջ կանանց, Յիսուսի մայր Մարիամին և Նորա-Յիսուսի-եղբարց հետ միասին (Գործ. Ա. 14):

Ո՛վ եղբայրներ, այսուհետեւ ո՞ղջ եղէք, հաստատուն կացէք, մխիթարուեցէք, միաբան եղէք, խաղաղութիւն արէք, և ձեզ հետ կը լինի խաղաղութեան և սիրոյ Աստուածն (Բ. Կորն. ԺԳ. 11):

Մ Ի Տ Ք

Ամեն կրթութիւններից աւելի գերազանց է մտքի կրթութիւնն: Եւ որովհետեւ միտքն է մարդոց ամբողջ կեանքի ղեկավարն, այս պատճառաւ փոքրութիւնից կրթելու է միտքը գէպի բարին և գէպի օգտակարն:

Մանկութիւնից մարդոյ միտքն խնամքով հաստատուած է գէպի չարն (Ծնն. Ը. 21):

Քո մտքումդ անգամ չատես քո եղբայրը (Ղ. և Կոր. ԺԹ. 17):

Երբ իմաստութիւնն ժամի քո մտքի մէջ և ախորժեղի համարես քո անձի համար գիտութիւնը. քեզ կը պահպանես խոհեմութիւնն և կը պաշտպանես քեզ քո սուրբ միտքն (Առ. Բ. 10—11):

Փրկիչն պատասխանում է Օրինականին. Քո Տէր Աստուածը կը սիրես քո բոլոր սրտովդ, քո բոլոր անձովդ և քո բոլոր մտքովդ, այս է առաջին և մեծ պատուիրանն (Մատ. ԻԲ. 37—38):

Եկն Աստուծոյ Որդին և տուաւ մեզ միտք, որ ճանաչենք ճշմարիտը (Ա. Յով. Ե. 20):

Ո՛վ եղբայրներ, մի լինիք տղաներ մտքով, այլ եղէք մտքով կատարելահասակ (Ա. Կորն. ԺԳ. 20):

Մ Ի Թ Ա Ր Ե Լ — Մ Ի Խ Թ Ա Ր Ե Լ

Ինչպէս Աստուած մխիթարում է զմեզ, նոյնպէս էլ պարտական ենք մենք մխիթարել մէկը մէկ ամեն պարագայում:

Ես եմ, ես եմ նոյն Աստուածն, որ մխիթարեցի դեզ. ճանաչիր ինչպիսի ոք էիր. վախեցար մահկանացու մարդիկներից և մարդոց որդիներից, որ ցամաքեցան խոտի պէս: Բայց մոռացար քո ստեղծող Աստուածը, որ ստեղծեց երկինքը և հաստատեց երկիրս... այժմ ուր է քեզ նեղութիւն տուողի սրամտութիւն... քեզ կը ծածկեմ իմ ձեռքի հովանու տակ (Ես. ԾԱ. 12—16):

Տեսայ նորա սրտի ճանապարհը և բժշկեցի զինքը. մխիթարեցի զինքը և տուի նորան ճշմարիտ մխիթարութիւն և հաստատեցի նորա պտուղը սգաւորաց համար, խաղաղութիւն խաղաղութեան վերայ հեռաւորներին և մերձաւորներին համար. ասում է Տէրն. և ես կը բժշկեմ իմ ժողովուրդը... ամպարշտների համար խաղաղութիւն չկայ, ասում է Տէրն (Ես. ԾԷ. 18—21):

Փրկիչն ասում է իւր աշակերտներին. Ես կաղաչեմ Հայր Աստուած, և ձեզ կը տայ ուրիշ Մխիթարիչ, որ յաւիտենական կը բնակի ձեզ հետ, ճշմարտութեան Հոգին, Որը աշխարհս չէ կարող ընդունել, որովհետեւ ոչ տեսնում է զնա և ոչ ճանաչում, բայց դուք ճանաչում եք զնա, այս պատճառաւ ձեզ հետ կը բնակի և ձեզ հետ կը լինի (Յով. ԺԳ. 16—17):

Բայց երբ կը դայ Մխիթարիչն, Որը ես կուղարկեմ Հօրից ճշմարտութեան Հոգին, Որն ելնում է Հօրից, նա

կը վկայէ ինձ համար, և դուք վկայում էք, որ սկզբից ինձ հետ էիք (Յով. ԺԵ. 26—27):

Գրում է Պողոս Ս. առաքեալն թեսաղոնիկեցոց ժողովրդեան. Վկայում էք դուք և Աստուած, թէ ինչպէս սրբութեամբ և արդարութեամբ և անարատութեամբ վարուեցանք ձեզ հաւատացեալներիդ հետ. ինչպէս դուք էլ դիտէք, ձեզանից ամենմէկը մխիթարում էինք և սփոփում, որպէս հայր իւր որդիները, և դնում էինք վկայութիւն՝ որ դուք դնաք Աստուծոյ արժանի ընթացքով-վարքով և բարքով—Որ կանչեց ձեզ դէպի իւր թագաւորութիւնն և փառքն (Ա. Թես. Բ. 10—12):

ՄԿԻՏԵԼ.—մկրտութիւն

Թլխաութեան օրէնքը մկրտութեան օրէնքի փոխաց ինքն Յիսուս Քրիստոս և պատուիրեց իւր հետևողներին անպատճառ մկրտուիլ յանուն Հօր և Որդոյ և Հոգւոյն Սրբոյ: Մկրտութիւնն սրբում է մեզ սկզբնական-ադամային մեղքից և որդեգիր անում Աստուծոյ:

Ասաց Յովհաննէս Մկրտիչ իրան դիմողներին. Ես մկրտում եմ զձեզ ջրով. բայց դալիս է ինձանից աւելի հզօրագոյնն—Քրիստոս,—որի կոչիկները արժանի չեմ վերցնել: Ես կը մկրտէ զձեզ Ս. Հոգւով և կրակով (Ղուկ. Գ. 16): Եւ երբ մկրտուեցաւ Յիսուս (Յորդանան գետում Յովհաննիսից) շուտով դուրս եկն այն ջրից, և ահա Նորա համար բացուեցան երկինք, և տեսաւ Աստուծոյ Հօգին, Որ իջնում էր աղանու պէս և գալիս Նորա-Յիսուսի-վերայ: Զայն եկն երկնքից և ասում էր. Դա է իմ սիրելի Որդին, Որը հաւանել եմ (Մատ. Գ. 16—17):

Փրկիչն՝ յարութիւն առնելուց յետոյ՝ իշխանութիւնն է տալիս աշակերտաց ասելով. Այսուհետև դնացէք և աշակերտեցէք ամեն հեթանոսները. մկրտեցէք զնոսա յանուն Հօր և Որդոյ և Հոգւոյն Սրբոյ: Սովորեցէք նոցա

պահել այն ամենը, ինչ որ պատուիրեցի ձեզ. Ես էլ ձեզ հետ կը լինիմ մինչև աշխարհի վերջանալն (Մատ. ԻԼ. 19—20):

Յիսուս Քրիստոս վճռաբար ասում է Նիկողիմոսին. Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ քեզ, թէ որ մէկն (ամեն մարդ էլ) չձնուի ջրից և Հոգուց, չէ կարող մտնել Աստուծոյ թագաւորութեան մէջ. որովհետև մարմնից ծընուածն մարմին է և Հոգուց ծնուածն հօգի է (Յով. Գ. 5—6):

Առաջին Հոգեգալստեան օրում Երուսաղէմում մկրտուեցան երեք հազար հոգի (Գործ. Բ. 41):

Մի անգամ մկրտուածը կրկին մկրտել՝ նշանակում է կրկին խաչել Քրիստոս և խայտառակել հաւատը և անպատուել Ս. Երրորդութիւնը. Մի է Տէր, մի հաւատ, մի մկրտութիւն (Եփ. Գ. 5):

Անհնար է մի անգամ մկրտուածներին, որք առին երկնաւոր պարգևին համը և մասնակից եղան Ս. Հոգուն և ճաշակեցին Աստուծոյ գեղեցիկ խօսքի ճաշակը և միւս-հանդերձեալ-աշխարհի զօրութիւնը, եթէ կործանուին՝ չեն-կարող նորից ապաշխարութեամբ նորոգուիլ (Եբր. 2. 4—6):

ՄՈԼՈՐԵՑՆԵԼ.—ծոնցնել

Անիծեալ լինի նա, որ մտօք կամ աչօք կոյրը կը մտրոցնէ ուղիղ ճանապարհից (Բ. Օր. ԻԷ. 18):

Հրէից Մանասէ թագաւորն ժողովուրդը աստուածպաշտութիւնից ծռեցուց դէպի կռապաշտութիւն. բայց սաստիկ պատժուեցաւ Աստուծոց (Գ. Թագ. ԻԱ):

Մօլորուած և սուտ մարդարէներն ծռեցնում են ժողովուրդը, որ կլանեն իւրեանց յօրոքեցրածները... Աստուած միասին պատժելու է թէ սուտ մարդարէները և

թէ ծուռածները (ծուռ խրատ ատուղները և յիմարաբարձ ծուռուղներն) (Ես. Թ. 14—21):

Այսպէս է ասում Տէրն. Այն մարգարէներն, որք մոլորեցնուում են իմ ժողովուրդը, որ խածնում են իւրեանց ատամներով և քարոզում են նմա խաղաղութիւն. և ով որ ոսկր չդրաւ նոցա բերանում, պատերազմ յարուցին նորա դէմ: Այս պատճառաւ դիշեր կը լինի ձեզ համար, որ անսիլ չտեսնէք, խաւար կը լինի ձեզ համար, որ գուշակութիւն չանէք. արեգակն կը մտնէ մարգարէներին վերայ և կը խաւարի օրն նոցա վերայ, և կամաչեն երազատեսներն և ծաղր կը լինին գուշակողներն (Միք. Գ. 5—7):

Վեր կը կենան (երևան կը գան) սուտ քրիստոսներ և սուտ մարգարէներ և կը դործեն նշաններ և հրաշքներ մոլորեցնելու համար՝ եթէ հնարաւոր կը լինի՝ մինչև անգամ և ընտիր անձերը: Բայց դուք զգուշ եղէք՝ չհաւատաք — ահա առաջուց ասացի ձեզ, ասաց Փրկիչն (Մատ. ԺԳ. 22—23):

Ասում է Յովհաննէս աւետարանիչն. Ով սիրելիներդ մի հաւատաք ամեն հոգու, այլ ընտրեցէք ձեզ խրատ խօսողները հոգիները՝ թէ Աստուծոց կը լինին, վասն զի շատ սուտ մարգարէներ-քարոզիչներ-երած են այս աշխարհն (Ա. Յով. Գ. 1):

Մ Ո Ռ Ա Ն Ա Լ

Աստուած բնաւ չէ մոռանում մեզ. Աստուծոյ անսահման շնորհքն պարտք է դնում մեր վերայ որ մենք էլ զինքը չմոռանանք:

Մեկաց չուաններն պատեցին իմ չորս կողմերով, Ով Աստուած, բայց ես չմոռացայ Գո օրէնքները (Սաղ. ձԺԼ. 61):

Թէ որ մոռանամ քեզ, ով Երուսաղէմ, թող ինձ էլ մոռանայ իմ աջ ձեռնն (Սաղ. ձԼԶ. 5):

Բայց ասաց Սիօն. Ձիւ թողեց Տէր, զիս մոռացաւ Աստուած: Միթէ կը մոռանայ կինն իւր մանուկը. կամ թէ գուլթ չունենայ իւր որովայնի ծննդեան վերայ. և եթէ կին մոռանայ էլ, սակայն ես չեմ մոռանալ քեզ, ասում է Տէր (Ես. ԽԹ. 14—15):

Միթէ կը մոռանայ հարսն իւր զարդը և կոյսն՝ իւր գեղեցիկ կամարը. բայց իմ ժողովուրդն մոռացաւ զիս անթիւ օրեր (Եր. Բ. 32):

Չէ որ երկու դանկի (փողի) է վաճառուում հինգ ձագն, որից մինն էլ մոռացուած չէ Աստուծոյ առաջ: Բայց ձեր գլխի ամբողջ մագերն անգամ համարուած է. մի վախենաք, որովհետև դուք շատ ձագերից աւելի լաւ էք (Ղուկ. ԺԲ. 6—7):

Յ Ա Ղ Թ Ե Լ

Հարկաւոր է միշտ հետևիլ Յիսուս քրիստոսին և քաջութեամբ յաղթել ամեն տեսակ մոլութեանց, մեղաց և չար կիրքերի: Մեծ յաղթութիւնը ձեռք կը բերուի մեծ համբերութեամբ և ազօթքով:

Քաջալերուեցէք, որովհետև ես յաղթեցի աշխարհիս (Յով. ԺԶ. 33):

Գրում եմ ձեզ, ով երիտասարդներ, որ դուք յաղթեցիք չարին (Ա. Յով. Բ. 13):

Գրեցի ձեզ, երիտասարդներ, որ դուք զօրացած էք և Աստուծոյ խօսքն բնակում է ձեր մէջ և դուք յաղթեցիք չարին (Ա. Յով. Բ. 14):

Մեր հաւատքն է մեր յաղթութիւնն, որ յաղթում է աշխարհիս, և ով կը լինի, որ կը յաղթէ աշխարհի, եթէ ոչ նա, որ կը հաւատայ թէ Յիսուս է Աստուծոյ Որդին (Ա. Յով. Ե. 4—5):

Ամեն բարոյական պատերազմներում առաւելապէս

յաղթում ենք Նորանով—Յիսուս Քրիստոսով—որ սիրեց մեզ (Հռ. Ը. 37):

Ով որ ականջ ունի՝ թող լսէ թէ ինչ է ասում Ս. Հոգին եկեղեցիներին.—Նա, որ յաղթում է մեզ, ազատ կը լինի երկրորդ մահից—հոգևով մեռնելուց—(Յայտ. Բ. 11):

ՅԱՄԵԼ—ուշանալ .

Մնալու է միշտ արթուն, միշտ զգաստ և միշտ պատրաստ, քանզի անյայտ է մեր մահուան օրն, ժամն և բուրակն:

Ասաց Յիսուս ժողովրդեան, Պատրաստ եղէք դուք զվասն զի Մարդոյ Որդին կը գայ մի այնպիսի ժամում, որ դուք չէիք սպասում: Բայց ով կը լինի այն հաւատարիմ և իմաստուն ծառան, որը իւր ծառաների վերայ վերապահացու դրաւ Տէրն՝ ժամանակին նոցա կերակուր տալու համար: Երանի՛ այն ծառային, որը գալով կը գտնէ Տէրն այնպէս արած: Ծշմարիտ ասում եմ ձեզ, որ իւր բոլոր ունեցածների վերայ կը կարգէ այն ծառան: Ուրեմն այն չար ծառան եթէ կասէ իւր սրտում. իմ Տէրն կուշացնէ իւր գալը. և կսկսի ձեռնել իւր ծառայակիցները և ուտել ու խմել արբեցողները հետ: Կը գայ այն ծառայի Տէրն այնպիսի մի օրում, որ չէր սպասում և այնպիսի մի ժամում, որ չգիտէր, և կը կարէ զնա միջից, և նորա բաժինը կը դնէ կեղծաւորների հետ, այն տեղ կը լինի լալն և տամների կրճատմն (Մատ. ԻԳ. 44—51):

Զգուշ եղէք, արթուն մնացէք, աղօթք արեք. որովհետեւ չգիտէք երբ կը լինի ժամանակն: Ինչպէս օտար երկեր գնացող մի մարդ կը թողու իւր տունը և իշխան նութին կը տայ իւր ծառաներին, և ամեն մէկին կը յանձնէ իւր դորձը և պատուէր կը տայ դռնապանին, որ արթուն կենայ: Ուրեմն արթուն կացէք, որովհետեւ չգի-

տէք երբ կը գայ տան տէրն, երեկոյեան՝ թէ կէս զլշերին՝ թէ որձակկանչին—լուսադէմին—և թէ առաւօտեան: Գուցէ յանկարծ գալով քնացած կը գտնէ զձեզ: Եւ ինչ որ ասում եմ ձեզ, ամենքիդ եմ ասում, արթուն կացէք (Մար. ԺԳ. 33—37):

Երկնից թագաւորութիւնն կը նմանի տան կուսանաց, որը առնելով իւրեանց լապտերները՝ դուրս եկին փեսայի և հարսին առաջն: Նոցանից հինգն յիմար էին և հինգն իմաստուն: Յիմարներն առին լապտերները, բայց իւրեանց հետ վեր չառին ձէթ: Իսկ իմաստուններն՝ իւրեանց լապտերների հետ՝ ձէթ էլ վեր առին ամաններով: Փեսային ուշանալուն պատճառաւ ամենքն էլ քնացան: Կէս զլշե-րին ձայն եղաւ. Ահա գալիս է փեսան, եկէք դիմաւորելու: Այն ժամանակ վեր կացան ամեն կուսանքն և պատրաստեցին իւրեանց լապտերները: Յիմարներն ասում են իմաստուններին. Տուէք մեզ ձեր իւղից-ձէթից-վասն զի մահաւորներին. Տուէք մեզ ձեր լապտերներն: Պատասխան տուին ահա անցնում են մեր լապտերներն: Գուցէ բաւական չլինի մեզ իմաստուններն և ասում են. Գուցէ բաւական կը գնէք էլ, ձեզ էլ. այլ գնացէք վաճառանոց-բաղար-և կը գնէք էլ, ձեզ համար: Երբ նոքա (յիմարներն) գնացին գնելու, եկն փեսան և պատրաստներն (իմաստուններն) նորա հետ մտան հարսանիքն և փակուեցաւ դուռն: Յետոյ գալիս են և միւս կուսանքն և ասում, Տէր Տէր, մեզ համար էլ բաց դուռնը: Նա պատասխան տուաւ և ասում է. Ծշմարիտը ասում եմ ձեզ, որ ձեզ չեմ ճանաչում: Արթուն կացէք, քանզի ոչ օրը գիտէք և ոչ ժամը (Մատ. ԻԵ. 1—13):

Յ Ա Ն Գ Ի Մ Ա Ն Ե Լ

Յանդիմանութիւնն աւելի կազդէ յանցաւորին վերայ, երբ ցաւակցութիւնը կը խոռոննք սիրոյ հետ և խրատը քաղաքավարութեան հետ քաղցրութեամբ առանձին և ոչ թէ կոշտութեամբ և բազմութեան մէջ:

Աբրահամ յանդիմանեց Աբրիմէլէքը ջրհորի ջրին համար, որը հանած էին Աբրիմէլէքի ծառաներն (Մնն. ԻԱ. 25):

Ես եմ ձեր Տէր Աստուածն. քո մտքիդ մէջ անզամ չատես քո եղբայրը: Յանդիմանելով յանդիմանիր քո հարեանը (Դրացին) որ նորա մեղքը չկրես (Ղևա. ԺԹ. 17):

Ո՛վ Տէր, մի յանդիմաներ զիս Քո սրտմտութեամբ և մի խրատեր զիս Քո բարկութեամբ (Սաղ. ԼԷ. 2):

Նրանելի է այն մարդն, որը խրատում է Աստուած. ուրեմն մի անարգեր Ամենակարողի յանդիմանութիւնը (Յովբ. Ե. 17):

Եթէ քեզ դէմ կը մեղանչէ քո եղբայրն, դնա՛ յանդիմանիր զինքը՝ երբ միայնակ կը լինիք դու և նա. եթէ կը լսէ քեզ, շահեցիր քո եղբայրը: Ուրեմն եթէ չսէր քեզ, մնա՛ քեզ հետ ուրիշ մի կամ երկու մարդ էլ, որովհետեւ երկու կամ երեք վկաների բերանից կը հաստատուի ամեն բան: Իսկ եթէ նոցա էլ չսէր, կասես բազմութեան մէջ. ուրեմն եթէ բազմութեան էլ չսէր, քեզ համար այնուհետեւ կը լինի նա ինչպէս մի հեթանոս (Մատ. ԺԲ. 15—17):

Յ Ա Ն Յ Ա Ն Ք

Յանցանքն առաջանում է մարդկային ստորաքարշ բնութիւնից և անհաստատ կամքից: Հնարաւոր եղածին չափ աշխատելու է լինել հաստատակամ, սովորն, համբերող և կատարեալ մարդ ամեն առաքինութիւններով ամեն պարագայում:

Ո՛վ Աստուած, դու ճանաչեցիր իմ անզգամութիւնը և Քեզանից չծածկուեցան իմ յանցանքներն (Սաղ. ԿԸ. 6):

Ասում է Դանիէլ մարգարէն Նաբուգոդոնոսոր թագաւորին. Թագաւոր, թող հաճելի թուի քեզ իմ խրատն — քաւիր քո մեղքերը ողորմութեամբ և քո անօրէնութիւնները գթով անանկաց. դուցէ երկայնամիտ կը լինի Աստուած քո յանցանաց վերայ (Դան. Գ. 24):

Եթէ ամբարիշտն կը դառնայ իւր գործած բոլոր մեղքերից և կը պահէ իմ բոլոր օրէնքները և կանէ խրատունը և արդարութիւն. նա ինքն ապրեցուց իւր անձը և չմեռնիր (Եղեկ. ԺԸ. 27—28):

Ներ աղօթքի կը կանգնէք, կը ներէք թէ որ նեղուծիւն կունենաք որևէ անձից, որովհետև ձեր Հայրն էլ որ երկնքումն է՝ կը ներէ ձեզ ձեր յանցանքները: Իսկ թէ որ չներէք դուք, ձեր Հայրն էլ՝ որ երկնքումն է, չներէր որ չներէք (Մար. ԺԱ. 26—26):

Մեր յանցանքների համար մասնուեցաւ Յիսուս և յարութիւն առաւ մեզ արդարացնելու համար (Հռ. Գ. 25):

Նղբայրներ, եթէ ձեզանից մէկն յանկարծ կը բռնուի ինչևիցէ յանցանքով, դուք՝ որ հոգևորք էք, հաստատեցէք այնպիսին հեզութեան հոգւով, զդուշացէք ձեր անհերին, որ դուք էլ չփորձուիք: Վերջէք միմեանց բեռնը և այնպէս կատարեցէք Քրիստոսի օրէնքները (Գաղ. 2. 1—2):

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԵՌԵԼՈՅ

Հին և նոր-կտակարաններով արդէն հաստատուած է մեռելոց յարութիւնն: Քրիստոսի յարութիւնն հաստատ գրաւական է հանուր Մարդկութեան յարութեանն: Բայց որովհետև յարութիւնն երկու տեսակ է, յարութիւն կենաց և յարութիւն դատուելու, այս պատճառաւ աշխատենք որ առանց դատաստանին ներկայանալու մեր առաքինութիւններով արժանանանք կենաց յարութեան:

Եղիսէ մարգարէն մտաւ Սունամացի կնոջ տունն, ահա նորա տղան մեռած և իւր անկողնու վերայ թեք

ընկած էր... Եղիսէն դուռնը փակեց, աղօթք արաւ...
Իւր բերանը դրաւ մեռած տղայի բերանին վերայ, աչքե-
րը՝ աչքերին վերայ, ձեռները՝ ձեռներին վերայ, և կըծ-
կուեցաւ մեռածի մարմնոյն վերայ, և յարութիւն առաւ
մեռած տղան (Գ. Թագ. Գ. 32—36):

Մի մեռած մարդ ձգեցին Եղիսէ մարգարէի գերեզ-
մանին մէջ, մեռած մարդն Եղիսէի սակերքներին գալածին
պէս կենդանացաւ, յարութիւն առաւ (Գ. Թագ. ԺԳ. 20):

Իմ վերայ եղաւ Տիրոջ ձեռնն, զիս հանեց Աստուծոյ
Հոգին և դրաւ մի դաշտի մէջ, և այն լեցուն էր մարդոց
սակերքներով, և զիս շրջեցուց այն սակերքների շորս կող-
մերովն, և ահա չափազանց շատ էին դաշտի երեսին այն
սակերքներն և խիստ չորացած:

Եւ ասաց ինձ Տէրն, Մարդոյ որդի. Կարո՞ղ են կեն-
դանանալ այս սակերքներն: Ասացի. Այդ դու գիտես, Տէր:
Եւ ասաց ինձ. Մարդոյ որդի, մարգարէաց այդ սակերք-
ների վերայ, և կասես դոցա. Ո՞վ չորացած սակերք, լսե-
ցէք Տիրոջ պատգամները. այսպէս է ասում Տէր Աստուած
այդ սակերքներին. ահաւասիկ ես կածեմ ձեր վերայ
կենդանի շունչ, և կը տամ ձեզ ջիւղեր, և կածեմ ձեր
վերայ մարմին, և կը ձգեմ ձեր վերայ մորթի, և կը
դնեմ ձեր մէջ իմ Հոգին և կը լինիք կենդանի և կը
ճանաչէք թէ ես եմ Տէրն:

Եւ մարգարէացայ, ինչպէս հրամայեց ինձ Տէր.
մարգարէացածիս պէս եղաւ բարձր ձայն և շարժումն, և
մտեցաւ ոսկր ոսկրին, ամեն մին իւր խաղին, և տեսայ
որ պատեցան ջիւղերով ու մտով և ձգուում էր նոցա
վերայ մորթի. և դեռ շունչ չկար նոցա մէջ: Եւ ասաց
ինձ Տէր. Մարգարէաց մարդոյ որդի, մարգարէաց շնչի
վերայ և կասես շնչին, այսպէս է ասում Տէր Աստուած.
Ե՛կ ո՞վ շունչ չորս հոգմերից և փչէ այս մեռեալների վե-
րայ և կենդանանան: Եւ մարգարէացայ, որպէս հրամայեց
ինձ Տէր, և մտաւ նոցա մէջ շունչն եւ կենդանացան եւ

կանգնեցան իւրեանց սուքերի վերայ չափազանց շատ
կանգնեցան իւրեանց սուքերի վերայ չափազանց շատ
ժողովուրդներ... այսպէս է ասում Տէր Աստուած. Ահա-
ւասիկ ես կը բանամ ձեր գերեզմանները և զձեզ կը հա-
ւանեմ ձեր գերեզմաններից, ո՞վ իմ ժողովուրդ (Եղեկ. ԼԵ.
1—14):

Բայց որ մեռեալներն յարութիւն կառնեն, Մովսէս
էլ դուշակեց Մորենու մէջ, ինչպէս ասում է Աբրահամի
Աստուծոյ մասին, Իսահակի Աստուծոյ մասին և Յակով-
բայ Աստուծոյ մասին: Ուրեմն Աստուած մեռեալների
բայ Աստուծոյ մասին: Եւ կենդանիների, փան զի ամենքն էլ Աս-
տուծով կենդանի են (Ղուկ. Ի. 37—38):

Յիսուս մտեցաւ դաղաղին (Նային քաղաքի միաօր
որդուն)... և ասաց. Պատանի դու, քեզ եմ ասում, վեր
կաց. կանգնեցաւ և նստաւ միաօր, մեռեալ պատանին
և սկսաւ խօսիլ (Ղուկ. Է. 14—15):

Յիսուս բարձր ձայնով աղաղակեց և ասաց. Ղազար,
վեր կաց և դուրս եկ: Մեռածն դուրս եկն կաղուած
սուքերով և ձեռներով (Յով. ԺԱ. 43—44):

Եւ ահա վերելից մինչև վար պատառուեցաւ Տաճարի
կողմերը, և շարժուեցաւ երկիրն, շարժուեցաւ երկիրն,
վարաղայրն, եղաւ երկու կոտոր, շարժուեցաւ գերեզմաններն, յա-
պատառուեցան քարերն, բացուեցան մարմիններ, դուրս
լուծիւն առան շատ սուրբ ննջեցելոց մարմիններ, դուրս
գալով գերեզմաններից մտան Ս. քաղաքն Երուսաղէմ
Գրիստոսի յարութիւնից յետոյ և երևեցան շատերին
(Մատ. ԻԷ. 51—53):

Եւ յետոյ կերևի Մարդոյ Որդու Նշանն (Ս. Խաչն)
երկնքում, և այն ժամանակ... կը տեսնեն Մարդոյ Որդին
եկած երկնից ամպերի վերայ և շատ փառքով: Եւ կու-
ղարկէ իւր Հրեշտակները մեծ փողով և կը ժողովեն
Նորա ընտրեալները չորս քամիներից երկնքի մէկ ծայրից
մինչև նորա միւսն ծայրն (Մատ. ԻԳ. 29—31):

Որովհետեւ մարդով եղաւ մահ, մարդով էլ եղաւ
յարութիւն մեռելոց: Ինչպէս ամենքն մեռան Ադամով,

նոյնպէս էլ ամենքն կը կենդանանան Քրիստոսով... նախ Քրիստոս, և ապա Քրիստոսեաններն Յիսուսի երկրորդ գալստեան ժամանակ (Ա. Կորն. ԺԵ. 21—23):

Կը փշուրի Գաբրիէլեան վերջին վտոյն, մի ակնթարթ թուժ յարութիւն կառնեն մեռեալներն առանց ապակա՞նութեան, եւ մենք ամենքս էլ կը նորոգուինք: Քանզի պէտք է անապականութիւն հագնէ այս ապականացու մարմինն և անմահութիւն հագնէ այս մահկանացուն (Ա. Կորն. ԺԵ. 43—57):

ՅԱԻԻՏԵՆԱԿԱՆ — ՍԶՄՆՅՆՆԱՍՏՐ

Ինչպէս յաւիտենական է Աստուած, նմանապէս յաւիտենական է Աստուծոյ թագաւորութիւնն և մարդոյ հոգին, որ պատկեր է Աստուծոյ: Աստուած նշանախօսել է իւր ստեղծած մարդը իւր համար:

Ո՛վ Տէր, Քո արդարութիւնն յաւիտենական արդարութիւն է (Սաղ. ճԺԸ. 142):

Գնաց մարդ իւր յաւիտենական տունն (երկինք) եւ հրապարակներում նորա մարմնոյ շորս կողմերով պատեցին լաց ու կոծ անողներն (Ժող. ԺԲ. 5):

Քեզ կը նշանախօսեմ ինձ իբրեւ յաւիտենական նշանած. և կը նշանեմ քեզ ինձ արդարութեամբ և իրաւունքով և ողորմութեամբ և գթութեամբ. և կը նշանախօսեմ ինձ հաւատով և կը ճանաչես Տէրը, ասում է Տէր Աստուած Ժողովրդեան (Ովս. Բ. 19—20):

Ասում է Պօղոս Ս. առաքեալն ևս. Նախանձեցուցանեմ զձեզ Աստուծոյ նախանձով, քանզի ես նշանեցի ձեզ մի մարդոյ՝ ինչպէս մի սուրբ կոյս կանգնեցնել Քրիստոսի առաջ (Բ. Կորն. ԺԱ. 2—3):

Բայց դու, ո՞վ մարդ Աստուծոյ, Տիմոթէոս, վախճիր արծաթսիրութիւնից և զնա՞ արդարութեան, աստուած-

պաշտութեան, հաւատոյ, սիրոյ, համբերութեան և հեղութեան ետեւից: Պատերազմիր և հաւատոյ բարւոք կուրը, և բուռն հար-պինդ բռնիր յաւիտենական կեանքից, որին կանչուեցար եւ դաւանեցիր բարի դաւանութիւն շատ վկաների առաջ (Ա. Զ. 11—12):

ՅԱՓՇՏԱԿԵԼ — ԵՄԻՆՆԱԿԱՆ

Յափշտակել՝ նշանակում է իւր արդար իրաւունքից զրկել ուրիշները: Խիստ ծանր է յափշտակութեան պատիժն երկնային դատարանից:

Զրկանք չանես քո հարեանին. յափշտակութիւն մի աներ. գէշեր մինչև առաւօտ քեզ մօտ չմնայ օրականով աշխատողին վարձքն (Ղևտ. ԺԹ. 13):

Յափշտակեցին որքը իւր մօր ծծից և դրաւ առին աղքատից (Յովբ. ԻԳ. 9):

Տէրն ինքնին կը դայ դատաստան աներու... աղքատներից յափշտակած յափշտակութիւնն ձեր տան մէջ է: Դուք ինչի՞ համար էք զրկում իմ Ժողովուրդը և ամօթով լցնում էք անանկաց երեմները, ասում է Զօրութեանց Տէրն (Ես. Գ. 14—15):

Նորա-Հրէից-իշխաններն նորա մէջ յափշտակելով թափում լերի պէս են. յափշտակութիւններ յափշտակելով (Եղեկ. ԻԲ. 27): են արիւն և կորցնում անձեր-մարդիկ—

Զգուշ կացէք սուտ մարդարէներիցն, որ դալիս են ձեզ մօտ ոչխարներին հագուստներով, և ներսից յափշտակող դայիկեր են: Նոցա պտուղներից կը ճանաչէք զիրենք (Մատ. Է. 15—16):

Այժմ դուք Փարիսեցիներդ մաքրում էք բաժակի և պնակի-աման-դրսի կողմերը, բայց ձեր ներքինն (սրտերն) լի է յափշտակութեամբ և չարութեամբ (Ղուկ. ԺԱ. 39):

Յ Ի Շ Ա Տ Ա Կ

Քանակազին յիշատակներ են բարի անունն և բարի գաւակներն որք միշտ կը յիշուին օրհնութեամբ:

Արդարի յիշատակն յաւիտեան կը մնայ, նա չվախե՛նալ չար համբաւից (Սաղ. ճԺԱ. 6):

Գովասանքով կը յիշուի արդարների յիշատակն. Ծրանգի պէս կանցնի (կը մարի) ամբարիշտների անունն (Առ. Ժ. 7):

Ճշմարիտ եմ ասում ձեզ, ուր էլ որ քարոզուի այս աւետարանս ամեն երկիրներում, կը խօսուի այդ կնոջ արածն զինքը յիշատակելու համար (Մատ. ԻԶ. 13):

Ո՛վ կուռնելիս... քո աղօթքն և քո ողորմութիւններն բարձրանալով յիշատակուեցան Աստուծոյ առաջ (Գործ. Ժ. 4):

Փրկիչն Սիօն վերնատան մէջ օրհնելով հացը և բաժակը՝ հաստատում է պատարագի խորհուրդը և պատուիրում է իւր Առաքելոց և աշակերտաց միշտ կրկնել նոյնը, յիշատակելու համար իւր չարչարանքը և յայն «այս կանէք զիս յիշատակելու համար» (Ա. Կորն. ԺԱ. 23—29, Դուկ. ԻԲ. 19—20):

Յ Ո Յ Ս

Գլխաւոր առաքինութիւններից մին էլ Յոյսն է, որ մեզ կապում է Աստուծոյ հետ ինչպէս անշարժ և յաւիտենական յենարանի հետ և Ասանց հաստատուն յուսոյ անհնար է միանալ Աստուծոյ հետ և ունենալ հանդիստ խիղճ:

Արհամարհեցին աղքատի խորհուրդը, քան զի Տէրն է նորա-աղքատի-յոյսն (Սաղ. ԺԳ. 6):

Դու ես, ո՞վ Տէր, որ զիս հանեցիր իմ մօր արգանք

տից. իմ յոյսն դու ես՝ իմ մօր կաթը ծծելուցս ՚ի վեր: Քեզ յանձնուեցայ մօրս արգանդից. իմ մօր որովայնից սկսեալ դու ես միայն իմ Աստուածն (Սաղ. ԻԱ. 10—11):

Որ գնաս խաղաղութեան յուսովքս ամեն ճանապարհներով չգայթագղիր քո ոտն: Վասն զի թէ որ նըսպարհներով չգայթագղիր քո ոտն: Վասն զի թէ որ քեանաս, քաղցր կը տես, աներկիւզ կը լինիս, թէ որ քեանաս, քաղցր կը քնանաս և չես վախենար ամբարիշտներից քեզ վերայ քնանաս և չես վախենար արշաւանքներից: Որովհետեւ հասած և քեզ վերայ եկած արշաւանքներից: Որովհետեւ Տէրն կը լինի քո ամեն ճանապարհների վերայ և հաստատ կը պահէ քո ոտքը, որ չգայթագղուի (Առ. Գ. 23—26):

Բայց այժմ մեզ համար մտում են հաւատ, յոյս և սէր, այս երեքս են գլխաւոր առաքինութիւններն և երկուքից աւելի մեծն է սէրն (Ա. Կորն. ԺԳ. 13):

Յ Ո Ի Ս Ա Լ

Ո՛վ Տէր, Քեզ յուսացայ, չամաչեմ յաւիտեան. Քո արգարութեամբ փրկիր և ապրեցնուր զիս (Սաղ. Հ. 1):

Յոյս մի գնէք մարդոց որդի իշխանների վերայ, որովհետեւ փրկութիւն չկայ այդ իշխաններիով (Սաղ. ձԽԵ. 3):

Քո բոլոր սրտովդ յուսան Աստուած. և մի հպարտանալ քո իմաստութեամբ (Առ. Գ. 5):

Օրհնեալ լինի այն մարդն, որ յոյսը դրաւ Աստուծոյ վերայ—որ յուսացաւ յԱստուած—(Եր. ԺԷ. 7):

Որովհետեւ մենք մեր յոյսը դրած ենք կենդանի

Աստուծոյ վերայ, Որ փրկիչն է ամեն մարդոց, մանաւանդ հաւատացելոց (Ա. Տիմ. Գ. 10):

Ն Ա Խ Ա Ն Ձ

Երկու տեսակ է, քարի նախանձն և շար նախանձն: Բարի է այն նախանձն, որով հետեւում ենք ուրիշ բարի մարդոց գործերին, մենք էլ սկսում ենք բարի գործել: օրինակ Կարապետն ամեն օր դնում է եկեղեցի և աղօթք անում: Ես էլ ամեն օր ժամ կը գնամ և կաղօթեմ: Արշակն թուղթ չէ խաղում, ողորմում է խեղճերի և կարօտներին: Ես էլ կանեմ նորա պէս ևն: Ահա այս է բարի նախանձն:

Չար է նախանձն, որ հակառակ է Աստուծոյ օրէնքներին, հակառակ է խղճի և վրասակար ընդհանրութեան: օրինակ Մարկոսն գողութիւն է անում, առևտրի մէջ խաբում է մարդիկ, կտրում է աղքատ մշակների վարձքն, ևն: Ես էլ գողութիւն անեմ, կտրեմ մշակների վարձքերը, ևն: Ահա այս է չար նախանձն. որը նախնիք Գրած են մահացու մեղաց շարքում ասելով. «Նախանձու ևւ մասամբը նորին»:

Բ Ա Ր Ի Ն Ա Խ Ա Ն Ձ

Տէրն ասում է Մովսէսին. Ահարոնի թռռն Փենե՛լէան ցածացուց իմ բարկութիւնը Իսրայէլի որդիքներին, վասն զի նա նոցա մէջ ունեցաւ ինձ համար քարի նախանձ. ես էլ իմ նախանձովս չջնջեցի Իսրայէլի որդիները (Թիւք. Ին. 10—11):

Քորէք սարի վերայ հարցանում է Տէրն. Եղի՛ս, այս տեղ ի՞նչ գործ ունիս դու: Պատասխանում է Եղիա մարգարէն. Կրակով վառուածի պէս վառուեցայ Տէր Աստուծոյ ս. նախանձով, որովհետեւ Իսրայէլի որդիներն թողին

դեզ, կործանեցին քո սեղանները, սրով կոտորեցին քո մարգարէները, մենակ ես եմ մնացել, հետամուտ են զիս էլ սպանել (Գ. Թագ. ԺԸ—ԺԹ):

Ո՛վ Տէր, կրակի պէս կը բորբոքի Գո նախանձն (Սաղ. ՀԸ. 5):

Ո՛վ Տէր, Գո Ս. նախանձն մաշեց զիս (Սաղ. ձԺԸ. 130):

Նախանձեցնում եմ զձեզ Աստուծոյ նախանձով, որովհետեւ ձեզ նշանախօսել եմ մի մարդոյ ինչպէս մի սուրբ (Բ. Կորն. ԺԱ. 2):

Կոյս Քրիստոսի գիմաց կանգնեցնելու (Բ. Կորն. ԺԱ. 2): Ամեն ժամանակ նախանձաւոր եղէք բարի գործերի (Դագ. Գ. 18):

Չ Ա Ր Ն Ա Խ Ա Ն Ձ

Արգելուած է ամեն քրիստոնէի համար:

Մի նախանձիր չար մարդոց վերայ. և ոչ նախանձիր նոցա վերայ, որք գործում են անօրէնութիւն: Չարերն չուտով կը սատկին, բայց Աստուծոյ համբերողներն կը ժառանգեն երկիրը (Սաղ. ԼԶ. 1 և 9):

Որտեղ որ կան կռիւ և շար նախանձ, այն տեղ է անկարգութիւն և ամեն չար բաներ (Յակ. Գ. 16):

Չեղանից հետու ձգեցէք այսուհետեւ ամեն տեսակ չարութիւն և ամեն տեսակ նենգութիւն և կեղծաւորութիւն և նախանձ և ամեն տեսակ չարախօսութիւն (Ա. Պետ. Բ. 1):

Ն Ե Ղ Ե Լ

Մէկգմէկ նեղելու չենք:

Ասում է Տէրն. Պանդուխտը չնեղես (Եբք. ԻԳ. 9):

Չնեղէ մարդ իւր ընկերը (Ղևա. ԻԵ. 14):

Ամեն ոք նեղելով նեղում է իւր ընկերը (Միք. Է. 2):

Հրէաներն խորհուրդ արին, որ նենդութեամբ բռնեն Յիսուսը և սպանեն (Մատ. 12. 4):

Ով որ կամենում է սիրել իւր կեանքը և տեսնել իւր օրերը բարութեան մէջ, պէտք է լռեցնէ իւր լեզուն չարութիւնից և իւր շրթունքները՝ նենդութիւն խօսելուց (Ա. Պետ. Գ. 10):

Ն Ե Ր Ե Լ

Մարդկային սխալական բնութիւնն պահանջում է ներողամտութիւն. որի պատճառաւ էլ ասաց Փրկիչն Պետրոսին. 490 (չորս հարիւր ինսուսն) անգամ ներելու ես յանցանք գործողին: Բայց անհաշիւ և անսահման է Աստուծոյ ներողութիւնն:

Ասում է Մովսէս Աստուծոյ. Տէր աղաչում եմ, քո մեծ ողորմութեանդ համեմատ ներիր այս (Իսրայէլացւոց) ժողովրդեան անօրէնութիւնը, ինչպէս որ ներեցիր Տէր ժողովրդեան եզիպտոսից մինչև այս տեղ: Եւ ասաց Մովսէսին. Ներում եմ քո խօսքիդ համաձայն (Թիւք. 19—20):

Նոյ տապան կազմելու շինելու ժամանակ հարկը տարի տեւեց (հարիւր տարում վերջացաւ շինութիւնն). Աստուծոյ երկայնամտութիւնն ներում էր ապտամբներին (այգքան միջոց) (Ա. Պետ. Գ. 20):

Ով մարդ, այժմ դու խորհում ես այս, որ դատում ես այն մարդիկը՝ որ գործում են այնպիսի գործեր՝ միևնոյն գործերը գործում ես և դու: Միթէ դու ապրելով ես Աստուծոյ այն դատաստանից: Եթէ կարհամարհես Աստուծոյ այնչափ քաղցրութիւնը, ներողութիւնը և երկայնամտութիւնը, չգիտես որ Աստուծոյ քաղցրութիւնն զէտի ապաշխարութիւն կը բերէ դքեղ (Հո. Բ. 3—4):

Գուք էլ, ով ծառաների և աղախինների տէրեր, նոյնը կանէք նոցա (բարութիւն կանէք) ներելով անէք պատու-

հասնեք ձեր ծառաներին եւ աղախիններին. իմացած լինիք որ երկնքումն է նոցա և ձեր Տէրն, Որի առաջ չկայ ակնառութիւն-խաթր պահել (Եփես. 2. 9):

Ով Քրիստոնեաներ, դուք ինչպէս Աստուծոյ ընտրեալներ և սիրեցեալ սուրբեր այսուհետև հագէք ունեցէք զուրկութիւն, խոնարհութիւն, խոնարհութիւն, հեղուկութիւն, ողորմութիւն, քաղցրութիւն, շնորհել իրերաց զուրկութիւն, համբերութիւն, ներել միմեանց, շնորհել իրերաց. եթէ մէկն կունենայ որեիցէ արտունջ մէկի մասին. ինչպէս Հայր Աստուած Քրիստոսով ներեց ձեզ, նոյնպէս դուք էլ ներեցէք միմեանց (Կող. Գ. 12—13):

Ն Ե Ր Ք Ի Ն Ի

Այն ներքինին որ իւր ձեռքով չգործեց անօրէնութիւն և Տիրոջ մասին չխորհեց չարութիւն, կըստանայ ընտիր շնորհք իւր հաւատքի համեմատ (Իմաս. Գ. 14):

Թող չասէ ներքինին թէ. ես մի չոր վայտ եմ: Այսպէս է ասում Տէրն այն ներքիններին, որք կը պահեն իմ պատուիրանները և կընարեն ինձ հաճոյ եղածը, հաստատ կը մնան իմ ուխտի վերայ իմ տան մէջ և իմ պատուիրանների հովանու ներքեւ, ես կը տամ նոցա յաւիտեանակաւ անուն, որ չջնջուի (Ես. ԾԶ. 3—5):

Եթովպացի Ադրամեկէք բարեպաշտ ներքինին Յուդայի Սեդեկիա թագաւորին հասկացնելով իշխանների չարութիւնը՝ գրեցն հանել է տալիս Երեմիա մարգարէն (Եր. 1Բ. 1—13):

Յիսուս պատախանելով իւր աշակերտաց ասում է. Կան ներքիններ, որք արդէն ներքինի ծնան իւրեանց մօր արգանդից, կան ներքիններ էլ, որք երկնից թագաւոր ներքինի. բայց կան ներքիններ ևս, որք երկնից անձերը, ով որ բութեան համար ներքինի արին իւրեանց անձերը, ով որ կարող է տանել, թող տանի (Մատ. ԺԹ. 12):

Ինչի նման է Աստուծոյ թագաւորութիւնն:

Երկնից թագաւորութիւնն նման է մանանեխի հատին որը առնելով մարդ սերմեց իւր ագարակում, որ աւելի փոքրագոյն է բոլոր սերմերից, և երբ կը մեծանայ, մեծ է բոլոր բանջարներից աւելի և լինում է ծառ, մինչև անգամ գալիս են երկնքի թռչուններն և հանգստանում նորա ճղների վերայ:

Երկնքի թագաւորութիւնն նման է խմորի (թխումոր) որ առնելով կնիկ (կին) ծածկեց (դրաւ) երեք չափ ալիւրի մէջ՝ մինչև ամենն խմորուեցաւ:

Երկնից թագաւորութիւնն նման է ագարակում ծածկուած գանձի, որը դառաւ մարդ. և ծածկեց, և սաստիկ ուրախութիւնից դնաց և ծախեց իւր բոլոր ունեցածը և գնեց նոյն ագարակը:

Երկնից թագաւորութիւնն նման է վաճառական մարդի որ կորսնէ (մանէ գալիս) գեղեցիկ մարգարիտներ: Եւ գտնելով մի պատուական մարգարիտ՝ դնաց և ծախեց իւր ամբողջ գոյքը և գնեց այն մարգարիտը:

Երկնից թագաւորութիւնն նման է ծովն ձողուած ոռականի (ձկան թոր), (որի մէջ ժողովուում են ծովային ամեն տեսակ կենդանիներից), որ երբ լցաւ, հանելով ցամաքն և նստելով հաւաքեցին լաւերը և պէտքաւորները ամանների մէջ, և անպէտքները հեռի նետեցին: Այնպէս կը լինի աշխարհիս վերջացած ժամանակ: Հրեշտակներն արդարոց միջից կը զատեն չարերը (մեղաւորները) եւ զբռնուցին կրակի մէջ կը ձգեն չարերը, այն տեղ կը լինի լայն եւ ատամանց կրճտելն (Մատ. ԺԳ. 31—50):

Եթէ աւենակարևոր է նորոգութիւնն ամեն նիւթական շէքերի և իրերի համար, որչափ ևս աւելի ամենակարևոր է մեր հոգիների համար: Հօր Աստուծոյ հաճութեամբ նորոգեցին մարդկութեան հոգիները Յիսուս Գրիստոս և Հոգին Ս. Աստուած: Ամեն մի քրիստոնէս պարտական է նորոգել իւր հոգին աղօթքով, զղջմամբ, տոնեաց պարտական է նորոգել իւր հոգին աղօթքով, զղջմամբ, ապաշխարութեամբ և հաղորդելով ֆրիչի սրբաբար մարմնոյ և արեան:

Ո՛վ Աստուած, հաստատիր իմ մէջ սուրբ սիրտ և նորոգիր իմ փորի մէջ ուղիղ հոգի (Սաղ. Ծ. 12):
Ո՛վ Աստուած, ուղարկում ես հոգին և ստանում զմարտիրիկ և նորոգում երկրի երեսը (Սաղ. ձԳ. 30):

Մի է Աստուծոյ Որդին, ամեն բանի էլ կարող. ինքնագոյ է և նորոգում է ամենը... և պատրաստում է Աստուծոյ բարեկամներ և մարգարէներ (Իմաստ. է. 27):

Քաջալերուիր Սիօն-ժողովուրդ Աստուծոյ-թող չթուլանան քո ձեռքերն: Քո մէջ է զօրաւոր Աստուածն. քեզ էլ կը փրկէ, քեզ էլ կը նորոգէ իւր սիրով (Սով. Գ. 17):

Ասում է Տէր, եւ կը ցանեմ ձեր վրայ սուրբ ջուր, և կը մաքրուիք ձեր բոլոր պղծութիւններից, և զձեզ կը սրբացնեմ ձեր բոլոր կուռքերից, և կը հանեմ ձեր մարմիններից մէջ կը նորոգեմ նոր հոգի, և կը հանեմ ձեր մարմնեղէն սիրտ, և կը քարեղէն սիրտը և կը տամ ձեզ մարմնեղէն սիրտ, ձեզ էլ կը տամ իմ Հոգին (Եղեկ. ԼԳ. 25—26):

Հանեցէք ձեր վրայից ձեր առաջին վարուց համեմատ հին մարդը, որ ապականուած էր խաբեբայ ցանկութիւններով: Նորոգուեցէք ձեր մտաց հոգւով և հագէք նոր մարդը, որ Աստուծոյ պատկերին համեմատ հաստատուած է ճշմարիտ արդարութեամբ և սրբութեամբ: Այս պատճառով և ճշմարիտ արդարութեամբ ամեն մէկդ ձեր աւա ձեզանից հեռացրէք

ընկերների հետ խօսեցէք ճշմարտութիւնը, որովհետեւ ան-
զամներ ենք միմեանց (Եփես. Գ. 22 — 25):

Տէրն բարութեամբ լցնում է ընդ ձեր սիրտը և արծույ
պէս նորոգում է ընդ մանկութիւնը (Մաղ. ճԻ. 5):

Բայց երբ յայտնուեցաւ մեր Փրկիչ Աստուծոյ քաղց-
րութիւնն և մարդասիրութիւնն, չէ թէ մեր արդար գոր-
ծերից՝ որք մենք արինք, այլ իւր ողորմութեան համեմատ
ապրեցուց զմեզ աւագանին միջոցաւ կրկին ծնանելով և
Ս. Հոգւոյն նորոգութեամբ, որք թափեց մեր վերայ առա-
տութեամբ մեր Փրկիչ Յիսուս Քրիստոսի ձեռնով, որ ձրի
չնորհչներով արդարանալով լինինք յուսով ժառանգող յա-
ւիտենական կեանքը (Տիտ. Գ. 4—7):

Շ Ա Հ Ե Լ

Աստուած պարգևած է մեզ ժամանակը օգուտ քաղելու համար:
Մեր կեանքն շահուէտ կը լինի, եթէ մեր հոգու հետ ես շահենք
և մեզ նման մարդոց հոգիները. եթէ Աստուծոյ մեզ պարգևած նիւ-
թական բարիքները գործադրենք բարոյական բարիքներ անեցնե-
լու, և եթէ նիւթական անսեսագիտութեան հետ միասին իմա-
նանք և բարոյական անսեսագիտութեան յարգը:

Ի՞նչ կօդտուի մարդ՝ եթէ որ բոլոր աշխարհ շահի և
իւր անձը տուժէ (կորցնէ) կամ ինչ կը տայ մարդ իւր
անձի փրկանքը (Մատ. ԺԳ. 26):

Ասաց Փրկիչն. Մի հարուստ մարդ օտար երկիր գնա-
լիս կանչեց իւր ծառաները և տուաւ նոցա իւր ունեցածը.
մէկին տուաւ հինգ քանդար¹⁾ մէկին տուաւ երկու քան-
դար և երրորդին տուաւ մի քանդար, իւրաքանչիւրին իւր
կարողութեան համեմատ, և գնաց... Ծառ ժամանակից
յետոյ գալիս է այն ծառաների տէրն. և հաշիւ պահան-

¹⁾ Քրիստոսի ժամանակ Հրէից ոսկին և արծաթը կշռով քա-
շում էին: Քանդարն ըստ ոմանց արժէ 4,583 ֆրանկ և 33 սանթիմ:

ջում նոցանից: Մօտենալով հինգ քանդար առնողն՝ ներ-
կայացուց ուրիշ հինգ քանդար էլ և ասաց. Տէր. ինձ
տուիր հինգ քանդար, այժմ ահա առնիկ ուրիշ հինգ քան-
դար էլ, որ շահեցայ նոցա վերայ: Ասաց նորան իւր Տէրն.
Ապրիս, բարի և հաւատարիմ ծառայ. որովհետեւ հաւատա-
րիմ ես այդ քիչ գումարի մէջ, շատերի վերայ կը կարգեմ
զքեզ, մտիր քո տիրջ ուրախութիւնն: Մօտենալով և եր-
կու քանդար առնողն՝ ասում է. Տէր, ինձ տուիր երկու
քանդար, ահա առնիկ ուրիշ երկու քանդար էլ, որք շահեցայ
նոցա վերայ: Ասում է նմա իւր տէրն. Ապրիս, բարի և
հաւատարիմ ծառայ, որովհետեւ հաւատարիմ ես այդ
քիչ գումարի մէջ, շատերի վերայ կը կարգեմ զքեզ, մտիր
քո տիրջ ուրախութիւնն: Մօտեցաւ մի քանդար առնողն
էլ և ասում է. Տէր, գիտէի որ դու մի խիտ մարդ ես,
հնձում ես չսերմած տեղիցդ, և հաւաքում ես չցանած
տեղիցդ, վախեցայ, գնացի և թագուցի քանդարը երկրի
մէջ, այժմ ահա առնիկ առ քո քանդարը քեզ: Պատասխան
տուաւ տէրն և ասաց նմա. Չար և վատ ծառայ, գիտէիր
թէ հնձում եմ չսերմած տեղից և հաւաքում չցանած տե-
ղից, պարտաւոր էիր իմ արծաթը ձգել սեղանաւորներին
(սառավոներին) և ես գալով կը պահանջէի իմ արծաթը
նմա, որ ունի տասը քանդար: Որովհետեւ ունեցողին կը
տրուի և կաւելանայ և չունեցողին ունեցածն էլ կառնուի
նորանից: Այդ անպիտան ծառան հանեցէք դրսի խաւարն,
այնտեղ կը լինի լալն և ատամանց կրճտելն (Մատ. ԻԵ.
14—30):

Թէև ազատ էի ես, բայց իմ անձը ծառայ արի ա-
մենին, որ շահեմ շատերը. Հրէաների հետ հրէի պէս եղայ,
որ շահեմ Հրէաները... (Ա. Կորն. Թ. 19—22):

ՇԱԽԻՂ.— ուղի եւ հարթուած ճանապարհ

Այս կեանքում աղամորդու առաջ կան շատ փշալի ճանապարհներ որ դմեղ տանում են դէպի կորուստն: Միակ անխտանդ ճանապարհն է Քրիստոսի կեանքի հետեւին, Որ ասաց «Ե՛կ իմ ետեւից» և թէ «Ես եմ ճանապարհ, ճշմարտութիւն և կեանք»: Ուրեմն հետեւեալ Յիսուս Քրիստոսի երկրաւոր վարուց և բարուց ճանապարհին, որից անցաւ ես:

Առաջնորդէր ինձ Ո՛վ Տէր, որ գնամ քո ուղիդ ճանապարհով (Սաղ. ԻԶ. 11):

Ո՛վ Աստուած, զիս գայթակղեցնելու համար՝ իմ ճանապարհների չորս կողմերում սարքեցին (լարեցին) ինձ համար որոգայթներ (Սաղ. ՃԼԹ. 6):

Աստուծոյ ճանապարհներն բարեաց ճանապարհներ են և Նորա շաւիղներն խաղաղութեամբ են (Առ. Գ. 17):

Աստուած առաջնորդեց արդարին ուղիդ շաւղով (Իմ. Ժ. 10):

Անապատում կայ բարբառի ձայն, որ ասում է. Պատաստեցէք Տիրոջ ճանապարհը և ուղղեցէք Նորա շաւիղները... դժուարիւններն հեշտ կը լինին և անկոխ տեղերն հարթուած ճանապարհ կը լինին և ամեն մարմին կը տեսնէ Աստուծոյ փրկութիւնը (Ղուկ. Գ. 4—6):

Եղբայրներ, հաստատեցէք թուլացած ձեռները և կրծկուած ծունկները, ուղղեցէք ձեր ոտքերի ճանապարհները, որ չլինի թէ գլորուի կաղ եղողն, այլ մանաւանդ բժշկուի (Եբբ. ԺԲ. 12—13):

ՇՆԱԼ ԿՍՄ ՇՆԱՆԱԼ

Մովսէսի օրէնքով սպանում էին շնութիւն-պոռնկութիւն-անող մարդը և կինը: Շնութիւնն ոչ միայն փրասակար է որդեծնութեան, այլ և հակառակ է Աստուծոյ կամաց և անպատուարի բարոյա-

կանութեան: Մեր մարմիններն տաճար են Աստուծոյ. ուրեմն պոռնիկներն և շնացողներն ապականում են Աստուածութեան սուրբ տաճարը:

Շնութիւն-պոռնկութիւն-չանես, դողութիւն չանես (Եբբ. Ի. 13):

Որեւէ մարդ, որ շնութիւն անէ, շնութիւն անող մարդն էլ կըսպանուի, կինն էլ (Ղևտ. Ի. 10. Բ. Օր. ԻԲ. 22):

Շնութիւն անողներին որդիներն թերակատար կը լինին և ապօրէն անկողինների դաւակններն կը սատկին, թէ որ երկար կեանք էլ ունենան, ոչ ինչ կը համարուին և վախճանած ժամանակ էլ անարգուում է նոցա ծերութիւնն (Իմ. Գ. 16—17):

Փրկիչն ասում է լսողներին. Լսած էք որ ասացաւ, Շնութիւն մի անէք, բայց ես ասում եմ ձեզ թէ ամեն մարդ՝ որ նայում է կնոջ վերայ՝ նորա ցանկանալու մտօք՝ արդէն իւր սրտի մէջ շնութիւն գործեց նորա հետ ¹⁾ արդէն իւր սրտի մէջ շնութիւն գայթակղեցնում է քեզ, հանիւր Այժմ թէ որ քո աջ աչքդ գայթակղեցնում է քեզ, համար լաւ նոյն աչքը և ձգիւր քեզանից. որովհետեւ քեզ համար լաւ է որ կորչի քո անդամներից մին և ամեն մարմինդ չընկնի քեզ հետ (Մատ. Ե. 27—29):

Լսած էք... թէ որ մէկն կարձակէ իւր կինը, կը տայ նոյն կնոջ արձակման թուղթ (ապահարազանի թուղթ)՝ Բայց ես ասում եմ ձեզ. Ով որ կարձակէ իւր կինը առանց պոռնկութեան պատճառի, նա պատճառ է արձակուած կինը՝ կնոջ շնութեան. և ով որ առնում է արձակուած կինը՝ շնանում է (Մատ. Ե. 31—32):

Ամեն մարդ, ով որ կարձակէ իւր կինը՝ և ոչ պոռնկութեան համար, և կառնէ ուրիշը, շնանում է. և ով որ առնում է արձակուած կինը, շնանում է (Մատ. ԺԹ. 9):

¹⁾ Նոյն յանցանքը կարող են գործել և կանայք:

ճնութիւն է կոչուում և կոսպաշտութիւնն: Որովհետեւ ճշմարիտ աստուածապաշտներն և Քրիստոսնայ մկրտուած ժողովուրդներն նշանուած են և պսակուած Քրիստոսի հետ, ինչպէս տեսանք: Այս պատճառաւ երբ մարդիկ թողնում են ճշմարիտ Աստուածը և պաշտում կուսքեր, պաշտում իւրեանց ատելի մոլութիւններ և անառակ կիրքեր, Աստուած այդ էլ է համարում անհաւատարմութիւն և շնութիւն ընդդէմ ամուսնութեանն Քրիստոսի:

Եւ ասում է ինձ Տէր Յովսիա թագաւորի օրերում, Տեսնո՞ր ինչ դործեց Իսրայէլի բնակիչն, գնաց առանձին բոլոր բարձր սարերի վերայ և պոռնկեցաւ այն տեղ ամեն անտառախիտ ծառերի տակ: Եւ նորա այնչափ պոռնկութիւնից յետոյ՝ ասացի. Ինձ դարձիր. և չդարձաւ. և տեսաւ նորա անառակութիւնը ուխտագրութ (ուխտագրանց) Յուդան. և տեսայ թէ ամեն բանի մէջ, որովք շնացաւ Իսրայէլի բնակիչն, բռնուեցաւ, արձակեցի գնա և տուի նորա ձեռքն ապահարազանի արձակման թուղթ, և չգարհուրեցաւ նորա քոյր ուխտագրութ Յուդան, այլ գնաց նա էլ պոռնկեցաւ: Նա էլ իւր շնութեամբ պղծեց երկիրը, որովհետեւ շնութիւն էր անում քարի և փայտի հետ¹⁾... Դարձէք դէպի ինձ, հեռացած որդիք... Դարձէք և ես կը բժշկեմ ձեր վէրքերը (Եր. Գ):

Նոքա ամենքն էլ շնացողներ են (Ովսէ. Է. 4): Ասում է Եղեկիէլ մարգարէն. Ասաց ինձ Տէր. Մարդոյ որդի. միթէ դու դատելու ես Ողայն և Ողբայն, ապա պատմիր նոցա իւրեանց շնութիւնները, որ շնացանց արին էլ կայ նոցա ձեռների մէջ. շնանում էին իւրեանց կուսքերով և իւրեանց որդիքը, որ ծնան ինձ համար, ի սէր կոսց այրում էին կրակով (Եղեկ. ԻԳ. 36—37):

¹⁾ Այսինքն Յուդայի ժողովուրդն էլ հետեւելով Իսրայէլի ժողովուրդն սկսաւ պաշտել քարից և փայտից շինուած կուռքերը:

Շ Ն Ո Ր Հ Ք

Ճնորհքն և ճշմարտութիւնն մեզ շնորհուեցան Յիսուս Քրիստոսի ձեռնով:

Նոյ շնորհք գտաւ Աստուծոյ առաջ (Ծնն. Զ. 8):
 Ճնորհք կը տամ իմ ժողովրդեան (Եւր. Գ. 21):
 Մեր Տէր Աստուածն սիրում է ողորմութիւն և ճշմարտութիւն և տալիս է շնորհք և փառք (Սաղ. ԶԳ. 12):
 Արդար մարդոց շրթուներն կը բղկեն շնորհք (Առ. Ժ. 32):
 Մի վախենար, Մարիամ, շնորհք գտար Ասածուց (Ղուկ. Ա. 31):

Թէ որ դուք սիրում էք ձեզ սիրողները, լաւութեան ինչ շնորհք ունիք դուք, որովհետեւ մեղաւորներն էլ են սիրում զիրենք սիրողները: Թէ որ բարիք էք անում ձեզ բարերարութիւն անողներին, ինչ լաւութիւն (շնորհք) արած էք դուք, վասն զի նոյնը գործում են և մեղաւորներն: Եւ թէ փոխ էք տալիս այն մարդոց, յորոց յոյս ունիք առնուլ ձեր տուած փողը, ինչ շնորհք ունիք դուք քանզի մեղաւորներն էլ փոխ են տալիս մեղաւորներին, որ ստանան իւրեանց տուածի արէք ձեզ ատող սիրեցէք ձեր թշնամիները, բարիք էլ արէք ձեզ չունիք ներին եւ փոխ տուէք այն անձանց, յորոց յոյս չունիք բարձառնել եւ շատ կը լինին ձեր վարձքն եւ կը լինիք բարձրեալի որդիք. վասն զի նա քաղցր է չարերի եւ ապեւ լախտների վերայ: Գթած եղէք, ինչպէս գթած է ձեր ևրկնաւոր Հայրն (Ղուկ. Զ. 32—36):

Ուր որ աւելացան մեղքերն, այնտեղ ևս աւելի շատացան շնորհքն: Որովհետեւ ինչպէս թագաւորեցին մեղքն այն տեղ մահով, նոյնպէս եւ արդարութեամբ կը թագաւորեն շնորհքն մեր Տէր Յիսուս Քրիստոսի ձեռնով յաւիտենական կեանքում (Հռ. Ե. 20—21):

Որի—նոյն է հոգի

Ասաց Տէրն. իմ ոգին միշտ չմնայ մարդոյ վերայ՝
վասն զի մարդն մարմին է (Ծնն. 2. 3) բոլորովին մար-
մին դարձած է:

Եղիայի ոգին հանդէպ (Իշաւ) Եղիսէի վերայ (Գ.
Թագ. Բ. 15):

Ասում է Դաւիթ Աստուծոյ, ես ուր դնամ քո սուրբ
Հոգու ձեռնից կամ քո երեսից ես ուր կը վախճեմ: Թէ
որ բարձրանամ երկինք, Դու այն տեղ ես. թէ իջանեմ
գետն, եւ այն տեղ մօտ ես (Սաղ. ԾԼԸ. 7—8):

Բայց արդարոց ոգիներն Աստուծոյ ձեռքումն են եւ
չմօտենալ նոցա հոգեւոր մասն (Իմ. Գ. 1):

Փրկիչն յարութիւն առնելուց յետոյ ասաց իւր աշա-
կերաներին, Տեսէք իմ ձեռները եւ ոտները, որովհետեւ ես
նոյն եմ, շոշափեցէք զիս եւ տեսէք, քանզի Ոգին չունի
մարմին եւ ոսկր, ինչպէս տեսնում էք զիս, որ ունիմ (Ղուկ.
ԻԳ. 39):

Ջրհեղեղից ապրեցան ութ ոգու չափ (Ա. Պետ. Գ. 20):

Ո ի — Ոխակալութիւն

Մեղաց շարքում համարուած է ոխն եւ քէնն եւ արդելուած է սուրբ
Գրքից, վասն զի յխակալութիւնից է ծնում ըարկութիւնն, չար
նախանձն, մարդասպանութիւնն, եւ այլն:

Աբէլ սպանուեցաւ իւր եղբայր Կայենից:
Թող վրէժ չնդրէ քո ձեռնն, եւ քո ժողովրդեան

որդւոց հետ ոխ չունենաս Ղևտ. ԺԹ. 18):
Մէկն բնաւ ոխ չպահէ իւր սրտում իւր եղբոր հա-
մար (Գէմ) (Չաք. Է. 10):

Ով որ ոխ է պահում, անօրէն է (Առ. ԻԱ. 24):

Հերովդիայի յխակալութեան զոհ եղաւ Յովհաննէս
Մկրտիչն (Մար. 2. 19):

Սեղանի վրայ քո պատարագը մատուցանելու ժամա-
նակ մտաբերես՝ թէ որ քո եղբայրն խէթ ունի քո մասին.
Թող քո պատարագը սեղանի առաջ, գնահ նախ հաշտուիր
քո եղբոր հետ եւ յետոյ գալով կը մատուցանես քո պա-
տարագը (Մատ. Ե. 23—24):

ՈՂԲԱԼ—լալ ողբ ասելով

Լալ մեղաց եւ յանցանքների համար եւ սգալ:

Ողբում էր ամեն ժողովուրդն (Ա. Եղր. Ա. 32):

Ողբացէք, որովհետեւ մօտ է տիրոջ օրն (Ես. ԺԳ. 6):

Ողբանքաց եղիր-դէպի ինձ-ասում է Տէր-նով ժողո-
վուրդ, ինչպէս ողբում է քուրձ հագած հարսն իւր փե-
սայի վերայ: Վերցուեցան Աստուծոյ տանից զոհերն. սուգ
առէք ով քահանայք, սեղանի պաշտօնեայք, քանզի թշուա-
ռացան դաշտերն. սուգ կառնէ երկիրն, քանզի ոչնչացաւ
ցորենն, ցամաքեցաւ գիւնին, նուազեց ձէթն: Ողբացէք ով
մշակներ... (Յովել. Ա. 8—11):

Արդ այսուհետեւ, ով մեծատուններ, լացէք եւ ողբա-
ցէք այն թշուառութեանց վերայ, որ դալու են ձեր վե-
րայ: Որովհետեւ ոչինչ է ձեր այդ մեծութիւնն, եւ ձեր
հագուստներն կերակուր են ցեցերի: Ձեր արծաթն եւ
նոսրիս ժանգաճար են եւ նոցա կուտեն ձեր մարմինները:
Ինի ձեզ համար եւ կրակի պէս կուտեն ձեր վարձերն,
Գանձեցէք վերջին օրերի համար: Ահաւասիկ վարձերն,
ձեզ մօտ են ձեր անդերը գործող մշակների զրկուածն, եւ Չօ-
աղազակում է դէպի Աստուած ձեզանից զրկուածն, եւ Չօ-
լութեանց Տիրոջ ականջն հասաւ հնձօղների բողոքն (Յակ.
Ե. 1—4):

Ո Ղ Ո Ր Մ Ա Ծ

Անսահման է Աստուծոյ գթութիւնն, ողորմութիւնն, մարդասիրութիւնն, ներողամտութիւնն և համբերութիւնն:

Մեր Տէր Աստուածն գթած եւ ողորմած, երկայնամիտ եւ բազումօղորմ (ողորմութիւնն շատ) և ճշմարիտ է: Որ պահում է արդարութիւն եւ անում է ողորմութիւն մինչեւ հազար ազգ-հազար պարտ, — վերցնում է անօրէնութիւնները, անիրաւութիւնները և մեղքերը. բայց անպարտ չէ թողում պարտաւորները (Եւր. 1. Գ. 6—7):

Տէրն գթած, ողորմած, շատ համբերող եւ բազումօղորմ է (Սաղ. ձԲ. 8):

Ո՛վ Տէր... որովհետև դիտէի թէ ողորմած ես դու և գթած, երկայնամիտ և բազումօղորմ և կը զլճանաս չարեաց վերայ (այսինքն այն պատիժը, որով պատժելու էիր Նինուէացիները, չտուիր նոցա, քանզի երբ նոքա զլճացան իւրեանց մեղքերից, դու էլ, ո՛վ Աստուած, զլճչացար Բո խոտացած պատժի վերայ (այլ ևս չպատժեցիր) (Յովնան. Գ. 2—3):

Բազմազույթ է Տէրն և ողորմած (Յակ. Ե. 11):

Ո Ղ Ո Ր Մ Ո Ի Թ Ի Ի Ն

Ողորմածութիւնն բարձրացնում է զմարդ աստուածանմանութեան և փրկում մեղաւորը յանցանքներից:

Արդարն ողորմում է իւր անասուններին (Առ. ԺԲ. 10):
Երանելի է նա, որ ողորմում է աղքատին (Առ. ԺԲ. 21):
Աստուծոյ փոխ է ապիս նա, որ ողորմում է տնանկիւն (Առ. ԺԹ. 17):

Ողորմեցէք ինձ, ողորմեցէք ինձ, ո՛վ իմ բարեկամներ (Յովբ. ԺԹ. 21):

Ասում է Գանիէլ մարգարէն. Ո՛վ թագաւոր, իմ խըրատն թող քեզ հաճելի թուի, քո մեղքերը կը քաւես ողորմութիւն ապրով և քո անօրէնութիւնները՝ տնանկնեւրին գթալով (Գան. Գ. 24):

Ասում է Աստուած. Ողորմութիւն եմ կամենում և ո՛չ դո՛հ (Ովս. 2. 6):

Երանի ողորմածներին, զի նոքա ողորմութիւն կը գանեն (Մատ. Ե. 7):

Զգո՛ւշ եղէք, մարդոց առաջ մի անէք ձեր ողորմութիւնը՝ նոցա ցոյց տալու համար. դուցէ վարձք չընդունէք ձեր Հօրից, Որ երկնքումն է: Բայց երբ ողորմութիւն կը տաս, փող մի փչեր քո առաջ, ինչպէս անում են կեղծաւորներն ժողովարաններում և հրապարակներում, որպէս զի փառաւորուն մարգիկներից. ճշմարիտ ասում եմ ձեզ, իսկապէս այն են նոցա վարձքն: Բայց դու երբ ողորմութիւն կը տաս, թող չիմանայ քո ձախ ձեռնն՝ ինչ է դորձում քո աջ ձեռնն: Որպէս զի ծածուկ լինի քո ողորմութիւնն. և քո Հայրն՝ որ տեսնում է ծածուկ, կը հատուցանէ յայտնապէս (Մատ. 2. 1—4):

Ո Ր Գ Ե Ա Կ

Աւեր Գիրքն սովորութիւն ունի որդեակ անուանել գերդաստանի փոքրները առանց ջոկիւրջ իդականները արականներից: Ուրեմն Որդեակ քաղցր բառովս Ս. Գիրքն հեռեալ յորդորալից խրատները ապիս է ամեն տան փոքրներին, այսինքն ամեն որդւոց, ներք ապիս է նաև ամեն մարդոց և օրիորդներին և հարսներին և կանանց:

Որդեակ, լսիր քո Հօր խրատները (Առ. Ա. 8. ԺԹ. 20):
Որդեակ, քեզ չխաբեն ամբարիշտ մարգիկ (Առ. Ա. 10):
Որդեակ, անիրաւ մարդոց հետ ճանապարհ մի գնար. նոցա ճանապարհից ծռիր քո օտները: Որովհետև նոցա

տաներն զնուս են չարութիւն անելու և աճապարուս են արիւն թափելու (Առ. Ա. 15—16):

Որդեակ իմ, չար խորհուրդները հեռացնուր քեզանից, հեռի կնոց այնպիսիներէից, որք թողած են մանկութեան ուսումը և մուսացած Աստուծոյ ուխտը (Առ. Բ. 16—17):

Որդեակ իմ, մի թուլանար, պահիր իմ խորհուրդները և իմաստութիւնը, վասն զի կապրի քո անձն, և նոքա— խորհուրդներն և իմաստութիւնն— շնորհք կը լինին քո պարանոցի համար, բժշկութիւն՝ քո մարմնոյ համար և դարման՝ քո ոսկերաց համար: Վասն զի քո ամեն ճանապարհներով կը գնաս ապահով և չսահիր— սլիկէիլ— քո ոտն: Քանզի թէ որ նստես, աներկիւղ կը լինիս, և թէ որ քնանաս, քաղցր կը լինի քունդ, և չես դարհուրիլ այն յանկարծահաս արշաւանքներէից, որ կը հասնեն ամբարշտաներից: Վասն զի Տէրն կը լինի քո ամեն ճանապարհների վերայ և կը հաստատէ քո ոտը՝ որ չսահիր (Առ. Գ. 21—26):

Լսեցէք ձեր հօր խրատները, սով տղաներ, ուշադիր եղէք ճանաչել իմաստութիւնը, վասն զի բարի պարգևներ կը պարգևեմ ձեզ: Մի թողէք իմ օրէնքները. որովհետեւ ես էլ իմ հօր հպատակ որդի եմ եղել և սիրուած իմ մօր աչքում, որք սովորցնում էին զիս և ասում. թող քո սրտի մէջ հաստատուի մեր խրատն: Պահիր իմ պատուիրանները և կապրիս (Առ. Գ. 1—9):

Որդեակ, պահիր իմ խօսքերը և ծածկիր քո անձի մէջ իմ պատուիրանները: Որդեակ, պատուիր Տէրը և դօրացիր և բացի նորանից ուրիշ ոչ ոքից մի վախիլ (Առ. Է. 1):

Նենգաւոր որդու համար բարի բան չլինի. խելօք ծառային կը յաջողուին իւր գործերն և կուզողուին նորա ճանապարհներն (Առ. ԺԳ. 13):

Որդեակ, թէ որ իմաստուն լինի քո սիրտն, կուրախացնես և իմ սիրտը (Առ. ԻԳ. 15):

Որդեակ, մի նախանձիր չարերի վերայ և չցանկանաս նոցա հետ կենալու. որովհետեւ նոցա սրտերն խորհում են ստութիւն և նոցա շրթունքներն խօսում են վնասելու մասին (Առ. ԻԳ. 1—2):

Որդեակ, վախեցիր Աստծուց և թագաւորից և չապստամբես նոցանից մէկիցն (Առ. ԻԳ. 21):

Որդեակ իմ, իմաստուն եղիր և ուրախացուր իմ սիրտը... խորագէտն տեսնում է չարիքը և զգուշանում. իսկ միամիտներն անցնում են առաջ և կրում վնաս (ԻԷ. 11—12):

Որդեակ իմ, զգուշ եղիր... լսիր այս բոլոր խօսքի վախճանը— վախեցիր Աստծուց, պահիր նորա պատուիրանները. քանզի այն է իսկապէս մարդն. — վասն զի Աստուած ամեն արարածները դատելու է. դատելու է թէ բարի և թէ չար մարդոց գործերը (Ժող. ԺԲ. 12—14):

Որդեակներ, սրջափ դժուարին է իւրեանց հարստութեանց վերայ յոյս գնող մարդոց մտնել Աստուծոյ թագաւորութեան մէջ (Մար. Ժ. 24):

Որդեակներ, միայն խօսքով և լեզուով չսիրենք մէկըմէկի, այլ արդիւնքով և ճշմարտութեամբ (Ա. Յով. Գ. 18):

Գրում է Պօղոս Ս. առաքեալն Գաղատացուց. Իմ որդեակներ, բարոյական ճննդականի ցաւերով կրկին անգամ ցաւերով ծնեմ զձեզ, մինչև որ ձեր սրտերի մէջ նկարուի Քրիստոս (Գաղ. Գ. 19):

Ո Ր Գ Ի

Ասաց Տէրն եւայլին. Շատացնելով կը շատացնեմ քո որդեճնութեան ցաւերը, արտուութեամբ կը ծնես որդիներ (Ծնն. Գ. 16):

Աբրահամ նահապետն պատուիրում է իւր եղիազար ծառային. Երգուեցնում եմ քեզ երկիւրի և երկրիս ստեղծ

մարի) նորա լոյսն և նորա աչաց բիբերն խաւար կը տեսնեն (Առ. Ի. 20):

Լսիր, որդի, քո հօր՝ որ ծնաւ զքեզ, և մի արհամարհեր քո մօր պառաւութիւնը: Ստացիր ճշմարտութիւն, և մի թողուր իմաստութիւնը և խրատը և հանձարը:—Արդար հայրն լաւ կը կրթէ իւր որդին և նորա սիրտն ուրախ կը լինի իւր խելացի որդու վերայ:—Աւրախ կը լինին ըստ հայրն և մայրն քեզանով և կը խնդայ՝ որ ծնաւ զքեզ (Առ. ԻԳ. 22—25):

Թերակատար կը լինին շնացելոց որդիքն. կը սատկի անօրէն անկողնոյ զաւակն, եթէ երկար էլ ապրին, ոչինչ կը համարուին և վախճանելու ժամանակ անարգուած կը լինի նոցա ծերութիւնն (Իմ. Գ. 15—16):

Անօրէն անկողիններից ծնուած որդիքն վկաներ են իւրեանց ծնողաց չարութեանց (Իմ. Գ. 6):

Լսիր երկինք, ակննջ դիր երկիր, որովհետեւ խօսում է Տէրն. Մեծացուցի զաւակներ և բարձրացուցի, բայց նորա զիս անարգեցին: Ճանաչեց եզն իւր տէրը և էշն իւր տիրոջ դուռ... իմ ժողովուրդն չճանաչեց զիս (Ես. Ա. 1—4):

12 տարեկան Յիսուս Երուսաղէմից գնաց նազարէթ իւր ծնողաց հետ և հնազանդ էր նոցա... Յիսուս մեծանում էր իմաստութեամբ և հասակաւ և շնորհքներով (Լուկ. Բ. 51—52):

Աստուծոց և մարգիկներից (Գուկ. Բ. 51—52): Արդիք, հնազանդ եղէք ձեր ծնողաց Տէրով. որովհետեւ այն է արժանն: Պատուիր քո հայրը և մայրը... որ քեզ համար բարի լինի և դու երկար կապրիս երկրի վերայ (Եփ. 2. 1—3):

Արդիք, ամեն բանի մէջ հնազանդ եղէք ձեր ծնողաց, զի այն է Տիրոջ առաջ հաճելին (Կող. Գ. 20):

Տոյ Տէր Աստուծով, որ կին չառնես իմ Իսահակ որդու համար Գանանացոց աղջիկներից, այլ գնաս իմ երկիրն, իմ աղբից առնես կին իմ Իսահակ որդու համար (Մհն. ԻԳ. 2—9):

Ասում է և Ռեբեկան Իսահակին. Իմ անձն ձանձրացել է Գետացոց աղջիկներից. թէ որ Յակոբ կին առնէ Գետացոց աղջիկներից, էլ ինչի համար է իմ ապրիլն (Մհն. ԻԷ. 46): Յակոբը գնում է Ասորեստան և կին առնում իւր աղբից, օտարազգի կին չառնելու համար (Մհն. ԻԹ.):

Եկէք իմ որդիներ և լսեցէք ինձ և ձեզ կը սովորցնեմ Տիրոջ երկիւղը (Սաղ. ԼԳ. 12):

Խոհեմ որդին ուրախացնում է իւր հայրը. անխոհեմ որդին արտութիւն է մօր համար: (Առ. Ժ. 1):

Կրթուած որդին իմաստուն կը լինի և անմիա որդին ծառայութեան կը ամուռի: Խորշակից ապրեցաւ իմաստուն որդին. ամբան խորշակահար է լինում անօրէն որդին (Առ. Ժ. 5):

Խոհեմ որդին հնազանդ է իւր հօր, անհնազանդ որդին կը կորչի... նենգաւոր որդուն բարի բան չլինիր. Իմաստուն ծառային կը յաջողուին իւր գործերն (Առ. ԺԳ. 1 և 13):

Պապերի պատկներն են իւրեանց թոռներն. որդւոց պարծանքն են իւրեանց հայրերն (Առ. ԺԷ. 6):

Անխոհեմ որդու վերայ ուրախ չլինիր հայրն. խոհեմ որդին ուրախացնում է իւր մայրը... Անմիա որդին արտութիւն է հօր համար և գառնութիւն իւր մօր համար (Առ. ԺԷ. 21 և 25):

Այն որդին, որ անարգում է իւր հայրը և արհամարհում է իւր մայրը, նա կրում է ամօթ և լինում է նախաախնք: Այն որդին, որ չէ պահում իւր հօր խրատները, մտածում է վատ վատ բաներ (Առ. ԺԹ. 26—27):

Ով որ հայեցում է իւր հայրը և մայրը, կանցնի (կը

ՈՐՈԳՍՅԹ—Թալալի

Ուրիշների համար որոգայթ սարքողն ինքն կընկնի նոյն թալալի մէջ: Միշտ զգուշ կենալու է մանաւանդ հոգեւոր որոգայթից:

Տէրն մեղաւորաց վերայ կը թափէ որոգայթ, կրօնի և ծծումբ (Սաղ. Ժ. 7):

Անօրէն մարդիկ իւրեանց բերանով որոգայթ կը սարքեն ընկերների համար, որից կաղաթուղին արգարներն գործ գնելով խելացիութիւն (Առ. ԺԱ. 9):

Նրթունքների վրասի համար (իւր բերանի խօսքով) որոգայթի մէջ կընկնի չար մարդն, որից կը պրծնի անմեղն (Առ. ԺԲ. 13):

Օրէնքներն իմաստնոց համար կեանքի աղբիւր են: Բայց անխելքն որոգայթի մէջ բռնուելով կը մեռնի (Առ. ԺԳ. 14):

Տառասկ (փուշ) և լարուած որոգայթ կայ ծուռ մարդոց ճանապարհում, իսկ նա՛ որ կըզգուշանայ իւր անձին, հեռի կը մնայ նոյն որոգայթից (Առ. ԻԲ. 5):

Հոգեւորական կողմը ընդունողներին համար հարկաւոր է բարի վկայութիւն հաւաքել և արտաքիններէրց որ չընկնի նախատանաց մէջ և սատանայի որոգայթի մէջ (Ա. ՏԻԺ. Գ. 7):

Ո Ր Ս Ա Լ

Ամենակարևոր է զգուշանալ հոգիներ որսացողներից, որք խիստ շատացած են. որք մեր կեանքի ամեն մի քայլափոխում սպառնում են որսալ մեր հոգիները, մարմինները, միտքը և կամքը: Այս չորս անդին հարստութիւնները անկորուստ պահպանելու համար հարկաւոր է մեզ քարակ խելք և աննինջ զգուշութիւն:

Կամեցան որսալ իմ անձը—իմ հոգին (Սաղ. ԾԲ. 4)
Չարալեզու մարդն յաջողութիւն չգտնէր երկրի վե՛ր

բայ. անօրէն մարդոյ չարութիւններն զինքը կորսան կորցնելու (Սաղ. ՃԼԹ. 12):

Չարագործ մարդն բռնուում է (որսուում է) իւր անօրէնութիւններից և ամեն ոք կապուում է իւր մեղաց չուանով (Առ. Ե. 22):

Անառակ կլինէն որսում է պատուական մարդոց հօգիները (Առ. Զ. 26):

Զգուշ կացէք այն սուտ մարգարէներից, որ գալիս են ձեզ մօտ ոչխարների հագուստներով. եւ ներսից յափշտակող գայլեր են: Նոցա պտուղներից կը ճանաչէք զիրենք (Մատ. Է. 15—16):

Շատ մօլորեցուցիչներ ելած են աշխարհումս... Զգուշացէք ձեր անձերին, որ չկորցնէք (Բ. Յով. 7—8):

Ս Ո Վ Ո Ր Ե Լ

Ամեն ժամանակ պարտական ենք սովորել լաւ և օգտակար բաներ և ոչ թէ վատ և վնասակար բաներ: Ամեն բողբոջ պարտաւոր ենք բարի օրինակ լինել մեզանից փոքրներին թէ մեր աշխու խօսակցութեամբ և թէ արեգործութեամբ և թէ աշխատութեամբ և թէ բարի և թէ չար: Փօքրներն մեզանից են սովորում ամեն ինչ թէ բարի և թէ չար: (Բ. Օր. ԺԳ. 23):

Կը սովորես վախնալ Աստծուց (Բ. Օր. ԺԳ. 23):

Կը սովորեմ Քո պատուիրանները, ո՞վ Տէր (Սաղ. ձժԸ. 73):

Ո՞վ ծոյլ մարդ, գննա՛ մըջիւնին մօտ եւ նախանձիր նորա գործունէութեան վերայ, եւ նորանից աւելի իմաստուն եղիր. որովհետեւ ո՞չ հողագործութիւն ունի, ո՞չ ստուն եղիր. որովհետեւ ո՞չ հարկ պահանջող, ո՞չ էլ որեւէ տէրութեան իշխանութեան տակ է. իւր կերակուրը պատրաստում է ամբան ժամանակ և լցնում է իւր ամբարները հնձի ժամանակ: Կամ գննա՛ մեղուի-մեղրածանձ-մօտ և սովորիր թէ ինչպէս գործունեայ է. և նորա գործն

Ինչպէս պարկեշտութեամբ է գործուում, որի աշխատանքը բժշկութեան համար են գործ ածում թագաւորներն և հիւանդներն... թէ և զօրութեամբ տկար միշտ է, սակայն պատուեց և յարգեց իմաստութիւնը (Առ. 2. 6—9):

Սովորեցէք բարիքներ գործել, խնդրեցէք իրաւունքներ, փրկեցէք զրկուածը, տեսէք որբի դատը և պաշտպանեցէք որբեայրիների իրաւունքները (Ես. Ա. 17):

Երկրի բնակիչներ, սովորեցէք արդարութիւն, որովհետեւ պապանձուեցաւ ամբարիշտն. և ամեն մարդ, որ երկրի վերայ չսովորի արդարութիւնը, չէ կարող գործել ճշմարտութիւն, կ'վերցուի ամբարիշտն, որ չտեսնայ Տիրոջ փառքը (Ես. Ի. 9. 10—11):

Ձեզ վերայ առէք իմ լուծը և սովորեցէք ինձանից, որովհետեւ ես հեզ եմ և սրտով խոնարհ, և հանգստութիւն կը գտնէք ձեր անձանց համար—ասում է Փրկիչն— (Մատ. ԺԱ. 29):

ՈՒՍՈՒՅԱՆՆԵԼ—սովորցնել

Ասում է Տէր Մովսէսի բերանով ժողովրդեան. Գրէք իմ այս խօսքերը—օրէնքները—ձեր սրտերում և հոգիներում. նոյն խօսքերը կապեցէք նշանի համար ձեր ձեռների վերայ և անշարժ լինին ձեր ճակատանոցների վերայ: Ձեր գաւակաց էլ սովորցրէք նոյն օրէնքները միշտ խօսել (կրկնել, անգիր անել) տան նստած ժամանակ, ճանապարհ գնալու ժամանակ, քնանալու ժամանակ և քնից վեր կացած ժամանակ. միշտ խօսէք այս խօսքերը—Աստուծոյ օրէնքները: Եւ մինչև անգամ կը դրէք Աստուծոյ խօսքերը ձեր աների դռնակողքերին և ձեր աների դռների վերև, որ երկար ապրէք (Բ. Օր. ԺԱ. 17—20):

Ով որ այս փոքր պատուիրաններից մէկը ստանալով կանէ, այնպէս էլ կը սովորցնէ մարդոց, փոքր կը կոչուի երկնից թագաւորութեան մէջ. իսկ ով որ ինքն կանէ և

այլոց կը սովորցնէ, նա մեծ կը կոչուի երկնից թագաւորութեան մէջ (Մատ. Ե. 19):

Յիսուս Քրիստոս սովորցնում էր իշխանութիւն ունեցողի նման և ոչ թէ դպրաց նման (Մատ. Է. 29):

Յիսուս Քրիստոս շրջում էր քաղաքներն և գիւղերն և ուսուցանում (Ղուկ. ԺԳ. 22):

ՈՒՐԱԽ ԼԻՆՆԵԼ

Որքան մեծ է լինում ուրախութեան շարժառիթն, այնքան էլ մեծ է լինում մարդոց ուրախութիւնն: Ինչքան ուրախանան բարիներն, և ինչքան կը տրամին չարերն:

Ժողովուրդն հաւատաց Աստուծոյ և ուրախ եղաւ (Եւր. Գ. 31):

Մեր Տէր Աստուծոյ առաջ ուրախ կը լինիք դուք էլ, ձեր որդիքն էլ, ձեր աղջիկներն էլ, ձեր ծառաներն էլ, ձեր աղախիներն էլ (Բ. Օր. ԺԲ. 12):

Օգնեց Տէր տնանկին աղքատութեան մէջ, առաջնորդեց նոցա ազգին ինչպէս ոչխարի հօտի: Կը տեսնեն ուղիղներն և ուրախ կը լինին. և ամեն անօրէն կը փակէ իւր բերանը (Մաղ. ճՁ. 41):

Ուրախ եղայ ես, որք ասում էին ինձ, Գնանք մենք Աստուծոյ տունն (Մաղ. ճԻԱ. 1):

Ուրախ է լինում ժողովուրդն, երբ գորանում են արքարներն, հեծում են արդարներն անիրաւ և ամբարիշտ իշխանների իշխանութեան տակ (Առ. ԻԹ. 2):

Ասում է հրեշտակն հովիւներին. Աչքալոյս եմ տալիս ձեզ մեծ ուրախութիւն, որ կը լինի ամեն ժողովրդեան համար. քանզի այսօր փրկիչ ծնաւ ձեզ համար, որ է Օծեալ Տէր Դաւթի քաղաքում (Ղուկ. Բ. 10—11):

Ասում է Յիսուս իւր աշակերտներին. ճշմարիտ ճշմարիտ ասում եմ ձեզ, որ ինչ որ խնդրէք իմ անունով իմ

Հօրից, կը տայ ձեզ: Մինչև հիմի ոչ ինչ չինդրեցիք իմ անունով. խնդրեցէ՛ք ե կառնէք, որ ձեր ուրախութիւնն լցուած լինի (Յով. Ժ. 23—24):

Չ Ա Ր

Մարդոց արած շարութիւնն ջրհեղեղաւ կործանեց աշխարհս և Սողոմ, Գոմոր քաղաքները: Սարսափելի մեղքերն Աստուծոյ դժբութիւնը և մարդասիրութիւնը փոխեցին համայնաջինջ հեղեղի և ծծմբախառն կրակի: Պէտք է աշխատենք բոլորովին հեռացնել մեր սրտերից ոչ միայն չարը, այլ և շարութեան բոլոր սերմերը:

Ասաց Տէր Նոյին. Հասած է ամեն մարդոյ մեռնելու ժամանակն—չարացել է ամեն մէկ մարդ—... բոլոր աշխարհ ջնջուեցաւ ջրհեղեղաւ (Ծնն. 2.—Թ):

Ամեն ոք իւր սրտում խորհում էր շարութիւն (Ծնն. 2. 5):

Սողոմի մարդիկն շատ չար և մեղաւոր էին Աստուծոյ առաջ (Ծնն. ԺԳ. 13):

Ասաց Տէր Աբրահամին, Շատացաւ Սողոմացւոց և Գոմորացւոց ազգակն. շատ մեծացան նոցա մեղքն... Տէրն թափեց Սողոմի և Գոմորի վերայ երկնքից ծծումբ և կրակ և կործանեց այն քաղաքները և նոցա ամեն կողմերը և ամեն բնակիչները և երկրի բոլոր բոյսերը (Ծնն. ԺԸ. 20. և ԺԹ. 24—25):

Ո՛վ Հայր Աստուած, փրկիր զմեզ ամեն տեսակ չարից (Մատ. 2. 13):

Չար մարդն իւր չար սրտի գանձից—ամբարած շարութիւնից—հանում է չարիքներ (Մատ. ԺԲ. 35):

Բարի մարդն իւր բարի սրտի գանձից բղխում է բարի, չար մարդն իւր չար սրտի գանձից բղխում է չար. որովհետև նորա բերանն խօսում է սրտի աւելցածից (Ղուկ. 2. 45):

Չ Ա Ր Ա Գ Ո Ր Ծ

Չարագործների համար ոչ խղճի անգործութիւն կայ, ոչ սրտի և ոչ հոգու հանդարտութիւն: Չարագործներն անպատիժ չեն մնար երբէք:

Աստուծոյ առաջ արհամարհուած է չարագործն (Սաղ. ԺԳ. 4):

Տիրոջ երեսն չարագործների վերայ է նոցա յիշատակը երկրից բնաջինջ անելու. համար (Սաղ. ԼԳ. 17):

Սուրբ մարդն պիղծ կը թուի չարագործների աչքում (Առ. ԻԱ. 15):

Խելացի մարդն, պատժուած տեսնելով չարագործը, հաստատապէս խրատում է իւր անձը. անմիտներն նորա մօտով անցանելով վնասուեցան (այսինքն զգուշութեան օգուտ չբաղեցին) (Առ. ԻԲ. 3):

Ո՛չ չարագործների վերայ ուրախացիր և ոչ մեղաւորաց վերայ նախանձիր. վասն զի չար մարդն բարի վախճան չունենար. ամբարիշտների ճրագն էլ կանցնի (կը խաւարի) (Առ. ԻԳ. 19—20)

Շատ օրհնուում է հաւատարիմ մարդն. պատուհասից չապրէր չարագործ մարդն (Առ. ԻԸ. 20):

Չ Ա Ր Ո Ի Թ Ի Ի Ն

Մի տար սեղի շարութեան, որ բուն դնի սրտումդ. շատ դժուարաւ կարող ես յետոյ քանդել այն բունը և հեռացնել քո սրտից: Չար յղութիւնից չարագոյն ծնունդ:

Ասաց Փրկիչն. Ամեն բան՝ ինչ որ դրսից մտնում է ներս, չէ կարող պղծել մարդը. որովհետև ոչ թէ մտնում է նորա սրտի մէջ, այլ մտնում է նորա փորի մէջ և դուրս է նորա սրտի մէջ, այլ մտնում է նորա կերակուրները: Եւ ասում էր ելնում և սրբում է ամեն կերակուրները:

թէ ինչ որ ելնում է մարդից, այն է պղծում մարդը, վասն զի ներսից մարդոց սրտից ելնում են չար խորհուրդներ. — շնութիւններ, պոռնկութիւններ, դողութիւններ, սպանութիւններ, ագահութիւններ, չարութիւններ, նենգութիւններ, գիշութիւններ, չարակնութիւն (չար նախանձ), հայհոյութիւն, ամբարտաւանութիւն, անզգամութիւն: Այս ամեն չարիքներն ելնում են ներսից և պղծում մարդը (Մար. է. 18—23):

Ասում է Տէրն. Այժմ դուք փարեսեցիներդ մաքրում էք բաժակին—գաւաթին—և ամանին գրսի կողմերը, և ձեր ներսինն—սրտերն—լցուած է յափշտակութեամբ և չարութեամբ (Ղուկ. ժԱ. 39):

Պատասխանում է Յիսուս իւր աշակերտաց. Աշխարհս ձեզ չէ կարող առել, բայց զիս ատում է. քանզի ես վըկայում եմ նորա համար թէ իւր գործերն չարութեան գործեր են (Յով. է. 7):

Այսուհետև ձեզանից հեռացրէք ամեն չարութիւն. ամեն նենգութիւն, կեղծաւորութիւն, չար նախանձ և ամեն չարախօսութիւն (Ա. Պետ. Բ. 1):

Չ Ա Փ

Ինչ չափ կամենում ենք մեզ համար, նոյն չափով կամենալու ենք այլոց համար. ինչ չափով մենք սիրում ենք զմեզ, նոյն չափով սիրելու ենք և մեր ընկերները—ամեն մարդ:

Ինչ դատաստանով դատէք ուրիշները, նոյն դատաստանով դատուելու էք և դուք. ինչ չափով չափէք ուրիշներին համար, նոյն չափով կը չափուի և ձեզ համար: Ի՞նչի համար տեսնում ես քո եղբօր աչքի միջի շիւղը և չես տեսնում քո աչքի միջի գերանը: Կամ ինչպէս կարող ես ասել քո եղբօր. Թող որ հանեմ շիւղը քո աչքից. և ահա գերան կայ քո աչքումդ: Կեղծաւոր, առաջ հանի՛ր

գերանը քո աչքից, և յետոյ որ նայես հանել շիւղը քո եղբօր աչքից (Մատ. է. 2—5):

Կան մեղքեր, որ մահու չափ են (մարդասպանութեան չափ ծանր են) (Ա. Յով. Ե. 16—17):

Մեր միջից ամեն մէկին տրուած են շնորհք Քրիստոսի պարգևած չափի համեմատ (Եփ. Գ. 7):

ՊԱՀՔ, ծոմապահութիւն

Պահեցողութիւնն և ծոմապահութիւնն պէտք է լինին սրտանց և ոչ ՚ի սոցոս մարդկան, այսինքն է հողին, միտքն, սիրտն և զգացմունքներն էլ միանալու են բերանին հետ: Այսպէս ներքին և արտաքին մարդն միանալով—աչքերը արատ հայելուց պահելով, ձեռները՝ չարութիւն գործելուց, ոտները վատ ճանապարհ գնալուց, բերանը՝ հայհոյելուց և սիրտը՝ չար խորհելուց, կատարեալ կը լինի պահեցողութիւնն: Աստուածութիւնն պահանջում է մեզանից այսպիսի պահեցողութիւն:

Պահք պահելով խոնարհեցնում էի իմ անձը (Սաղ. ԼԳ. 13):

Պահք պահելուց տկարացան իմ ձունկներն (Սաղ. ձԲ. 24):

Տէրն ասում է Եսայի մարգարէի բերանով. Ժողովուրդն կարօտում է մօտենալ Աստուծոյ. և ասում են. Ի՞նչ է պատճառն, որ մենք պահեցի՛նք և դու անձերը և ո՞վ Աստուած. մենք խոնարհեցուցի՛նք մեր անձերը և չգիտացիր, ո՞վ Տէր:—Պատասխանում է էլի ինքն Տէրն ժողովրդեան. Գուք ձեր պահք կամ ծոմ պահած օրերում կատարում էք ձեր կամքը. կսկծեցնում էք այն ամեն աղքատ մարդիկ, որ ձեր ձեռքի տակ են, պահում էք հակառակութիւններով, կռիւններով, և աղքատները կըրտաճարելով: Բայց ինչ պէտք է ինձ այնպիսի աւուր վահարելով: Բայց ինչ պէտք է ըողորձում ինձ, և ես չեմ պահքն, որ գալիս էք

լում ձեռք. ես չընտրեցի այդպիսի պահք պահելը... թէ որ օրի նման ծուես քո պարանոցը (վիզը), և տարածես քո սաքերի տակ քուրձ և մոխիր, սակայն այդ էլ չեմ համարիլ պահք և ընդունելի օր. ես չընտրեցի այդպիսի պահեցողութիւն, ասում է Տէր: Այլ արձակիր անիրաւութեան կնճիւղը (կշկուղը), քանդիր քո առևտրի բռնի խարդախութիւնը, ներելով արձակիր նեղուածները և պատուիր բոլոր անիրաւ մուրհակները: Բրդիր քո հացը աղքատներին, տար քո տունն անտուն խեղճերը, հագցնուր (հագուստ հագցուր) մերկը, երբ կը տեսնես. և ծուռ աչքով մի նայիր քո ընտանեաց դաւակի վերայ: Այն ժամանակ կանուխ կը ծաւալի քո լոյսն, և քո առաջից կը գնայ քո արդարութիւնն և քո չորս կողմով կը շրջապատեն Աստուծոյ փառքն: Այն ժամանակ կաղօթես՝ և կը լսէ քեզ Աստուած և երբ կը կանչես Տէրը, կասէ քեզ, Ահա ես եմ հասած եմ քեզ մօտ եմ: պատրաստ եմ կատարել քո խնդիրը... (Ես. ԾԼ. 1—14):

Սրբութեամբ պահեցէք պահեցողութիւնը, որոշեցէ՛ք հսկման օրը, հաւաքեցէ՛ք ձեր Աստուծոյ տան մէջ երկրիդ ձերերը և ամեն բնակիչները և բարձրաձայն կանչեցէ՛ք առ Տէր Աստուած ձեր սրտի մտօք (Յովել. Ա. 14):

Պատուեցէ՛ք ձեր սրտերը և ոչ թէ ձեր հագուստները, դարձէ՛ք ձեր Տէր Աստուծոյն, սրովհետեւ ողորմած, գթած, երկայնամիտ, և բազումօղորմ է և զղձանում է մարդոց գործած չարութեան վերայ¹⁾... փող փչեցէ՛ք Սիօնում, նշանակեցէ՛ք սուրբ պահելու օրը, քարոզեցէ՛ք հըսկում, հաւաքեցէ՛ք ժողովուրդները, մաքրեցէ՛ք ժողովուրդը, ընտրեցէ՛ք ձերունիները, ժողովեցէ՛ք ծծկեր մանուկները, թող ելնէ՛ դուրս դայփեսան իւր սենեկից և հարսն՝ իւր առագաստից... լան և ասեն. Ո՛վ Տէր, խնայիր քո ժողո՛ւ

¹⁾ Նշանակում է՝ երբ մարդիկ զղձում են իւրեանց գործած մեղաց վերայ, Աստուած էլ չէ պատժում մեղաւորը, որ ՚ի բոլոր սրտէ զղձացած է լինում:

վարդիդ, խնայիր քո ժառանգութեան, նախատել մի տար քո ժառանգութիւնը (Յովել. Բ. 13—17):

Բառասուն օր և քառասուն գիշեր պահք պահեցին Մովսէս և Եղիա մարգարէներն և նոյն իսկ Քրիստոս, որ պահք և ծոմ պահելով 40 օր և 40 գիշեր՝ յետոյ անօթեցաւ (Մատ. Գ. 2):

Ասում է Փրկիչն. երբ պահք կը պահէք, արտած չը լինիք կեղծաւորների պէս, որ ապականում են իւրեանց երեսները, որպէս զի երեկն մարդոց թէ պահք են պահում, ճշմարիտ եմ ասում ձեզ. իսկապէս այն են նոցա վարձքն: Բայց դուով քրիստոնեայ մարդ և կին—երբ կը պահես, օձիր քո գլուխը և լուսն քո երեսը, որ պահեցող պահես, օձիր քո գլուխը և լուսն քո հայրն որ տեսչերեխ մարդոց, այլ ծածուկ քո Հօր, քո հայրն որ տեսնում է ծածուկը, քեզ կը հատուցանէ յայտնապէս (Մատ. 2. 16—18):

Պ Ա Շ Տ Ե Լ

Պարտաւոր ենք այնպէս պաշտել զԱստուած, և հաւատալ այն անկնին, ինչպէս որ գրուած է Օրէնքների և մարգարէութեանց մէջ, և ոչ թէ ի ցոյցս մարդկան: Պարտաւոր ենք հաւատալ Հին և Նոր-կտակարանների ճշմարտութեանց:

Եւ կը պաշտես քո Տէր Աստուածը, և ես Տէրս կօրհնեմ քո հացը և քո ջուրը. և քեզանից կը հեռացնեմ ցաւը, ամուլ և անսերմ չլինիր քո երկիրն և կերկարացնեմ քո կեանքը (Ելք. ԻԳ. 15—16):

Կը վախնաս քո Տէր Աստուծուց և զնա միայն կը պաշտես և չես հեռանալ մեզք գործելով նորանից (Բ. Օր. 2. 13):

Փրկիչն ասաց սատանային. Գրուած է. Երկրպագութիւն կանես քո Տէր Աստուծոյն և զնա միայն կը պաշտես (Ղուկ. Գ. 8):

Աննա մարգարէուհին գիշեր և ցերեկ պահելով և աղօթելով պաշտում էր զԱստուած (Ղուկ. Բ. 37):

Ասացին 12 Առաքեալներն. Հաճելի չէ մեզ թողնել Աստուծոյ խօսքը և պաշտել մարմնաւոր սեղանները. եղբայրներ, ընտրեցէ՛ք ձեր միջից եօթն վկայուած մարգիկ, որ կարգենք մարմնաւոր ուտելիքի և պէտքերի համար և մենք զբաղուենք միայն աղօթելով և աստուած պաշտութեամբ (Գործք. 2. 2—4):

Ասածուց ընդունելով անշարժ թագաւորութիւնը՝ պինդ բռնենք այն շնորհքները, որով պաշտում ենք զԱստուած հաճութեամբ, երկիւղածութեամբ և գոգութեամբ (Եբր. ԺԲ. 28):

ՀԻՆ-ՊԱՍԵՒ ԵՒ ՆՈՐ-ՊԱՍԵՒ

Հին-պասեքն այն տօնն էր, որով Իսրայէլացիք Մովսիսի ձեռնով ազատուեցան փարաւոնների գերութիւնից եգիպտոսից: Իսկ Նոր-պասեքն է ս. Զատիկն, որի մէջ շնորհիւ ս. Յարութեան Յիսուսի Քրիստոսի ամբողջ Քրիստոնեայք ազատուեցան Սատանայի գերութիւնից-Գժոխքից: Հայաստանեայց Առաքելական և ս. Եկեղեցին ամեն տարի կատարում է սոյն ուրախալի տօնի տարեգարձը Զատիկն՝ Քրիստոսի անհուն երախտիքը անմոռաց յիշատակելու և իւր ամենախորին երախտագիտութիւնը հրատարակելու համար:

Պ Ա Տ Ա Ր Ա Գ

Յիսուս Քրիստոսի չարչարանաց, խաչելութեան, մահուան, թաղման և հրաչալի Յարութեան յիշատակն է ս. Պատարագն, որը շարունակ մատուցանում է ս. Եկեղեցին՝ կենդանեաց և ննջեցելոց հոգիների փրկութեան համար: Ս. Պատարագն մեզ մատակարարում է Յիսուս Քրիստոսի սեղսքաւիչ մարմինը և արիւնը, այս

պատճառաւ մենք պարտաւոր ենք կատարել աղջմամբ, խոստովանութեամբ և ապաշխարութեամբ և հուսատով մերձենալ այդ սրբարար հաղորդութեան:

Թէ որ սեղանի վերայ մատուցանում ես քո պատարագը և այն տեղ մտաբերում ես, որ քո եղբայրն-ամեն մարդ եւ ամեն կին եղբայր է եւ քույր—քո մասին խէթ ունի (քեզանից խոսված, ցաւած է) թող քո պատարագը սեղանի առաջ և զնն նախ հաշտուիր եղբորդ հետ և յետոյ գալով կը մատուցանես քո պատարագը (Մատ. Ե. 23—24):

Գուք էլ ինչպէս կենդանի քարեր շինուում էք հոգեւոր տաճարներ, անարատ քահանայութիւն Յիսուս Քրիստոսի ձեռնով Հօր Աստուծոյ հաճելի հոգեւոր պատարագ մատուցանելու համար (Ա. Պետ. Բ. 5):

Ինչպէս սիրելի որդիներ նմանող եղէք Աստուծոյ սիրով էլ զնացէ՛ք, ինչպէս Քրիստոս էլ սիրեց զմեզ, մատնեց իւր անձը մեզ համար Հօր Աստուծոյ անուշահոտ պատարագ և զոհ (Եփես. 1—2):

Որչափ ևս աւելի Քրիստոսի կենդանի Աստուածը խղճմտանքը այն մեռեալ գործերից՝ կենդանի Հօգուն ձեռնով պաշտելու համար, Որ յաւիտենական Հօգուն Հօր Աստուծոյ մատոյց իւր անձը անարատ պատարագ Հօր Աստուծոյ (Եբր. Թ. 14):

Գրում է Պողոս Ս. առաքեալն. Ինչպէս որ ես ընդունեցի Տիրոջից այն, որը և աւանդեցի ձեզ, թէ Տէր Յիսուս այն գիշերում որի մէջ մատնուելու էր՝ առաւ հաց, օրհնեց, կտորեց և ասաց աշակերտներին. Առէք և կուտե՛ք, այս է իմ Մարմինն, որ բաշխուում է ձեզ համար. այս արէ՛ք զիս յիշատակելու համար: Այս բաժակս Նոր Գրքից յետոյ էլ առաւ բաժակը և ասաց. Այս բաժակս Նոր Գրքից յետոյ էլ արինով, այս արէ՛ք, քանի անգամ որ կուտուիս է իմ արինով, այս համար: Քանի անգամ որ կուտուիս էլ, զիս յիշատակելու համար:

տէք այս հացը և կը խմէք այս բաժակը՝ պատմեցէ՛ք Տիրոջ մահը, մինչև որ գայ Նա-Յիսուս:—Այսուհետև ով որ անարժանութեամբ կուտէ այս հացը և կը խմէ այս բաժակը, պարտական կը լինի Տիրոջ մարմնոյ և արեան: Մարդ—ամեն ոք—նախ թող փորձէ իւր անձը և յետոյ կուտէ այն հացից և կը խմէ նոյն բաժակից: Որովհետև ով որ անարժանութեամբ ուտում է և խմում, իւր անձի համար դատաստան է ուտում և խմում, վասն զի Տիրոջ մարմինը չզանազանեց հասարակ հացից: Անարժանութեամբ հաղորդուիլն է պատճառ որ իսկապէս կան ձեր մէջ շատ հիւանդներ և ցաւագարներ, և շատերն էլ աւելի նորա են, որ և իսկապէս մեռած են (Ա. Կորն. ԺԱ. 23—30):

Պ Ա Տ Ի Ի

Յիսուս Քրիստոսի անսահման սիրոյ շնորհիւ մենք որդիք ենք Հօր Աստուծոյ: Ուրեմն անխուսափելի պարտք ունինք պատուել Հայր, Որդի և ս. Հոգին՝ որդիական հնազանդութեամբ, խոնարհութեամբ և ամեն տեսակ բարի գործերով: Պարտաւոր ենք պատուել նաև մէկզմէկ ինչպէս Քրիստոսի անդամներ և ս. Եկեղեցու զաւակներ: Աշխատելու ենք գերազանցել միմեանցից մէկզմէկ սիրելով:

Որդին փառաւորում է իւր հայրը և ծառան վախում է իւր տիրոջից. իսկ այժմ թէ որ Հայր եւս ես, ո՞ւր է իմ փառքն, և թէ որ Տէր եւս, ո՞ւր է իմ պատիւն, ասում է Ամենակալ Տէրն (Մաղ. Ա. 6):
Գիշերուայ տեսիլքները մէջ տեսնում էի, և ահա երկնքի ամպերի վերայ դալիս էր Մարդոյ Որդու նման մէկն-Բանն Աստուած—և հասնում էր մինչև Հինաւուրցն—Հայր Աստուած—և մօտեցաւ նմա: Եւ տուաւ նմա իշխանութիւն և պատիւ և թագաւորութիւն, և ամեն

ազգեր, ժողովուրդներ և լեզուներ, որ ծառայեն նմա. և նորա իշխանութիւնն յաւիտենական իշխանութիւն է և նորա թագաւորութիւնն անեղծանելի է—եւ թագաւորութեան նորա վախճան մի լիցի (Գան. է. 13—14):

Ասում է հրեշտակն Ս. Մարիամ կուսին. Մի վախիր, Մարիամ, որովհետև շնորհք դատար Աստուծոց: Եւ ահա կը յղանաս և կը ծնես Որդի և նորա անունը կը կոչես Յիսուս: Նա կը լինի մեծ և կը կոչուի Բարձրեալ Աստուծոյ սուս: Նա կը լինի մեծ և կը կոչուի Բարձրեալ Աստուծոյ Որդի և Տէր-Հայր-Աստուած կը տայ նմա նորա հօր Գաւթի աթոռը և կը թագաւորէ յաւիտեան: Եւ վախճան շունենար նորա թագաւորութիւնն (Ղուկ. Ա. 30—33):
Ինքն Յիսուս Հօր Աստուծոց առաւ փառք ու պատիւ, և այն մեծավայելուչ փառքից գալով բարբառի ձայն, թէ Դա է իմ սիրելի Որդին, Որը հաւանեցի (Բ. Պետ. Ա. 17):
Եղբայրսիրութեան մէջ դժբաժ եղէք միմեանց վերայ, մէկզմէկ պատուելով գերազանցեցէք իրարից (Հռ. ԺԲ. 10):

Պ Ա Տ Ո Ի Ա Կ Ա Ն

Աստուծոյ առաջ պատուական է սրբոց մահն (Մաղ. ձժԵ. 15):
Չար կինն որսում է պատուական մարդոց հողիները (Առ. 2. 26):
Պատուական ստացուածք է սուրբ և առատաձեռն մարդն (Առ. ԺԲ. 27):
Պատուական է ողորմած մարդն (Առ. Ի. 6):
Պատուական անօթ են դիտուն շրթունքներն (Առ. Ի. 15):
Պատուական անօթ են դիտուն խօսքերը (Առ. ԼԵ. 27):
Պէտք է յարգել պատուական խօսքերը (Առ. ԼԵ. 27):
Սյապէս է ասում Տէրն... թէ որ հանես պատուականը անարգից, կը լինիս ինչպէս իմ բերանն (Եր. ԺԵ. 19):
Բոլորովին պատուական է ամուսնութիւնն և սուրբ են նորա անկողիններն. բայց Աստուած դատում է շնութիւն և պոռնկութիւն անողները (Եբր. ԺԳ. 4):

Պ Ա Տ Ո Ի Ե Լ

Որդիքներից շատերն չհասկանալով այս խօսքի իմաստը, «Սկզբից Ստեղծողն արու և էգ ստեղծեց Ադամը և Եւան և ասում է. Այս պատճառաւ կը թողնէ ամուսնացած որդին իւր հայրը և մայրը եւ կը գնայ իւր կնոջ հետից» (Մատ. ԺԹ. 4—5) ամուսնանալուց յետոյ թողնում են իւրեանց ծնողներն անխնամ և աննկով իւրեանց կիները՝ ապրում առանձին: Այսպիսի որդիք կարգում են թղթի մի երեսը և առանց կարգալու թողնում միւս երեսը. կամ թէ փոխանակ օրինաց հնազանդուելու և պատուիրանները կատարելու, հնազանդեցնում են իւրեանց Աստուծոյ օրէնքները և պատուիրանները: Այս հարցը շատ լաւ բացատրած է ինքն ֆրկիչն յանդիմանելով ֆարիսեցիները և ասելով. «Բայց դուք ինչ պատճառաւ արհամարհում էք Աստուծոյ պատուիրանները ձեր աւանդութեան համար: Որովհետև Աստուած ասաց. «Պատուիր քո հայրը և մայրը. և ով որ բամբասէ իւր հայրը և մայրը, սպանուելով մեռնի: Եւ դուք ասում էք. Որով ասէ իւր հօր և մօր թէ նուէր է ինչ որ օգտուում ես ինձանից¹⁾ և չէ պատուում իւր հայրը և իւր մայրը. և խոտում էք Աստուծոյ խօսքը ձեր աւանդութեան համար» (Մատ. ԺԵ. 3—6 և Մար. Է. 9—13): Փրկիչի այս բացատրութիւնից պարզ երևում է որ զաւակներն պարտաւոր են յարգել և պատուել իւրեանց ծնողները ըստ տրամադրութեան աստուածային օրինաց՝ մինչև նոցա մահն: Կարգացէք նորից սոյն գրքի Հայր, Որդեակ և Որդի անուանց տակ գրուած պատուէրները:

Պատուիր քո հայրը և մայրը (Բ. Օր. Ե. 16):

Պատուիր ձեր ծնողներին (և պառաւներին) երեսը — ներկայութիւնները — (Ղևտ. ԺԹ. 32):

¹⁾ Փրկիչն կամեցաւ հասկացնել ֆարիսեցւոց՝ թէ իւրաքանչիւր որդի աստուածային օրէնքով պարտաւորուած է պատուել իւր ծնողները մինչև նոցա վախճանուիլն: Ուրեմն ոչ թէ նուէր համարելու է որդւոց իւրեանց ծնողաց մատակարարածն, այլ

Դ՞ն արդար աշխատանքով պատուիր Տէրը (Առ. Գ. 9):
Որդեակ, պատուիր Տէրը և զօրացիր (Առ. Է. 1):

Մենակ շրթունքներով է պատուում զիս այս ժողովուրդն, բայց ինձանից հեռացած են իւրեանց սրտերն — ասում է Տէրն — (Մատ. ԺԵ. 8):

Ամենքն կը պատուեն Որդին Աստուած, ինչպէս պատուում են Հայր Աստուածը, նա՛ որ չէ պատուում Որդին, չէ պատուում և Նորա ուղարկող Հայրը (Յով. Ե. 23):

Պ Ա Տ Ո Ի Ի Ր Ա Ն

Առանց արեգակի խաւար է աշխարհս և ապարդիւն. առանց ձրի մութ են գիշերներում բնակարաններն և՛ տխրամած. առանց դեկի բնաւ չէ կարող իւր նպատակին անջնաս հասնել նաև. առանց սանձի ձին ձգում է իւր վերայի հեծած մարդը և վիրաւորում. այսպէս էլ առանց Աստուծոյ օրէնքների և պատուիրանքների մարդն չէր կարող կենցաղավարել այս կեանքը՝ առանց հողեր և մարմնաւոր վնասի: Որովհետև «Տիրոջ Օրէնքներն անբիծ են և դարձմարմնաւոր վնասի: Որովհետև «Տիրոջ Օրէնքներն անբիծ են և դարձնում են մարդոց հոգիները մեղքերից և չարութիւններից»²⁾ «Տիրոջ պատուիրանքներն լոյս են և լոյս են տալիս մարդոց հոգիներին» (Մաղ. ԺԷ. 7—8): Այլապէս խօսելով մեր մարմնների աչքերին» (Մաղ. ԺԷ. 7—8): Այլապէս խօսելով մեր մարմնների աչքերն ամեն ինչ տեսնում են արեգակի և ձրագի լուսով. իսկ մեր միտքն ու հոգին ամեն բարի և շար, օգտակար և վնասակար, կեանք և մահ տեսնում են աստուածային օրէնքների և պատուիրանքների լուսով: Ո՛վ Աստուած, «Դ՞ն խօսքերն ճրագ և պատուիրանքների համար և լոյս են տալիս իմ ճանապարհներն իմ հոգու սաների համար և լոյս են տալիս իմ ճանապարհներին» երգում էր Դաւիթ մարգարէն:

Ասաց Տէր Իսահակին. կը շատացնեմ քո զաւակները

որդիական անխուսափելի պարտք: Այս պատճառաւ էլ յանդիմանում էր ֆարիսեցիները, որք քանդում էին օրէնքները և պատուիրանները և այնպէս էլ սովորցնում ամուսնացող երիտասարդները, որ սանակոխ էին անում Աստուծոյ հրամանները և անարդում իւրեանց ծնողները:

երկնքի աստեղների չափ. և քո զաւակին կը տամ այս երկիրը. և քո զաւակով կօրհնուին երկրի ամեն ազգերն. որովհետեւ քո հայրն՝ Աբրահամն լսեց իմ ձայնին, պահեց իմ հրամանները և պատուիրանները և իմ օրէնքները (Ծնն. ԻԶ. 4—5):

Ասում է Տէր Մովսէսին. Գեղ կը տամ քարեղէն տախտակներ էլ, օրէնքներ էլ, պատուիրաններ էլ (Ելք. ԻԳ. 12):

Պահելով կը պահես քո Տէր Աստուծոյ պատուիրանները.

Ա. Ես եմ քո Տէր Աստուածն, բաց ինձանից չկայ աստուած:

Բ. Ինչ քեզ համար կուզք չլինես երկնքում և երկրիս վերայ և ջրերում եղած իրերի նմանութեամբ. և երկրպագութիւն չանես նոցա, ես եմ միայն քո Տէր Աստուածն:

Գ. Քո Տէր Աստուծոյ անունը բերանդ չառնես չնչին բաների համար. քանզի շարդարացներ Տէրն այն մարդը որ իւր անունը պարապ տեղն բերան կառնէ:

Դ. Կը մտաբերես սուրբ պահել շաբաթ-հանգստեան օրը¹⁾. վեց օր աշխատիր քեզ համար, մի օր պահիր Աստուծոյ համար: Շաբաթ—այժմ կիրակէ օրում հանգստոց դու էլ, քո որդին էլ, քո աղջիկն էլ, ծառան էլ, աղախինն էլ, անասուններն էլ, Աստուած վեց օրում ստեղծեց երկնքը և երկիրս և հանգստացաւ եօթներորդ օրում:

Ե. Պատուիր քո հայրը և մայրը, վասն զի քեզ համար բարի կը լինի և դու երկար կապրես երկրի վերայ:

Զ. Մի սպանաներ—չպանես:

Է. Մի շնանար—չնութիւն չանես:

Ը. Մի գողանար—չգողանաս, գողութիւն չանես:

¹⁾ Առաքեալներն՝ ի պատիւ Քրիստոսի յարութեան շաբաթը փոխեցին կիրակէ աուր:

Թ. Սուս վկայութիւն չտաս քո ընկերի մասին:

Ժ. Զցանկանաս ոչ քո ընկերի (ամեն մարդոյ) տան վերայ, ոչ նորա անդի վերայ, ոչ նորա կնոջ վերայ, ոչ նորա ծառային վերայ և ոչ աղախնոյն վերայ և ոչ նորա անասունների վերայ (Ելք. Ի. 2—17):

Ասում է Յիսուս. Ես չեկի օրէնքները քանդելու համար, այլ լրացնելու (Մատ. Ե. 17—18):

Ով որ կը քանդէ այս փոքր պատուիրաններից մէկը և այնպէս կուսուցանէ դժարդիկ, նա փոքր կը կոչուի և երկնից թագաւորութեան մէջ, իսկ ով որ կը պահէ և երկնից թագաւորութեան մէջ կը կոչուի երկնից թագաւորութեան մէջ (Մատ. Ե. 19):

Պատուիրում է Փրկիչն. կը սիրես քո Տէր Աստուածը բոլոր սրտովդ, բոլոր անձովդ և բոլոր մտքովդ: Այս է առաջին և մեծ պատուիրանն: Երկրորդն սորա նման կը սիրես քո ընկերը քո անձի պէս: Այս երկու պատուիրաններից կախուած են բոլոր օրէնքներն և մարգարէներն (Մատ. ԻԲ, 37—40):

ՊԱՏՐԱՍՏ ԼԻՆԵԼ

Պարտաւոր ենք ամեն ժամանակ պատրաստ լինել բանդի մեր կեանքն կախուած է մի մաղից և անյայտ է մեզ մեր մեռնելու տարին, ամիսն, օրն, ժամն և րոպէն. «Պատրաստեցայ և ոչ իրողիցայ»:

Պատրաստ կացէք Աստուծոյ առաջ (Թիւք. ԺԶ. 16):

Պատրաստ է իմ սիրան, ով Աստուած, պատրաստ է իմ սիրան, ով Աստուած, քեզ օրհնելու և իմ փառքովս (Մաղ. ձէ. 2):

Քեզ սաղմոս ասելու համար (Մաղ. ձէ. 2):

Արթուն կացէք. որովհետեւ չգիտէք թէ որ ժամում կը դայ ձեր Տէրն. այն իմացէք, եթէ տանուաէրն իմանար թէ որ պահուն է գալիս գողն, կը հսկէր և չէր

Թողու՛ւ ահան-լազու՛մ-փորել իւր տան. այս պատճառաւ
դուք էլ պատրաստ եղէք, որովհետեւ ինչ ժամու՛մ չէք
սպասու՛մ, կը գայ Մարդոյ Որդին (Մատ. ԻԳ. 42—44):

Պատրաստեցէք Տիրոջ ճանապարհը (Մար. Ա. 3.
Ղուկ. Գ. 4):

Պատրաստեցէք ձեր մարմինները Աստուծոյ համար
սուրբ և հաճելի նուէր (Հռ. ԺԲ. 1):

Պ Ա Ր Ծ Ե Ն Ա Լ

Աստուծով միայն կարելի է պարծենալ:

Մի պարծենաք և մի խօսէք ամբարտաւան խօսքեր.
Թող չպարծենայ իմաստունն իւր իմաստութեամբ, և չ՞
պարծենայ զօրեղն իւր զօրութեամբ, և չպարծենայ հա-
րուսան իւր հարստութեամբ (Ա. Թագ. Բ. 9. Եր. Թ. 23):

Տէրով կը պարծենայ իմ անձն (Սաղ. ԼԳ. 3):

Ո՞վ կարող է պարծենալ՝ որ ունի սուրբ սիրտ (Առ.
Ի. 9):

Մի պարծենար վաղուան օրով, փասն զի չգիտես թէ
վաղուան օրն ի՞նչ կը ծնանի քեզ համար (Առ. ԻԷ. 1):

Ծնորհակալ եմ Քեզանից, Հայր, Տէր երկնի և երկրի,
որ ծածկեցիր այս իմաստուններից և գիտուններից և
յայտնեցիր տղաներին (Մատ. ՓԱ. 25):

Աստուծոյ յիմարն իմաստնագոյն է մարդիկներից
աւելի. Աստուծոյ տկարն զօրագոյն է մարդիկներից աւե-
լի... Աստուած ընտրեց աշխարհիս յիմարները, որ ամօթով
անէ իմաստունները, ընտրեց աշխարհիս տկարները, որ
ամօթով անէ հօրները. ընտրեց անտոհմները (աննշան
տոհմից մարդիկ) և արհամարհուածները և ոչինչները, որ
խափանէ ետ—ես եմ, իմաստուն եմ, իշխանազն եմ,
ասողները. որպէս զի ամեն մարմնաւոր չպարծենայ Աս-
տուծոյ առաջ: Որովհետեւ դուք Աստուծուց էք Գրիստոսով

Յիսուսով, Որ մեզ համար Հօր Աստուծուց եղաւ իմաստու-
թիւն, արդարութիւն և սրբութիւն և փրկութիւն. որ
ինչպէս և գրուած է, Ով որ պարծենում է, Աստուծով
պարծենայ (Ա. Կոր. Ա. 25—31):

ՊԱՐԿԵՇՏ—պարկեշտութիւն

Պարկեշտ՝ նշանակում է ամեն բանի մէջ չափաւորութիւն, սահ-
ման, համեմատութիւն սիրող: Պարկեշտ մարդն և կինն փախչում
են աւելորդարանութիւնից, չափութիւնից և անհամեմատութիւնից
և միշտ հետևում են պարզասիրութեան, չափասիրութեան և աղ-
և ունի հետևում են պարզասիրութեան, չափասիրութեան և աղ-
նուութեան թէ ուտելու և խմելու մէջ և թէ հագնելու և կեանքի
ամեն պարագայի մէջ:

Աստուծոյ առաջ պիղծ է անիրաւ խորհուրդն. պար-
կեշտ են սրբոց խօսքերն (Առ. ԺԵ. 26):

Պարկեշտ են աշխատասէր կնոջ նիստն ու կացն և
նա չկերաւ դատարկութեան հաց (Առ. ԼԱ. 27):

Աշխատեցէք որ պարկեշտ ցոյց տաք ձեր վարքը և
բարքը հեթանոսաց մէջ. քանզի ինչ բանով որ բամբասե-
ցին զձեզ ինչպէս չարագործներ, տեսնելով ձեր բարի
գործերը՝ փառաւորեն զԱստուած այցելութեան օրում (Ա.
Պետ. Բ. 12):

Ո՞վ որ ցանկանում է եպիսկոպոսութեան, բարի գոր-
ծի է ցանկանում. բայց եպիսկոպոսն պէտք է լինի անա-
բաա... հեզ, ցած, պարկեշտ, հիւրասէր, ուսուցիչ: Թշնա-
մանող և ծեծող չլինի, այլ լինի հանդարտ, ոչ կռուող և
ոչ արծաթասէր (Ա. Տիմ. Գ. 1—3):

Նմանապէս պարկեշտ լինելու են և սարկաւազներն.
ոչ երկկեզու, ոչ գինի սիրող և ոչ անարդ շահախնդրու-
թեան ետեից ընկնող. այլ որ ունենան սուրբ մտք հա-
ւատոյ խորհուրդը: Նախ փորձեն զիրենք և յետոյ մօտե-
նան նոյն պաշտօնին, որ լինին անարատ: Նոյնպէս պարկեշտ

լինելու են և նոցա-ամուսնացած սարկաւաղներէ-կանայքն, շատախօս չլինին, այլ լինին հեղ և հաւատարիմ ամեն բանի մէջ (Ա. Տիմ. Գ. 8—11):

Ծերերին խօսիր որ լինին զգաստ, պարկեշտ, ցած, ողջամիտ հաւատով, սիրով և համբերութեամբ: Նոյնպէս խօսիր և պառաւներին, որ լինին զգաստութեան և սուրբ վայելութեան մէջ, ոչ բանսարկուներ լինին և ոչ գինեմոլներ, այլ լինին բարեխրատ-բարի խրատներ տուողներ: որ զգաստացնեն հարսները, որ սիրեն իւրեանց փեսաները և երեխաները, որ լինին ցած, սուրբ, անարար, բարեգործ, հնազանդ իւրեանց մարդոց, որ չհայհոյուի Աստուծոյ խօսքն և վարդապետութիւնն: Նոյնպէս աղաչիր երիտասարդները՝ որ լինին հեղահոգի. որ իւրեանց անձերը բարեգործութեան օրինակ տան ամենին... խրատիր ծառաները հնազանդ լինիլ իւրեանց տէրերին (Տիմ. Բ. 2—7):

ՊԱՐՏԱՊԱՆ—պարտական

Ամեն ջանք գործ դնելով աշխատելու ենք որ ոչոքի պարտական չմնանք ոչ բարոյապէս և ոչ նիւթապէս: Զգուշութիւն առնելու ենք Ս. Գրքի հետեւալ խօսքերից:

Լսած էք որ առաջիկաներին (շին-օրէնքում) տուեցաւ Մի սպանաներ, քանզի ով որ կըսպանէ՝ պարտական կը լինի դատաստանին: Բայց ես ասում եմ ձեզ թէ ամեն մարդ, որ զուր տեղ բարկանում է իւր եղբօր (կամ քրոջ) վերայ, պարտաւոր կը լինի դատաստանի, և ով որ յիմա՛ր կասէ իւր եղբօր, պարտաւոր կը լինի ասենի. և ով որ անմիտ կասէ իւր եղբօր, պարտաւոր կը լինի գեհնին— գժուքին (Մատ. Ե. 21—22):

Բո խօսքերից կարգարանաս և քո խօսքերից կը պարտաւորուիս (Մատ. ԺԲ. 37):

Ով որ պահում է բոլոր օրէնքները, բայց յանցաւոր է լինում մի բանի մէջ, նա պարտական եղաւ բոլոր օրէնքներին (Յակ. Բ. 10):

Ոչ ոքի պարտական չդանուիք, հատուցէք ամենքին հարկ եղածը, որին տուրք վճարելու է, վճարեցէք սուրբ-որին մաքս վճարելու է, վճարեցէք մաքսը. որին ակնաճուլթիւն (վախենալ, քաշուիլ) ակնածեցէք. որին պատիւ աւալ հարկաւոր է, պատուեցէք (Հռ. ԺԳ. 7—8):

Պ Ղ Ծ Ո Ի Թ Ի Ի Ն

Պղծութիւնն ամենամանգութ բռնաւորն է, որ հալածում է զուր ասեն ժամանակ ամեն տեղերից: Ոչ մի տեղում ոչ մի հանգստութիւն չունի պղծագործ մարդն և կինն:

Ասում է Աստուած Միքիա մարգարէին. Վեր կաց և գնա՛, որովհետեւ այդտեղ քեզ համար չկայ հանգստութիւն. պղծութեան պատճառաւ ապականուեցիք ապակա՛նութեամբ, հալածուեցիք առանց ուրիշից հալածուելու (Միք. Բ. 10—11):

Վայ ձեզ, կեղծաւոր դպիրներ և փարիսեցիներ, որովհետեւ դուք նման էք ձիւնած գերեզմանների, որ դրսից երևում են գեղեցիկ, և ներքուստ լի են մեռելների ոսկերքներով և ամեն պղծութեամբ (Մատ. ԻԳ. 27):

Եթէ մեր Փրկիչ Տէր Յիսուս Գրիստոսի գիտութեամբ աշխարհիս պղծութիւններից փախչելով և դարձեալ նոյն մեղքերից բռնուելով յաղթուին, նոցա վախճանն առաջինից աւելի չար եղաւ: Որովհետեւ լաւ էր նոցա համար որ չճանաչէին արգարութեան ճանապարհը, քան թէ ճանաչեցին և յետ քաշուեցան այն սուրբ պատուիրաններից, որ անանգուեցաւ նոցա (Բ. Պետ. Բ. 20—21):

Այսուհետեւ հեռացնէք խաւարային գործերը և հազանէք լուսոյ զէնքերը, ինչպէս լուսոյ որդիք զգաստացած

չըջենք, ոչ անառակութեամբ և արբեցութեամբ, և ոչ խառն անկողիններով և պղծութիւններով և ոչ չար նախանձով և հակառակութեամբ. այլ հազէք մեր Տէր Յիսուս Քրիստոսը և խնամ մի տանէք մարմնոյ չար ցանկութեան համար (Հռ. ԺԳ. 12—14):

Գուցէ երբ կրկին անգամ կը դամ... ձեզ յօտ և սուգ կանեմ շատերի համար, որք առաջուց մեղք գործեցին և չապաշխարեցին իւրեանց գործած պղծութեան և պոռնը կութեան և գիշութեան մեղքերը, զորս գործեցին (Ք. Կորն. ԺԲ. 21):

Պ Ո Ւ Ն Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Պոռնկութիւնն շնութիւն համարուած է. «մարմինն պոռնկութեան համար չէ, այլ Տիրոջ համար, Տէրն էլ մարմնոյ համար է»։ քանզի մեր մարմիններն տաճարներ են Աստուածութեան համար: «Բոլորովին պատուական է ամուսնութիւնն և սուրբ են նորա անկողիններն. բայց Աստուած դատում է շնացողները և պոռնիկները»:

Վճռաբար ասում է Փրկիչն. Ամեն մարդ, ով որ առանց պոռնկութեան պատճառի արձակոււմ է իւր կինը նա ինքն պատճառ է լինում իւր կնոջ շնանալուն. և ով որ առնում է արձակուած կինը՝ գործում է շնութիւն — շնանում է (Մատ. Ե. 32):

Մարդոց սրտից են ելնում չար խորհուրդներ-շնութիւններ, պոռնկութիւններ, գողութիւններ, սպանութիւններ, ազահութիւններ, չարութիւններ, նենգութիւններ, գիշութիւններ, չարակնութիւն (ծակաչքութիւն, անվայել նայուածք) հայհոյութիւն, ամբարտաւանութիւն, անզգամութիւն: Այս ամեն չարիքն ելնում են ներսից և պղծում մարդը (Մար. Է. 21—23):

Կերակուրն փորի համար է, փորն կերակրի համար. բայց Աստուած կը խափանէ այս էլ, այն էլ. բայց մար-

մինն պոռնկութեան համար չէ, այլ Տիրոջ համար է. Տէրն էլ մարմնոյ համար է (Ա. Կորն. Զ. 13):

Այսուհետև հեռացրէք ձեզանից պոռնկութիւնը, պղծութիւնը, բիծը, չար ցանկութիւնը, և ազահութիւնը, որ է կռապաշտութիւն, այս պատճառաւ դալիս է Աստուծոյ բարկութիւնն անհաւատ որդւոց վերայ (Կող. Գ. 5—6):

Պ Տ Ո Ւ Ղ

Ս. Գրքի մէջ այս պտուղ բաժն գործ ածուած է առաքինութեան և մոլութեան, բարի գործերի և չար գործերի, արգարութեան և անիրաւութեան տեղ. որ. «ամեն բարի ծառ բերում է բարի պտուղ և չար ծառն բերում է չար պտուղ»: Ծառն դրուած է մարդոյ տեղ փոխարեւարար և պտուղները՝ զաւակների, բարեգործութեան և չարագործութեան տեղ: Ամեն ժամանակ աշխատելու ենք բարի պտուղներ բերել Աստուծոյ համար ինչպէս աղ-նիւ բանական ծառեր: Տես Գրքիս մէջ Այգի անուան տակ եղածը ևս:

Քո արդար աշխատանքներից... բաժին հանիր քո Տիրոջ համար (Առ. Գ. 9):

Արդարութեան պտղից բուսնում է կենաց ծառ (Առ. ԺԱ. 30):

Մարդոյ պտուղն իւր ողորմածութիւնն է (Առ. ԺԹ. 22): Այսուհետև ապաշխարութեան արժանի պտուղ արէք (Մատ. Գ. 8):

Ահաւասիկ կացինն դնուում է ծառի արմատին, ամեն ծառ՝ որ չէ բերում բարի պտուղ, կտրուում է և ձգուում կրակի մէջ (Մատ. Գ. 10):

Բարի ծառն կարող չէ տալ չար պտուղ. չար ծառն էլ կարող չէ տալ բարի պտուղ: Ամեն ծառ՝ որ չէ բերում բարի պտուղ, կտրուում է և ձգուում կրակի մէջ: Ուրեմն նոցա պտուղներից կը ճանաչէք զնոսա (Մատ. Է. 18—20):

Օրհնուած է քո որովայնի պտուղն (Ղուկ. Ա. 42):

Ծառն ճանաչուում է իւր պտղից (Ղուկ. Զ. 44):

Ասաց Յիսուս իւր աշակերտներին. ես եմ ճշմարիտ որթն (խաղողի ծառ), իմ Հայրն էլ մշակ է: Ամեն ճիւղ որ իմ վերայ է, բայց պտուղ չէ բերում, կտրում է նոյն ճիւղը. և ամեն ճիւղ որ բերում է պտուղ, մաքրում է (մատը կտրում է, յօտում է Հայր Աստուած) այն ճիւղը, որ էլ աւելի պտղաբեր լինի... Ես որթն եմ և գուշ ճիւղն. նա՛ որ հաստատուած է իմ վերայ, ես էլ նորա վերայ, նա բերում է շատ պտուղ. քանզի առանց իմ ոչինչ չէք կարող անել... Սորանով փառաւորուեցաւ իմ Հայրն, որ գուշ կը բերէք շատ պտուղ և կը լինիք իմ աշակերտներ (Յով. ԺԵ. 1—27):

ՉՍՄԲԵԼ—ուտեցնել, խմեցնել.

Երբ մեղանշում ենք Աստուծոյ դէմ, եւ ուտեցնում է սեղ արտասուքների հաց և խմեցնում է մեզ չափով արտասուքի դառն ջուր. իսկ երբ ապաշխարութեամբ քաւում ենք մեր մեղքերը, այն ժամանակ մեզ ուտեցնում է անմահական հաց և կենսատու բաժակ. եթէ մինչև անգամ մեր ամբողջ ունեցածը ուտեցնենք և խմեցնենք աղքատաց, բայց չունենանք անկեղծ սէր, ոչինչ ենք:

Ո՛վ Տէր, մեզ ուտեցրիւր արտասուքների հաց և խմեցրիւր չափով արտասուքներ (Սաղ. ՀԹ. 6):

Քո ժողովրդեան ուտեցրիւր Հրեշտակներէ հաց (մանա) և երկնքի պատրաստ հացը տուիւր նոցա առանց աշխատելու (Չանալու) (Իմ. ԺԶ. 20):

Եղբայրներ, ես չկարողացայ խօսել ձեզ հետ ինչպէս հոգեւորականների հետ, այլ խօսեցայ ինչպէս մարմնաւորների հետ: Քրիստոսով ինչպէս տղաների կաթնը ուտեցրի ձեզ և ոչ թէ կերակուր, վասն զի անկարող էիք. և հիմի էլ իսկապէս անկարող էք, քանզի դեռ մարմնաւոր էք:

Ձեր միջում այժմ էլ իսկապէս կան հեռ և հերձուածներ. Է՞ որ մարմնաւոր էք և գնում էք մարմնոյ համեմատ և ոչ հոգու համեմատ (Ա. Կորն. Գ. 1—3):

Թէ որ խօսիմ մարդոց և Հրեշտակաց լեզուները և չունենամ սէր, եղայ ես ինչպէս պղինձ կամ ինչպէս ծնծղայ, որ զօղանջում են-ձայն են հանում: Թէ որ ունենամ մարդարէութիւն և գիտենամ ամեն խորհուրդ և ամեն գիտութիւն, թէ որ ունենամ մինչև անգամ լեռները փոփոխեալու ամեն հաւատք, և սէր չունենամ, ոչ ինչ եմ: Եւ թէ որ իմ ամեն ինչքերը ուտեցնեմ աղքատաց և այրելու համար մատնեմ իմ մարմինը, բայց սէր չունենամ, ոչինչ չեմ օգտուիլ: Սէրն երկայնամիտ է, քաղցրացնում է. սէրն ոչ նախանձում է (չար նախանձով) ոչ ինքն իրան հաւանում (ինքնահաւան չէ), ոչ հպարտանում, ոչ յանդգնում... բայց այժմ մնում են այս երեքն հաւատք, յոյս և սէր. սոցանից աւելի մեծն է սէրն (Ա. Կորն. ԺԳ. 1—13):

Ձ Ն Ձ Ե Լ

Ազգերի և մարդկութեան անձնուէր հովիւներն 'ի բոլոր սրտէ Չանացած են իրենք զիրենք զո՛հ բերել Աստուծոյ իւրեանց բանաւոր հօտը ապրեցնելու համար. Չանացած են զիրենք ջնջիլ տալ Աստուծոյ դպրութեան կենաց տուժարից, միայն թէ իւրեանց հօտի անուան գրած և անջնջելի մնայ նոյն տուժարում. Չանացած են անէծք և նզով լինիլ, միայն թէ օրհնուէր, Աստուծոյ հաճելի վնէին և սրբագործուէին իւրեանց ժողովուրդներն: Ահա այսպէս էր Մովսէս, որ ասում էր. Ո՛վ Տէր, այժմ թէ որ ներում ես իմ ժողովրդեան մեղքերը՝ ներիւր, իսկ եթէ չես ներում, իմ անունը կ'ընկնի քո գպրութիւնից, որի մէջ գրեցիր: «Քրիստոս գնեց զմեզ ջնջիւր քո գպրութիւնից, որի մէջ գրեցիր անէծք լինելով. որովհետև գրուած է թէ Անիծեալ լինին այն ամենն, որ կախուած կը մնայ փայտից»: Քրիստոս ազօթում էր զինքը խաչողներին համար՝ ասելով. «Հայր Աստուած, ներիւր դոցա մեղքերը, վասն զի չգիտեն ինչ են գոր-

ծում: Գրում է և Պօղոս Ս. առաքեալն. «Սաստիկ բաղձանքով աղօթում էի ևս իսկապէս ինքնին նզով լինիլ (նզովուիլ) Գրիստոսից իմ մարմնաւոր եղբարց և ազգականաց համար, որք են իսրայէլացիք»:—Որ Գրիստոսին չհաւատարով կորչում էին հոգւով և մարմնով:

Ասում է Տէր Մովսէսին. Տեսի այդ ժողովուրդը, որ խտապարանոց ժողովուրդ է, թող տուր ինձ որ սատկեցնեմ ժողովուրդդ և երկնքի տակից ջնջեմ դոցա անունը (Բ. Օր. Թ. 13.—14):

Ասում է Մովսէս. Աղաչում եմ Քեզ, Տէր, մեծ մեղք գործեց այն ժողովուրդն (Իսրայէլացիք) շինեց իւր համար ոսկի որթ կուռք. այժմ թէ որ ներում ևս իւրեանց մեղքերը, ներիր. իսկ եթէ չես ներում, ջնջիր իմ անունը քո դպրութիւնից, որի մէջ գրեցիր (Եւք ԼԲ. 31—32):

Ես նոյն Աստուածն եմ, որ ջնջում եմ քո անօրէնութիւնները (Ես. ԽԳ. 25):

Ամպի պէս ջնջեցի քո անօրէնութիւնները, ասում է Տէրն (Ես. ԽԳ. 22):

Ձղջացէք ձեր մեղքերը ջնջելու համար (Գործք. Գ. 19):

Եւ դձեղ, որ երբեմն մեռած էիք ձեր մեղքերի և ձեր մարմնոյ անթլիատութեան մէջ, կենդանացոյց Յիսուս իւր անձի վերայ, բաշխեց ձեզ ձեր ամեն յանցանքները, և իւր հրամաններով ջնջեց մեր հակառակութեան ձեռագիրը, որ մեզ հակառակ կար, վերցրեց այն մէջ տեղից և բեռեց Խաչափայտին վերայ (Կող. Բ. 13—14):

Ս Ս Ղ Մ Ո Ս Ա Ս Ե Լ

Նշանակում է աղօթել առ Աստուած. օրհնել, գովել և փառաբանել Հայրը, Որդին և Ս. Հոգին—Ամենասուրբ Երրորդութիւնը: Աղօթքն լինում է ձայնաւոր—բարձրաձայն և ցած, որը ամեն ոք աղօթում է ինքն իրան իւր համար միայն: Երկու գէպբուն ևս պարտաւոր

ենք զգացմամբ աղօթել և ոչ թէ մերենայարար: Այս մասին տես և Աղօթքի խրատը:

Ո՛վ Տէր, սաղմոս կասենք քո զօրութեան համար (Սաղ. Ի. 14):

Սաղմոս կասեմ և միտքը կառնեմ—այս է հասկանալով և միտքը առնելով կասեմ—(Սաղ. Ճ. 1):

Թէ որ ձեզանից մէկն վշտանում է, թող աղօթք անէ. թէ որ մէկն ուրախանում է, թող Սաղմոս ասէ (Յակ. Ե. 13):

Աղօթք կանեմ հոգւով, աղօթք կանեմ և մտքով, սաղմոս կասեմ հոգւով, սաղմոս կասեմ և մտքով (Ս. Կորն. ԺԳ. 15):

Սաղմոսներով և օրհնութիւններով և հոգևոր երգերով խօսեցէք ձեր սրտերում, երգեցէք և սաղմոս ասեցէք ձեր սրտերում Տիրոջ համար (Եփ. Ե. 19):

Ս Ա Ր Կ Ա Ի Ա Գ

Սարկաւազներն լինում են կուսակրօն և ամուսնացեալ: Երկուքն Սարկաւազներն են զգուշութեամբ, զգաստութեամբ և սրբութեամբ ևս պարտաւոր են զգուշութեամբ, զգաստութեամբ, օրինակ առնելով կատարել իւրեանց հրեշտակական պաշտօնը, օրինակ առնելով նախասարկաւազ և նախավկայ Ս. Ստեփանոսը և հետեւելով նորա շաւղաց:

Սարկաւազներն պէտք է լինին պարկեշտ. Վինին ոչ երկկեղու, ոչ գինեսէր և ոչ շահախնդիր, այլ սուրբ մղտքով բռնած ունեան հաւատոյ խորհուրդը: Առաջ թող փորձուին իրանք, և յետոյ մտնեն պաշտօնին, որպէս զինանարատ լինին: Նոյնպէս պարկեշտ լինին և նոցա կանայքն. չար խօսողներ չլինին, այլ լինին հեղ և հաւատանքով մարգիկ, որք բարւոք վերակացու եղած լինին իւրեանց որդւոց և իւրեանց տուներին, որովհետև այն սարկաւազներն, որք լաւ կը կատարեն իւրեանց սարկաւազ-

ութեան պաշտօնը, կը շահին իւրեանց անձանց համար
բարի աստիճան և մեծ համարձակութիւն՝ Յիսուս Քրիստոսի
տոսի վերայ ունեցած հաւատոյ մէջ (Ա. Տիմ. Գ. 8—13):

Ս Ե Ր Մ Ա Ն Ե Լ

Գլխաւորապէս երկու միտք ունի սերմանել բառն. առաջինն
նշանակում է սերմել որեէ հացաբոյս կամ սերմը. երկրորդ նշա-
նակում է քարոզել, այս է Աստուծոյ խօսքերը սերմել լսողներին
սրտերում: Ամենամեծ քաջութիւնն այն է որ ամեն ոք աշխատէ
պողարեր անել իւր ընդունած Աստուծոյ խօսքը թէ՛ իւր լսած
քարոզներէն և թէ՛ Ս. Գրքից և խրատներէն: Վասն զի չար սերմ
սերմողներ էլ կան մեր սրտերի անդաստանի մէջ:

Ով որ սերմում է արդարութիւն, կընդունի վարձք
(Առ. ԺԱ. 21):

Ով որ սերմում է անզգամութիւն, կը հնձէ չարիք
(Առ. ԻԲ. 8):

Արդարութեամբ սերմեցէք ձեզ համար և հնձեցէք
ողորմութեամբ (Ովս. Ժ. 12):

Փրկիչն միանգամ քարոզելիս ասաց. Ահա սերմացանն
եղաւ սերմելու, և իւր սերմելու ժամանակ կար՝ որ ըն-
կաւ ճանապարհի վերայ, եւ եկն երկնից թռչունն եւ
կերաւ այն: Եւ սերմերից ուրիշն ընկաւ ասպառափի վերայ,
ուր չկար շատ հող. եւ շուտով բուսաւ երկրին հիւթ
չլինելու պատճառաւ. արեգակի ծագելու ժամանակ տա-
քացաւ, եւ որովհետեւ արմատներ չունէր, չորացաւ:
Ուրիշն էլ ընկաւ փշերի մէջ, եղան փուշերն եւ խեղդեցին
այն: Ուրիշն էլ ընկաւ բարի երկրի մէջ, եւ տալիս էր
պտուղ՝ կար որ հարիւրաւոր, եւ կար որ վաթսմաւոր եւ
կար որ երեսնաւոր: Ով որ ունի լսելու ականջ, թող լսէ՝
Յիսուս Քրիստոս իւր աշակերտաց խնդրանօք բացատրում
է այսպէս.

Եւ հիմի լսեցէք դուք սերմանացանի առակը: Ամեն
մարդից, որ լսում է արքայութեան խօսքը եւ մտքումն
չէ բռնում, դալիս է շարն եւ յափշտակում նորա սրտում
սերմածը. այն է որ սերմուեցաւ ճանապարհի վերայ: Եւ
սերմածը, այն է որ սերմուեցաւ ճանապարհի վերայ: Աս-
պառաձի վերայ սերմուածն այն է, որ երբ լսում է Աս-
տուծոյ խօսքը, իսկոյն խնդութեամբ ընդունում է նոյն
խօսքը, բայց որովհետեւ արմատ բռնած չէ իւր վերայ,
այլ առ ժամանակ մի է, խօսքին համար նեղութիւն եւ
հալածանք լինելու պատճառաւ շուտով գայթակղուում է:
Իսկ փուշերի մէջ սերմուածն այն է, որ երբ լսում է
խօսքը, աշխարհիս հոգսերն եւ մեծութեան պատրանք-
ներն խեղդում են Աստուծոյ խօսքը եւ լինում է անպը-
տուղ: Բայց բարի երկրում սերմուածն այն է, որ երբ
լսում է խօսքը, պահում է (առնու) մտքի մէջ եւ տալիս
պտուղ, կայ որ հարիւրաւոր—մէկին հարիւր—կայ որ
վաթսմաւոր եւ կայ որ երեսնաւոր:

Ուրիշ առակ էլ մէջ բերելով ասում է նոցա. Երկնից
արքայութիւնն (Թագաւորութիւնն) նմանուեցաւ այն մար-
դոյն, որ սերմում է սերմը իւր բարի ագարակի մէջ: Եւ
մարդոյն քնացած ժամանակ եկն նորա թշնամին և ցանեց
որով նորա վերայ-ցորենի մէջ-և գնաց: Եւ երբ կանաչեց
տենալով տանուտէրի ծառաներն՝ ասում են նմա. Տէր,
ցորենն և առաւ պտուղ, յետոյ երեւցաւ և որոմն: Մօ-
չէ որ բարի սերմ սերմեցիր քո ագարակին մէջ. հիմի
որտեղից ունի այն որով: Եւ նա ասում է նոցա. Թշնամի
մարդ արած է այն: Ասում են նմա ծառաներն. Կամենում
ես որ գնանք, քաղհաններ: Եւ նա ասում է նոցա.—Ձեռ
կամենում. դուցէ որով քաղհանելիս ցորենն էլ միասին մեծա-
հեռ կը քանդէք. թող տուէք երկուքն էլ միասին մեծա-
նան մինչև հնձի ժամանակ. հնձի ժամանակ խօսքեր
ձողներին: Նախ քաղեցէք որով և կապեցէք խօսքերի
այրելու համար, և հաւաքեցէք ցորենը իմ ամբարների մէջ:
Փրկիչն կրկին աշակերտաց խնդրանօք մեկնում է այս

առակը ևս ասելով. Բարի սերմը սերմանոյն Մարդոյ Որդին է ինքն Յիսուս. ազարակն է այս աշխարհն. բարի սերմն նորա են, որք Աստուծոյ թագաւորութեան որդիքն են, իսկ որոմն չարին Սատանային որդիքն են, և թշնամին որ ցանեց որով՝ Սատանան է, հունձն աշխարհիս վերջն է, հնձողներն էլ Հրեշտակներն են: Ինչպէս հաւաքուում է որոմն և այրուում կրակի մէջ, այնպէս կը լինի և այս աշխարհի վերջում. Մարդոյ Որդին կուղարկէ իւր հրեշտակները և կը հաւաքեն Աստուծոյ թագաւորութիւնից ամեն գայթակղութիւնները և նորանք, որք գործում են անօրէնութիւն և կը ձգեն զնոսա վառարանի-դժոխքի-կրակին մէջ, այն տեղ կը լինի լալն և ատամների կրճեղն: Այն ժամանակ երկնից թագաւորութեան մէջ արդարներն կը ծագեն ինչպէս արեգակ: Ով որ ունի լսելու ականջ՝ թող լսէ (Մատ. ԺԳ. 4—43):

Ս է Ր

Անասման է Աստուծոյ մարդասիրութիւնն, այնպէս որ հնարաւոր չէ գրչի լեզուաւ ճիշտ պատկերացնել Աստուածութեան մեր վերայ ունեցած սէրը, միայն իմանում ենք խորին զգացմամբ: Երբ մտածում ենք որ Յիսուս Քրիստոս մեր սիրոյն համար մարդ եղաւ տիեզերքը խօսքով ստեղծողն մեր սիրոյ համար չարչարուեց, խաչուեց, ամառուեց և թաղուեց իբրև մարդ և դժոխքը բանգից և բանաարկիալ հողիները աղատեց և յարեաւ. այն ժամանակ կը զգանք որ դժուար է բերանի և գրչի լեզուներով բացատրել Աստուծոյ մեր վերայ ունեցած անսահման սէրը: Ահա այսպիսի սէր էլ պահանջում է Տէրն և մեզանից, որը մենք ունենանք առ Աստուած և առ մէկզմէկ-սէր առ Աստուածութիւնն և սէր առ ընկերս: Առանց այս երկու պարտաւորութիւնները ի բոլոր սրտէ կատարելու ոչ որ չէ կարող սրդի Աստուծոյ համարուիլ:

Մահուան պէս զօրաւոր է սէրն և գերեզմանի պէս

խիտ է նախանձն... Եստ ջուրեր չեն կարող հանգցնել սէրը և գետեր չեն կարող արգելել սէրը (Երգ երգոց Ը. 6—7):

Ասում է Տէրն. Ես ընդունեցի ժողովուրդը իմ բազուկների վերայ, և չգիտացին թէ բժշկում եմ զնոսա մարդկան ապականութիւնից. և դէպի ինձ քաշեցի զնոսա իմ սիրոյ կապերով (Ովս. ԺԱ. 3—4):

Հօր Տէր Աստուածն քո մէջ է, ժողովուրդ, և կը վրկէ դքեզ, կը բերէ քո վերայ ուրախութիւն և կը նորոգէ դքեզ իւր սիրով (Սով. Գ. 17):

Ասում է Տէր. Յաւատենական սիրով (Քրիստոսով) սիրեցի դքեզ, ժողովուրդ. (Եր. ԼԱ. 3):

Ասաց Յիսուս իւր աշակերտներին. Ինչպէս սիրեց զես Հայրս, ես էլ սիրեցի զձեզ. հաստատուն կանգք իմ սիրոյ մէջ: Թէ որ կը պահէք իմ պատուէրները, կը կենաք իմ սիրոյ մէջ, ինչպէս պահեցի ես իմ Հօրս պատուէրները և կամ Նորա սիրոյ մէջ... Այս է իմ պատուէրն, որ սիրեք մէկզմէկ, ինչպէս ես էլ սիրեցի զձեզ: Ոչ ոք չունի սորանից աւելի մեծ սէր-թէ որ իւր կեանքը գնում է իւր բարեկամների վերայ (Յով. ԺԵ. 9—13):

Ամենից առաջ միմեանց վերայ ունեցեք սերտ սէր, սրովհետեւ սէրն ծածկում է մեզաց շատութիւնը (Ա. Պետ. Գ. 8):

Տեսէք թէ ինչպիսի սէր շնորհեց մեզ Հայր Աստուած, որ մենք էլ կօշուրինք Աստուծոյ որդիներ... Սիրելիք, այժմ Աստուծոյ որդիներ ենք (Ա. Յով. Գ. 1—2):

Սիրելիք, սիրեք մէկզմէկ, որովհետեւ սէրն Աստուծոյ է. և ամենն ով որ սիրում է, ծնուած է Աստուծոյ և ճանաչում է Աստուած: Եւ ով որ չէ սիրում, չէ ճանաչում զԱստուած. վասն զի Աստուած սէր է: Աստուծոյ գերազանց սէրն յայտնուեցաւ մեր մէջ այս բանով, որ իւր Միածին Որդին ուղարկեց աշխարհ, որ կենդանի լինինք նորանով: Սիրոյ գերազանցութիւնն սորա մէջ է, զի ոչ թէ

մենք սիրեցինք զԱստուած, այլ որ Նա սիրեց զմեզ և ուղարկեց իւր Որդին մեր մեզքերը քաւելու համար: Սիրելիք, եթէ Աստուած այնպէս սիրեց զմեզ, ուրեմն և մենք պարտական ենք մէկզմէկ սիրել (Ա. Յով. Գ. 7—11):

Այլ այս ամեն հոգեւոր պատերազմների մէջ աւելի յաղթում ենք Նորանով—Քրիստոսով—որ սիրեց զմեզ: Քանզի հաստատ գիտեմ թէ ոչ մահ, ոչ էլ կեանք, ոչ էլ հրեշտակ, ոչ էլ իշխանութիւններ, ոչ էլ ներկայ եղածներն, ոչ էլ ապագայ պատրաստուածներն, ոչ էլ զօրութիւններ, ոչ էլ բարձրութիւն, ոչ էլ խորութիւն, ոչ էլ ուրիշ ստեղծուած չէ կարող բաժանել զմեզ Աստուծոյ այն սէրից, որ մեր Տէր Յիսուս Քրիստոսով է (Հռ. Ը. 37—39):

ՄՆՈՏԻ — սուտ, փուշ, ոչինչ:

Զգուշանալու է սնտիապաշտութիւնից, սուտ խօսքերից խաբուելուց, խաբերայ խոստումներից մոլորուելուց և հոգեկորուտ մարգործներից: Հեռի կենալու է և յիմար վիճաբանութիւնից:

Քո Տէր Աստուծոյ անունը բերանդ չառնես փուշ բաների համար (Բ. Օր. Ե. 11):

Յանկացան պաշտել սուտ Աստուածներ (Դատ. Ե. 8):
Գնացին սուտ աստուածների ետևից (Գ. Թագ. Ժ. 15):

Հեթանոսաց կուռքերն ոսկի և արծաթ են, ձեռագործներ են մարդկան որդւոց շինած (Սաղ. ՃԺԳ. 4):

Մարդիկ իւրեանց յոյսը դրած էին սուտ բաների վերայ (Ես. ԾԹ. 4):

Մոլորեցրին ժողովուրդը սուտ աստուածներով (Ամովս. Բ. 4):

Մնտի են Հեթանոսաց բոլոր կուռքերն (Եր. Ժ. 3):
Ասում է Տէր Երեմիայի բերանով ժողովուրդեան.

սխալուած ժամանակ խօսեցի քեզ հետ, բայց դու ասացիր թէ լսելու չեմ քեզ. այդ է քո ճանապարհն քո մանկութիւնից, որ մտիկ չանես իմ խօսքին... դու կամայեա կութիւնից, որ մտիկ չանես իմ խօսքին (Եր. ԻԲ. 21—22): և կանարգուիս քո ամեն սիրելիներից (Եր. ԻԲ. 21—22):

Զլինի թէ մէկն զձեզ խաբէ սուտ խօսքերով. որովհետև այս պատճառաւ էլ իսկապէս գալիս է Աստուծոյ բարկութիւնն անհաւատ Որդւոց վերայ: Այսուհետև բաժանորդ չլինիք նոցա (Եփ. Ե. 6—7):

Զգուշացէք, չլինի որ մէկն կողոպտէ զձեզ ճարտարմտութեամբ և սնտի խաբէութեամբ, որ մարդոց աւանդութեան պէս է և աշխարհի սկզբունքներին նման և ոչ թէ Քրիստոսի քարոզածին պէս. վասն զի Քրիստոսի մէջ բնակում է մարմնապէս Աստուածութեան ամեն լրումն (Կող. Բ. 8—9):

Բայց դու, Որդեակը իմ Տիտոս, հեռի կնց յիմար վիճաբանութիւնից, ճիւղագրութիւնից, հակառակութիւնից և օրէնքի մասին եղած կռիւներից, վասն զի անօգուտ են ու սնտի: Հերձուածող մարդից առաջին և երկրորդ անգամ խրատելուց յետոյ՝ հեռացիր (Տիտ. Գ. 9—10):

Ս Ն Ո Ւ Յ Ա Ն Ե Լ

Նշանակում է կրթութեամբ մեծացնել: Սուրբ Գիրքն և արտաքին նշանակում է կրթութեամբ մեծացնել են, որ նշանաւոր անձանց պատմութիւններն ապացուցանում են, որ նշանաւոր անձանց քաջութիւնները Մարդկութիւնն պարտական է նոցա սնուցանող ներին և դաստիարակներին: Պարտակատար սնուցիչներն միշտ աշխատած են և աշխատում են սնուցանել ականաւոր մարդիկ Մարդկութեան համար, ընտիր անդամ ազգի համար, աւանդապահ և կեկեղեցու և դաւանութեան կրօնի համար և օրինակելի հայր և մայր գերդաստանների համար: Շատ ցանկալի է որ այդ ուղղութեան հետեւին և Հայոց ծնողներն, դաստիարակներն և սնուցիչներն:

Սամուէլ ժարգարէի մայրն Աննա նստաւ և ժայրական գթով սնուցանում էր իւր (Սամուէլ) որդին (Ա. Թագ. Ա. 23):

Արգար հայրն բարի է մեծացնում իւր որդին և խելացի զաւակների վերայ ուրախ է լինում նորա սիրան (Առ. 1Գ. 24):

Մովսէսն էլ ծնաւ և գեղեցիկ էր Աստուծոյ առաջ, որ իւր հօր տան մէջ մեծացաւ երեք ամիս: Երբ դուրս ձգուեցաւ Մովսէս, վեր առաւ Փարաւոնի աղջիկն և մեծացուց իւր համար որդեգիր (Գործք. Է. 20—21):

Հայրեր, մի բարկացնէք ձեր զաւակները, այլ մեծացուցէք Տիրոջ ուսմամբ (Տիրոջ օրէնքները և Ս. Գիրքը ուսուցանելով) և խրատներով (Եփ. 2. 4):

Ս Ո Ւ Տ

Ճշմարիտ է Ստեղծողն և սիրում է ճշմարիտը և ճշմարտութիւնը: սորա պատճառաւ էլ ասաց Յիսուս, պատուիրելով. «Ձեր խօսքն այոն այո լինի, և ոչն ոչ լինի, նորանից աւելին չարիցն-Սատանայից—է»:

Մի վկայէր սուտ վկայութիւն (Ելք. Ի. 13. Բ. Օր. Ե. 18):

Աստուծոյ առաջ պիղծ են սուտ խօսող շրթունքներն (Առ. ԺԲ. 22):

Սուտ (ստախօս) շրթունքներն անվայել են արգարներին (Առ. ԺԷ. 7):

Սուտ վկայութիւն սուտոյն անպատիժ չմնար (Առ. ԺԹ. 9):

Ստութիւն խօսողն կը կորսուի (Առ. ԺԹ. 9):

Զգուշացէք սուտ ժարգարէներէրից (քարոզիչներէրից), որ գալիս են ձեզ մօտ ոչխարների հագուստներով, և ներքուստ յափշտակող գայլեր են (Մատ. Է. 15):

Վեր կը կենան սուտ քրիստոններ և սուտ ժարգարէներ և կը տան մեծամեծ նշաններ և հրաշքներ, մինչև մոլորեցնել եթէ հնար է և ընտրեալներ (ամենեւին չհաւատաք) (Մատ. ԻԳ. 24):

Սկզբից ժարգասպան էր Սատանան և չմնաց ճշմարտութեան մէջ, քանզի նորա մէջ չկայ ճշմարտութիւն. երբ որ սուտ է խօսում, այն իւրայիններից է խօսում, քանզի սուտ է և նորա հայրն-Սատայէլն (Յով. Ը. 44):

ՍՊԱՆԱՆԵԼ—սպանել

Սպանութիւնն երկու տեսակ է. սպանել մարմնով, սպանել բարո-Սպանութիւնն երկու տեսակ է. սպանել մարմնով, սպանել բարո-յապէս, այս է կոտորել անմեղ մարդոց, կանանց և օրիորդաց-աղջիկաց-անուներ, պատիւը, և վարկը բամբասելով, զրպարտելով, մատնելով, ստախօսութեամբ, են, են: Երկու տեսակն ևս մահացու մեղք են և արգելուած Հին և Նոր օրէնքներէրից:

Մարդ չսպանես (Ելք. Ի. 12. Բ. Օր. Ե. 18):

Ասաց Փրկիչն ժողովրդեան. Լսած էք, ով որ ասացէ՛ Հին կտակարանում. «Մի սպաներ, որովհետեւ որ սպանէ՛ պարտական կը լինի դատաստանի»: Բայց ես ասում է իւր ձեզ. եթէ ամեն մարդ՝ որ զուր տեղ բարկանում է իւր եղբօր վերայ, պարտական կը լինի դատաստանի. և ով որ ասում է իւր եղբօր կամ քրոջ՝ յիմար, պարտաւոր կը լինի ատենի. և ով որ ասում է անմիտ, պարտաւոր կը լինի գեհէնի-դժօրաքի-կրակին (Մատ. Ե. 21—22):

Սրտից են ելնում չար խորհուրդներն՝ սպանութիւն, շնութիւն, գողութիւն, սուտ վկայութիւն, ևն (Մատ. ԺԵ. 19. Մատ. Է. 22):

Մեր նախնիք իրաւամբ մահացու մեղաց շարքում դրած են ծու-
լութիւնը: «Աստուծոյ թագաւորութիւնն բունադատուում է (մի-
մեանց ձեռքից խլում են), և քաջերն են յափշտակում Աստուծոյ
արքայութիւնը»: Ուրից և ծուլից համար փակուած է Աստուծոյ
արքայութիւնն: Թողում ասել գերդաստանների նիւթական վը-
նասներն, որ առաջանում է ծուլութիւնից:

Գնահ մըջիւնին մօտ, ո՛վ ծոյլ, և նախանձիր նորա
ճանապարհների վերայ և իմաստուն եղիր նորանից աւելի:
Վասն զի մըջիւնն ո՛չ հողագործութիւն ունի և ո՛չ հար-
կադրող ո՛չ էլ տիրող ունի. իւր կերակուրը պատրաստում
է ամբան ժամանակ և հնձի միջոցին դնում է շատ ամ-
բարներ (Առ. 2. 6—8):

Մինչև երբ քնանաս, ո՛վ ծոյլ. երբ կը զարթես քը-
նիցդ: Մի քիչ կը ննջես, մի քիչ կը նստես, մի քիչ կը
քնանաս, մի քիչ ձեռներդ կը հանգստացնես կուրծքիդ
վերայ: Ապա այնուհետև շար ճանապարհորդի պէս կը
հասնի քո վերայ աղքատութիւնն և ժիր սուրհանգակի
(փոշտ տանող, թղթատար) պէս կարօտութիւնն: Իսկ թէ
որ աշխատասէր կը լինիս, քո ամառն կը հասնի ինչպէս
աղբիւր, և կարօտութիւնն ինքնահալած (ինքն իրան կը
հալածուի) կը լինի (Առ. 2. 9—11):

Թոյլերն կարօտ կը լինին մեծութեան. իսկ ժիր մար-
դիկ հաստատուում են մեծութեամբ (Առ. ԺԱ. 16):

Կարօտութեան մէջ են ամեն ծոյլերն (Առ. ԺԳ. 4):
Թոյլը երբ տեղ ուղարկես, կասէ, Առիւծն կտրած է
ճանապարհները և մարդասպաններն՝ հրապարակները
(Առ. ԻԱ. 13):

Ինքն զինքը իմաստուն կը համարի ծոյլն (Առ. ԻԱ. 16):

Աստուծոյ ճշմարիտ հաւատքից և աստուածպաշտութիւնից հեռաց-
նում են ժողովուրդը և խաբեբայութեամբ սովորցնում սնտախա-
պաշտութիւն և անհաւատութիւն կախարհներն և սուտ գուշա-
կութիւն անող փաւլէի, կոռնը չափող, զարի ձգող, կապար եւ
մոմ հալող, զիր անող, ջինդար, ռամ քցող, և այլն, և այլն:
Աստուած հրամայած է կոտորել և սպանել այդպիսիները, որք
իւրեանց կախարգութիւններով մոլորեցնում են ճշմարիտ աստուա-
ծապաշտները և սուտ գուշակութիւններով ծուլ միամիտները, և
նիւթապէս կողոպտում ժողովուրդը: Արդե՞ք երբ զգաստանալու
է Հայ ազգն, երբ խմանալու է որ բոլորովին խաբեբաներ են կա-
խարհներն, գրքացներն, սուտ գուշակութիւն անող, կոռնը
չափող, փաւլէի, զարի ձգող, կապար և մոմ հալող, վախ եր-
բաղող (վախը վեր առնող), ջինդար, ռամ քցող, և այլն և այլն:
Երանի թէ գոնէ զգաստանային մերայինք այսուհետև և չփոխէին
Յիսուս Քրիստոսի Ս. Աւետարանը սուտ գրքացի հետ, ճշմարիտ
հաւատքը խաբեբայ անհաւատութեան հետ, և Աստուածութիւնը՝
պաշտելի Հայրը, Որդի և Ս. Հոգին՝ մոլորեցնողների հետ:

պաշտելի Հայրը, Որդի և Ս. Հոգին՝ մոլորեցնողների հետ: (Եւբ. ԻԲ. 18):

Կախարհները չապրեցնէք-սպանեցէք (Եւբ. ԻԲ. 18):
Մի գնաք կախարհների ետեից և մի մօտենաք սուտ
մարդարէութիւն անողներին-մի նայէք վհուկներին, և մի
հարցնէք կախարհներին-որ նոցանով չպղծուիք (Ղևտ.
ԺԹ. 31):

Այն անձն էլ (մարդ կամ կին) որ կը գնայ կախարհ-
ներին և գրքացներին, նոցանով պոռնկելու¹⁾, նորա վերայ
կը դարձնեմ իմ երեսը և կը կորցնեմ այնպիսի անձը իմ
ժողովուրդեան միջից (Ղևտ. Ի. 6):

¹⁾ «Յաւիտենական»-մշտենջենաւոր-վերնագրի տակ տեսանք
որ Աստուած իւր ստեղծած մարդը իբրև անմահ հարմնացու նշա-
նել է իրան, և Պօղոս Ս. առաքեալն ասում էր քրիստոնեայ ժողո-
վրդեան, «Ես նշանեցի ձեզ մի մարդոյ-Քրիստոսի-ինչպէս մի սուրբ

Չգիտէք որ տաճար էք Աստուծոյ, և Աստուծոյ Հոգին բնակուում է ձեր մէջ: Թէ որ մէկն կապականէ Աստուծոյ տաճարը, կապականէ զնա Աստուած. քանզի Աստուծոյ տաճարն սուրբ է, որ էք դուք (Ա. Կորն. Գ. 16—17):

Միթէ չգիտէք որ ձեր մարմիններն տաճար են Աստուծոյ Հոգուն, որ ձեր մէջ է, Որը ունիք Աստուծոյ և դուք ձեր անձանց տէրն չէք: Որովհետև զնոց գնուած էք (Յիսուս Քրիստոսի արիւնով և մահուամբ գնուած էք, աւանուած էք) փառաւորեցէք Աստուած ձեր մարմնով և Հոգւով, որ Աստուծոյ է (Ա. Կորն. Զ. 19—20):

Հնչողորդակցութիւն մի ունենաք անհաւատներին հետ. քանզի ինչ մասնակցութիւն ունի արդարութիւնն անօրէնութեան հետ, կամ ինչ հաւասարութիւն ունի լոյսն խաւարի հետ, և կամ ինչ միաբանութիւն ունի Քրիստոս թելիարին հետ, կամ ինչ բաժին ունի հաւատացեալն անհաւատին հետ, կամ ինչ նմանութիւն ունի Աստուծոյ տաճարն կուոց մեհենի (կուստուն) հետ: Դուք արդէն կենդանի Աստուծոյ տաճարն էք, ինչպէս էլ ասաց Աստուած, թէ կը բնակիմ նոցա մէջ և կը գնամ նոցա մէջ, ես կը լինեմ նոցա Աստուած, նոքա էլ կը լինեն իմ ժողովուրդ: Վասն որոյ ելէք նոցա միջից և հեռացէք, ասում է Տէրն և չը մօտենաք պիղծ բաների. և ես կընդունեմ զձեզ և ես կը լինիմ ձեզ Հայր և դուք կը լինիք որդիներ և աղջիկներ, ասում է ամենակալն Տէրն (Բ. Կորն. Զ. 14—18):

Դուք էլ ինչպէս կենդանի քարեր շինուում էք Հոգևոր տաճարներ, սուրբ քահանայութիւն՝ Յիսուս Քրիստոսի ձեռնով Հօր Աստուծոյ համար հոգևոր պատարագ մատուցանելու (Ա. Պետ. Բ. 5):

Տ Ա Ն Ձ Ա Ն Ք

Արդար է Աստուծոյ դատաստանն, որով ըստ արժանոյն պատժում է յանցաւորները-մեղաւորները և վարձատրում է առաքինիները-արդարները յաւիտենական ուրախութեամբ: Թէ մարդ և թէ կին ով որ լսելու ականջ ունի, թող լսէ:

Մեղաւորներն կրելու են շատ տանջանքներ, բայց նոքա, որ իւրեանց յոյսը դնում են Տիրոջ վերայ, չը պատուում են Տիրոջ ողորմութեամբ (Մաղ. ԼԱ. 10):

Անխրատների համար պատրաստուում են տանջանքներ (Առ. ԺԹ. 29):

Մեղաւորներն կը գնան յաւիտենական տանջանքն և արդարներն կը գնան յաւիտենական կեանքն (Մատ. ԻԵ. 46):

Հարուստ մեծատունն դժոխքում, երբ տանջանքի մէջ էր, բարձրացուց իւր աչքերը և հեռուից տեսաւ Աբրահամը և Ղազարոսը՝ որ հանդչում էր նորա գոգում (Ղուկ. ԺԶ. 23—31):

Տ Ն Ա Ն Կ

Նշանակում է տան մէջ ընկած աղքատութիւնից կամ հիւանդութիւնից և կամ ծերութիւնից: Մարդկութեան և ազգութեան արող և անփրաս անդամներն պարտաւոր են կերակրել և հագցնել աղքատները, տնանիները և խեղանդամները-կոյրերը, անդամալոյժները, ձեռնաանները, և այլն: Այսպիսիներին արած ողորմութիւնը համարում է Աստուած նոյն իսկ իրան արած, նոյնպէս և անարգանքը և անպատուութիւնը: Դատաստանի մէջ ևս արդարութեամբ վարուելու է: Զգուշանալու է կեղծ տնանիներից:

Դատաստանի մէջ ողորմութիւն չանես տնանկին (Եբք. ԻԳ. 3):
Զձուես տնանկին իրաւունքները (Եբք. ԻԳ. 6):

Չկարես տնանկին վարձքը (Բ. Օր. ԻԳ. 14):

Տիրոջ աչքերն նայում են տնանկների վերայ (Սաղ. Թ. 9 և Ժ. 5):

Երանի այն անձին, որ հոգս է տունում աղքատին և տնանկին համար. նեղութեան օրում Տէրն կը փրկէ զնա (Սաղ. Խ. 1):

Աստուծոյ դէմ մեղանշում է նա, ով որ անարգում է աղքատը և տնանկը (Առ. ԺԳ. 21):

Աղքատները և տնանկները զրպարաօղն բարկացնում է նոցա Ստեղծողը (Առ. ԺԳ. 31):

Աստուծոյ փոխ է տալիս նա, ով որ ողորմում է տնանկին (Առ. ԺԹ. 17):

Երբ անում ես (պատրաստում ես) ճաշկերոյթ, կանչիր աղքատները, խեղանդամները, կաղերը և կոյրերը, և երանելի կը լինիս, վասն զի ոչ ինչ չունին նոքա փոխարէնը քեզ հատուցանելու, փոխարէնն քեզ կը հատուցուի արդարոց յարութեան ժամանակ (Ղուկ. ԺԳ. 13—14):

Տ Ո Ւ Ն Ա Ս Տ Ո Ւ Ծ Ո Յ

Յանուն Աստուծոյ կառուցած և օծուած աղօթարան, որ համարուած է Տուն Աստուծոյ: Ամեն ոք պարտական է աղօթելու համար սիրով զնալ Ս. տունն և աղօթել:

Քո շատ ողորմութեան համեմատ ես կը մտնեմ քո տունն և քո երկիւղով երկրպագութիւն կը մատուցանեմ քո սուրբ տաճարում (Սաղ. Ե. 8):

Տէր, սիրեցի քո տան վայելչութիւնը և քո փառաց յարկի տեղը (Սաղ. ԻԵ. 8):

Ուրախ եղայ ես, երբ մարդիկ ասում էին ինձ, զբնանք Տիրոջ տունն (Սաղ. ՃԻԱ. 1):

Եկէք բարձրանանք Տիրոջ սարն և Յակովբայ Աստուծոյ տունն, և կը պատմէ մեզ իւր ճանապարհները և կը

զնանք նոյն ճանապարհով: Որովհետև Սիօնից կերնեն օրէնքներ և Տիրոջ խօսքն՝ Երուսաղեմից (Ես. Բ. 3):

Տիրոջ փառքովն լցաւ Տիրոջ տունն (Յզեկ. ԽԳ. 4):

Իմաստութիւնն շինեց իւր տունը և կանգնեց եօթն սիւներ. մօրթեց իւր մասցուքները, խառնեց իւր գինին սիւներ. մօրթեց իւր մասցուքները, խառնեց իւր ծառա- և պատրաստեց իւր սեղանը: Եւ ուղարկեց իւր ծառաները բարձր քարոզութեամբ կանչել-հրաւիրել լսողները — իւր սեղանի վերայ և ասում է. Ով որ անդգամ է, թո՛ղ գայ ինձ մօտ. և ասում է պակասամիտներին. Եկէք թո՛ղ կերէք իմ հացից, և խմեցէք իմ գինուց, որը խառնեցի կերէք իմ հացից, և խմեցէք իմ գինուց, որը խառնեցի ձեզ համար: Թողէք անդգամութիւնը և կապրէք, խընդրեցէք իմաստութիւն որ ապրէք (Առ. Թ. 1—6):

Յ Ա Ի

Նա (Թշնամին) բռնուեց անօրէնութեան ցաւով. յղացաւ չարութիւն և ծնաւ անօրէնութիւն: Կը դառնան նորա գլխի վերայ չարութիւններն և կիջնի նորա դատարանի վերայ անօրէնութիւններն (Սաղ. Է. 15 և 16):

Տէրն կը հանգստացնէ զքեզ ցաւերիցդ և տանջանքներիցդ (Ես. ԺԳ. 3):

Հալածուեցան ցաւերն էլ, տրտմութիւններն էլ, հեծութիւններն էլ (Ես. ԼԵ. 10):

Յ Ն Ծ Ա Լ — ուրախանալ

Իմ անձն կը ցնծայ Տէրով (Սաղ. ԼԳ. 9):

Արդարներն ուրախ կը լինին և կը ցնծան Տիրոջ առաջ (Սաղ. ԿԷ. 4):

Ուրախացէք երկինք, և կը ցնծայ երկիր, սարերն գոչեն ցնծութիւն և բլուրներն արդարութիւն, վասն զի Աստուած ողորմեցաւ իւր ժողովրդեան (Ես. ԽԹ. 13):

Ասաց Փրկիչն. Երանի է ձեզ՝ երբ մարդիկ կը նա-

խատեն զձեզ և կը հալածեն և ձեր մասին կասեն ամեն տեսակ չոր և սուտ խօսք իմ պատճառաւ: Յնծացէք և ուրախ եղէք. որովհետև ձեր վարձքն շատ են երկնքումն (Մատ. Ե. 11—12):

Միասին կը ցնծան սերմողն էլ, հնձողն էլ (Յով Գ. 36):

Փ Ա Խ Չ Ի Լ

Հարկ է փախչիլ ամեն տեսակ մոլութիւններից, մեղքերից և հոգևոր ու մարմնաւոր անպատուութիւնից, բայց ոչ հոգևոր պատերազմից:

Ամբարիշտ մարդն փախչում է առանց մէկի հալածելուն, իսկ արդարն քաջասիրտ է առիւծի պէս (Առ. ԻԸ. 1):

Սուրբ Հոգին փախչում է նենդութիւնից (Իմ. Ա. 5):

Փախչենք աշխարհիս ցանկութիւններից և ապակառնութիւններից (Բ. Պետ. Ա. 4):

Փախէք պոռնկութիւնից (Ա. Կորն. Զ. 18):

Փախէք կռապաշտութիւնից (Ա. Կորն. Ժ. 14):

Բոլոր շարեաց արմատն է արծաթսիրութիւնն... բայց դու, ո՞վ մարդ Աստուծոյ, փախիր նորանից և գնան արդարութեան, աստուածապաշտութեան, հաւատոյ, սիրոյ, համբերութեան և հեղութեան ետեւից (Ա. Տիմ. Զ. 10—11):

Փախիր երիտասարդական ցանկութիւնից (Բ. Տիմ. Բ. 22):

Փ Ա Ռ Ա Ի Ո Ր Ե Լ

Ամեն արարածներ փառաւորում են իւրեանց Ստեղծողը. որչափ ևս աւելի պարտաւոր ենք փառաւորել Աստուածութիւնը որքան հոգևական շնորհքները վայելած ենք մենք և միշտ վայելում ենք բոլոր արարածներից աւելի:

Ո՞վ Աստուած, յաւիտեան կը փառաւորեմ քո առնունը (Սաղ. ԶԵ. 12):

Ժողովուրդներն զարմացան (անդամալուծի բժշկութեան վերայ) և փառաւորում էին զԱստուած (Մատ. Թ. 7—8):

Հովիւներն յետ դարձան, փառաւորում և օրհնում էին զԱստուած (Ղուկ. Բ. 20):

Ամենքն փառաւորում էին զԱստուած (Գործք. Գ. 21):

Քրիստոսի արիւնով գրուած էք փառաւորեցէք զԱստուած ձեր մարմնով և հոգևով (Ա. Կորն. Զ. 20):

Փ Ո Խ Տ Ա Լ

Փոխառութիւնն առաջանում է նիւթական անհրաժեշտ կարօտութիւնից: Պետութիւններն անգամ ստիպուած են լինում փոխառութիւն անել իւրեանց հպատակներից: Նախ պարտաւոր է փոխ առնողն պայմանի որոշած ժամանակ վճարել իւր փոխառածը: Երկրորդ՝ փոխ տուողն, երբ տեսնում է որ խիստ նեղութեան մէջ է իւր փոխառուն, պէտք է երկայնամիտ լինի մի առ ժամանակ, որպէս զի փոխառուն կարողանայ վճարել իւր պարտքը:

Թէ որ արծաթ փոխ տաս քո եղբորդ կամ քրոջը (ամեն ազգային եղբայր է և քոյր) որ աղքատ կը լինի քեզ մօտ, չստիպես և շահ չդնես նորա վերայ: Եւ թէ քրաւես քո ընկերի վերարկուն, արեգակի մտնելուց առաջ դարձնես իրան, որովհետև այն է նորա վերարկուն և այն է նորա մերկութիւնը ծածկող զգեստն, որով քնանում է. և թէ որ նա բողոքէ ինձ-ասում է Տէրն—կը լսեմ քո բողոքը, քանզի ես ողորմած Աստուած եմ (Եբ. ԻԲ. 25—27):

Թէ որ քո եղբայրներից մէկն կարօտ լինի... չդարձնես—չխստացնես-քո սիրտը և չկծկես քո ձեռնը քո կարօտեալ եղբորից, այլ բանաս քո ձեռնը և թաս փոխ նմա (Բ. Թր. ԺԵ. 7—8):

Օ Գ Ն Ա Կ Ա Ն

Ստեղծենք Ադամին համար օգնական իւր նման (Ծնն. Բ. 18):

Բայց մեզ օգնական եղար, ո՞վ Տէր (Ա. Եգր. Ը. 81):

Որբին օգնականն դու ես, ո՞վ Տէր (Սաղ. Թ. 14):

Համբերիր Տիրոջ, որ օգնակալ լինի քեզ (Առ. Ի. 22):

Տէրն է իմ օգնականն եւ ես չեմ վախիլ, ինչ կարող է մարդ ինձ անել (Եբր. ԺԳ. 6):

Օ Գ Ն Ե Լ

Մարդկային բնութիւնն տկար է և կարօտ օգնելու: Ամեն որ պարտական է մատակարարել իւր նման մարդոյ իւր ձեռքով եկած օգնութիւնը, մանաւանդ ամեն նեղ և կարեւոր եղած հանգամանքներում:

Դաւթին օգնեց Աբեսսան (Բ. Թագ. ԻԱ. 17):

Օգնիր ինձ, Տէր Աստուած իմ (Սաղ. ՃԸ. 26):

Երբ ձեռնհաս կը լինիս, օգնիր կարօտ եղողին (Առ. Գ. 27):

Հոգին է կենդանացնողն, մարմինն ոչ ինչ չէ օգնում. ձեզ հետ խօսած իմ խօսքն հոգի է եւ կեանք—ասում է Փրկիչն—(Յով. Զ. 64):

Փրկութեան օրերում օգնեցի քեզ—ասում է Տէր—(Բ. Կորն. Զ. 2):

ՕԾԱՆՆԵԼ Կամ՝ Օծել

Օծման արարողութիւնն շատ հին է, այս է հաստատուած է շատ հնուց: Անկարելի է որ օծուած չլինի Ա. Հոգով աստուածատեղծ մարդն Ադամ: Աստուծոյ նուիրուած մարդ, տաճար, եկեղեցի, քահանայ, անօթ, խաչ, սեղան, մարգարէ, թագաւոր, են ամենն էր օծուած են և օծուում են:

Առաւօտեան վեր կացաւ Յակովբ նահապետն, առաւ իւր գլխի տակ դրած քարը, կանգնեց արձան եւ իւզով օծեց. եւ Յակովբ այն տեղի անունը կոչեց «Տուն Աստուծոյ» (Ծնն. ԻԸ. 11—12)

Խօսեցաւ Տէրն Մովսէսի հետ եւ ասում է. Առ դու անուշ խոնկեր այս է դմռնեանց ընտիր ծաղիկ եւ անուշ կինամսուն (դարչին) եւ անուշ խոնկեղեգն և հիրիկ (անշահոտ բոյս) և ձիթենու ձէթ և միմեանց հետ խառնելով կեփես և շինես սուրբ օծման իւզ իւզագործի արուեստով բաղադրուած:... Նոյն սուրբ իւզով կօծես վկայութեան խորանը, Տապանակ ուխտին, և սեղանը և ամեն անօթները և Ահարոնը և նորա որդիքը կօծես նոյն իւզով և կը սրբես ինձ համար քահանայութիւն անելու (Ելք. Լ. 22—38):

Աստուծոյ հրամանաւ Սամուէլ առաւ սուրբ իւզի շէշը և թագաւոր օծեց Սաուլը Գաղգաղայում Աստուծոյ առաջ և ներկայութեամբ ժողովրդեան բազմութեան (Ա. Թագ. Ժ. 1. և ԺԱ. 15):

Ասում է Տէրն Սամուէլին. Վեր կաց և օծիր Դաւիթը թագաւոր, քանզի բարի է դա: Եւ Սամուէլ օծեց Դաւիթը... Եւ խաղաց Տիրոջ հոգին Դաւիթի վերայ այնուհետեւ (Ա. Թագ. ԺԶ. 12—15):

Ասում է Տէրն Եղիա մարգարէին. Գնա... Ասորոց վերայ թագաւոր օծիր Աղայէլը. Ամեսսիայի որդի Յէուն էլ թագաւոր օծիր Իսրայէլի վերայ և արելմաուուսացի Սափատայ որդի Եղիսէն էլ մարգարէ կօծես քո փոխարէն (Գ. Թագ. ԺԹ. 15—16):

Չեզ համար այսօր ծնաւ Փրկիչ, որ է օծեալ Տէր Դաւիթ քաղաքում-Բեղղեհէմում—(Ղուկ. Բ. 11):

Սիմէօն ծերունին... հրաման առած էր Ա. Հոգուց չմեռնիլ, մինչև որ տեսնէ Տիրոջ օծեալը (մանկացեալ Յիսուս Քրիստոսը) (Ղուկ. Բ. 26—27):



Առաքեալներն վերնատան մէջ ամենքն լցուեցան Ս. Հոգւով (Գործ. Բ. 1—5):

Օ Ր Է Ն Ք

Աստուծոյ օրէնքներն մասին արդէն մասամբ խօսած ենք, տես «Պատուիրան» բառի տակ: Այս պատճառաւ քիչ կը գրենք այստեղ:

Տիրոջ օրէնքն լինի քո բերանում (Եւբ. ԺԳ. 9):

Պահեցէք իմ բոլոր օրէնքները—ասում է Տէրն— (Ղևտ. ԺԹ. 37):

Ճրագ է օրինաց պատուիրանն, լոյս է և կենաց ճանապարհ, յանդիմանութիւն է և խրատ (Առ. 2. 23):

Սիօնից կելնի (դուրս կը գայ) օրէնք¹⁾ և Տիրոջ խօսքն Երուսաղէմից (Ես. Բ. 3):

Քահանայից շրթուներն պէտք է զգուշանան գիտութեան (քահանայք գիտուն լինելու են) և նորա բերանից կը խնդրեն օրէնքներ, քանզի ամենակալ Տիրոջ դեսպանն է քանանան, այս է Աստուծոյ կողմից ուղարկուած պատգամ բերող է (Մաղ. Բ. 7):

Չկարծէք թէ ես եկած եմ քանդել օրէնքները և մարգարէութիւնները. եկած չեմ քանդելու, այլ լցնելու: Ճշմարիտ ասում եմ չձեզ, մինչև որ կանցնեն երկինք և երկիր, օրէնքից և մարգարէներից մի կէտ, մի ամենափոքր նշանագիր չանցնիլ, մինչև որ կատարուի ամենն (Մատ. Ե. 17—18):

Պատասխանեց Յիսուս մի օրինական փարիսեցու և ասաց. Սիրիք քո Տէր Աստուածը քո բոլոր սրտով, քո բո-

¹⁾ Միևնոյն Ս. Հոգին որ Սինէական սարից տուած էր Հին-կապարանը Մովսիսի ձեռնով Սիօն սարից-Վերնատանից տուաւ նոր-կտակարանը Առաքելոց ձեռով. Տասնաքաննայ օրէնքն այժմ էլ պահպանում է իւր զօրութիւնը:

լոր անձով և քո բոլոր մտքով: Այս է առաջին և մեծ պատուիրանն: Երկրորդն էլ սորա նման. Սիրիք քո ընկերը քո անձի պէս: Այս երկու պատուիրաններից կախուած են ամեն օրէնքներն և մարգարէներն (Մատ. ԻԲ. 37—40):

Քրիստոս գնեց զմեզ Օրէնքի անէծքից, մեզ համար անէծք լինելով, որովհետև գրուած է թէ Անիծեալ լինի այն ամեն մարդ, որ կախուած կը կենայ փայտից (Գաղ. Գ. 13):



ՍԻԱԼԱՅՈՅՑ (վերելից համարելով)

| Երես | տող | սխալ | ուղիղ |
|------|-----|-----------------|--------------------------|
| 16 | 23 | էր | էլ |
| 26 | 18 | ամբարտաւան | ամբարտաւան |
| 32 | 21 | երեսնը | երեսը |
| 33 | 13 | լացի | լայի, |
| 33 | 24 | անձնում | յանձնում եմ. |
| 41 | 25 | զու | զու |
| 42 | 26 | հողին | Հողին |
| 63 | 19 | նախանձեն | նախատեն |
| 64 | 24 | զողերի և գողերի | և սուտ երգուողների տունն |
| 67 | 8 | պաշտե | պաշտես |
| 70 | 27 | յինում | հինում (հինել) |
| 72 | 25 | մշարտութիւն | ճշարտութիւն |



ՀԵՂԻՆՆԿԻ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐՆ

Տպեալ

1. ՄԻՐԶՍ ԵՒ ԱՆՆԱ (սպառեալ).
2. ԱՐԱԶԸ ՏԱՐԻՆ ԿՏԱՐԻ (սպառեալ).
3. ՊԸԼԸ-ՊՈՒՂԻ (սպառեալ).
4. ԶՆԱՇԽԱՐՀԻԿ ՏՂԱՅ (սպառեալ).
5. ԳԱՂՏՆԻՔ ՂԱՐԱԲԱՂԻ Թարգմանութիւն (սպառեալ).
6. ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԵԱՆՑ 40 կ.
7. ԱՂՈՒԱՆԻՑ ԵՐԿԻՐ ԵՒ ԴՐԱՅԻՔ
8. ԱՐՑԱԽ—ճանապարհածախսով 2 րուբլի
9. ՔՐԻՄՏՈՆԷՍԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ 50 կ.
10. ԶՕԲԱՆՆ ՈՒ ՆՇԱՆԱԾԸ 40 կ.
11. ԲԱՐՈՅՍԿԱՆ ԱՌԱՅՆԵՐ (սպառեալ).
12. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՂՈՒԱՆԻՑ Ա. հատոր 1 ր. 20 կ.
13. ՄԱՏԶԵԼԻ ՔԱՐՈՁՆԵՐ Ա. ¹⁾ Ե Բ. տետր 30 կ.
14. ԱՄՏՈՒԱԾԱՅԻՆ ՀՐԱՀԱՆԳ ՀԱՆՐԱՊԱՐՏՈՒՑ

Գինն է 80 կող.

Անտիպ

Նախապաշարմունք.
Աստուծոյ օրհնած տունն.
Բ. Հատ. Պատմութիւն Աղուանից.

¹⁾ Ա. տետրակն սպառեալ է:

« Ազգային գրադարան



NL0159854

2641